

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ  
ՀՈՒՄՈՒՑՔԵԼԱՂԱՅԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀՈՅՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՐՉԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:  
ՑԱՆՎՈՒՆՈՒՄ ԵՒՔ ՉԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՔ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

Լ. Ա. ԲԱՅՐԱՍՅԱՆ

---

ԱՐԵՎԱՏՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ  
ԽՊԵՐԻՎԼԻԶՄԻ  
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ

Լ. Ս. ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ  
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ

XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԳՈՒՄ



Հրատարակվում է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի  
ՍՄԻԿ պատմության ամբիոնի երաշխավորությամբ:

### Քայրամյան Լ. Ա.

Բ 269 Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզ-  
մի պլաններում XIX դարի վերջին րառուրդում.— Երև.:  
Հայաստան, 1982.— 292 էջ:

Գրքում արվում է սույթանիզմի դեմ հայ ժողովրդի մղած ազգա-  
յին-ազատագրական պայքարի առաջադիմական բնույթը և մերկաց-  
վում է իմպերիալիստական Անգլիայի կողմից նրա ազատագրական  
շարժումներն իր գաղութատիրական նկրատումներին զոհարեցնելու քա-  
ղաքականությունը:

Հեղինակը ցույց է տալիս, որ հայ ժողովրդին հարստահարություն-  
ներից ու ֆիզիկական բնաջնջումից լիբերության միակ ելքը սույն մեծ  
ժողովրդի օգնությամբ սոցիալիստական կարգերի հաստատումն  
էր: Աշխատությունում քննադատվում է հայ ազգայնական կուսակցու-  
թյունների անհեռատես քաղաքականությունը:

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շր-  
ջանների համար:

0804000000  
Բ  $\frac{701(01)82}{47-81}$

9 (C43) 1

ԳՄԴ 63.3 (22) 7

## ԱՌԱՋԱԲԱՆ

Մարքսիստական պատմագրությունը առաջնակարգ նշանակություն է տալիս իմպերիալիստական պետությունների արտաքին քաղաքականության, դադունի դիվանագիտության և նրանց հակաժողովրդական էության բացահայտմանն ու մերկացմանը: Միաժամանակ մարքսիստական պատմագրությունը հակահարված է տալիս բուրժուական պատմագրության վարձու գրչակներին, որոնք կաշվից դուրս դալով փորձում են ապացուցել, որ իմպերիալիզմը ժողովուրդների «կենսական ուժերի» արտահայտությունն է, նրանց կուլտուրան տարածելու ձգտումը, իսկ կառավարությունների ազրեսիվ բաղադրականությունը՝ ժողովուրդների կամքի արտահայտությունը: Մարքսիստ պատմաբանները հետևողականորեն պայքարում են պատմության կեղծարարների դեմ և ցույց տալիս, որ իմպերիալիստական պետությունների ազրեսիվ արտաքին քաղաքականությունը նրանց ներքին ռեակցիոն քաղաքականության շարունակությունն է և «անփիճելի է, որ իմպերիալիզմը, ընդհանրապես դեմոկրատիայի, ամբողջ դեմոկրատիայի «ժխտումն է», ոչ բնավ դեմոկրատիայի պատանջներից միայն մեկի, այն է՝ ազգերի ինքնորոշման «մխտումը»»<sup>1</sup>:

Հեղինակը, ձեռնարկելով «Արևմտյան Հայաստանը անդլիական իմպերիալիզմի պլաններում...» ռատմնասիրությունը, դեկավարվել է մարքս-լենինյան մեթոդոլոգիայով, արևելյան յուրյի մասին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գրույթներով, Վ. Ի. Լենինի գինակից հայ ականավոր հեղափոխականներ

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 30, էջ 116:

Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի և մյուսների ասույթներով, նկատի ունենալով, որ հայկական հարցը, «հավերժական «արևելյան հարցի»»<sup>2</sup> բաղկացուցիչ մասն էր և նրանց գրույթներն ու ասույթները ուղղակի և անուղղակի ձևով սլեքաբերում են նաև հայկական հարցին և օգնում են գլխավորապես իմպերիալիստական Անգլիայի՝ հայ ժողովրդին օգնելու պատրվակի տակ Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրության կազմի մեջ պահելու ու դադուխացնելու նկրտումները: Հեղինակը ձգտել է հիմնավորված ձևով ցույց տալ, որ անգլիական կառավարության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ բխել է անգլիական խոշոր բուրժուազիայի Մերձավոր Արևելքում ունեցած տնտեսական, քաղաքական և սոցիալատնտեսական նսալկենարոն շահերից և դրա մեջ է նրա վարած քաղաքականության էությունը մեկնաբանելու բանալին և ոչ թե անգլիական կառավարության ղեկավարների ու գլխավորապես ներքին երկերեսանի ու շուրքորթ հայատարաբույժություններում: «Նրանք,— գրել է Վ. Բ. Լենինը,— հենց նրա համար էլ գլխավորապես են, որ գլխավորապես լեզվով խոսեն»<sup>3</sup>, թաքցնեն դադուխարարական քաղաքականությունը, փոքր ազգերի հարստահարությունը և ազգային-ազատագրական շարժումների ճնշումը:

Լենինյան գրույթն օգնում է ճիշտ հասկանալու անգլիական իմպերիալիզմի արատրին քաղաքականության գաղտնիքները, բացահայտելու նրա գլխավորապես մոլի ծալքերը, ճիշտ բմբռնելու կիսաֆեոդալական բարրարոտական թուրքիայի «status quo»-ի (իրերի նախկին վիճակը) պահպանման Անգլիայի քաղաքական կուրսի բուն էությունը և այդ կուրսի կործանարար հետևանքները թուրքահայատակ հայ և քրիստոնյա մյուս ժողովուրդների համար, այնքանով որքանով այդ խոշորոտում էր հասարակության առաջագիմությունը և նշանակում թուրքահայատակ ժողովուրդների «ճնշման հավերժացում»<sup>4</sup>:

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 3.

<sup>3</sup> Վ. Բ. Լենին, ԵԼԺ, հատ. 32, էջ 124:

<sup>4</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 31.

Աշխատութիւնում դատապարտում են իմպերիալիզմի ջատագովները, որոնք անգլիական իմպերիալիզմի գաղութա-յարական քաղաքականութիւնը պատկերում են որպէս բա-րիք, գաղութարարներին վերագրում խիզախութիւն, նրանց համարում աղգային հերոսներ, իսկ միսիոններներին էլ՝ լու-սավարութեան տարածման առաքյալներ: Ի հակակշիռ բուր-ժուական պատմագրութեան, հեղինակը ցույց է տալիս, որ Անգլիայի արևելյան քաղաքականութիւնը եղել է շահագի-տական բնույթի: Այդ շահերին համապատասխան անգլիա-կան կառավարութեան քաղաքականութիւնը XIX դարի վեր-ջին քառորդում Թուրքիայի նկատմամբ մի քանի անգամ փոխ-վել է, և նա ամեն անգամ շարաշահել է հայկական հարցը, բնոյ սրում անգլիական կառավարութիւնը երբեք հաշվի չի առել հայ ժողովրդի կենսական շահերը, շնայած որ հանձին հայոց դատի «սրաշտպան» Գլադստոնի, հայտարարում էր՝ հայ ժողովրդին ծառայելը՝ քաղաքակրթութեանը ծառայել է: Հեղի-նակը մերկացրել է լիբերալների կուսակցութեան լիզեր "լազուտոնի" հայ ժողովրդի փրկարարը լինելու լեզենդը և ցույց է տվել, որ անգլիական իմպերիալիզմը հայ ժողովրդի նման ստեղծված սղրերդական վիճակի մեղսակիցն էր: Անգլիան արևմտահայութեանը զսհաբերել է Մերձավոր Արև-ելքում հեղեմոնիա ստեղծելու, Եգիպտոսի օկուպացիան հա-վերժացնելու և Հնդկաստան տանող ցամաքային ու ծովա-յին ճանապարհներում սմբանալու համար:

Գրքում մերկացվում է նաև հայ աղգային-աղատագրա-կան շարժումները դրսից ներմուծված լինելու հակագիտա-կան սեռակետը և ցույց է տրվում, որ աղատագրական շարժումները արևմտահայութեան սոցիալ-տնտեսական, բաղարական ծանր վիճակի, իրավազուրկ դրութեան, սուլ-թանիզմի կողմից անցկացվող հայատյաց՝ արմենոցիդի քա-ղաքականութեան արդյունքն էին, նրանք ինքնաբուխ, օրի-նաչափ ու բնականոն էին: Աղատագրական շարժումներն իրենց սուր ծայրով ուղղված էին թուրքական կիսաֆեոդա-լական բարբարոսական կարգերի և պանօսմանիզմի ու պան-թուրքիզմի քաղաքականութեան դեմ, իսկ նրանց նպատակն էր անձի անձեռնմխելիութեան, գույքի ապահովութեան և ազգի գոյութեան սլահպանումը, և, որպէս այդպիսին, աղա-

տագրական շարժումներն ունեին առաջադիմական բնույթ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման պատմության ուսումնասիրությունն ունի առաջնակարգ կարևոր ու դաստիարակչական նշանակություն, քանի որ այն, մի կողմից՝ ցույց է տալիս ժողովրդի անցյալի դառը ճակատագիրը, որից նա ազատագրվեց շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ու ուսումնական ժողովրդի հզորարական օգնության, Արևելյան Հայաստանում սովետական կարգերի հաստատման, իսկ մյուս կողմից՝ նպաստում է աշխատավորության սովետական հայրենասիրության ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակությանը, քանի որ սովետական իշխանության հաստատումը հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական քնաջնջման վտանգից, ազատեց սոցիալական ու ազգային ճնշումից և ստեղծեց ռեալ հնարավորություն նրա գոյատևման, ազգային վերածննդի, տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման ու առաջընթացի համար: Ընդհանուր իմաստուն ազգային քաղաքականության իրականացման շնորհիվ ազատ, իրավահավասար Սովետական Հայաստանը այսօր իր ուրույն ու պատվավոր տեղն է գրավում Սովետական Միության եղբայրական հանրապետությունների համաստեղության մեջ: Նա դարձել է ողջ հայության օրրանը՝ հույսի ու լույսի հայրենիքը:

Աշխատությունում քննադատվում են նաև հայ ազգայնական կուսակցությունները, որոնք, անկախ իրենց սուբյեկտիվ ձգտումների, փաստորեն դարձել էին իմպերիալիստական տերությունների ձեռքին կույր գործիք, անցկացնում էին անհեռատես քաղաքականություն: Հեղինակը ցույց է տալիս, որ ո՛չ իմպերիալիստական պետությունների քաղաքականության, ո՛չ էլ ազգայնական կուսակցությունների գործունեության, այլ, ինչպես մարդարեաբար նշել է Ֆ. Էնգելսը Հ. Աթաբեկյանցին գրած նամակում<sup>5</sup>, Օսմանյան բռնապետության տապալման և Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մեջ էր հայ ժողովրդի միակ փրկությունը:

Ուսումնասիրության համար օգտագործվել են հայկ.

<sup>5</sup> Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 39, էջ 270—271.



պետ. պատմական արխիվի, Մ. Մաշտոցի անվան մատենա-  
դարանի, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրութիւնի  
արխիվի, Հայաստանի պետական արխիվում պահպանվող  
Մոսկվայի պետ. կենտրոնական ռազմապատմական արխիվի  
միկրոֆիլմերի ֆոնդի նյութերը, ինչպես նաև անգլիական  
սրտլամենտական արձանագրութիւնները, տարբեր լեզուներով  
հրատարակված դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները,  
Ժամանակի մամուլը և հարուստ գրականութիւնը:

XIX դարավերջի ազգային-պատագրական շարժումների  
թեման մեծ տեղ է գրավում սովետահայ պատմագրութիւնի  
մէջ: Այդ թեմայով օրիգինալ աշխատութիւններ են  
դրել պրոֆեսորներ Մ. Ներսիսյանը, Գ. Գալոյանը, Ս. Աղա-  
յանը, Վ. Պարսամյանը, Ե. Սարգսյանը, Ա. Համբարյանը,  
Զ. Կիրակոսյանը, Հ. Ղազարյանը, Հ. Պողոսյանը, Խ. Բա-  
ղալյանը և մի շարք այլ պատմաբաններ, որոնք բարձրացրել  
են այդ հարցի տարբեր ասպեկտները: Հայրենասիրական այս  
թեման գրավել է ու դեռևս կգրավի շատ ուսումնասիրողների  
ուշադրութիւնը: Մենք ևս փորձում ենք բարձրացնել այդ  
հարցի ասպեկտներից մեկը, իհարկէ, ամենեւին հայկենու-  
թիւնը շունենալով, որ բոլոր հայրերին տալիս ենք սպառիչ  
պատասխան: Թե որքանով է մեզ հաջողվել օգտագործված  
ուղբերների հիման վրա ճիշտ վերլուծել անգլիական քաղա-  
քականութիւնը և հասնել առաջադրված խնդիրների ճիշտ  
լուծմանը, այդ մասին կասեն մասնագետները և ընթերցող-  
ները, որոնց արժեքավոր դիտողութիւնները հաշվի կառնվեն  
մեր հետագա աշխատանքի ժամանակ:

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1870—1890  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Օսմանյան կայսրության կիսաֆեոդալական հարաբերութիւնները, բնակալական կարգերը, սուլթանիզմի կողմից անցկացվող սլանօսմանիւմի, պանթուրքիզմի և հակահայկական քաղաքականութիւնը խոչընդոտում էին Արեւմտյան Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացմանը, ավերում երկիրը, իսկ բնակչութիւնը դատապարտում բռնադաշտի ու կործանման:

Թուրքական պետութիւնը թեոկրատիկ բնույթի էր, սուլթանները՝ ժառանգական, որոնք օգտւում էին անսահմանափակ իրաւունքներից: Նրանք դաժան բռնակալներ էին: 1876 թ. օգոստոսի 31-ի պետական հեղաշրջման հետևանքով սուլթանական գահը դրավեց Աբդուլ-Համիդ II-ը, որին ժողովուրդն անվանեց Զուլում, իսկ նրա կառավարման շրջանը՝ զուլումի թաղավորութիւն: Նոր սուլթանը երկիրը ղեկավարում էր պալատական կամարիիայի և մեծարանակ տգետ, ազահ, պորտաբույծ ու շահամուլ աստիճանավորների օգնութեամբ, որոնք զուրկ էին պատվի ու հայրենասիրութեան սուրբ զգացմունքներից: Նրանց գործելակերպը խաբեբայութիւնն էր, նենգութիւնը և անհանդուրժողականութիւնը:

Թուրքիայում իշխում էին անարխիան ու քաոսը, չկար անձի անձեռնմխելիութիւն ու զուլքի ապահովածութիւն: Զուլումի երեսնամյա սուլթանութիւնը խավարամուլութեան շրջան էր: Նրա քաղաքականութիւնն արդելակում էր երկրի արտադրողական ուժերի զարգացումը: XIX դ. պիտութեան ու տեխնիկայի նվաճումներից ոչ մի բան չէր թուլատրվում ներմուծել ու ներդնել արտադրութեան մեջ, երկաթուղաշինարարութիւնն էլ հաղիվ էր հանդուրժվում, իսկ

գյուղատնտեսությունը ծայր աստիճանի հետամնաց էր: Վ. Ի. Լենինը գրել է, որ տնտեսության թուրքական սիստեմը ամենահետամնացն է, պահպանողական, քանի որ այն «արտադրության ձևերի (հետևաբար և հասարակական բոլոր հարաբերությունների) լճացումը և ասիականության գերիշխանությունն է միայն նշանակում»<sup>1</sup>:

Թուրքիայում չկար հողի մասնավոր սեփականություն, այն համարվում էր աստծունը, իսկ հետո՝ նրա երկրային ներկայացուցիչ սուլթանինը: Հողատեր լինելը հավասարազոր չէր հողի մասնավոր սեփականություն ունենալու եվրոպական հասկացողությանը: Արևելքի «բոլոր երևույթների հիմքը, — գրել է Կ. Մարքսը, — կաղմում է հողի մատնավոր սեփականության բացակայությունը: Ահա նույնիսկ արևելյան երկրների իսկական բանալին»<sup>2</sup>: Արևելյան երկրների վարդաթման օրինաչափությունները և հասարակական-քաղաքական երևույթները Ֆ. էնգելսը նույնպես բացատրել է հողի մասնավոր սեփականության բացակայությամբ: Նա գրել է. «Հողային սեփականության բացակայությունն իսկապես ամբողջ Արևելքը հասկանալու բանալին է: Այդ է քաղաքական և կրթական ամբողջ պատմության հիմքը»<sup>3</sup>:

Սուլթանական կառավարությունը պետական բյուջեի մեծ մասը ծախսում էր անարտադրողական նպատակների վրա, հայրենի արդյունաբերության զարգացման համար չէր անցկացնում պրոտեկցիոնիստական քաղաքականություն: Այդ իսկ պատճառով Թուրքիան մնում էր տնտեսապես, քաղաքականապես և կուլտուրապես հետամնաց՝ երկիր և դանդաղում էր «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական ստադիայում»<sup>4</sup>: Սակայն ֆեոդալական հարաբերությունները ԱՄՆ-ի սկսեցին քայքայվել: Սկսվեց «սնանկություն մայրաքաղաքում, սնանկություն գյուղում, պալատական հեղաշրջումներ: Կոնստանդնուպոլսում և ժողովրդական ընդվզումներ գավառներում: «Այս բոլորը, — գրել է Ռ. Լյուքսեմբուր-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, *Եժժ*, հատ. 3, էջ 230:

<sup>2</sup> Կ. Մարքս, Ֆ. էնգելս, *Նամահներ «Կապիտալի» մասին*, Հայտնահրատ, 1964, էջ 52:

<sup>3</sup> *Նույն աղբյուր*, էջ 53:

<sup>4</sup> К. Маркс и Ф. Энгельс, *Соч.*, т. 9, стр. 6.

գը,— ներքին անկման վերջնական արդյունքներն էին դարձել»<sup>5</sup> և պատմութեան դատավճիռը՝ թուրքական հասարակական-քաղաքական կարգերի նկատմամբ:

Արևմտյան Հայաստանում հողը հիմնականում պատկանում էր թուրք և քուրդ բեգերին ու փաշաներին: Գյուղացիները հողի դիմաց վճարում էին կրկնակի՝ հարկ պետութեանը և տուրք՝ քուրդ բեգերին ու փաշաներին, որը կոչվում էր խաֆիրութեան սխտեմ: Միաժամանակ աշխրաթապետների համար կատարում էին կոռային աշխատանք: Հայ ժողովրդի վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ հաճախակի բեգերն ու փաշաները զրաւում էին հայերի մշակելի հողերը, այգիները, անգամ նրանց քշում գյուղերից:

Հայկական վիլայեթների ազգաբնակչութեան գերակշռող մասը գյուղացիութիւնն էր, որն իր սոցիալական դրութեամբ միատարր չէր: Գյուղացիները բաժանվում էին ազատների, բատրակների, կախյալների և ճորտերի: Նրանց ստվար մասը ձեռնհասներն ազատ էր, բայց մի մասն ուներ հող, մյուս մասը սակավահող էր կամ յրիվ հողազուրկ և ապրում էր պետական ու վախուժաչին հողերը կապալային ստրկացուցիչ պայմաններով վարձելու ու մշակելու միջոցով: 1880-ական թվականներից ազատ գյուղացիների թիվն սկզբում էր արագ պակասել մի կողմից՝ սուլթանիզմի հակահայկական քաղաքականութեան, իսկ մյուս կողմից՝ գյուղացիութեան հաշվին փաշաների, բեգերի և աշխրաթապետների հողային տարածութիւնների ընդլայնման պատճառով: Բատրակները չրիվ հողազուրկ էին, գյուղատնտեսական աշխատանքների սեզոնում աշխատում էին վարձով: Կախյալ գյուղացիներն իրավական առումով ճորտ չէին, բայց նրանց դրութիւնը ճորտից էլ վատ էր, քանի որ բեգերն ու փաշաները նրանց հետ վարվում էին կամայականորեն: Հողազուրկ հայ գյուղացին կոչվում էր մարաբա, որը չէր օգտվում քաղաքացիական իրավունքներից և նրան դիտում էին ինչ-

<sup>5</sup> Ռ. Լյուբսեմբուրգ, Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-գեմոկրատիան: Տե՛ս Գ. Բ. Ղաթիբջանյանի՝ Կ. Լիբկնեխտը և Ռոզա Լյուբսեմբուրգը հայ ժողովրդի մասին գրքի հավելվածը, «Հայաստան» հրատ., 1971, էջ 54:

պես գրաստի<sup>6</sup>: Հողագրկությունը հարկադրում էր անգամ ազատ գյուղացուն դառնալ կախյալ, կախյալին՝ ճորտ: «Հողի կարիքը,— գրել է Վ. Ի. Լենինը,— առաջ է բերում ստորկական հարաբերությունների արտասովոր բաղձազան ձեւեր...»<sup>7</sup>:

Քուրդ ֆեոդալները ճորտացրած գյուղացիներին գնում ու վաճառում էին հողի հետ: Այդ կարգի գյուղացիներին անվանում էին զեռ-կուռի (ոսկով գնվածներ): Այդ փաստը հաստատում են Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» թերթը, «Հայկական աշխարհը», «Փորձը», ուսւ արևելագետ Ի. Ի. Գոլոբորովը, անգլիացի Լինչը, Կարինի ուսական հյուպատոս Վ. Մաքսիմովը և շատ ուրիշներ<sup>8</sup>: Արևմտյան Հայաստանում պահպանվում էր նաև մարդավաճառությունն ու ստրկությունը, որը կատարվում էր թուրքական իշխանությունների գիտությամբ ու անարգել ձևով<sup>9</sup>:

Հայ գյուղացիները միշտ գտնվում էին ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքից զրկվելու սպառնալիքի տակ: 1880—1890-ական թվականներին գյուղացիական հողերի բռնագրավումը մեծ մասշտաբներ ընդունեց: Նրանք զրկվում էին այն հողերից, որտեղ ապրել էին սերնդից-սերունդ: Հայերին հողագրկելը բարձրացավ պետական քաղաքականության աստիճանի և դարձավ բացահայտ զենք ժողովրդին իր հայրենիքից արմատախիլ անելու, ֆիզիկապես ոչնչացնելու՝ արմենոցիդի արտահայտության ձևերից մեկը: Խուսական ականավոր դիվանագետ, հայկական հարցի լավատեղյակ Գիրսը վկայում է, որ հայերի «հողերի մեծ մասը

<sup>6</sup> Տե՛ս Ա.—Գո, Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 285:

<sup>7</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հատ. 17, էջ 100:

<sup>8</sup> Տե՛ս «Մասիս» 1872, № 1239, «Փորձ» 1879, № 4, «Հայկական աշխարհ» 1868, № 56, Ի. Ի. Голобородько, Старая и новая Турция, 1912, էջ 226, X. Ф. Линч. Армения. Путевые очерки и этюды, Тифлис, 1910, т. II, էջ 554, АВПР, Донесение Максимова-Нелидову, 1894, № 346, ф. Пос-во в Константинополе, 1894, д. 3176, л. 22.

<sup>9</sup> Տե՛ս Րաֆֆի, Երկեր, Երևան, 1962, հատ. 3, էջ 65, տե՛ս նաև «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, էջ 66—67. Жюль Леклерк, Поездка на Арарат. Курды, незыды, армяне и армянский вопрос, СПб. 1893, էջ 41—42.



զավթված է ու շարունակում են ղավթել քրդերը: Կառավարութիւնը ոչ միայն չի արգելում, այլ անգամ հովանավորում է և ինքն էլ է մասնակցում այդ ղավթումներին»<sup>10</sup>:

Բեզերն ու փաշաները բացի հողից ու այգիներից, հայ շինականից խլում էին գյուղատնտեսական գործիքները, քշում անասունները, կողոպտում կահարասիքը: Այդ կամայականութիւնների և բռնութիւնների պատճառով Արևմտյան Հայաստանն ապրում էր անկում, արգավանդ հողերի 10 տոկոսը հաղիվ էր մշակվում: Ժամանակին Կ. Մարքսը գրել է, որ արևելյան երկրներում (այդ թվում և Թուրքիայում—Լ. Բ.) բերքատվութիւնը «այնպես է կախված լավ կամ հիմար կառավարութիւններից, ինչպես նշրոպայում՝ լավ կամ վատ եղանակից»<sup>11</sup>:

Վերոհիշյալ պատճառներով շատերը թողնում էին տունն ու բնտանիքը, մեկնում Կ. Պոլիս կամ Ռուսաստան, որտեղ սեզոնային աշխատանք, հաճախ էլ կյանքի ծանր պայմանների թելադրանքով ստիպված դառնում էին օտար երկրներ: XIX դարի վերջին քառորդում գաղթն ընդունում է մասսայական բնույթ և դառնում սոցիալական շարիք: Սկսում է ամայանալ երկիրը: Այդ մասին Մ. Խրիմյանը լակոնիկ ոճով գրել է. «Ո՛չ հայ կա, ո՛չ Հայաստան»<sup>12</sup>:

Սուլթանիզմն իր տիրապետութիւնն ամրապնդելու նպատակով թուրքահպատակ ժողովուրդներին զրդոտում էր իրար դեմ, հրահրում ազգամիջյան կոնֆլիկտներ՝ օգտագործելով նրանց ազգային ու կրօնական հակասութիւնները: Այդ նենգ քաղաքականութիւնը քողարկելու նպատակով նա հայտարարում էր, որ Թուրքիայում տարոյ ժողովուրդների մեջ դոյութիւն ունի դարավոր թշնամանք: Իրականում տարբեր ազգութիւնների պատկանող աշխատավորներն ապրում էին համերաշխ, հաշտ ու խաղաղ: Այդ հաստատում են

<sup>10</sup> «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, էջ 31, տե՛ս նաև Жюль Леклерк նշված աշխատ., էջ 42, Փ. Грязнов, Военный обзор передового театра в Азиатской Турции, СПб, 1897, ч. II, стр. 18.

<sup>11</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, էջ 133.

<sup>12</sup> Մ. Խրիմյանը— նուրար փաշային, 20 մարտի 1895, տե՛ս Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը: Փաստաթղթեր, կահիրե, 1946, էջ 19:

Լինչը, Գրինը, ռուս պատմաբան Ա. Մուլչանովը և ուրիշները վերջինս գրում է, որ մուսուլմանները և քրիստոնյաներն իրար հետ ապրել են միաբան: Նրանց միջև թշնամանքն սկսվեց, երբ կառավարությունը մահմեդականներին սկսեց ներշնչել անիրավահավասարության գաղափարը և անցկացնել ազգային խտրականության քաղաքականություն<sup>13</sup>: Արևմտյան Հայաստանում գործում էին նաև դանազան ավաղակախմբեր, բեյերի ու սպաների գլխավորությամբ, որոնց բռնություններն ու կամայականությունները կառավարությունը ոչ թե կանխում էր, այլ՝ խրախուսում: «Անտանեղի ծանր է հայ ժողովրդի վիճակը, անպաշտպան ու իրավագույրի, թողնված իշխանության տեղական օրդանների քմահաճույքին»<sup>14</sup>, — գրում է Արևմտյան Հայաստանից ռուսական հյուպատոս Վ. Ժալովսկին:

Հայ ժողովրդի անտանեղի ծանր վիճակն իր արտահայտությունն է դաել նաև ռուսական կայսրին ուղղված խրնդրադրում: Թիֆլիսի հայության խնդրագրում ասված է, որ արևմտահայերի ո՛չ անձը, ո՛չ սեփականությունը, ո՛չ հավատը, ո՛չ նրանց ընտանիքի անդամների կյանքը ոչնչով չի տալանդաված<sup>15</sup>: Եվրոպայում ապրող հայ հայրենասերների կամիտեն Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին գրում է, որ հայերը հառաչանքով են ապրում սուլթանական յծի տակ: Նրանց «կյանքը, գույքը և պատիվը զոհաբերվում են պաշտոնյաների քմահաճույքին», քուրդ բեգերի ելուզակությունները կատարվում են «նահանգացին իշխանությունների հրամաններով», կենսագործվում է «հայերին քնաջնջելու պլանը», լրիվ բացակայում է արդարությունը: Խնդրելով օգնություն, կամիտեն ասում է. «Մենք չենք պահանջում ոչ հատուկ թաղավարություն, ոչ էլ ձգտում հասնել անկախու-

<sup>13</sup> См. А. Молчанов. Между миром и конгрессом, СПб, 1878; էջ 359; См. նաև Ф. Грин. Армянский кризис и владичество турок (Саянская резня), в сб. «Положение армян в Турции...», էջ 282:

<sup>14</sup> АВПР, Донесение В. Жадовского от 15 сентября 1890, № 125, Ф. Канцелярия МИД, 1890, д. 24, л. 485.

<sup>15</sup> См. Թիֆլիսի հայ հասարակության դիմումը Ալեքսանդր II-ին, 3 դեկտեմբերի 1876, «Մշակ», 1876, № 16:

թյան, այլ երազում ենք պարզապես ապրել մարդկային պայ-  
մաններում»<sup>16</sup>;

Նման բովանդակություն ունեն նաև արևմտաճայերի դի-  
մումներն ուղղված կաթողիկոս Գևորգ IV-ին: Նրանցում աս-  
վում է, որ մշտապես գտնվում են սազնապի մեջ, տառա-  
պում դանազան պետերի դաժանություններից, որոնք պատ-  
վազրկում են համեստ կանանց ու աղջիկներին, թափում ան-  
մեղ երիտասարդների ու ծերերի արյունը, կոզոպտում գյու-  
ղացիներին, իրենց դժմումները թուրքական իշխանություն-  
ներին մնում են անպատասխան: Հայերի արցունքները հո-  
սում են գետի նման: Սթե վերջ շտրվի աղետներին, հարկա-  
դրված կլինեն բուլղարների նման զենքի դիմել և արյան  
գնով հասնել ազատության<sup>17</sup>: Մի այլ դիմումում ասված է,  
որ քոնի կարգով մահմեդականացնում են: Կրոնափոխությու-  
նից հրաժարվողներին հասկացնում են, որ ֆիզիկապես կոշրն-  
չացնեն<sup>18</sup>:

Հայ ժողովրդին մեծ վնաս էին հասցնում նաև կանոնա-  
վոր, հատկապես անկանոն ղորամասերի զինվորները (բա-  
շիբողուկները), որոնք կոտորում էին խաղաղ, անմեղ ու ան-  
զեն բնակչությանը, անգամ կանանց ու երեխաներին, կո-  
ղոպատում ու ավերում գյուղերը, որոնց հետևանքով սկսվում  
է սով: Սովը հարկադրում էր ծնողներին երեխաների մի մա-  
սին վաճառել, մյուս մասին փրկելու համար<sup>19</sup>: Սովը կառա-  
վարության քաղաքականության հետևանքն էր: «Ռուսակին  
վեղոմոստի» թերթը գրում էր, որ կյանքն արևմտաճայերի  
համար «երբեք չի եղել զեղեցիկ, բայց վերջին ժամանակ-  
ներն այն պարձել է միանգամայն անտանելի»<sup>20</sup>: Ահա այս-

<sup>16</sup> ДВНР, Եվրոպայի հայ հայրենասերների կոմիտեն — Ռուսաստանի  
արտաքին գործերի մինիստրին, 27 հոկտեմբերի 1895, փ. Рос-во в Кон-  
стантинополе, л. 3133, л. 27—28.

<sup>17</sup> Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսի դիման, Թղթապանակ 282, վա-  
վերագիր 23.

<sup>18</sup> Նույն տեղը, Սերաստիայի հայ քաղաքական և կրոնական ժողովի  
դիմումները կաթողիկոսին, 1873 և 1883 թթ., Թղթապանակ 214, վավերա-  
գրեր 142 և 143:

<sup>19</sup> Տե՛ս «Մշակ» 1894, № № 16, 17 և 57:

<sup>20</sup> «Русские ведомости», 1894, № 263.

սյիսի պայմաններում էր, որ սկսվեց գաղթը, որի մասին Ղե-  
վոնդ վարդապետը կաթողիկոսին գրում է, որ իր հորդորները  
չեն կանխում այն<sup>21</sup>։

Արևմտահայերի գաղթի իսկական պատճառները տրված  
են Արևմտյան Հայաստանի ուսական ու անգլիական հյու-  
պատոսների պեկուցագրերում, զանազան ճանապարհորդների  
նկարագրություններում, ինչպես և Մ. Խրիմյանի Նուբար  
փաշային գրած նամակներում։ Խրիմյանը գրում է, որ հայ-  
կական հարցը թատերաբեմ է բարձրացել արյունով ու կո-  
տորածներով, որը սուլթանիզմի նենգ քաղաքականության հե-  
տևանքն է։ Սուլթանի կաղմակերպած համիդիական-քրդա-  
կան հատուկ հեծյալ գնդերը կողոպտում, քանդում, հրկիզում  
են հայկական գյուղերը և կոտորում բնակչությանը։ Նրանք  
«գործում են նահանգապետերի հրամաններով, որոնք ինչպես  
հայտնի է, ունեն սուլթանական կառավարության գաղտնի  
հրահանգը»<sup>22</sup>։

Սուլթանիզմը հայերի բնաջնջման քաղաքականությունն  
իրագործում էր քրդական ցեղապետերի, ոստիկանական ջո-  
կատների և հասարակության տականքների (խուժանի) օգ-  
նությամբ, որոնց խոստացել էր օրական 20 դուրուշ, թա-  
լանի միջոցով հեշտ հարստանալու ննարավորություն և կա-  
տարած հանցագործությունների համար թողնել անպատիժ։  
Այդ փաստերը հաստատում է Վ. Ժադովսկին։ Հայերի հա-  
լածանքները, գրում է նա, դարձել են «նորմալ երևույթ  
թուրքիայում և մտել... պետական հիմնարկների ու կառա-  
վարիչների ծրագրերի մեջ»<sup>23</sup>, իսկ Կարինից Մաքսիմովը  
հաղորդում է. «Խղճի պարտքը հարկադրում է գեկուցել, որ  
հայ բնակչությանը թուրքական վարչության ներքին օրգան-  
ները պատճառում են ամեն տեսակի զրկանքներ։ Եվ այդպես  
են վարվում ոչ միայն Կարինում, այլ նաև նրա սահմանա-

<sup>21</sup> Տե՛ս Մատենադարան, Ղևոնդ վարդապետը-կաթողիկոսին, 16 մայիսի  
1894, Կաթողիկոսի դիվան, թղթապանակ 263, վավերագիր 68։

<sup>22</sup> Մ. Խրիմյանը—Նուբար փաշային, 20 մարտի 1895, տե՛ս Գ. Լազյան,  
նշված աշխատ., էջ 118։

<sup>23</sup> АВРР, Доклад Жадовского-Гиппиусу, от 29 июня 1892,  
№ 88, ф. Канцелярия МИД, 1892, д. 23, л. 387.

մերձ Բաղեշի, Վանի և, ըստ լուրերի, նաև Տիգրանակերտի վիլայեթներում»<sup>24</sup>։

Սուլթանիզմի հակահայկական քաղաքականությունը մշակել էր մեծ վեզիր, անգլոֆիլ Քյամիլ փաշան։ Նա ստել է, «Եթէ Եւրոպիոյ մասին մէջ մեր ծոցը օձ սնուցինք, պէտք է, որ նոյն յիմարութիւնն ընենք մեր ասիական Տաճկաստանի մէջ. խելօքութիւնը ջնջել վերցնելն է այն ամեն սարերքը, որ օր մը կրնա մեղ նոյն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխութեան առիթ և գործիք լինիլ»։ Այնուհետև նա նշում է, որ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Անգլիայի շահերը պահանջում են բնաջնջել հայերին, «որպէսզի ապագայն ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ ու անձեռ ընելու ենք», որի համար Թուրքիան ունի բոլոր պայմանները, «քուրդ, շերկէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնական պատերազմ մը կը հրատարակենք», որը կլինի գյուրին պատերազմ, քանի որ հայեր «ոչ զէնք ունին, ոչ յինուորութիւն և ոչ պաշտպան»։ Քյամիլ փաշան, ընդգծելով իր միտքը, ցինիկորեն հայտարարում է. «Մենք պէտք է մեր հողի երեսից ջնջենք հայոց ազգը»<sup>25</sup>։

Քյամիլ փաշայի հայտարարությունը բխում էր կառավարության պաշտոնական քաղաքականությունից։ Ահա թե ինչու «Մուրճ» ամսագիրը պրել է, որ արևմտահայ գյուղի քայքայումը, ազդային կործանումը Հայաստանի թուրքացումն է, որի պատճառը քաղաքական և ազդային շահն է<sup>26</sup>։ «Մուրճը» ճիշտ է։ Այդ է հաստատում նաև Սայիպ փաշայի Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոնի հետ ունեցած մտերմական գրույցը, որի ժամանակ նա Կամբոնին ասել է, որ հայկական հարցը վերացնելու համար պէտք է բնաջնջել հայերին<sup>27</sup>։

Սուլթանիզմի հայաստաց քաղաքականությունն անցկացնող ուժերից էր ռեակցիոն մահմեդական հոգևորականությունը։

<sup>24</sup> АВПР, Секретное донесение Максимова от 28 марта 1895, № 150, ф. Пос-во в Константинополе, 1895, д. 3176, л. 112.

<sup>25</sup> «Փորձ», Թիֆլիս, 1879, № 7—8, էջ 204—205։

<sup>26</sup> Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1890, № 11, էջ 1536։

<sup>27</sup> Տե՛ս «Արար», Սանկտ Պետերբուրգ, 1895, գիրք 1, է. 14։



նը, որը օգտվելով հավատացյալների կուլտուրական ու քաղաքական հետամնացութունից, բորբոքում էր նրանց կրոնական ֆանատիզմը, թունաւորում հոգին ու գրգռում հայերի դեմ, իսկ ջարդերի ժամանակ ղեկավարում խուժանին<sup>28</sup>։

Սուլթանական կառավարութիւնը, հայերին իր հայրենիքից արմատախիլ անելու նպատակով, սուսական կառավարութեանը 1895 թ. մարտի 23-ին առաջարկում է 1894—1895 թթ. ջարդերի ժամանակ Ռուսաստան փախած հայերին շթույլատրել վերադառնալ Թուրքիա, նրանց տեղավորել Ախբիրում կառուցվող երկաթգծի երկարութեամբ, և այդ միջոցառման համար սուլթանական կառավարութիւնը պատրաստակամութիւն էր հայտնում իր վրա վերցնել տեղափոխման ծախսերը 100.000 թուրքական լիրայի չափով<sup>29</sup>։ Մեղ հնազոգվեց արխիվներում գտնել սուսական կառավարութեան պատասխանը։ Բայց հայերին Սիբիր շտեղափոխելու փաստը խոսում էր այն մասին, որ սուսական կառավարութեանը մերժել էր սուլթանի առաջարկը, հաշվի առնելով արեւմտահայերի սուսական օրինոտացիան և գալիք սուս-թուրքական պատերազմների ժամանակ այլ ժողովրդից սպասվելիք օգնութիւնը սուսական բանակին։

Սուլթանիզմի արմենոցիդի քաղաքականութեանն արտահայտվում է նաև հայկական վիլայեթների կառավարման սխտեմի մեջ։ Այն աչքի էր ընկնում իշխանութեան տեղական մարմինների կամայականութեաններով, հայ ժողովրդին հետապնդելով, սրպեսզի հայկական բնակչութեան թիվը սակսուսի այնքան, որ նրանց համար հատուկ ռեֆորմներ անցկացնելու անհրաժեշտութիւնը վերանա։ Դրա համար էլ իսլանդացի պրոֆեսոր է. Դիլոնը գրել է, որ հայկական շարքը սուլթանը կլուծի հայերի բնաջնջմամբ։ Այժմ հայերը գտնվում են «աշխարհի ամենաթշվառ ու ամենապօրախա ժողովուրդների» շարքում<sup>30</sup>։ Թուրքական ականա-

<sup>28</sup> ՏԼԿ АВПР, Доклад Неидова, от 16(28) марта 1895, № 38, ф. Политархив, 1895, л. 3447, л. 103.

<sup>29</sup> ՏԼԿ Доклад Зиновьева, от 23 марта 1899. № 60, ф. Политархив, 1899, л. 3452, л. 8, 9—10.

<sup>30</sup> ՏԼԿ Э. Диллон, Положение дел в Турецкой Армении, в сб. «Положение армян в Турции...», էջ 332.

վոր պետական դործիչներից մեկը Դիլոնի հետ մտերմական դրույցի ժամանակ ասել է, որ Հայաստանում սուլթանական կառավարման սխտեմը «ճիշտ կլինի բնորոշել որպես կաղմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»<sup>31</sup>։

Արևմտահայությունը խիստ տուժում էր նաև մուհաջիրների՝ ուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստան էվակուացված մահմեդականների ապօրինություններից։ Օղտվելով սուլթանիլդի հովանավորությունից, մուհաջիրները կողոպտում էին հայերին, նույնիսկ վրեժխնդիր լինում պատերազմում կորցրած իրենց հարազատների համար։ Պատմական գրականության մեջ նրանց անվանում են շերքեղներ, որոնք շեշեններ, լաղեր, աջարներ և մահմեդական հավատ ունեցող այլ ազգությունների պատկանողներ էին։ Նրանք իսկական պատուհաս էին հայ ժողովրդի գլխին, քանի որ անպատիժ կարգով բռնում էին հայերի անասունները, գրավում հողերը, այգիները, հափշտակում բերքը, դիմադրողներին էլ ղնդակահարում։ Չերքեղների բռնություններն այն աստիճանի են հասնում, որ Կարինի վիլայեթի Բասենի կազայի Ալիշա, Դալիբարա-Յազան, էկսբատ և Տալի գյուղերի բնակիչները բողոքով դիմում են վալիին և պահանջում մուհաջիրներին տեղափոխել, հակառակ դեպքում իրենք «հարկադրված կլինեն տեղափոխվել որևէ տեղ»<sup>32</sup>։

Համիդիական դորամասերը, այդ «նոր ենիշերններ»՝ մուհաջիրները, թուրքական պաշտոնյաների հետ բնության կողմից ստեղծված գրախտավայր Արևմտյան Հայաստանը դարձրեցին դժոխքի երկիր։ Սուլթանիլդի արմենոցիդի քաղաքականությունը շէր արժանանում զանազան ազգությունների աշխատավորների հավանությանը։ Թուրք, քուրդ, ասորի աշխատավորներն իրար հետ ապրում էին հաշտ ու խաղաղ, անհրաժեշտության դեպքում էլ՝ իրար փոխադարձ օգնում։ Այդ մասին են խոսում Տրապիզոնի ուսական հյուպատոս

31 Э. Диллон, Положение дел в Турецкой Армении, в сб. «Положение армян в Турции...», № 333.

32 АВПР, Донесение русского консула в Эрзеруме Преображенского, от 12 ноября 1887, ф. Армянское дело, 1887, д. 142, л. 22—23.

Շշեկիունովի, Կ. Պոլսի ուսական դեսպանատան գլխավոր քարտուղար, արքունական խորհրդական Սմիռնովի ղեկուցադրերը, Կան Մալիուժ Մակ-Կոլլի և շատ ուրիշ ակտնատեսաների վկայությունները<sup>33</sup>։

Հայկ. ՍՍՀ-ի ՊԿՊԱ.-ում պահպանվում է մի պաշտոնական փաստաթուղթ, որի բոլոր էջերը շկան և ստորագրությունն էլ հստակ չէ։ Այն գրված է 1889 թ. ապրիլի 23-ին և հասցեագրված է կաթողիկոսին։ Բովանդակությունից համոզվեցինք, որ այն պատկանում է Կ. Պոլսի պատրիարք Աշրգյանի գրչին։ Նա կաթողիկոսին պատմում է, որ սուլթանը իրեն ասել է և քարտուղարի միջոցով էլ լրացուցիչ հայտնել, որ ինքը երբևք չի համաձայնվի հայերին ինքնավարություն տալ, անգամ իրեն հաջորդող սուլթաններին էլ կնզովի, եթե նրանք համաձայնվեն հայերին ինքնավարություն տալ, անգամ իսլամությունը երկրի երեսից վերանալու դեպքում։ Աբղուլ Համիդ II-ը թշնամաբար է արամադրված հայերի նկատմամբ, նա գործադրում է ամեն մի միջոց, որ հայերը զաղթեն հայրենիքից։ Եթե այսպես շարունակվի, երկիրը կամայանա, հայերը հրեաների նման կցրվեն ամբողջ աշխարհով։ Նա չի ջանկանում բարենորոգումներ կատարել Հայաստանում<sup>34</sup>։

Սուլթանից մի արևմտահայերին բնաջնջելու քաղաքականությունը հետևողական բնույթ ուներ։ Կ. Պոլսի պատրիարքարանի բազմիցս դիմումները Բ. Գոանը՝ Հայաստանում լատարակական կարգը վերականգնելու վերաբերյալ, չէին արժանանում ուշադրության։ Հայ ժողովուրդն իրավագուրկ էր և շունը գենը ինքնապաշտպանության համար, քանի որ նա կոտավարության կողմից գրկված էր գենք կրելու իրավունքից։ Հայերին անվանում էին ուսյա, որին ճնշելու, անգամ սպանելու համար պաշտոնյաները, բեգերն ու փաշաները ոչ մի պատասխանատվություն չէին կրում։ Անսահման էին թուրքական իշխանությունների քմահաճույքները։ Կայմա-

<sup>33</sup> SL<sup>n</sup> ABIP, ф. Пос-во в Константинополе, 1900, д. 3176, л. 56. SL<sup>n</sup> *hakk* ф. Политархив, Армянский вопрос, 1895, л. 53--75, Мелькольм Мак-Колль, Ответственность Англии перед Арменией, в сб. «Положение армян в Турции...», էջ 133.

<sup>34</sup> SL<sup>n</sup> ՀԻՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 29, թ. 1—2.

կամները ձերբակալում էին հայերին, մի վիլայեթից տեղափոխում մյուսը, միտումնավոր ձևով մեղադրելով քաղաքական անվստահության մեջ, իսկ կաշառքներ ստանալիս՝ վերացնում մեղադրանքը<sup>35</sup>։

Կայմակամներից ոչ պակաս պատուհաս էին ուստիկանապետները, որոնք, հասարակական կարգը պահպանելու փոխարեն, իրենք էին կատարում ապօրինություններ, որոնց գործունեության հետևանքների մասին Սահակ Պորտուզալյանն ասում է, որ նրանք «կատարյալ Սոդոմ-Գոմոր դարձրին մեր հայրենիքը... Ոչ օրենք կար, ոչ արդարություն, օրենքը իրենց շրթունքներն էին, արդարությունը իրենց հրամանը»։ Անօրինականությունների դեմ բողոքողներին էլ բանտարկում են, իբր թե նրանք սլաշտոնյաներին զրպարտում են<sup>36</sup>։

Թուրքական կառավարության ձեռքին դատական մարմինները նույնպես զենք էին արևմտահայերին հալածելու համար, հայերի վկայությունը պատարանները հաշվի չէին առնում, քանի որ նրանք իրավահավասար քաղաքացիներ չէին։ Դատավորները (կադիները) անզրազևտ ու անզեղ էին, իրենց պրակտիկ գործունեության ժամանակ զենկավարվում էին շարիաթի (ղուրանի) օրենքներով։ Դատավճիռները կայացնում էին հօգուտ նրանց, ովքեր շատ էին վճարում կաշառք։ Նիզամական դատարաններում էլ հայերի վկայությունը ձևական էր։ Դատավորներն ուշադրություն էին դարձնում դատվողից ստանալիք գումարի, իսկ հետո կրոնական հավաստի վրա<sup>37</sup>։ Հայերի ձերբակալությունները կատարվում էին հաճախակի, առանց հիմքի։ Հարցաքննության գլխավոր մեթոդը խոշտանգումներն էին, մեղադրվողներին ծակում էին տսեղով, խարանում շիկացած երկաթով, որի հետևանքով շատերը մահանում էին<sup>38</sup>։ Շատերն էլ տարիներով

<sup>35</sup> АВПР, Якиманский-Нелидову, от 15 декабря 1894, № 67. Ф. Пос-во в Константинополе, 1900, д. 3197, л. 81.

<sup>36</sup> ՏԵՍ շՍՍԶ ՊԿՊԱ, ֆ. 42, ց. 1, դ. 67, թ. 12։

<sup>37</sup> ՏԵՍ АВПР, Донесение Деннете, от 22 августа 1877, № 350, ф. Армянское дело, 1887, л. 142, л. 2, տե՛ս նաև Мак-Колль, նշված աշխատ., էջ 135։

<sup>38</sup> ՏԵՍ АВПР, Донесение Нелидова, от 29 октября 1896, № 156, ф. Политархив, 1896, 3449, л. 261.

մնում էին բանտերում առանց հարցաքննության: Բանտերն էլ գտնվում էին ներքնահարկերում, զրկված լույսից ու օդից, շատ բաներում վիջելով շնաբեներին: «Խոշտանգումները հիշեցնում էին ինկվիզիցիոն հարցաքննության սարսափները»<sup>39</sup>:

Հայերին բանտ էին նետում նաև, երբ նրանք ի վիճակի չէին վճարել պետական հարկերը, որոնք տարեցտարի մեծանում էին: Հարկերը բաղմազան էին ու ծանր: Պրոֆ. Ա. Ս. Համբարջանը, որը մեծ աշխատանք է կատարել հարկերի ու պարհակների ուսումնասիրման գործում, հաշվել է հարկերի 18 հիմնական տեսակ<sup>40</sup>: Կառավարության կողմից անցկացվող ալդային խտրականության պատճառով հայերը ավելի շատ էին հարկադրվում, քան մուսուլմանները: Հարկման ժամանակ հաճախ հաշվի չէին առնում գյուղացու տնտեսական նստավորությունները, իսկ գանձման ժամանակ դիմում էին սարսափելի բռնությունների՝ ծեծում, բռնադրավում տնային իրերը, աշխատանքային գործիքները, անասունները, արտերը և գնում տճուրղի<sup>41</sup>: XX դարի սկզբին հայերից հարկերի գանձումը կառավարությունը հանձնարարեց հասարակության սակավորակից կազմված ջանրեզարնների հրոսակախմբերին, որոնք չէին սրտովում հարկահավաքի ժամանակ կատարած սպորինությունների, անգամ մարդասպանության համար:

Քուրբակոն պետական գանձարանը լցվում էր քրիստոնյա մոգովուրդներից գանձվող հարկերի հաշվին: Հայ ժողովուրդը նման էր աշխատող մեղվի: Նա կերակրում էր պորտաբույծ իշխող դասակարգերին, պետական մեքենայի մեծարանակ սյուշասնյաներին: Գ. Գիևը նշել է, որ հայերը աշխատասեր են ու ընդունակ, առանց նրանց ընդարձակ ու անարտասեր կիրառմանը կղանա անաստ: Հայերը դարգացնում են արհեստները, արտադրության սարքեր ճյուղերը և սովորույթը: Քուրբեջանում համարյա թե չկա մի տուն, որ

<sup>39</sup> «Московские ведомости», от 2 сентября 1895, № 242.

<sup>40</sup> Տե՛ս Ա. Ս. Համբարջան, Ազրաբային հարաբերությունները Արևմուտքում Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, էջ 104—123:

<sup>41</sup> АВПР, Щелкунов-Зиновьеву, от 4 ноября 1900, ф. Пос-во в Константинополе 1900, д. 3197, л. 322—323. Այդ մասին տե՛ս նաև ֆ. Политархив, 1900, д. 3453, л. 56.

կառուցված չլինի հայերի ձեռքերով, մի մետր գործվածք, որ գործած չլինեն նրանք, մի պտուղ, որ աճած չլինի նրանց այգիներում: Հասարակական մեծ շենքերը նույնպես կառուցել են հայ վարպետներն ու ճարտարապետները: Հայերը պատմության մեջ թողել են ոչ մեծ, բայց անշնչելի հետք: Հայերն ապիական եվրոպացիներն են ու եվրոպական կուլտուրան ասիացիների մեջ լավագույն տարածողը: Այնուհետև Գ. Դիևը գրում է, որ հայերը սուլթանիզմին շնորհակալություն հայտնելու համար ոչ մի պատճառ չունեն: Եթե սուլթանները նրանց լրիվ շեն ոչնչացրել, ապա դա չի բացատրվում վերջինների հումանիզմով, այլ՝ բացատրվում է եսասիրական զգացմունքներով. «Ո՞վ ձեզ կկերակրեր, եթե չլինեին հայերը և մյուս «ոսյաները»<sup>42</sup>:

Այս ճշմարտությունը հաստատում են նաև կաթողիկոս Մկրտիչ I-ը 1897 թ. հունվարին Կ. Պոլսի սուսական դեպյան Ա. Ի. Նելիզովին հասցեագրված գրությունում<sup>43</sup> և ամերիկյան փիլիսոփա Հ. Ա. Գիբբսոնը, որը նշել է. «Թուրքերը իրենց խղճուկ ազդեցության ու արյան վայրի ծարավի մեջ ձեռք բարձրացրին նրանց դեմ, որոնց գոյությունը հանդիսանում է իրենց սեփական ազդաչին ու հասարակական կյանքի ծաղկման պայմանը»: Հայերի քանակն «այնքան մեծ չի եղել, որ սպառնալին Թուրքիայի քաղաքական անվտանգությանը, բայց նրանք ամեն տեղ եղել են բավականաչափ՝ Թուրքիայի տնտեսական բարգավաճումն ապահովելու շամար»: Հայերն ապահովել են Թուրքերի բարեկեցությունը. «Առանց հայերի աջակցության Թուրքերը չէին կարող ո՛չ քաղաքականապես և ո՛չ էլ տնտեսապես գոյություն ունենալ որպես ինքնուրույն և անկախ ազգ»<sup>44</sup>:

Սուլթանիզմի սեպեղիտն քաղաքականությունն արգելադրում էր Թուրքահայատակ ժողովուրդների նաև կուլտուրական շարժացումը: Նա վախենում էր, որ այն կլուսավորի ժողովուրդներին, կուժեղացնի նրանց ազատագրական ձգտում-

<sup>42</sup> Г. Диев, Армянский вопрос в Турции. В сб. «Положение армян в Турции...», № 386 и 400—403:

<sup>43</sup> ՏԵՍ ՉՍՍԶ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 52, ք. 8:

<sup>44</sup> Г. А. Гиббсон. Последние избиения в Армении, Петроград, 1916, № 18 и 24.

ները և կարագացնի պայթարը թուրքական բարբարոսական տիրապետութեան դեմ: Դրա համար էլ կառավարութիւնն արգելում էր ոչ միայն գիտութեան ու տեխնիկայի նվաճումներին ներմուծումը, այլև խոչընդոտում էր գրականութեան ու արվեստի զարգացումը, արգելում մայրենի լեզվով զպրոցներին քացումը, հայերեն գրքերի օգտագործումը, համաշխարհային դասական գրականութեան ներկայացուցիչների ստեղծագործութիւնների մուտքը Թուրքիա: Թուրքիան ամբողջ աշխարհին դարձացնում էր եվրոպական կուլտուրան շնորհունելով<sup>45</sup>:

Սուլթանը Զուլումը ստեղծել էր ահաւոր դաժան դրաքննութիւն: Արգելված էին անդամ քիմիայի ու հանրահաշվի գասադրերը, որոնցում «խմաստուն» դրաքննիչները տեսնում էին թաքնված վտանգավոր մտքեր: Նրանք H<sub>2</sub>O ջրի ֆորմուլայում տեսնում էին պասկվիլ՝ «Hamid H=O»-ի: Արգելված էր հրատարակել այն գրքերն ու հոդվածները, որոնցում կօղտապործվեին իրավունք, ազատութիւն, հավասարութիւն, դէմք, ներսութիւն, քաջութիւն, միավորվել, բռնակալութիւն, թաղավոր, ցար և մի շարք այլ բառեր: Թուրքիայում իշխում էր խալիֆայութիւնը: «Չի կարող,— գրել է Վ. Ի. Լենինը,— գրագետ լինել բնակչութեան մեծամասնութիւնը մի երկրում, որին կեղեքում են փաշաները, Պուրիշկեիչները և այլն»<sup>46</sup>:

Թուրքիայում հայ ժողովուրդը գտնվում էր դադութացված, ստրկացված, իրավազուրկ վիճակում: Չպետք է շտիպանցութիւն համարել, երբ Աղբակի գավառի հայերը կաթողիկոսին դրած իրենց խնդրագրում ասում են. «...ավաղ որ մեր վշտերը որչափ աղեխարշ, մեր վերքերը որչափ մահադուռ մեր գրիչն այ բնդհակառակը նույնքան տկար ու անզոր է նկարելու համար պատկերը մեր կացութեան, որ միայն կարող է ահտնատեսի զաքարեական պերճախոսութեամբ բարբառել յուր բշտրատեսակ վշտերու ու ցավերու մասին: Ազրակի գավառն անխուսափելի կործանման է ենթարկվում»<sup>47</sup>:

<sup>45</sup> См. «Голос», от 4 августа 1880, № 211.

<sup>46</sup> Վ. Ի. Լենին, ելժ, հատ. 22, էջ 422:

<sup>47</sup> ՀՈՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 77, թ. 40—41:

Վերոհիշյալ բոլոր պաշտոնական ու կիսապաշտոնական հաղորդումները, խնդրագրերում ու ականատեսների պատմածներում բերված փաստերը միանգամայն իրական են և դրանք մեկ անգամ ևս հաստատվում են 1895 թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսի պատրիարք Մ. Իզմիրլյանի՝ Թուրքիայի արդարապատուիջան և կուլտուրայի մինիստր Ռզա փաշային գրած բողոքագրում: Այն խտացված ձևով արևմտահայության բոլոր բնօրինների յուրահատուկ ամփոփումն է: Պատրիարքի բողոքագիրը, որպես պատմական փաստաթուղթ, ունի անգնահատելի արժեք ինչպես ազգային-ազատագրական շարժման պատճառները ճիշտ հասկանալու և այն օբյեկտիվորեն գնահատելու, այնպես էլ այդ շարժման մասին նորաթուխ թուրք պատմաբանների հորինած վերսիսաները մերկացնելու պործում: Ուստի անհրաժեշտ ենք համարում տալ Մ. Իզմիրլյանի բողոքագրի բովանդակությունը: Այնտեղ ասված է, որ հայերը լքաղվում են գյուղատնտեսությամբ, արդյունաբերությամբ և առևտրով նպաստելով երկրի առաջադիմությանը: Նրանք պարտաճանաչ ձևով վճարում են հարկերը, բարիդրացիական հարաբերությունների մեջ են թուրքերի ու թուրքահպատակ բոլոր ժողովուրդների հետ և խնդրում են իրենց հնարավորություն տալ օգտվել քաղաքակրթության բարիքներից: Հայերը հասարակությանը սովել են բազմաթիվ մասնագետներ, իսկ պետությունը՝ ընդունակ պաշտոնյաներ: Բայց այժմ հայ ազգն այնպիսի պնդմանների մեջ է, որ ոչ անհատները, ոչ ողջ ժողովուրդը չեն կարող ապրել հանգիստ ու խաղաղ կյանքով: Կառավարությունը հայերի նկատմամբ տածում է անվրաստահություն: Նրա օկուպանտների հետևանքով հայերի «կյանքը, պատիվը, բարեկեցությունը ամենեին ապահովված չէ»: Հայերի գլխավոր զբաղմունքը երկրագործությունն էր, հողը, որը որպես բնիկի անհիշելի ժամանակներից նրա սեփականությունն էր և պարարտացված էր նրա քրտինքով, դանադան առիթներով յուել էին: Հասախակի քրդական ցեղասպանները բռնազրավում են հայկական գյուղերի բոլոր հողերը, տանում գյուղատնտեսական գործիքները, բայց հայերի բողոքները և բարձրացրած հարցերը իշխանության տեղական մարմինների կողմից չեն գտնում արդարացի լուծում: Հայերի



ինքնապաշտպանության օրինական ամեն մի փորձ դիտվում է որպես հանցագործություն, և նրանց նկատմամբ կիրառվում են նորանոր բռնություններ:

Այնուհետև բողոքագրում ասվում է, որ գյուղացիները բեգերի ու փաշաների սարուկներն են, նրանց առևտրական գործարքների առարկան: Գյուղացիները պետությանը վճարում են հարկ, իսկ բարդ բեգերին՝ պարհակներ, նրանց համար կատարում կոռուպիւն աշխատանք: Հարկերը հավաքման ժամանակ լինում են ապօրինություններ: Հարկահանների հետ գյուղ են գնում դինված հեծյալ սատիկանները, որոնց գյուղացիները պարտավոր են ստրահովել բնակարանով, սննդով և կկտակրել նրանց ձիերին: Հարկահավաք կապալառուները միտումնաբար ձեռք գյուղացու եկամուտը հաշվում են շատ, որպեսզի հարկը գանձեն կրկնակի շափով: Սովը հարկադրում է տղամարդկանց զնալ օտար երկիր վաստակ որոնելու, բայց երբ ցանկանում են վերադառնալ, իշխանության տեղական մարմիններն արգելում են նրանց համարելով հանցագործներ:

Պատրիարքը նշում է, որ հայերն իրավադուրի ու անբարեացան են: Անարգում են կանանց ու աղջիկներին, անգամ ամուսնություն օրը անհանդում են հարսնացուին: Տարիներով մարդկանց բանտ են նետում իրենց ստնահարված իրավունքները պաշտպանելու, դպրոցներին կամավոր օգնություն ցույց տալու կամ հին հրատարակված գրքեր կարդալու համար: Բանտարկվածների նախնական քննությունը տևում է տասիններ, դատար կատարվում քաշքշուկներով և ավարտվում ձուներ դատավճիտներով: Հաճախ բնակչության հետ հաշիվ են տեսնում գեներալ: Հեծյալ սատիկանական ջակատները չրջում են գյուղերում և իրենց գործադրած բռնությունները չիմտափորում գոյություն չունեցող քաղաքական գալադրուկյունների տակալությամբ: Խուղարկությունների գուգակըցում են կողոպուտի և սարսափից խելադարության աստիճանի նստած կանանց պատվադրկման հետ: Ձերբակալում են դպրոցականներին ու պատանիներին, որոնց ծեծում ու խարանում են շիկացած երկաթով և հարկադրում, որ ընդունեն մահմեդականություն: Բանտարկված տղամարդկանցից պահանջում են փրկագին՝ ազատելու համար: Հայ ժողովուրդը վճա-

րում է կրթութեան հարկ, բայց հայկական դպրոցները կարիքի դեպքում սչինչ չեն ստանում: Պատրիարքարանը բազմիցս դիմել է կառավարությանը, խնդրել բարելավել հայ ժողովրդի դրությունը, նախոստացել է այդ անել ունեցողների միջոցով, բայց բոլոր խոստումները եղել են ապարդյուն: Հայերը պահանջում են հավատի ազատություն, անձի անձեռնմխելիություն, գույքի ապահովվածություն, կրոնական և քաղաքական կազմակերպությունների ազատ գործունեություն, հասարակական կարգի վերականգնում, որը կերաշխավորի նրանց օգտվելու բոլոր իրավունքներից և քաղաքակրթության բոլոր բարիքներից, որոնցից օգտվում են մյուս ժողովուրդները<sup>48</sup>:

Սուլթանական կառավարության պանթուրքիզմի, պանօսմանիզմի քաղաքականությունը, քրիստոնյա ազգային փորձամասնությունների նկատմամբ ջիհադի (սրբազան պատերազմի) կուրսն Արևմտյան Հայաստանը մատնել էր սրի ու հրի: «Հայաստանի հողը,— գրել է Ս. Առոյանը (Ս. Կասյանը),— ոռոգվում էր արյունով, դաշտերն ու ձորերը ծածկվում՝ դիակներով... երկիրն ամբողջապես ավերվում և ծանր աղքատության մատնվում»<sup>49</sup>, էքսցեսների ժամանակ աչքի ընկած ոճրագործներին թուրքական կառավարությունը համարում էր հայրենասերներ և պարգևատրում շքանշաններով, փոխանակ պատժելու և պաշտոնազրկելու:

Սուլթանիզմի քաղաքականությունը իրոք ավերում էր Արևմտյան Հայաստանը, ոչնչացնում հայկական կուլտուրան և հարցականի տակ դնում հայ ժողովրդի հետագա գոյությունը: Հետևաբար հայ ժողովրդի պայքարը սուլթանիզմի արմենոցիդի կաննիբալական քաղաքականության դեմ՝ հանուն ազդի գոյության պահպանման, անձի անվտանգության, սեփականության ապահովման, ընտանեկան պատվի պաշտպանման, զանազան կամայականություններից ու բռնություններից ազատվելու, հայրենական օջախը սյահալանելու, իր կուլտուրան պարգացնելու, քրտնաթոր աշխատանքի պտուղները վայելելու, ինքնաբուխ ազգային-ազատագրական սրբազան

<sup>48</sup> Տե՛ս «Геноцид армян в Османской империи». Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна. Изд. АН Арм. ССР, 1966 թ. 53—62.

<sup>49</sup> Ս. Առոյան (Կասյան), Ո՛ր է ելքը, նոր-նախիչեան, 1920, էջ 23:

պայքար էր, պատմականորեն օրինաչափ երևույթ և ոչ թե դրսից արհեստականորեն ներմուծված ու պատահական շարժում:

Միանգամայն իրավացի է Ռ. Լյուբսևմբուրգը, երբ ժամանակին հերքել է այն տեսակետը, որ Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները դիվանագիտական մեքենայությունների արդյունք են, իսկ «հայերի ապստամբությունները՝ ուսական ուրլով ղնված գործակալների գործն է»<sup>50</sup>: Նա ցույց է տվել, որ թուրքահայատակ բոլոր ժողովուրդների, մանավանդ քրիստոնյաների, որոնց նյութական շահերը, հավատը և ազգային իդեալները հակադիր էին թուրք փաշաների շահերին, հանգեցրեց ազգային անկախության օրինաչափ ձգտմանը: Նա իրավացիորեն գտնում է, որ ազգային-ազատագրական շարժումները արհեստական բնույթի չեն, նրանք թուրքական բռնակալության, կիսաֆեոդալական հարաբերությունների և սուլթանիզմի ազգահալած քաղաքականության հետեւիանքներն են, եվրոպական դիվանագիտությունը միայն «մի փառվող տաշեղ է նետում դարերի անարդարությունից և շահագործումից լեռան շափ պիղված բոցավառ նյութի մեջ»<sup>51</sup>: Ռ. Լյուբսևմբուրգը ճիշտ կռահում է, որ թուրքական բռնապետությունը կկործանվի ազգային-ազատագրական պատերազմների հետևանքով և Օսմանյան կայսրության մոխրակույտերի վրա կտեղծվեն նոր ազգային պետություններ:

Օսմանյան կայսրությանը պատմությունը դատապարտել էր կործանման, շնայած որ թուրքական խուժանը «համառորեն պաշտպանում էր իր երևակայական առավելությունը»<sup>52</sup>: Նա արդելահում էր երկրի առաջադիմության ուղու վրա կոմունկրո Այս պայմաններում եվրոպական մեծ պետությունների փորձը՝ պահպանել Թուրքիայի «ստատուս քվոն», սակ է Ա. Մարրոսը, նման էր «սանկած ձիու լեշը պահելուն՝ նեխման միկնույն աստիճանի վրա, թույլ շտալով, որ այն լիսվին քայքայվի»<sup>53</sup>:

Այսպիսով, սուլթանիզմն Արևմտյան Հայաստանում

<sup>50</sup> Ռ. Լյուբսևմբուրգ, նշված աշխատ., էջ 47:

<sup>51</sup> Նույն տեղը, էջ 57:

<sup>52</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, էջ 6—7:

<sup>53</sup> Նույն տեղը, էջ 5:

անցկացնում էր պանօսմանիզմի, պանիսլամիզմի քաղաքականություն, հակահայկական կուրսն էլ կանխամտածված ու պլանավորված էր: Բոլոր սկզբնաղբյուրների ուսումնասիրություններն էլ ցույց են տալիս, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները ոչ թե դրսից էին ներմուծված, ոչ թե դաշնակցական կոմիտեիների, բարձրաստիճան հոգևորականների, կամ թե օտարերկրյա պետությունների դրդման հետևանք էին, ինչպես պատմությունը կեղծելով պնդում են թուրք պատմաբաններ Հ. Բայուրը, Թուրքելդի Ալի Տուաբը, Նամիկ Քուրանը, Ս. Գոշաշը, էսատ Ուրասը և մյուսները<sup>54</sup>, այլ բխում էին Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական պայմաններից և սուլթանիզմի արմենոցիզի քաղաքականությունից: Ազգային-ազատագրական շարժումների արմատները Արևմտյան Հայաստանում էին, իսկ իշխանության տեղական մարմինների հակահայկական գործունեության գաղտնիքը՝ սուլթանիզմի ալդային խորականության, ազգային թշնամանք հրահրելու քաղաքականության մեջ:

Արխիվային աղբյուրները, իրադարձությունների մասնակիցների ու ակնատեսների վկայությունները և ժամանակի մասնույր լրիվ հերքում են թուրք պատմաբաններ Սալիմ Մունիրին, էրկենին և մյուսներին<sup>55</sup>, որոնք սրբացնելով պանթուրքիզմի, պանիսլամիզմի քաղաքականությունը, հրդեհում են ժխտել մանր ժողովուրդներին բռնի ասիմիլյացիայի ենթարկելու, կամ ֆիզիկապես բնաջնջելու սուլթանիզմի քաղաքականությունը, որը թուրքական տիրապետող դասակարգերի քաղաքական կուրսն էր, իսկ նրա կենսագործողները՝ սուլթան Զուլումը, բարձրաստիճան պաշտոնյաները, պինդորականները և ռեակցիոն մահմեդական հոգևորականությունը:

Ահա թե ինչու մենք համաձայն չենք նորաթուխ թուրք պատմաբանների հետ և գտնում ենք, որ հայ ազգային-ազատագրական շարժումների պատճառը սուլթանիզմի կողմից

<sup>54</sup> Այդ մասին հանդամանորեն տե՛ս Ն. Սարգսյան, Թ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության հենդափոխումը թուրք պատմագրության մեջ, Հայպետհրատ, 1963:

<sup>55</sup> Տե՛ս նույն տեղը:

անցկացվող արմենոցիդի քաղաքականությունն էր և ոչ թե հայ ազգային-ազատագրական շարժումներին էին սուլթանիդմի հակահայկական քաղաքական կուրսի պատճառը:

Թուրքական ռազմաֆեոդալական միապետական կարգերի դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը, որը միաձուլվում էր աշխատավորական մասսաների դասակարգային պայքարի հետ, առաջադիմական էր, բնականոն ու օրինաչափ երևույթ, այն նրա անկապտելի իրավունքն էր և ամենանվիրական ու սրբազան պարտականությունը: Արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական այդ սրբազան ու նվիրական պայքարն էլ շարաշահել է անգլիական իմպերիալիզմը և նրան դատապարտել կործանման՝ ելնելով իր ռազմատրատեղիական դիրքերը Թուրքիայում ամրապնդելու, տնտեսական, քաղաքական հեգեմոնիան այնտեղ պահպանելու և Արևելքում իր գաղութարարական կուրսը հետագայում է՛լ ամելի ծավալելու նպատակներից:

**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ԹՈՒՐԳԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ**

**1. Անգլիական իմպերիալիզմի առևտրական, ֆինանսական և կոնցեսիոն շահերը Թուրքիայում**

Իմպերիալիստական Անգլիան, որը XIX դարի 70-ական թվականներից սկսած համաշխարհային շուկայում աստիճանաբար կորցնում էր իր առևտրաարդյունաբերական գերիշխանությունը, ավելի ուժեղացրեց դադուծային քաղաքականությունը: Նա, որոնելով արտահանման շուկաներ, հումքի աղբյուրներ և կապիտալ ներդրումների ոլորտներ, ձգտում էր նվաճել նորանոր երկրներ: Անգլիան ագրեսիվ պլաններ ուներ նաև Թուրքիայի նկատմամբ: Անգլիական կապիտալը վաղուց էր ներթափանցել Ոսմանյան կայսրություն, ուր արտահանվում էին անդլիական ֆարրիկադործարանային ապրանքները և որտեղից ներմուծվում էր յումր: Բացի այդ, անգլիական ֆինանսիստները կապիտալ ներդրումներ էին կատարում Անատոլիայում, յատկապես Երկաթուղաշինարարության մեջ:

Անգլիական իմպերիալիզմը մեծ տեղ էր հատկացնում Թուրքիային իր արևելյան քաղաքականության մեջ, նկատի ունենալով նրա ինչպես տնտեսական նշանակությունը, այնպես էլ ռազմաստրատեգիական դիրքն Առաջավոր Ասիայում: Կիսաֆեսդալական Թուրքիայում մեծ ասպարեղ էր դասել օտարերկրյա կապիտալը: «Կապիտուլյացիան պայմանագրերով ապահովված օտարերկրյա կապիտալը տիրապետում էր ժողովրդական տնտեսության բոլոր հիմնական ճյուղերը: Նա իր ձեռքում էր պահում թուրքական ամբողջ արդյունաբերությունը, ինչպես և Երկրի ողջ արտարին

առևտրի մենաշնորհը»<sup>1</sup>։ Թուրքիայում երկաթուղաշինությունը և երկաթուղիների ղեկավարությունը անգլիական, գերմանական և ֆրանսիական իմպերիալիստների մենաշնորհն էր։ Թուրք նավահանգիստները, բացառությամբ Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի, ինչպես և ժխախոտագործությունն ու մետաքսագործությունը, գտնվում էին ֆրանսիական, բամբակագործությունը՝ հունական, քարածխի ու պղնձի հանքերի շահագործումը՝ ֆրանսիական ու գերմանական ձեռնարկատերերի ձեռքում։

Օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Թուրքիա ըսկըսվել էր 1830—1840-ական թվականներից։ Սկզբում խոշոր դեք էր խաղում առևտրական, ապա արդյունաբերական ու ֆինանսական կապիտալը, որը Թուրքիային հասցրեց կապիտուլյացիոն ուժի մի։ «Կապիտուլյացիաները,— գրել է Կ. Մարքսը,— զրանք Դոան կողմից եվրոպական տարբեր ազգերին տրված կայսրական վկայականներ, հրովարտականեր և առանձնաշնորհումներ են... պայմանագրերից նրանք տարրերվում են այն կարևոր հասկանիչներով, որ հիմնված չեն պարտափորությունների փոխադարձության վրա, շահապրոված կողմերը չեն բննարկում համատեղ, և նրանք չեն հատատավում փոխադարձ շահավետության ու գիշման հիման վրա։ Ընդհակառակը, նրանք հանդիսանում են միակողմանի արտոնությունների շնորհում, որոնք, հետևաբար, համապատասխան կառավարությունը կարող է իր հայեցողությամբ ետ վերցնել»<sup>2</sup>։

Եվրոպական պետությունները Թուրքիայի հետ կնքել էին կապիտուլյացիոն պայմանագրեր, քանի որ ղուրտներ ամեն մի սյահավատ օտարականին դիտում էր թշնամի, ուստի ոչ ոք չէր հանդգնում առանց նախազգուշական միջոցառումների գնալ սուլթանների երկիրը, առևտուր կատարել։ Դրա համար էլ եվրոպական վաճառականները ձգտում էին իրենց համար ստեղծել բացառիկ պայմաններ ու արտոնություններ, որոնք հետագայում սարածվեցին բոլոր եվրոպացիների վրա։ Կապիտուլյացիաները սկիզբ էին առել վաղուց։ Նրանք սուլթանների կառավարությունների կողմից տրվող

<sup>1</sup> «Красный архив», 1924, т. 6 (43), стр. 5-6.

<sup>2</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 10, стр. 168—169.

միակողմանի արտոնություններ էին, որոնք ցանկացած մա-  
մանակ կարելի էր ետ վերցնել բայց XVIII դարի կեսերից,  
հատկապես XIX դարում, կապիտուլյացիաների բնույթը  
փոխվում է, նրանք դառնում են միակողմանի անիրավահա-  
վասար պարտավորություններ, որոնք ամրապնդվում են պաշ-  
տանագրերով: Կապիտուլյացիոն իրավունքից օգտվում էին  
եվրոպական մեծ պետությունները և ԱՄՆ-ը: Կապիտուլյա-  
ցիոն ուժի համաձայն օտարերկրյա վաճառականներն օգ-  
տվում էին մեծ արտոնություններից և ենթակա էին միայն  
իրենց երկրների հյուպատոսներին: Նրանք չէին ենթարկվում  
Քուրբական վարչական ու ստիկանական մարմիններին, պա-  
տասխանատու չէին նրանց առաջ անգամ այն դեպքում, երբ  
կատարած լինեին հանցագործություն: Նրանց անձն ու գույքն  
ապահովված էր:

Եվրոպական ֆաբրիկագործարանային ապրանքների վա-  
ճառահանման համար Թուրքիան ուներ լայն շուկա: Բացի  
այդ, մեծ էր նաև նրա գերը տարանցիկ առևտրի մեջ:  
Իր աշխարհագրական դիրքով Թուրքիան նման էր կամուր-  
ջի, որի վրայով եվրոպան առևտրական կապեր էր պահպա-  
նում Արևելքի երկրների հետ, իսկ Դարդանեյն ու Բոսֆորը  
հանդիսանում էին սեծովյան երկրների, Հայաստանի և վեր-  
ջինիս վրայով կատարվող արագ դարգացող տարանցիկ  
առևտրի ճանապարհները: Թուրքական բազմաթիվ նավա-  
հանգիստներն ու նրա տերիտորիաներով Արևելք տանող  
առևտրական ճանապարհներն այն ուղիներն էին, որոնցով  
եվրոպական արդյունաբերական ապրանքները տեղափոխ-  
վում էին Միջին Արևելք, անգամ Հեռավոր Արևելք, որտեղից  
Եվրոպա էին հոսում ոսկին, արծաթը, հումքն ու սննդամթեր-  
քը: Նրա նավահանգիստները դարձել էին առևտրական խո-  
շոր գործարքների հանգույցներ: Թուրքիան մեծ նշանակու-  
թյուն ուներ նաև եվրոպական առևտրաարդյունաբերական  
կապիտալի համար: Այդ իսկ պատճառով կատաղի պայքար  
սկսվեց եվրոպական խոշոր պետությունների միջև թուրքա-  
կան «ժսուանդության» բաժանման համար: Պայքարը գնում  
էր թուրքերի կողմից ճնշվող քրիստոնյաների պաշտպանու-  
թյան, բալկանյան սլավոնական ժողովուրդների, կամ «սուրբ  
վայրերի» ազատագրության պատրվակի տակ:



Թուրացած Օսմանյան կայսրության «ժառանգության» համար սուր պայքարի ամենաակտիվ մասնակիցներից էր գիշատիչ անգլիական իմպերիալիզմը, որը Թուրքիայում հետապնդում էր առևտրական, ֆինանսական, կոնցեսիոն և ռազմաստրատեգիական ու քաղաքական նպատակներ: Մեծ էր անգլիական առևտուրը Թուրքիայի հետ, և նրան հավասարը չկար: Եթե 1840 թ. Անգլիան արտահանում էր Թուրքիա 1440 հազ ֆ. սու. արծուղության ապրանքներ, ապա 1886 թ. այն հասավ 8 մլն ֆ. սու<sup>3</sup>, իսկ 1896 թ. տարեկան ապրանքաշրջանառությունը կազմեց 11,5 մլն ֆ. սու., այդ այն դեպքում, երբ ֆրանսիականը 5,6 մլն էր, ավստրո-հունգարականը՝ 4 մլն, դերմանականը՝ 3 մլն, իտալականը՝ 2,3 մլն, իսկ ուլսականը՝ 2,2 մլն ֆ. սու.<sup>4</sup>: Անգլիական բուրժուազիան առևտրական ուժեղ կապեր ուներ Օսմանյան կայսրության դանազան քաղաքների ու մասերի հետ: Կայսրության գլխավոր առևտրական հանգույցն Ասիայի ու Եվրոպայի ծովային ու ցամաքային ճանապարհների խաչմերուկում գտնվող Կոստանդնուպոլիսն էր, որի նավամատույցները յուրաքանչյուր օր մտնում ու դուրս էին գալիս արշյունաբերական ապրանքներով ու չումբով բեռնված տասնյակ անգլիական առևտրական նավեր: Կ. Պոլիսը բացառիկ ռազմաստրատեգիական և սենտեսական կարևոր նշանակություն ունեցող քաղաք էր, որի նվաճման մասին երազել էին բոլոր բանակալները, ովքեր ձգտել էին հաստատել համաշխարհային տիրակալություն: Կ. Պոլիսն ունի հոյակապ աշխարհագրական դիրք: Նա Եվրոպան միացնում է Ասիայի հետ, այն Ան ծովի բանալին է և կարևոր դիրք է դրավում Միջերկրական ծովի արևելյան մասում: Միաժամանակ Կ. Պոլիսը Փոքր Ասիայի գործարան էր, որտեղից ցամաքային առևտրական ճանապարհները ձգվում էին դեպի Հնդկաստան, անցնելով Հայաստանի, Միջագետքի և Պարսկաստանի վրայով: Նրա դերը մեծ էր նաև այն տեսակետից, որ այն մոտ էր Սուեզի

<sup>3</sup> Տե՛ս В. Луцкий. Лекции по новой истории Турции. М., 1937, лекция 10-я, էջ 2.

<sup>4</sup> Տե՛ս П. Е. Панафидии. Обзор русской торговли в Турции и причины ее слабого развития. Константинополь, 1910, таблица 1, էջ 8—9.

ջրանցքին, որի նշանակությունը XIX դ. դժվար էր գերազնուհատել: Կ. Պոլսի նվաճումն ապահովում էր տիրապետությունը Փոքր Ասիայում:

XIX դ. վերջին և XX դարի սկզբին Կ. Պոլիսը ձևակախորեն թուրքական տիրապետության տակ էր, իսկ իրականում այն պատկանում էր եվրոպական պետություններին: Այնտեղի բանկերը, կապի ու հաղորդակցության միջոցները, պահեստները, ծովափերը, անգամ փարոսները եվրոպական պետություններինն էին: Թուրքական կառավարությունը կարժես պահակ լիներ, որը պահում էր Կ. Պոլսի եվրոպական կապիտալիստների ոսկով լեցուն սնդուկները և արդյունաբերական ապրանքներով լի պահեստները: Կ. Պոլիսը դարձել էր սլաքաբարի կիզակետ և երբ որևէ մի սլետություն դիմում էր կոնկրետ քայլերի՝ փորձելով նվաճել Կ. Պոլիսը, մյուսները համախմբվում էին Թուրքիայի շուրջը: Ուստի չի կարելի չհամաձայնել Մ. Պավլովիչի հետ, երբ նա գրել է. «Եվրոպական առաջնակարգ պետությունները վաղուց Օսմանյան կայսրությունը բաժանած կլինեին միմյանց միջև, մտո-մտո կանեին թուրքական թագը, եթե միայն վերջինը շտիրապետեր այնպիսի թանկարժեք և միևնույն ժամանակ անբաժանելի գոհարի, ինչպիսին հանդիսանում էր Յարգրադը»<sup>5</sup>:

Ելնելով Կ. Պոլսի տնտեսական ու ռազմաստրատեգիական նշանակությունից, ժամանակին այն նվաճելու մասին մտածել է նաև ֆրանսիական կայսր Նապոլեոն I-ը, որին դեմ էր Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ը: Վերջինս ֆրանսիական դեսպան Կոլինկուրի հետ գրույցի ժամանակ, տառակելով Նապոլեոն I-ի Կ. Պոլիսը նվաճելու պլանին՝ դեմ, առում էր, որ այն իր սան բանալիի դեր է կատարում: Դեսպանը, շփոթելով Ալեքսանդր I-ի տեսակետը, ավելացնում է, որ եթե Ռուսաստանը դրավի Կ. Պոլիսը, ապա նրա ձեռքը կանցնի Տուլսի, Կորֆուի և համաշխարհային առևտրի բանալին<sup>6</sup>: Միանգամայն իրավացի էին և՛ ցարը, և՛ ֆրանսիական դեսպանը, քանի որ արտակարգ մեծ էր Կ. Պոլսի ռազմաստրատեգիական նշանակությունը և «Այն տերությունը,— գրել է

<sup>5</sup> М. П. Павлович, Революционная Турция. М., 1921, стр. 22.

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 23—24:

Կ. Մարքսը,—որը կտիրի Կոստանդնուպոլսին, Արևելքում միշտ կգիտվի որպես աշխարհի տիրակալ»<sup>7</sup>:

Կ. Պոլիսն իր կարևոր տնտեսական և ռազմաստրատեգիական նշանակությունը պահում էր նաև XIX դարի երկրորդ կեսին: Դրա համար էլ Արևելքն Արևմուտքի հետ միացնող, ծովային ու ցամաքային առևտրական ճանապարհների շանգույց, համաշխարհային առևտրի բանալի, միաժամանակ արտակարգ կարևոր ռազմաստրատեգիական դիրք ունեցող

Կ. Պոլիսը մշտապես գտնվում էր անդլիական կառավարության ուշադրության կենտրոնում, և նա չէր ցանկանում, որ այն անցնի խոշոր պետություններից որևէ մեկի տիրապետության տակ: Ընդհանրապես 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակից սկսած Անգլիան ավելի մեծ հետաքրքրություն էր հանդես բերում Առաջավոր Ասիայի նրկաամամբ, ձգտում էր կոնխել ցարական Ռուսաստանի առաջխաղացումը, որպեսզի միայն անգլիական արդյունաբերական ապրանքների վաճառահանման համար ապահովեր թուրքական շուկաները: Զարգացող անգլիական արդյունաբերությունը պահանջում էր շուկաների ընդլայնում: «Առևտրի անընդհատ ընդլայնման սուր պահանջը,— գրել է Ֆ. Էնգելսը,— այդ fatum-ը, որն ինչպես տեսիլք հետապնդում է ժամանակակից Անգլիային... Եթե անմիջապես չբավարարվի, առաջ կբերի ահալոր ցնցում»: Առևտրական մրցակցության հողի վրա «այդ երկրները կան և մշտապես կմնան թշնամիներ Արևելքում»<sup>8</sup>: Անգլիայի թշնամական քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ շարունակվեց ողջ XIX դարի ընթացքում՝ իր գաղափնակեան հասնելով ռուս-թուրքական պատերազմների տարիներին:

Անգլիայի համար մեծ նշանակություն ուներ նաև սև-ծովյան նավահանգիստ Տրապիզոնը, որովհետև 1840-ական իտականներից «Ռուսաստանի և Անգլիայի միջև առևտրական ճակատամարտի պաշար Հնդկաստանից տեղափոխվել էր Տրապիզոն»<sup>9</sup>: Այնտեղից անգլիական արդյունաբերական

<sup>7</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 281.

<sup>8</sup> Նույն տեղը, էջ 12—13:

<sup>9</sup> Նույն տեղը, էջ 13:

ապրանքները մուտք էին գործում Անատոլիայի խորքերն ու  
 Իրան: Անգլիան գլխավորապես արտահանում էր բրդյա, բամ-  
 բակյա, մետաքսյա գործվածքներ, թավիշ, պողպատե ու երկա-  
 թե ապրանքներ և շաքար, իսկ ներմուծում՝ բուրդ, մետաքսի  
 հումք, ծխախոտ, բրինձ, եգիպտացորեն և անասուններ:  
 1890 թ. Տրապիզոնի առևտրում խոշոր պետություններից և  
 ո՛չ մեկը չէր կարող համեմատվել Անգլիայի հետ: Անգամ  
 Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի առևտու-  
 րը, միասին վերցրած, չէր հասնում անգլիականին: Այն ու-  
 ներ հետևյալ պատկերը<sup>10</sup>:

Պետություններ	Արտահանում (ֆր.)	Ներմուծում (ֆր.)
Անգլիա	2.059620	517332
Ավստրիա ու Գերմանիա	3.615220	547370
Ֆրանսիա	1.790525	1984630

Տրապիզոնը կարևոր նշանակություն ուներ նաև անգլիա-  
 կան տարանցիկ առևտրի համար: Այնտեղից անգլիական  
 ապրանքները Հայաստանի վրայով անցնում էին հյուսիսա-  
 յին Իրան: 1890 թ. Տրապիզոնի վրայով Իրանի հետ կատար-  
 վող տարանցիկ առևտրում Անգլիան դարձյալ գերիշխող  
 դիրք ուներ եվրոպական մյուս խոշոր պետությունների հա-  
 մեմատ: Այդ են ապացուցում ստորև բերվող աղյուսակները<sup>11</sup>:

Պետություններ	Արտահանում (ֆր)	Ներմուծում (ֆր)
Անգլիա	11712750	1991340
Ավստրիա	2203480	261200
Ֆրանսիա	1903050	499850
Գերմանիա	331600	-

<sup>10</sup> Տե՛ս V. Cuinet. La Turquie d'Asie. Paris, 1892, vol. 1, էջ  
 33—34.

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 31—32:

Այսպիսով, 1890 թվականի տվյալներով Տրապիզոնի տեղական և տարանցիկ առևտրում առյուծի բաժինը պատկանում էր իմպերիալիստական Անգլիային: Դրա համար էլ Անգլիան խիստ շահագրգռված էր Տրապիզոնից Արևմտյան Հայաստանով դեպի Իրան զնացող առևտրական ճանապարհներում ազատ հաղորդակցությունն ապահովել: Սակայն XIX դ. վերջին տասնամյակում գերմանական ու ավստրո-հունգարական առևտրական ուժեղ մրցակցության հետևանքով Անգլիան արագ կորցնում էր իր մենաշնորհը Տրապիզոնի առևտրում: 1880—1910 թթ. Գերմանիայի առևտուրը Բուրքիայի հետ մեծացավ ավելի քան 35 անգամ<sup>12</sup>:

Անգլիական առևտրի համար կարևոր դեր էին խաղում նաև Օսմանյան կայսրության Բեյրութ, Բասրա, Յաֆֆա, Ալեքսանդրիա, Ալեքսանդրետ և Չմյունիա նավահանգիստները: Վերջինս «Ալեքսանդրիայի հետ վիճարկում էր արեւմտյան կիվերպուլի տիրոջ»<sup>13</sup>: Այդ նավահանգիստներով անգլիական ապրանքները ներթափանցում էին Սիրիա, Պաղատին, Իրաք, Եգիպտոս և Օսմանյան կայսրության մյուս մասերը: Անգլիայի արդյունաբերական բուրժուազիան, մանավանդ Մանչեսթրի մանածագործական արդյունաբերության արքաները, խիստ շահագրգռված էին եգիպտական առևտրում, քանի որ փարսվոնների աշխարհը բամբակի հումքի առատ երկիր էր: Ելնելով խոշոր բուրժուազիայի շահերից, Անգլիան 1882 թ. խաղաղարարի դիմակի տակ օկուպացրեց Եգիպտոսը: Թե որքան մեծ նշանակություն ունեւ եգիպտական բամբակն անգլիական մանածագործական արդյունաբերության համար, հստակ երևում է բամբակի պահանջարկի ու նրա արտադրանքի համեմատությունից: 1899 թ. Եգիպտոսը նավարեց 1.098 հազ հակ, իսկ 1900 թվին՝ 1.228 հազ հակ բամբակ: Անգլիական մանածագործական արդյունաբերության պահանջարկը համապատասխան տարիներին եղել է 3.432 հազ և 3519 հազ հակ բամբակ<sup>14</sup>: Հե-

<sup>12</sup> Տե՛ս Hugo Grothe. Türkische Asien und seine Wirtschafts-  
 ցուց. Frankfurt am Main, 1916, էջ 82.

<sup>13</sup> К. Мак-Коан. Наш новый протекторат. М., 1884, стр. 247.

<sup>14</sup> Տե՛ս М. П. Федоров. Соперничество торговых интересов на  
 Востоке. СПб., 1903, էջ 73.

տեւաբար Եղիպտոսը ապահովում էր անգլիական հզոր մանածագործական արդյունաբերութեան պահանջարկի մեկ երրորդը: Անգլիան, օկուպացնելով Եղիպտոսը, իր մենաշնորհը հաստատեց նրա արտաքին առևտրի վրա: Այդ պարզ երևում է խոշոր պետութիւնների հետ 1898 թ. Եղիպտոսի կասարած առևտրից<sup>15</sup>:

	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա և Ալժիր	Անգլիա	Ռուսաստան	Գերմանիա	Իտալիա
Հազար տոնլիններով						
Եղիպտոսը ներմուծել է	43830	10267	7163	4526	3035	4809
Եղիպտոսն արտահանել է	53408	<b>10838</b>	3968	17856	4690	3464

Այս տվյալները ցույց են տալիս, որ եղիպտական առևտրի մոտ կեսը պատկանում էր Անգլիային, որի համար Եղիպտոսը բամբակի հումքի հարուստ աղբյուր էր և արդյունաբերական ապրանքների վաճառահանման լայն շուկա: Բացի այդ, անգլիական իմպերիալիզմի համար Եղիպտոսն ուներ նաև կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն, քանի որ Սուեզի ջրանցքով էր անցնում դեպի Հնդկաստան և Անգլիայի արևելյան մյուս գաղութները տանող ծովային կարճ ճանապարհը:

1890-ական թվականների առաջին կեսում Անգլիայի վիճակը Եղիպտոսում դառնում է անկայուն, որովհետև թուրքական կառավարությունը, Ֆրանսիայի պաշտպանութեամբ, Անգլիայի առաջ բարձրացրեց Եղիպտոսն ապատելու հարցը: Ֆրանսիայի հետ համամիտ էր նաև Ռուսաստանը: Այդ նույն ժամանակ Անգլիան կորցնում էր իր հեղեման դիրքը բուն Թուրքիայում, մյուս իմպերիալիստական պետութիւնների, հատկապես Գերմանիայի, մրցակցության հետեանքով: 1870—

<sup>15</sup> Ազդուսակը կազմված է Մ. Պ. Ֆյոդորովի նշված աշխատության հիման վրա:

ական թվականներին Գերմանիան համարյա թե չէր մասնակցում թուրքական առևտրին, բայց դարավերջին նա բռնում էր շորորդ տեղը: Գերմանիայի ապրանքաշրջանառությունը Թուրքիայի հետ տարեցուտարի մեծանում էր ի հաշիվ անգլիական ապրանքաշրջանառության կրճատման: Դարավերջին գերմանական արդյունաբերական ապրանքները անգլիական ապրանքներին դուրս էին մղում ոչ միայն Թուրքիայից, այլև համաշխարհային շուկայից: Այդ հանգամանքը նկատի ունենալով, անգլիական բուրժուական պատմաբան Մակ-Կուլլը գրել է. «Առևտրական հարաբերություններում Գերմանիան և ոչ թե Ռուսաստանն է մեր մտանդավոր մրցակիցը»<sup>16</sup>:

Անգլիական իմպերիալիստների շահերն Օսմանյան կայսրությունում չէին սահմանափակվում առևտրի շրջանակներով: Նրանք Թուրքիան կոպուտում էին նաև Ֆինանսապես, սուլթանական կառավարությանը հասկացնելով ստրկացույիչ պայմաններով փոխառություններ և կնքելով շահավետ պայմաններով կոնցեսիոն պայմանագրեր: XIX դ. երկրորդ կեսը Թուրքիան սկսեց Ղրիմի պատերազմով և տնտեսական ու ֆինանսական դժվարություններով: Պատերազմի ժամանակից Թուրքիայի ֆինանսական վիճակի մասին Կ. Մարքսը գրել է. «Սուլթանի գրությունը ժամ առ ժամ ավելի է վատանում և ավելի խճճվում: Նրա ֆինանսական դժվարություններն աճում են առավել ևս, որովհետև նա կրում է ամբողջ պատերազմի ծանրությունը, չունենալով պատերազմում ոչ մի առավելություն»<sup>17</sup>: Այս պայմաններում սուլթանական կառավարությունը հարկադրված դիմում է արտաքին փոխառությունների, որոնք Թուրքիային հասցրեցին ստրկական վիճակի և վրոպական պետությունները, մասնավորապես Անգլիան, մեծ պատրաստակամությամբ տասնյակ միլիոնավոր ֆրանկ փոխառություններ էին տալիս Թուրքիային, նախ նրա նամար, որ Թուրքիան վարկերի դիմաց պարտավորվում էր տարեկան վճարել 7—13 %, մինչդեռ Եվրոպայում վճարում էին 3,38—4,77 %-ից ոչ ավելի, ապա՝ նրանք ձգտում էին փոխառությունների օգնությամբ սկզբում տնտեսապես,

<sup>16</sup> Мак-Колль. *История Турции*, т. 2, стр. 312—313.

<sup>17</sup> К. Маркс и Ф. Энгельс. *Соч.*, т. 9, стр. 217.

խիսկ հետո նաև քաղաքականապես իրենց ենթարկել սուլթանական կառավարությանը:

Ղրիմի պատերազմում «հաղթանակած» թուրքիայի պետական պարտքերը հասան 80 մլն ֆր.: Այդ դումարին ավելյացան նաև եվրոպական պետություններում դեսպանություններ պահելու ծախսերը<sup>18</sup>: Երկրի ֆինանսական դրությունը բարելավելու նպատակով թուրքական կառավարությունը կնքեց արտաքին փոխառությունների պայմանագրեր: Առաջին փոխառությունը կնքվեց 1854 թ. 75 մլն ֆր. գումարով, իսկ մինչև 1863 թ. օտարերկրյա պետությունների հետ կնքած առաջ փոխառությունների գումարը հասավ մեկ մլրդ ֆրանկի: Եվրոպական կապիտալի ներխուժումը թուրքիա ուղեկցվում էր հանդիսավոր հայտարարություններով, որ այն նպաստելու է երկրի առաջադիմությանն ու քաղաքակրթությանն ուղիով արագ զարգացմանը: Իրականում եվրոպական կապիտալը թուրքիայում խաղաց ճիշտ այնպիսի դեր, ինչպիսին անգլիական կապիտալը Հնդկաստանում, որի մասին Կ. Մարքսը գրել է. «Հնդկաստանում անգլիացիների տիրապետության պատմության էջերը հազիվ թե որևիցե բանի մասին խոսեն, բացի ավերումներից: Նրանց ստեղծարար աշխատանքը հազիվ թե երևա ավերակների կույտերի միջից»<sup>19</sup>:

Թուրքական կառավարությունը օտարերկրյա փոխառությունները երաշխավորում էր պետական տարբեր եկամուտներով՝ Եգիպտոսի վճարած հարկերով, Կ. Պոլսի, Զմյուռնիայի և մյուս նավահանգիստներից ստացված մարտային գումարներով: Դրանով իսկ սուլթանը եվրոպական վարկատու պետություններին իրավունք վերապահեց հսկելու այդ եկամուտների գանձման վրա, այսինքն՝ միջամտելու երկրի ներքին գործերին: 1873 և 1874 թթ. թուրքական կառավարությունը օտարերկրյա փոխառությունների դիմաց տարեկան վճարում էր 14 մլն լիրա, մինչդեռ պետական եկամուտը կազմում էր ընդամենը 18,5 մլն: Սկզբում փոխառություն-

<sup>18</sup> 1856 թ. Փարիզի կոնգրեսի որոշմամբ թուրքիային ընդունեցին եվրոպական պետությունների «կոնցերտի» մեջ:

<sup>19</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 225.



ների գումարով վճարում էին պետական բյուջեի դեֆիցիտը, իսկ հետո՝ նրա մեծ մասը ծախսվում էր փոխառությունները մարելու և տոկոսները վճարելու վրա: Եվրոպական պետությունների Թուրքիային հատկացրած փոխառությունները ստրկացուցիչ բնույթի էին:

1854—1874 թթ., քսան տարվա ընթացքում, Թուրքիան կրնքեց ավելի քան 5 մլրդ. Ֆր. գումարի փոխառություն, բայց ստացավ նրա միայն 57%-ը: Այդ ապացուցում է եվրոպական պետությունների ֆինանսական քաղաքականության գիշտաիշ բնույթը, որը Թուրքիային հասցրեց ստրկական վիճակի: Պատկերն ավելի պարզ կլառնա, եթե նշենք, որ սուլթանական կառավարութունը փոխառությունները մարում էր և նրանց տոկոսները վճարում անվանական գումարների հաշվով, որը կրկնակի մեծ էր փաստորեն ստացած գումարից: Այդ իսկ պատճառով փոխառությունների մարման ու տոկոսների վճարման գումարները տարեցտարի արագ աճում էին: Թուրքիայի վիթխարի պարտքերից Անգլիային պատկանում էր 14,2%-ը, որը կազմում էր 606604120 Ֆր., Ֆրանսիայինը՝ 60,3%, Գերմանիայինը՝ 21,3%, իսկ Իտալիայինը՝ 3,2%:

Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի վարկատուների ֆինանսական շահագրգռվածությունն այն հիմնական պայմաններից մեկն էր, որը Բեռլինի կոնգրեսում սրտչեց նրանց կառավարությունների քաղաքականութունը հուշկական հարցում և դիրքը Թուրքիայի նկատմամբ: Վարկավորող պետություններն Անգլիայի գլխավորությամբ պահստանեցին Թուրքիայի ձևական անկախությունը, որպես սուլթանին արված փոխառություններն հտ ստանալու երաշխիք: «Պետութունը և բանկային աշխարհն այստեղ հանդես են գալիս որպես մեկ դեմք»<sup>21</sup>: Թուրքիայի տնտեսական ու քաղաքական ստրկացման գործում մեծ դեր խաղացին օտարերկրյա բանկերը, որոնք իրենց ձեռքում էին պահում Թուրքիան էկոնոմիկայի առանձին ճյուղերը, հսկում արտաքին

<sup>20</sup> См. В. А. Гурко-Кряжии. Ближний Восток и державы. М., 1925, т. 12.

<sup>21</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 50—51.

առևտրի վրա, սահմանում հումքի ու ապրանքների արժեքները, սուլթանին հատկացնում փոխառություններ և վճարում վարկատուների տոկոսները: Այնտեղ օտարերկրյա բանկերն աճում էին այնպես, ինչպես անձրևից հետո սունկերը: Նրանցից ամենախոշորն Օսմանյան կայսրության բանկն էր, որն ուներ 80 բաժանմունք, որից Թուրքիայում՝ 52, Եգիպտոսում՝ 7, Կիպրոսում՝ 5, Հունաստանում՝ 5, Ֆրանսիայում՝ 2, Անգլիայում՝ 2 և այլ տեղերում՝ 7:

Օսմանյան կայսրության բանկը անգլո-ֆրանսիական կապիտալի միջնաբերդն էր Թուրքիայում: Միաժամանակ այն կատարում էր կենտրոնական բանկի դեր և ուներ մի շարք ֆունկցիաներ՝ 1. Թուրքական պետության զլխավոր գանձարանն էր, այսինքն՝ ընդունում էր պետական եկամուտները, վճարում բոլոր ծախսերը, սրի ղիմաց ստանում էր կոմիսիոն (միջնորդադրամի) տոկոսները, 2. բաց էր թողնում թուրքական թղթագրամներ (բանկնոսներ) և 3. կատարում առևտրական գործարքներ (տալիս վարկեր ու փոխառություններ, հաշվառում մուրհակները և այլն): Բացի այդ, Օսմանյան կայսրության բանկը մասնակցում էր մի շարք ֆինանսական-արդյունաբերական ձեռնարկումների և երկաթուղային կոնցեսիաների: Այն միայն անունով էր թուրքական, իրականում բանկը Թուրքիան մենաշնորհ ձեռով շահագործող անգլիական ու ֆրանսիական մասնավոր ֆինանսական հիմնարկ էր: Այդ բանկի գերը հասկապես մեծացավ 1881 թ. օսմանյան պարտքերի վարչության ստեղծման ժամանակից:

Անգլիայի Վոլդմից հրահրված 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն անուղղելի հարված հասցրեց թուրքական ֆինանսներին, որից հետո սուլթանական կառավարությունը հարկադրված հայտարարեց, որ պետությունն ապրում է ֆինանսական սնանկություն: Բեռլինի կոնգրեսում եվրոպական պետությունները փորձեցին վարկատու պետությունների ներկայացուցիչներից ստեղծել ֆինանսական հանձնաժողով, որը պետք է մշակեր միջոցառումներ Թուրքիայի պետական պարտքերը մարելու համար: Նման հանձնաժողովի ստեղծումը կուժեղացներ օտարերկրյա պետությունների միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին: Այդ իսկ պատճառով Բ. Դուռը մերժեց այդ առաջարկը և

փորձեց վարկատուների հետ առանձին-առանձին ընդհանուր լեզու գտնել, բայց նրան չհաջողվեց ապաստվել իմպերիալիստական գիշատիչների ճանկերից ու հարկադրված եղավ 1881 թ. համաձայնվել Կ. Պոլսում եվրոպական ֆինանսական հանձնաժողով ստեղծելու, որը կոչվեց օսմանյան պետական պարտքերի վարչություն: Սուլթանական կառավարության և եվրոպական ֆինանսական հանձնաժողովի միջև կնքվեց համաձայնություն, ըստ որի՝ 1. Թուրքական պետական պարտքերը կրճատվեցին կիսով չափ՝ 5,3 մլրդ-ից մինչև 2,66 մլրդ ֆրանկի<sup>22</sup>, 2. պարտքերի և նրանց սակոսների վճարումը երաշխավորվեց պանձվող հարկերով, աղի մենաշնորհից, սպիլից խմիչքներից, ծխախոտից, մետաքսից, ձկնարդյունարերությունից ստացած եկամուտներով, դրոշմատուրքով, վասալական երկրների վճարումներով, հավաքված մարսաչին գումարների «ավելցուկով» և այլ եկամուտներով: Այս համաձայնությունը սուլթանը ձևակերպեց 1881 թ. դեկտեմբերի 20-ի հրովարտակով, որը պատմության մեջ հայտնի է որպես 1299 թ. մուհառամի 28-ի դեկրետ:

Մուհառամի հրովարտակի համաձայն, շնայած Թուրքական պետական պարտքերի չափը սահմանվեց 2660930850 ֆր<sup>23</sup>, բայց դրանից վարկատու պետությունները վնաս չկրեցին, բանի որ 5,3 մլրդ անվանական փոխառությունից, ինչպես վերը նշվեց, Թուրքիան փաստորեն ստացել էր 3,012 մլրդ ֆր.: Բացի այդ, 1854—1881 թթ.՝ առաջին փոխառությունը կնքելուց մինչև սնանկացումը, սուլթանական կառավարությունը վարկատուներին վճարել էր 900 մլն ֆր, փաստական պարտքից մնացել էր 2,1 մլրդ ֆր: Հետևաբար կրճատումից չեստ էլ պարտքերի չափն իսկական գումարից մեծ էր 500 մլն ֆրանկով:

Օսմանյան պետական պարտքերի վարչությունը օգտը վում էր լայն իրազուեցնելից: Նրա հիմնման օրից Թուրքիայում ստեղծվեց երկու բյուջե, մեկը ծախսվում էր արտոնիրի, բանակի, պաշտոնեություն և այլ կարիքների վրա,

<sup>22</sup> Տե՛ս Архив внешней политики России Министерства иностранных дел СССР (далее АВПР), ф. «Посольство в Константинополе», 1897, д. 6285, л. 10.

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը:

խկ մյուսը հատկացվում պետական պարտքերի մարմանը: Եթե առաջինը դեֆիցիտային էր, ապա երկրորդը՝ ապահովված էր լավագույն եկամուտներով: Թուրքական պետական պարտքերի վարչությունը նոր ինքնուրույն ֆինանսական մարմին էր իր սեփական եկամուտներով ու բյուջեով: Նրա գործունեության հետևանքով թուրքական էկոնոմիկայի հիմնական ճյուղերից ստացվող եկամուտները յուրացնում էին անդլո-ֆրանսիական վարկատու բանկիրները, սրանք փաստորեն դարձան Թուրքիայի տնտեսական կյանքը տնօրինողներ: Սուլթանիզմը ավելի ու ավելի էր կորցնում իր ինքնուրույնությունը: Նկատի ունենալով արևմտա-եվրոպական պետությունների ազդեցության ուժեղացումը Թուրքիայի վրա, Կ. Պոլսի ռուսական, գեսպանատան պիվանագիտական աշխատակից Զինովեր Բ. Դոան արտաքին գործերի մինիստր Թեֆիկ փաշայի հետ ունեցած դրույցի ժամանակ ասում է. «Թուրքիան, ինչպես մենք նկատում ենք, ավելի ու ավելի շատ է ենթարկվում օտարերկրյա ազդեցությանը: Այժմ նրա եկամուտների համարյա թե մեկ երրորդը անցնում է օտարերկրացիների տնօրինությանը, որոնք բացահայտորեն ձգտում են իրենց ձեռքը վերցնել թուրքական արդյունաբերության բոլոր ճյուղերը, նրա եկամուտների բոլոր աղբյուրները»<sup>24</sup>:

Օսմանյան պետական պարտքերի վարչությունը թուրքական աշխատավորության ուսերին ծանր լուծ էր: Վարչությունն իր եկամուտները մեծացնելու նպատակով տարեցտարի բարձրացնում էր հարկերը և ուժեղացնում մոնոպոլիաների հսկողությունը: Եթե 1881 թվին՝ վարչության հիմնադրման տարում, նրա եկամուտը 1167820 թուրքական լիրա էր, ապա 1893—1894 թթ. այն հասավ 1978048 լիրայի<sup>25</sup>: Ընդ որում աղի մենաշնորհի եկամուտը մեծացավ 1,5, ձկնորսության մենաշնորհինը՝ 2, մետաքսի տասանորդինը՝ 4 անգամ: Օսմանյան պետական պարտքերի վարչությունը բացահայտորեն կողոպտում էր Թուրքիայի ժողովուրդներին: Առանձ-

<sup>24</sup> АВПР, ф. Политархив, 1899, д. 3452, л. 53. Секретное донесение Зиновьева от 16 сентября 1898, № 224.

<sup>25</sup> Шен АВПР, ф. Посольство в Константинополе, 1897, д. 6285, л. 20.

նապես աչքի էր ընկնում ծխախոտի մոնոպոլիան, որի վարչությունը կոչվում էր Ռեժի: 1890—1891 թթ. Ռեժին Չմյուռնիայի վիլայեթից ստացավ 18460383 ղուրուշ եկամուտ, որի համար նա ծախսել էր ընդամենը 4446685 ղուրուշ<sup>26</sup>: Ռեժին օգտվում էր բացառիկ իրավունքներից՝ ծխախոտի ապրանքների արտադրության, գնման ու արտահանման ասպարեզում:

Բ. Դռան վարկատու իմպերիալիստական Անգլիան, մյուս պետությունների հետ, Թուրքական ժողովրդից շորթում էր վերջին ղուրուշները և կուտակում միլիոններ: Երբ Թուրքահայատակ ժողովուրդներն ապրում էին կիսաքաղց ու թրշվառ վիճակում, նույն ժամանակ օսմանյան պետական պարտքերի վարչության եկամուտներն աճում էին առասպելական ձևով<sup>27</sup>:

Օտարերկրյա վարկատու պետությունները միջամտում էին Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքին, տնօրինում նրա էկոնոմիկան: Չնայած դրան, սուլթան Աբդուլ Համիդ II-ը շարունակում էր կնքել նորանոր փոխառություններ՝ երաշխավորելով դրանք արդյունաբերության տարբեր ճյուղերից ստացվող եկամուտներով: Դրանով իսկ նա էլ սովեր էր նպաստում իմպերիալիստական պետությունների կողմից Թուրքիայի հետագա ստրկացմանը:

Անգլիական իմպերիալիստները Թուրքիայում ունեին նաև կոնցեսիոն շահեր: Երկաթուղաշինությունը դարձավ այն գլխավոր լծակներից մեկը, որի օգնությամբ անգլիական կապիտալը ներթափանցում էր Թուրքիա և աստիճանաբար հաստատում իր հեղեմոնիան: Անգլիան Թուրքիայում առաջին երկաթուղաշինության նախագիծն առաջ քաշեց մինչև Սուեյի չրանցքի կառուցումը, ձգտելով նրա օգնությամբ ամրապնդել իր գիրքերը Մերձավոր Արևելքում և բարելավել հաղորդակցությունը Հնդկաստանի հետ: Այդ նպատակով 1830-ական թվականներին Եփրատ գետի հովիտ ուղարկեց հատուկ արշավախումբ՝ ուսումնասիրելու տեղանքն ու որոշելու Ալեքսանդրետ-Բազդադ-Պարսից ծոց երկաթուղու կառուցման

<sup>26</sup> Մ. V. Cuinet. La Turquie d'Asie. Paris, 1894, vol. 3, էջ 417.

<sup>27</sup> Մ. II. Бугаев. Экономические предпосылки образования турецкого национального государства, в сб. «Колониальный Восток», М., 1924, էջ 197.

ճանապարհը: Երկրորդ նախագիծն առաջ բաշվեց 1850-ական թվականներին, որով նախատեսվում էր կառուցել Տրապիզոն — Արևմտյան Հայաստան — Պարսից ծոց երկաթգիծ<sup>28</sup>: Անգլիական կոնցեսիոներներն առաջին երկաթգիծը կառուցեցին Զմյուռնիայից Ալյին՝ 1856 թ., սպանալով թուրքական կառավարությանից ներդրված կապիտալի 6% -ի շահով շահույթ<sup>29</sup>: 1863 թ. անգլիական կոնսուլիան իրավունք ստացավ կառուցելու նաև Զմյուռնիա — Կասսաբա երկաթուղին: Այս անգամ կոնցեսիոներներին թուրքական կառավարությանը երաշխավորեց ներդրված կապիտալի 5% -ի շահով շահույթ<sup>30</sup>:

«Ազատ» կապիտալիզմից իմպերիալիզմի էստիմացիան անցման էտապում փոխվում է գաղութներ և կախյալ երկրների շահագործման բնույթը: Իմպերիալիստական պետությունները սկսեցին նրանց դիտել ոչ միայն սրպես ապրանքների վաճառահանման շուկայի, այլ նաև սրպես կապիտալ ներգրումների ոլորտի: «Գաղութային քաղաքականության, — գրել է Վ. Ի. Լենինը, — բազմաթիվ «հին» գրգռատենտներն ֆինանսական կապիտալն ավելացրել է պայքարը հումքի աղբյուրների համար, կապիտալի արտահանության համար, «ազդեցության ոլորտների» համար, այսինքն՝ ձեռնտու գործարքների, կոնցեսիաների, մոնոպոլիստական շահույթների: ոլորտների համար և այլն, վերջապես տնտեսական տերիտորիայի համար՝ բնդհանրապես»<sup>31</sup>:

Իմպերիալիստական Անգլիան ուժեղացնում է կապիտալ ներդրումները երկաթուղաշինությունում և թուրքական տրանսպորտային տարբեր ճյուղերում: 1877—1878 թթ. առաջին թուրքական պատերազմից հետո Անգլիան սուլթանական կառավարությանն առաջարկում է Կ. Պոլիս — Կոնիա — Դիարբեքիր — Մարզին — Բաղդադ — Պարսից ծոց մագիստրալ երկաթգիծ կառուցելու նախագիծը, որի իրագործումը է՛լ ավելի կուժեղացներ անգլիական իմպերիալիզմի տնտեսական և քաղա-

<sup>28</sup> ՏԵՍ ԱՅՊՐ, ֆ. Посольство в Константинополе, 1911, д. 4177, л. 4.

<sup>29</sup> ՏԵՍ նույն տեղը:

<sup>30</sup> ՏԵՍ նույն տեղը, թ. 5:

<sup>31</sup> Վ. Ի. Լենին, Ե՛՛՛՛, հատ 27, էջ 516:

քական ազդեցությունը Փոքր Ասիայում, Արևմտյան Հայաստանում և Միջագետքում: Այդ ճանապարհն Անգլիայի համար կոնկրետ տնտեսական և ռազմաստրատեգիական անգնահատելի նշանակություն: Համաձայն նախագծի, երկաթուղին պետք է անցնի Ռուսաստանի կովկասյան սահմանների մոտից և պատերազմի դեպքում հնարավորություն կտար արագորեն զորքերը նետել ռուս-թուրքական սահմանը: Բացի այդ, այն կլինի ամենակարճ ցամաքային ճանապարհը դեպի Հնդկաստան: Անգլիական կառավարության այդ ազդեցիվ նպատակն իր արտահայտությունն է գտել Կ. Պոլսի անգլիական դեսպան Հ. Լեյարդի սուլթանին հղած դրությունում: «Լեյարդի ճանապարհը, — գրել է նա, — օգտակար է և Անգլիայի համար, որի շահերը պահանջում են, որ այն երկիրը, որով պետք է անցնի երկաթուղին, պատկանի ուժեղ, սնկախ և բարեկամ պետության: Դրա համար էլ Անգլիան, որպես Թուրքիայի դաշնակից, պատրաստ է պաշտպանելու երկաթգիծը Թուրքիայի թշնամիներին»<sup>32</sup>:

Բացի երկաթուղաշինական կոնցեսիաներից, անգլիական մոնոպոլիստները կապիտալ ներդրումներ կատարեցին նաև թուրքական առևտրաարդյունաբերական ձեռնարկություններում, որոնց թիվը հասնում էր երեք տասնյակի: Նրանցից մի քանիսն ընդգրկում էին երկրի արտադրության ամբողջ ճյուղեր, ինչպես արևելյան գորգերի կոմպանիան և դեղագործական տրեստը: Անգլիան խոշոր կապիտալ ներդրումներ կատարեց նաև Թեոսոլիայի բամբակագործական ձեռնարկություններում:

Սրբան խոշոր պետությունները, «աղատ» կապիտալիզմից անցնում էին խմբերիալիզմի տտագիային, այնքան ավելի էին ուժեղացնում պայքարը Թուրքիան ղավթելու համար, իսկ մոնոպոլիստական կապիտալի գաբաշրջանում, երբ աշխարհն արդեն բաժանված էր, խիստ սրվում է պայքարը կիսանկախ պետությունների համար, որոնք միայն ձևականորեն էին սնկախ, իսկ իրականում խճճված էին նրանց ֆինանսական գործարքների ու դիվանագիտական խարդավանքների ցանցում: «Հասկանալի է, — գրել է Վ. Ի. Լենինը, — որ այդ կի-

<sup>32</sup> АВПР, ф. Посольство в Константинополе, 1911, д. 4174, л. 6.

սանկալս երկրների համար մղվող պայքարը հասկապես պետք է սրվեր ֆինանսական կապիտալի դարաշրջանում, երբ մնացած աշխարհն արդեն բաժանված էր»<sup>33</sup>։ Մի այլ անդամ Վ. Ի. Լենինը նշում է, որ «երեք երկրներ են, որոնց առանձնապես եռանդուն են մասնատում (Թուրքիա, Չինաստան, Պարսկաստան)»<sup>34</sup>։

Իմպերիալիստական պետությունների ուժեղ մրցակցության հետևանքով Անգլիան աստիճանաբար կորցնում էր իր հեգեմոն դիրքը Թուրքիայում, ուստի անգլիական իմպերիալիստները ձգտում են իրենց գիրքերն ամրապնդել Օսմանյան կայսրության առանձին մասերում՝ Պարսից ծոցում, Եգիպտոսում, Պաղեստինում և Իրաքում, ելնելով Բրիտանական կայսրության համար այդ երկրների տնտեսական, ռազմաստրատեգիական նշանակությունից։

Օսմանյան կայսրությունում հեգեմոն դիրք հաստատելու համար Անգլիայից պատ պայքարում էին նաև Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան և մյուս իմպերիալիստական պետությունները։ «Ֆինանսական կապիտալը, — գրել է Վ. Ի. Լենինը, — ընդհանրապես ձգտում է որքան կարելի է շատ հող դավթել, ինչպիսի հող ուզում է լինի, որտեղ ուզում է լինի, ինչ կերպ ուղում է լինի՝ հաշվի առնելով հումքի հնարավոր աղբյուրները, վախենալով թե ետ կմնա այն կատաղի պայքարում, որ մղվում է շրջանված աշխարհի վերջին կտորների համար կամ արդեն բաժանված կտորների վերաբաժանման համար»<sup>35</sup>։

Ֆրանսիական իմպերիալիստները իրենց ազդեցությունը տարածելու և հեգեմոնիան հաստատելու նպատակով իրենց վրա էին վերցրել Արևելքի կաթսիկների «հովանավորությունը»։ Եվ հասան նրան, որ եվրոպական խոշոր պետությունները՝ Բեռլինի կոնգրեսի տրակտատի 62-րդ հոդվածով, իսկ Հռոմի պապը՝ 1882 թ. մայիսի 22-ի հատուկ շրջաբերականով ճանաչեցին Ֆրանսիայի այդ իրավունքը։ Իմպերիալիստական Ֆրանսիան, կաթոլիկական հավատը տարածելու մի-

<sup>33</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հատ. 27, էջ 462։

<sup>34</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 342։

<sup>35</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հատ. 27, էջ 465։



չոցով Արևելքի ժողովուրդներին իր կողմը գրավելու և ֆրանսիական նվաճողական քաղաքականության համար հող նախապատրաստելու նպատակով, ուղարկում էր հարյուրավոր միսիոներներ, հիմնում բարեգործական բնկերություններ, բացում դեղատներ, անվճար բուժարաններ, դպրոցներ, որսունոցներ, որոնք դառնում էին Ֆրանսիայի ազդեցությանը տարածող հիմնարկներ և ֆրանսերեն լեզուն պրոպագանդայի օջախներ: Գրանում ֆրանսիական կապիտալը խաղում էր սրտչակի դեր:

Յարական Ռուսաստանը ձգտում էր ղերիշիտոյ դիրք գրավել Կոստանդնուպոլսում, Արևմտյան Հայաստանում և հսկել սեծափյան նեղուցիների վրա: Նեղուցները Ռուսաստանի նախար անեին ինչպես խոշոր ռազմաստրատեգիական, այնպես էլ կարևոր անասական նշանակություն: Ռուսաստանն իր ապրանքների մեծ մասն արտահանում էր Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով:

1880-ական թվականներից Թուրքիայում սկսեց ակտիվ դեր խաղալ Գերմանիան, շնայած որ կանցլեր Բիսմարկը հայտարարել էր, որ ինքը չի կարգում Կ. Պոլսից ստացված հազորգումները, և իբր թե Գերմանիայի համար «ամբողջ արեելյան հարցը շարժե պոմերանական գրինադերի մի կողոսկրին»<sup>36</sup>: Իրականում նրա ժամանակ Գերմանիան ձեռնամուխ եղավ Ռուսաստանի և Անգլիայի դեմ Մերձավոր Արևելքում ռազմական պլանցդարմի ստեղծմանը: Դեռևս 1878 թ. Բեռլինի կոնգրեսում «ազնիվ մակլերի» դիմակի տակ նա հանդես եկավ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման դեմ, իսկ 1886 թվականին Բեռլինի ֆրանսիական դեսպան Էրրեստի հետ ունեցած գաղտնի գրույցի ժամանակ խոստովանում է, որ Ռուսաստանի դեմ միշտ պետք է Թուրքիային ունենալ պաշնակից<sup>37</sup>:

Բեռլինի կոնգրեսից հետո շեղոքացված և ծանր ֆինանսական միճակի մեջ գտնվող սուլթանական կառավարություն-

<sup>36</sup> O. Bismarck. Die politischen Reden Fürsten Bismarcks. Stuttgart, 1893, Bd VI, s. 461.

<sup>37</sup> *St'o* „Documents diplomatiques français, 1871—1914“, 1-ère série, vol. VIII, № 40.

նը ձգտում էր դաշնակից ունենալ, բայց նա չէր կարող դիմել ո՛չ Անգլիային, ո՛չ Ավստրո-Հունգարիային, ո՛չ էլ ցարական Ռուսաստանին, քանի որ կոնգրեսում «բարեկամի» դիմակի ներքո Անգլիան օկուպացրեց Կիպրոս կղզին, Ավստրո-Հունգարիան դավթեց Բոսնիան ու Հերցեգովինան, Ռուսաստանը գրավեց Կարսը, Արղահանը, Բաթումը և հա ստացավ 1856 թ. փարիզյան պայմանագրով կորցրած Բեսարաբիայի հարավային մասը: Նկատի ունենալով այդ, Վ. Ի. Լենինը գրել է. «Կողոպտում («բաժանում են») Թուրքիան (Ռուսաստանը + Անգլիան + Ավստրիան)»<sup>38</sup>: Թուրքական կառավարությունը չէր կարող դաշինք կնքել նաև Ֆրանսիայի հետ, քանի որ վերջինս օգտագործեց ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի պարտությունը և է՛լավելի ամրապնդեց իր դիրքերը Սիրիայում: Եվրոպական խոշոր պետություններից մընում էր միայն Գերմանիան, որի հետ սուլթանական կառավարությունը ձգտում էր կնքել ռազմական դաշինք և մտնել Եռյակ միություն մեջ, նպատակ ունենալով ամրապնդել Թուրքիայի միջազգային դրությունը: Ուստի Թուրքիան աստիճանաբար մերձենում է Գերմանիային, որն իր արտահայտությունը գտավ 1882 թ. գերմանական կառավարության կողմից, սուլթանի խնդրանքի համաձայն, թուրքական բանակի վերակառուցման համար ֆան դեր Հոլցի ռազմական միսիան ուղարկելու փաստի մեջ: Բիսմարկը նպատակ ուներ Թուրքիային աստիճանաբար դարձնել գերմանական ռազմական անիվի կցորդը: Միաժամանակ սկսեց Թուրքիա ներթափանցել գերմանական կապիտալը: Այդ հետևանք էր Գերմանիայի անցմանը իմպերիալիզմի դարաշրջանին: Գերմանական իմպերիալիստները որոնում էին արտահանման շուկաներ, հումքի աղբյուրներ և կապիտալ ներդրման ոլորտներ: Նրանք «ազատ» տերիտորիաներ էին փնտրում գաղութացման համար:

Գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսները լայն ազիտացիա ծավալեցին Փոքր Ասիան և Միջագետքը գաղութացնելու ուղղությամբ: Կերգերը, Շպրինգերը, Պրեսսելը, Ե. Զախաուն, Մ. Օպենհայմը և մյուսները գրեցին հրապուրիչ

<sup>38</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 843:

ու հմայող վերնագրերով բազմաթիվ գրքեր, որոնցում փառաքանում էին Մերձավոր ու Միջին Արևելքի կլիման, արգավանդ դաշտերը, գաղութացնելու համար նպաստավոր պայմանների առկայությունը և յեռնարդյունաբերության պարզացման հեռանկարները: Արևելքը գաղութացնելու գերմտական իմպերիալիստների ձգտումներն իրենց ամփոփումը դտան Պանգերմանական միության կողմից առանց ձևականությունների պահպանման, պաշտոնական կարող ճրատարակված «Գերմանիայի իրավունքը թուրքական ժառանգության նկատմամբ» հուշարրում: Գերմանիայի արդյունարևրական-ֆինանսական կապիտալի Ֆոքր Ասիա ներթափանցման գործում մեծ դեր խաղաց գերմանական բանկը, որի սցոկցությունը 1888 թ. օսմանյան-անատոլիական ալյաներական կամպանիան իրավունք ստացավ շահագործելու Հայդարաբադ-Իլմիդ երկաթուղագիծը, կառուցել ու շահագործման հանձնել Իլմիդ—էսկիշեհի—Անկարա Էրկաթուղին և գերադասություն՝ Անկարա—Բաղդադ նախատեսվող երկաթուղաշինարարության գործում<sup>39</sup>: Գերմանիան աստիճանաբար դուրս էր մղում մյուս իմպերիալիստական պետություններին և դարավերջին նրա ձեռքն անցավ անատոլիական երկաթուղիների կեսից ավելին<sup>40</sup>:

Գերմանական կապիտալի ներթափանցումը Թուրքիա հեշտացնելու նպատակով կայսր Վիլհելմ II-ը 1889 և 1898 թթ. ճանապարհորդեց Արևելք: Աբդուլ Համիդ II-ի հետ նա սերտ քաղաքական կապեր հաստատեց և իր հրապարակային ելույթներում հանդես եկավ Թուրքիայի բարեկամի և մասնավորապես ժողովուրդների հովանավորողի գերում: Ասլիմանին սիրաշատելու նպատակով Վիլհելմ II-ը նիկոլայ II ին պեմագույ ձևով գրում էր. «Եթե ևս ժամանեի այնտեղ, չտեսնեարս ոչ մի հովատ, արա, իհարկե, կղառնայի մահմեդական»<sup>41</sup>:

Թուրքիայում իր դիրքերն ամրապնդելու նպատակով իմ-

<sup>39</sup> Տե՛ս АВПР, ф. Посольство в Константинополе, 1911, д. 4174, л. 7.

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>41</sup> «Письмо Вильгельма II из Дамаска от 9 ноября 1898», в кн. «Переписка Вильгельма II с Николаем II. 1894—1914 гг.». М.-Пг., 1923, стр. 32.

պերիալիստական Գերմանիան ճարպկորեն օգտագործում էր Անգլիայի և Ռուսաստանի միջև եղած հակասությունները: Անգլո-ռուսական հակասություններն օգտագործելու նպատակով և Գերմանիայի արևելյան քաղաքականության համար ճանապարհ հարթելու վերաբերյալ դիվանագետ Մյուլլերը էկկարդշտայնին խիստ գաղտնի ցուցմունք է տալիս. «Ասիայում Անգլիայի ու Ռուսաստանի միջև մրցակցությունը մեր շահերի համար օգտագործել այնպես, որ մերթ խոնարհվելով բրիտանական առյուծի առաջ, մերթ դուրս տալով ռուսական արջին, մենք կարողանանք մեր երկաթգիծը անցկացնել մինչև Պարսից ծոցի Քուվեյթը»<sup>42</sup>:

Թուրքիայում գերմանական երկաթուղաշինարարությունը հանդիպեց անգլիական կառավարության համառ ու հետևողական դիմադրությանը: Վերջինս գերմանական կապիտալի Փոքր Ասիա ներթափանցելու մեջ տեսնում էր Մերձավոր Արևելքում և Հնդկաստանում իր շահերին սպառնացող վտանգ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, 1893 թ. հունվարին Բեռլինի անգլիական դեսպան Մելետը գերմանական կառավարությանը նախազգուշացրեց, որ Անգլիան չի կարող հանդուրժել, որ գերմանական բաժնետիրական իրավաբանական երկաթուղի կառուցի այնպիսի երկրներում, «որոնք Անգլիայի համար ունեն խոշոր նշանակություն, որպես Հնդկաստանի ապագա ուղու»<sup>43</sup>:

Ցարական Ռուսաստանը նույնպես դիմադրում էր գերմանական կապիտալի ներթափանցմանը Թուրքիա, որպեսզի պահպաներ իր դիրքերն Առաջավոր Ասիայում և խոչընդոտեր Գերմանիայի կողմից Թուրքիայի սպառազինումն ու ռուսթուրքական սահմանագլխին ռազմական ամբուստությունների կառուցումը, որոնք սպառնում էին Ռուսաստանի անվտանգությունը<sup>44</sup>: Հաշվի առնելով այդ, ռուսական կառավարու-

<sup>42</sup> «Die Grosse Politik der Europäischen Kabinette 1871—1914» Bd XVII, № 5213. Մյուլլերի խիստ գաղտնի հաղորդագրությունը էկկարդշտայնին, 1890 թ. հունվարի 31:

<sup>43</sup> „Die Grosse Politik...“, Bd XIV, №3966. Մարշալը Հատցֆելդին, 1893 թ., հունվարի 7:

<sup>44</sup> СЗ « АВПР, ф. Канцелярия, 1897, д. 31, ч. 1, лл. 117—118. Строго секретное донесение Нелидова Муравьеву, 22 июля 1897, № 119.

թյունը սուլթանից սրահանչում է դադարեցնել օտարերկրյա պետութիւններին Սև ծովի ափերին ու Կովկասի սահմանների մոտ երկաթուղաշինարարութեան կոնցեսիաների տրամադրումը, և հարց է բարձրացնում նշված վայրերում երկաթուղիների կառուցման իրավունքը վերապահել միայն Ռուսաստանին: Այդ մասին Կ. Պոլսի ռուսական դեսպան Զինովեին ուղարկված Լամզորֆի հրահանգի լուսանցքում ցարը կատարել է «С» նշումը, այսինքն՝ согласен (համաձայն եմ)<sup>45</sup>:

Առաջավոր Ասիայում ընդհարում էին ոչ միայն անգլո-գերմանական և ռուս-գերմանական, այլ նաև անգլո-ռուսական շահերը: Անգլիան փարում էր խիստ թշնամական քաղաքականություն Ռուսաստանի նկատմամբ: Այդ պարզ երեւում է ռուսական կառավարութեան 1890 թ. փետրվարի 4-ի շատուկ խորհրդակցութեան արձանագրութիւնից, որում ընդգծում է հետևյալն՝ որ «Վերջին 2—3 տարում անգլիացիների մերենայութիւնները մեր նկատմամբ (այսինքն՝ Ռուսաստանի—Է. Բ.) ակնառու կերպով ուժեղացել են»<sup>46</sup>:

Առաջավոր Ասիայում անգլո-ռուսական հակասութիւնների սրվելը ճկունորեն օգտագործեց Գերմանիան և իր դիրքերն ամրապնդեց Թուրքիայում: Երկար ու բարդ բանակցութիւններից հետո գերմանական իմպերիալիստներին հաջողվեց 1903 թ. թուրքական կառավարութիւնից ստանալ Բաղդադի մեծ երկաթուղագծի կառուցման կոնցեսիան, որը սկսար է Կ. Պոլիսը միացնել Բաղդադին և հետո հասնել Պարսից ծոց: Երկաթուղային կարճ ճանապարհով Բեռլինը կապելով Բաղդադի հետ, իմպերիալիստական Գերմանիան ցանկանում էր սպասնալ իր տիրապետութիւնը Թուրքիայում և ստանալ անգլիական գաղութային կաշարութեան թագի մարդարիտ Զնդիաստանի մատուցներում: Բաղդադի երկաթուղային շինարարութեան կոնցեսիան՝ գերմանական իմպերիալիզմի այդ «ճակատագրական ավանտյուրան»<sup>47</sup>, խիստ

<sup>45</sup> СГВ АВІІР, ф. Полнтархив, 1899, д. 3452, лл. 48—49. Проект секретной телеграммы Ламэдорфа Зиновьеву, 5 августа 1899, № 206.

<sup>46</sup> «Журнал особого совещания 1890 г.», «Красный архив», 1933, т. 1 (56), стр. 39.

<sup>47</sup> Վ. Ի. Անիև, Երկեր, հատ. 39, էջ 205:

անհանգստացրեց անգլիական իմպերիալիստներին, որոնք այն դիտեցին որպես սուր թուր՝ բարձրացված Հնդկաստանի վրա: Այն էլ սոյելի սրեց անգլո-դերմանական դաշուժային պայքարը և դարձավ առաջին համաշխարհային պատերազմի գլխավոր պատճառներից մեկը:

Իմպերիալիստական պետությունների պայքարը վաճառահանման շուկաների, հումքի աղբյուրների և կապիտալ ներգրումների ոլորտի համար Թուրքիան դարձրին կռիվահանդուր: Այդ դաժան պայքարում Գերմանիան աստիճանաբար դուրս է մղում Անգլիային, որը պարզ երևում է Անատոլիական երկաթուղաշինարարության օրինակից: «Սկզբում Փոքր Ասիայի բոլոր երկաթուղիները, — գրում է «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթը, — գտնվում էին Անգլիայի ձեռքում: Մերսին—Ադանա, Զմյուռնիա—Այդին, Զմյուռնիա—Կասսաբա, Հայդարիաշա—Իզմիր գծերը կառուցվել էին անգլիական դրամով, անգլիական նյութերով և լրիվ դրամով էին անգլիական տնօրինության տակ, իսկ այժմ միայն Զմյուռնիա—Այդին գիծն է մնացել անգլիացիների ձեռքին, մյուս բոլոր երկաթգծերը դուրս են սպրդել նրանց ձեռքից»<sup>48</sup>:

Այսպիսով, Անգլիան և մյուս իմպերիալիստական պետությունները, Թուրքիայի հետ կատարելով առանց էկվիվալենտ պայմանների առևտուր, տալով ստրկացուցիչ պայմաններով փոխառություններ, արտոնյալ պայմաններով կնքելով կոնցեսիոն պայմանագրեր, կատարելով խոշոր կապիտալ ներդրումներ, ատեղծելով Օսմանյան կայսրության պարտքերի վարչությունը, հիմնելով այնտեղ բանկեր, տնտեսապես ու քաղաքականապես ստրկացրին Թուրքիան, խոշրնդոտեցին նրա արտադրողական ուժերի վարգացմանը և կողոպտեցին կայսրության մեջ ապրող ժողովուրդներին: Կ. Պոլսի ավստրո-հունգարական դեսպանատան դիվանագիտական խորհրդատու Ն. Բիշոփը, որը մոտիկից ծանոթ էր թուրքական էկոնոմիկայի վիճակին և եվրոպական պետությունների քաղաքականության ծանր հետևանքներին, միանգամայն իրավացիորեն գրել է, որ հրեշավոր արյունոտությամբ համաշխարհային կապրտալը ծծում էր Օսմանյան կայսրության արյունը:

<sup>48</sup> «Московские ведомости», 24 мая 1896, № 141.

Բանկերը, երկաթուղային նախապարհները, ընդերքը և բնական հարստությունները շահագործող կոմպանիաները, գազի և ջրային ընկերությունները հիմնել են օտարերկրացիները, գտնվում են նրանց տնօրինության տակ և օգտագործվում են նրանց շահերի համար: Օտարերկրյա կապիտալը իր սադմում խեղդեց այն բուրքը, ինչ կարող էր Թուրքիային ապառնախափան անկախություն: Այնտեղ արհեստները քայքայվեցին՝ դո՛հ գառնալով օտարերկրյա արդյունաբերական ապրանքների մրցակցությունը: Թուրքիան շկարսդացավ կանգնեցնել մարտային արդիւյափակոցներ: Ընդարձակ Օսմանյան կայսրության բոլոր եկամտաները սուլթանի գանձարանը: Ճեն մանում, այլ կուտակվում են Լոնդոնի, Բեռլինի, Փարիզի և Վիեննայի բանկերում<sup>49</sup>:

Բուրք սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 1870-ական թվականների վերջերը Անդլիան թուրքական առևտրում և կոնցեսիոն գործում ուներ մենաշնորհ դիրք, իսկ սուլթանական կառավարությանը հետևադրած փոխառություններում՝ մեծ շահագրգռվածություն: Սակայն XIX դ. վերջին տասնամյակներում, կապիտալիզմի անհամաչափ զարգացման հետևանքով, երիտասարդ դիմանական բուրժուազիան արագ դարդանալով ու հզորանալով, աստիճանաբար Անգլիային դուրս է մղում Թուրքիայից: Անգլիայի մենաշնորհային դիրքի կորուստը Թուրքիայում հասցրեց Օսմանյան կայսրության status quo-ի պաշտպանման անգլիական կառավարության ավանդական բազարականության փոփոխությունը: Իմպերիալիստական Անգլիան Թուրքիայի «ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը» պաշտպանելու ին վե՛մագող բազաբականությունից անցավ նրա մասնատման բազաբականությանը, ընդ որում Անգլիան, հանդես գալով հայ ժողովրդի, ինչպես և թուրքաշարատակ մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հովանավորողի դիմակի տակ, ձգտում էր Օսմանյան կայսրության մասնատման ժամանակ զավթել առյուծի բաժինը և ամբանալ Հնդկաստան տանող ռազմա-

<sup>49</sup> S4'a N. Bischoff. La Turquie dans le monde. Paris, 1936, էջ 88.

ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհներին:

## 2. Անգլիական իմպերիալիզմի ռազմաստրատեգիական և տնտեսական շահերը Արևմտյան Հայաստանում

Առաջավոր Ասիայում արդյունաբերական ու ֆինանսական բուրժուազիայի շահերը պաշտպանելու համար իմպերիալիստական Անգլիան ձգտում էր իր դիրքերն ամրապնդել Թուրքիայի հյուսիս-արևելյան վիլայեթներում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում, որն ուներ կարևոր ռազմաստրատեգիական և տնտեսական նշանակություն: Իր աշխարհագրական դիրքով Հայաստանը կամուրջ էր Սև ու Կասպից ծովերի միջև և բանալին՝ Մերձավոր ու Միջին Արևելքի:

Հայաստանի ռազմաստրատեգիական դիրքի այդ կարեւոր նշանակությունը հայտնի էր գեոստատիկ աշխարհում, և այն տիրակալները, սվեքեր ձգտել են նվաճել Ասիան, առաջին հերթին երազել են ամրանալ Հայաստանում, որն իշխող դիրք էր գրավում Առաջավոր Ասիայում: Հին արևելքի պատմության մեջ Հայաստանի ռազմաստրատեգիական նշանակության մասին Ֆ. Լենորմանը գրել է. «Հայաստանը կարծես լեոնային հանգույց էր մի կողմից՝ Փոքր Ասիայի, մյուս կողմից՝ Մարաստանի, երրորդ կողմից՝ Ասորեստանի միջև, դրա համար էլ նրան տիրելը ստրատեգիական տեսակետից միշտ համարվում էր հույժ կարևոր՝ Ասիայի վրա իշխելու համար»<sup>50</sup>: Հայաստանն իր ռազմաստրատեգիական նշանակությունը պահպանում էր նաև XIX դարում, շնայած որ Լենորմանի նկարագրած ժամանակներից հետո հոսել էին շատ ջրեր՝ եկել ու գնացել էին տարբեր նվաճողներ, ստեղծվել ու քայքայվել քաղաքի վ պետություններ: Իմպերիալիզմի ստադիային անցման շրջանում, Հայաստանի ընդգրկմամբ համաշխարհային շուկայի ոլորտները, նրա ռազմաստրատեգիական նշանակությանն ավելացավ նաև տնտեսական նշանակությունը: Երբ Փոքր Ասիայում նոր էին սկսել

<sup>50</sup> Ф. Ленорман. Руководство к древней истории Востока до персидских войн, Киев, 1879, т. II, стр. 195.



կառուցվել առաջին երկաթուղիները, Սուեզի ջրանցքն էլ կառուցված էր, Սև ծովից բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող Հայաստանի վրայով դեպի Միջին ու Հեռավոր Արևելք տանող չորս ռազմաստրատեգիական ու քաղաքական-առևտրական մագիստրալ ճանապարհները բացառիկ նշանակություն ունեին Եվրոպայի ու Ասիայի միջև առևտրական հարաբերությունների պահպանման ու զարգացման գործում: Անդրիայի համար Արևմտյան Հայաստանի նշանակության մասին արևելագետ Լինչը նշել է. «Իժվար է գերազնահատել այդ երկրի՝ Թուրքական Հայաստանի (Արևմտյան Հայաստանի—Լ. Բ.), նշանակությունն Առաջավոր Ասիայի համար—հանգուցային կետ, որտեղից ճանապարհները տարածվում են Արևմուտք, Հարավ և Արևելք: Այդ ճանապարհները մի կողմից դուրս են գալիս Միջերկրական ծովի ափերը, իսկ մյուս կողմից՝ Պարսից ծոց»<sup>51</sup>:

Արևմտյան Հայաստանը լեռնային աշխարհ է, որը կտրում ու անցնում են բարձրաբերձ Պոնտական, Նեբքին և Հայկական Տավրոսի լեռնաշղթաները: Դրանք բնական անառիկ սամբույաններ են, որոնք վեր են խոչանդում Միջազգային ցածրալեռնների և Անատոլիական հարթավայրերի վրա: Արևմտյան Հայաստանի հարավային սահմաններում գտնվող Հայկական Տավրոսը, որը Մալաթիայից «Տ»-ի ձևով ձգվում է դեպի Արևելք, Հայկական լեռնաշխարհը բաժանում է Միջագետքի հարթություններից: Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի ամենաբարձր երկիրն է: Դրա համար էլ Գուրկո-Կրյաժինը Արևմտյան Հայաստանը բնութագրել է որպես «ամրոց, բարձրացած Անդրկովկասի հարավային սահմաններում... միջևարեղ, որին տիրելը կապահովի տիրապետությունը Հյուսիսային Պարսկաստանի և Իրաքի վրա»<sup>52</sup>: Հայաստանը քաղմաբնույթ, արտասովոր լեռնաշխարհ է: Այնտեղ են երկնահաս Արարատը, որի բարձրությունը 5156 մ է, Արագածը՝ 4096 մ, Միփանը՝ 3800 մ, լեռնային լճերից Սևանը, որի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 1900 մ,

<sup>51</sup> X. Ф. В. Линч. Армения. Путевые очерки и этюды, т. II, Тифлис, 1910, стр. 562—563.

<sup>52</sup> В. А. Гурко-Кряжин. . նշված աշխատ., էջ 28:

Ջրլորրը՝ 2000 մ, Բուրկ-Գյուլը՝ 2200 մ, Վանա լիճը՝ 1720 մ,  
և դրանց մոտ Արարատյան ցածրադիր դաշտը՝ 900 մ:

Նկատի ունենալով Առաջավոր Ասիայում հայկական լեռ-  
նաշխարհի գերիշխող դիրքը, անգլիական ժուռնալիստ Ա.  
Մակգոնալդը, 1890 թ. հայկական վիլայեթներում կատարած  
ճանապարհորդությունից հետո, անգլիական կառավարու-  
թյանը խորհուրդ է տալիս ամրապնդել «աշխարհի տանիքը»,  
հատկապես Կարինն ու Վանը, որպեսզի Արևմտյան Հայաս-  
տանը շանցնի Ռուսաստանի ձեռքը և նրա առաջ շրջվեն  
դեպի Միջագետք և Պարսից ծոց տանող ճանապարհները:  
Անգլիայի շահերը, հայտարարում է Մակգոնալդը, պահան-  
ջում են օգնել Թուրքիային Ռուսաստանի դեմ: Նա ցավով  
նշում է, որ Կարսն անցել է Ռուսաստանին և անգլիական  
կառավարության առաջ խնդիր է դնում՝ Արևմտյան Հայաս-  
տանում հաստատել ուսղմարադարական հեղեմոնի<sup>53</sup>:  
Անգլիական ժուռնալիստը հատուկ ուշադրություն է դարձ-  
նում Կարինի ու Վանի վրա, նկատի ունենալով, որ նրանք  
ունեն ինչպես անտևական, այնպես էլ խոշոր ուսղմաստրա-  
տեգիական նշանակություն: Նրանք առաջնակարգ ուսղմա-  
կան ամրոցներ էին, Ռուսաստանի դեմ թուրքական զորքերի  
համակենտրոնացման խոշոր կետեր: 1878 թ. Կարսը Ռու-  
սաստանին անցնելուց հետո, անգլիական իմպերիալիստների  
աչքում Կարինի դերն էլ ավելի մեծացավ: Պատահական  
չէր, որ Մակ Կոանը կառավարության տալիս հարց է բարձ-  
րացնում Կարինը աաղմական տեսակետից ավելի ամրապնդ-  
վել, այն դարձնել մի նոր «Պլենա և ալդալիստով փոխհաստու-  
ցել Կարսի կորուստը»<sup>54</sup>:

Արևմտյան Հայաստանը Անգլիան դիտում էր որպես  
Ռուսաստանի դեմ դալիք պատերազմի թատերաբեմ, որտեղ  
անգլիական ու ռուսական մարտական սվինները կխաչաձև-  
վեն Մերձավոր ու Միջին Արևելքը նվաճելու համար: Դրա  
համար էլ անգլիական էքսպանսիոնիստները կառավարու-  
թյունից պահանջում էին այն դարձնել ուսղմական պլաց-

<sup>53</sup> St' A. Macdonald. The Land of Ararat roof of the world. London, 1893. էջ 161, 192, 325.

<sup>54</sup> К. Мак-Коан. նշված աշխատ., էջ 257:

դարմ: Անգլիական իմպերիալիզմի գաղափարախոս, համայնքների պայտաթի անդամ Մակ Կոանը ցինիկաբար գրել է, որ Արևելքում իրենց դալիք ընդհարումը կլինի Ռուսաստանի հետ և «գլխավոր ուժերի հարվածը պետք է լինի Ասիայի կողմից»<sup>55</sup>: Այստեղից հասկանալի է, թե ինչու Բեռլինի կոնգրեսից հետո Անգլիան Փոքր Ասիայի և Արևմտյան Հայաստանի հյուպատոսներ նշանակեց գինձորականների, որոնք փոխանակ հսկելու քրիստոնյաների համար նախատեսված ռեֆորմների իրագործման վրա, զբաղվում էին հետախուզությամբ, ռազմական քարտեզներ կազմելով, տեղանքի և ճանապարհների ուսումնասիրությամբ: «Մեր միսիան,— խոստովանել է Փոքր Ասիայի անգլիական գլխավոր հյուպատոս Չ. Ուիլսոնը,— ըստ էության քաղաքական էր, բայց մենք որոշել էինք հավաքել որքան կարելի է շատ տվյալներ այդքան քիչ հաշտնի, բայց շափազանց հետաքրքրական երկրի մասին»<sup>56</sup>: Երանք, ռազմական նկատառումներով, նկարահանում էին Տավրոսը, սկսած Լիկիական լեռներից մինչև Պարսկաստանի սահմանը, Կիլիկիայի հարթավայրերը, Պափլագանիայի և Պոնտոսի սրոշ մասերը, ինչպես և ուսումնասիրում ու նկարահանում էին բոլոր ճանապարհները»<sup>57</sup>:

Անգլիայի ուժեղ հետաքրքրությունը դեպի Արևմտյան Հայաստանը բացատրվում է նաև նրանով, որ անգլիական բուրժուազիան ձգտում էր այն պահել Թուրքիայի կազմում, որպեսզի չուժեղանային Ռուսաստանի դիրքերն Առաջավոր Ասիայում և Թուրքիան միշտ գտնվեր իր ազդեցության տակ: Ես փախելուս էր, որ եթե Ռուսաստանն ամբապնդվի Արևմտյան Հայաստանում, ապա կարող է սպառնալ Բոսֆորին ու Կարգանեկին: Ուստի ես, անանասական ու ռազմաստրատեգիական նկատառումներով, նպատակ ունեի Թուրքիան դարձնել ռազմական բազա ընդդեմ Ռուսաստանի: Անգլիան

К. Мак-Коан, *նշված աշխատ.*, էջ 2:

<sup>55</sup> Ч. Уильсон. Заметки по физической и исторической географии Малой Азии, в кн. «Известия Кавказского отдела императорского русского географического общества» (далее—«ИКОИРГО»). Тифлис, 1885, т. VIII, вып. 2, Приложение, стр. 51.

<sup>57</sup> Նույն տեղը:

դիտեր, որ սևծովյան նեղուցները տիրող պետութիւնը, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, «քմահաճորեն կարող է բացել և փակել դեպի Միջերկրական ծովի այդ հեռավոր անկյունը տանող մուտքը»<sup>58</sup>: Ռուսաստանի առաջխաղացման շնորհիվ Սև ծովը կարող է դառնալ ռուսական ծով և այդ դեպքում «Տրապիզոնը կդառնա ռուսական նավահանգիստ», իսկ Դանուբը՝ ռուսական գետ»<sup>59</sup>: Դրա հետևանքով մեծ վնաս կկրի անգլիական խոշոր բուժուսույթին: Անգլիական առևտրին կհասցվի ծանր հարված: Այդ իսկ պատճառով բուրժուական Անգլիայի քաղաքականութիւնը խիստ թշնամական էր Ռուսաստանի նկատմամբ: «Անգլիան,— գրել է Ֆ. Էնգելսը,— չի կարող համաձայնվել, որ Ռուսաստանը նվաճի Դարդանելը և Բոսֆորը: Այդ բանը և՛ առևտրական, և՛ քաղաքական իմաստով ծանր, եթե ոչ մահացու, հարված կհասցնէր բրիտանական հզորութեանը»<sup>60</sup>:

Արևմտյան Հայաստանը իմպերիալիստական Անգլիայի ուշադրութեան կենտրոնում էր նաև նրա համար, որ թուրքական Ասիան իրար էր կապում Եվրոպական, ասիական և աֆրիկյան մայրցամաքները, իսկ հայկական վիլայեթները՝ թուրքական Ասիայի զանազան մասերը: Հայաստանն այդ մայրցամաքներն իրար հետ կապող օղակի հանգույցն էր, և ինչպես ճիշտ նշել է գերմանական պատմաբան Ա. Շրայնեբերը, այն կամուրջ էր Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միջև<sup>61</sup>: Հայկական լեռնանցքներով էին անցնում թե՛ առևտրական, թե՛ ռազմական ճանապարհները, թե՛ քարավանները և թե՛ բանակները, որպեսզի իջնեին անատոլիական հարթավայրերը, գուրս գային դեպի Սիրիա, Տիգրիսի ու Եփրատի հովիտները: Արևմտյան Հայաստանն «Անիկա բանալի մըն է, որ աշխարհի բոլոր ճամբաներուն դուռները կը բանայ ու կը փակէ»<sup>62</sup>: Դրա համար էլ անգլիական իմպերիալիստները

<sup>58</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 13.

<sup>59</sup> Նույն տեղը, էջ 14:

<sup>60</sup> Նույն տեղը, էջ 11:

<sup>61</sup> Sk' u Albert Sehr einer. Zur Geschichte der Deutschen Aus sen Politik 1871--1945. Berlin, 1955, Bd 1, էջ 107:

<sup>62</sup> Մ. Արարյան, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, վերլուծումներ հայկական հարցի շուրջը, Կահիրե, 1948, էջ 267:

դեմ էին Արևմտյան Հայաստանի միացմանը Ռուսաստանին, գտնելով, որ այդ բայով ցարական բանակի առաջ կբացվեն Եգիպտոսի ճանապարհները: Անգլիացի պատմաբան Սեթոն Վաթսոնը, կառավարութեանը զգուշացնելու նպատակով, գրել է, որ Հայաստանը Սիրիայի բանալին է, Սիրիան՝ Եգիպտոսի, իսկ ով նվաճի Եգիպտոսը, կստանա Աֆրիկայի բանալին<sup>63</sup>: Իմպերիալիստական Անգլիան վախենում էր կորցնել Եգիպտոսն ու Սուեզի ջրանցքը, որոնք նրա համար ունեին անդնահատելի նշանակություն:

Արևմտյան Հայաստանի արտակարգ կարևոր ռազմաստրատեգիական նշանակությունից ելնելով, Կ. Պոլսի ռուսական դեսպան Ն. Պ. Իգնատևը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ցարական բանակի գլխավոր շտաբին խորհուրդ էր տալիս զորքերի գլխավոր հարվածն ուղղել դեպի Անատոլիայի խորքերը, ոչնչացնելով Բ. Դոան հրբուխի անցումը, որը կաթվածահար կանի նրան և կառայնովի արագ հաղթանակը: Բացի այդ, ասում էր նա, Ասիայում թուրքական տիրույթների գրավումն ավելի մեծ նարված էլիսի մուսուլմանների տիրակալին, քան թե եվրոպական Թուրքիայի գերազանցապես սլավոններով բնակեցված մի բանի մարդերի կորուստը<sup>64</sup>:

Առաջավոր Ասիայի և Թուրքիայի համար Արևմտյան Հայաստանի ռազմաստրատեգիական նշանակության վրա ուշադրություն են դարձրել նաև Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, այն կապելով նրա տնտեսական ու քաղաքական դրություն և աշխարհագրական դիրքի հետ: «Փոքր Ասիան և Հայաստանը,— գրել են նրանք,— ... կազմում են շտեմարան, որից միջո վերցրել են մատերիս թուրքական բանակի համար»<sup>65</sup>, և կանգ են առել ռուս-թուրքական պատերազմների ժամանակ հայկական առանձին քաղաքների խաղացած կարևոր դերի վրա: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսն ընդգծել են, որ «Հին Հայաստանի պատվար»<sup>66</sup> Կարսը ամենահարուստ փոշա-

<sup>63</sup> Տե՛ս R. W. Seton-Watson, *Disraeli, Gladstone and the Eastern question*. London, 1935. էջ 222

<sup>64</sup> Տե՛ս Записки графа Н. П. Игнатьева в журн. «Исторический вестник», июнь 1914, т. 136, էջ 838.

<sup>65</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 5.

<sup>66</sup> Նույն տեղը, էջ 117:

յությունն է: Այն բերդաքաղաք է, ունի բարենպաստ կլիմա, մտտ է Ռուսաստանի անդրկովկասյան սահմաններին, «գրտնըվում է ռուսական Գյումրի ամրոցից ընդամենը երկու օրագնաց հեռավորության վրա» և «Կարինի բանալին է»<sup>67</sup>: Ֆ. Էնգելսը Կարսի դերը ռուս-թուրքական պատերազմներում այնքան բարձր է գնահատել և պատերազմների ճակատագրի համար որոշիչ, որ Ղրիմի պատերազմի ժամանակ դրել է՝ Թուրքիայի ու նրա դաշնակիցների կողմից Սեաստապոլի հարախախտման, Կերչի, Կինբուրնի, Եվպատորիայի և Չերկեսիայի մի քանի բերդերի գրավումը «չունեն այնքան արժեք, որքան ռուսական երկրորդ կամպանիան Ասիայում, նրա գլխավոր արդյունք Կարսի և նրա փաշայության նվաճումը»<sup>68</sup>: Կարսը, որ մինչև 1877 թ. գտնվում էր Ռուսաստանի սահմանադրին, պատերազմների ժամանակ թուրքական բանակի հենարանն էր: Այն հարձակվող բանակին հնարավորություն էր տալիս համակենարոնացնելու իր ուժերը, ռազմամթերքի ու պարենի պաշարները, իսկ անհաջողության դեպքում՝ ետ քաշել ուժերը, պատասպարվել ու փրկվել վերջնական ջախջախումից: Ականատեսներից մեկը նշում է, որ Կարսի նշանակությունը միշտ էլ մեծ է եղել, «Նա հաշիվում է Արևելքի հաստատուն պատվորը, Ասիական Թուրքիայի սոռաչին բերդը»<sup>69</sup>:

Կարսի դերը մեծ էր ինչպես սահմանապահության, այնպես էլ տնտեսական տեսակետից: Կարսը Տրապիզոնից Հայաստանի վրայով Պարսկաստան տանող առևտրական ճանապարհների խոշոր հանգույց էր և սահմանական բազա: Այդ մասին Կ. Մարքսը գրել է, որ եթե Ռուսաստանը Կարսի հետ տիրի նաև Բաթումին, նա կարող է փակել «Տրապիզոնի վրայով կատարվող առևտուրն Անդլիայի և Պարսկաստանի միջև և սահմանական գործողությունների հենակետ ստեղծել, ինչպես Անդլիայի, այնպես էլ Փոքր Ասիայի դեմ»<sup>70</sup>:

<sup>67</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, с. 611.

<sup>68</sup> Նույն տեղը, т. II, стр. 615:

<sup>69</sup> Центральный государственный исторический архив г. Ленинграда (ЦИИА г. Ленинграда), ф. 1018, опись 3, д. 77, л. 1. Հայաստանի վերաբերյալ այս արխիվի նյութերն օդաղործված են միկրոֆիլմերից, որոնք պահպանվում են Հայկ. ՍՍՀ-ի ՊԿՊԱ-ում:

<sup>70</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 117.

Կարսը Ռուսաստանին անցնելուց հետո Թուրքիայի վերջին հենարանը Հայաստանում մնաց Կարինը, որը նման էր բնական ամրոցի, հիանալի ապահովված թևերով և ճակատով՝ ուղղված Կովկասի դեմ<sup>71</sup>: Այն, գտնվելով բերքառատ դաշտերի մեջ, թուրքական բանակի համար կուտակում էր զանազան սևասևի պարենամթերքի խոշոր պաշարներ: «Կարինում էին կենտրոնացված,— գրել է Ֆ. Էնգելսը,— Հայաստանում գտնվող բոլոր ռազմական պահեստները»<sup>72</sup>: Թուրքական կառավարությունը, դնահատելով Կարինի արտակարգ կարևոր ռազմաստրատեգիական նշանակությունը, հատուկ ուշադրություն էր դարձնում նրա պաշտպանության կազմակերպման վրա: Սուլթանական կառավարությունը իրավացիորեն հաշվում էր, որ Կարինի անկմամբ կբացվեին Անատոլիայի դռները և հարցականի տակ կդրվի թուրքական պետության դոյուքյունը: 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ սուլթանը անատոլիական II բանակի ղեկավոր հրամանատար Ահմեդ Մուխթար փաշային հեռագրում է. «Իիրքերը, որոնցում դուք այժմ գտնվում եք, Ասիայի ամենակարևոր կետն է» ու թշնամու ղեկավոր նպատակը: Եթե թշնամին գրավի Կարինը, ապա պետությանը կհասցվի «ամենկարադրելի ծանր վերք» և հրամայում է Կարինի պաշտպանության համար «թափել զորքի և դենք բռնելու կարողություն ունեցող բնակիչների արյան մինչև վերջին կաթիլը»<sup>73</sup>: Ընդգծելով Կարինի պաշտպանության առանձնահատուկ կարևորությունը, մի այլ անգամ թուրքական կառավարությունը ասիական ռազմաճակատի մուշիրին՝ ղեկավոր հրամանատարին, հղած հրամանում գրում է. «Կարինը Ասիայի բանալին է և Թուրքիայի հույսը: Եթե թշնամին մտնի այնտեղ, ապա միայն մաքաբեն կարող է կանխել վտանգը... դրա համար էլ մենք պիտք է գործադրենք մեր բոլոր ուժերը Կարինը

<sup>71</sup> См. «Военная энциклопедия», Петербург, 1911, т. III, № 47.

<sup>72</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. II, стр. 614.

<sup>73</sup> «Сборник турецких документов о последней войне», Перев. с турец., СПб, 1879, стр. 86.

պահելու համար»<sup>74</sup>։ Նրա դերը շատ մեծ էր, որովհետև «Եթե Կարսը, — գրել է Կ. Մարքսը, — Կարինի բանալին է, ապա Կարինը հանդիսանում է Կոստանդնուպոլսի բանալին և միամամանակ այն կետրոնը, որտեղ խաչաձևվում են Անատոլիայի ստրատեգիական ու առևտրական ճանապարհները»<sup>75</sup>։

Կարինն Արևմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքն էր, որ Կովկասը կապում էր Թուրքիայի ու Իրանի հետ և, դանդաղելով սուսական սահմանների մոտ, հանդիսանում էր հյուսիս-արևելյան Թուրքիայի ամենախոշոր ազմական բազան։ Տ. Էնդելսը նշել է, որ Թուրքիայի համար Կարինն ունի այնպիսի տնտեսական ու ազմաստրատեգիական նշանակություն, ինչպիսին Անգլիոպկասի համար՝ Թիֆլիսը։ «Կարինը Թուրքիայի կողմից, — գրել է նա, — Թիֆլիսը՝ Ռուսաստանի, հանդիսանում են կրկու անմիջական ազմական գործողությունների բազաներ, որոնց կորուստը անխուսափելիորեն կարող է հասցնել մերձակա բոլոր մարզերի կորստին»<sup>76</sup>։

Անգլիական իմպերիալիստները, պայքարելով Արևմտյան Հայաստանում իրենց հեղեմոնիան պահպանելու համար, գիտեին, որ Կարինում իշխող, Անգլիայի նկատմամբ թշնամական դիրք ունեցող պետությունը ցանկացած ժամանակ կարող է փակել Տրապիզոնից Հայաստանի վրայով անցնող անգլո-իրանական առևտրական ճանապարհը, դառնալ Պարսկաստանի և Փոքր Ասիայի մեծ մասի հետ եղած կապերի տերը և ստեղծել ազմական գործողությունների բազաներ ինչպես Փոքր Ասիայի, այնպես էլ Անգլիայի դեմ։ Ահա ինչու Կարինն անգլիական իմպերիալիստների աչքում սահմանում էր այնպիսի նշանակություն, ինչպիսին ունեւր ամբողջ Հայաստանը։ «Իրոք, — գրել է Կինչը, — Կարինն իր մեջ կենտրոնացնում է ամբողջ Թուրքական Հայաստանի նշանակությունը»<sup>77</sup>։ Նյնելով Կարսի և Կարինի այդ կարևոր նշանակու-

<sup>74</sup> «Материалы для описания русско-турецкой войны 1877—1878 гг. на Кавказско-малоазнатском театре», Тифлис, 1907, т. III, стр. 138.

<sup>75</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. II, стр. 637.

<sup>76</sup> Նույն տեղը, Соч., т. 9, стр. 450.

<sup>77</sup> X. Ф. Б. Линч. *Նշված աշխատ.*, т. II, стр. 255.



Յլունից, ցարական կառավարությունը սուս-թուրքական պատերազմների ժամանակ փոքր-ասիական ռազմաճակատի հրամանատարությունն առաջ միշտ խնդիր էր դնում գրավել այդ բերդաքաղաքները<sup>78</sup>։

Կարինը, որպես Առաջավոր Ասիայի կարևոր ռազմատրատսեղիական կետ, գրավել էր նաև գերմանական ռազմական մասնագետների ուշադրությունը։ Նրանցից Գ. Գրոտեն Կարինի մասին գրել է. «Միայն նվաճելով այդ բերդը, թշնամին կարող է երազել անատոլիական նահանգների նվաճման և Կոստանդնուպոլսի վրա Փոքր Ասիայի վրայով արշավելու մասին։ Միանգամայն իրավացիորեն Կարինը համարվում է Ռուսիայի ամբողջ արևելյան տիրույթների բանալին»<sup>79</sup>։

Կարինի և Կարսի հետ Երզնկան, Տիգրանակերտը, Վանը, Սևրաստիան կազմում էին բերդաքաղաքների շղթա և Արևմրտյան Հայաստանը պարձնում անառիկ երկիր։ Երզնկա քաղաքը, որը գտնվում է բարձր սարահարթում, Հայաստանը կապում էր Անատոլիայի հետ։ Երզնկայի գրավմամբ կարելի էր ամբողջ անդրկովկասյան ռազմական թատերաբեմը կարել ու չեզոքացնել «Փոքր Ասիայից և կալսություն մայրաքաղաքից»<sup>80</sup>։ Զափազանց կարևոր նշանակություն ունենալու Տիգրանակերտը, որի տնտեսական և ռազմաքաղաքական նշանակության մասին կինը գրել է. «Տիգրանակերտում իմնավորված պետությունը կարող է իրեն հաշվել տանը և Պարսից ծոցում, ունենալով իր կողմը վիթխարի պոտենցիալ հարստությամբ երկիր։ Դրա համար էլ լավ կլինի, եթե մենք որրան կարելի է շուտ դիտակցենք, որ Առաջավոր Ասիայում անդրկովկասյան բաղադրականության հիմնական հոգսը պետք է լինի Միրիայից մինչև Հնդկաստանի սահմանի լեռները նրա ամբողջականության անփոփոխ պահպանումը»<sup>81</sup>։

<sup>78</sup> *Сбън* «Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг.», Тифлис, 1904. Приложение, էջ 16.

<sup>79</sup> Г. Гроте. По Азиатской и Европейской Турции. Перев. с нем., М., 1904, стр. 108.

<sup>80</sup> П. А. Томилов. Военный обзор причерноморского театра Азиатской Турции. СПб., 1913, стр. 97.

<sup>81</sup> X. Ф. Б. Линч. *նշված աշխատ.*, հատ. II, էջ 569։

Արևմտյան Հայաստանով անցնում էին Կարին—Մամա-  
խաթուն—Երզնկա—Ռիֆայիե—էնդերես—Սըվաղ (Սերաս-  
տիա) տնտեսական ու սաղմական նշանակություն ունեցող  
խճուղային ճանապարհները: Նրանք Հայաստանը կապում  
էին Փոքր Ասիայի հետ: Արևմտյան Հայաստանի բարձրա-  
բերձ ձյունապատ լեռներից սկիզբ են առնում Մերձավոր ու  
Միջին Արևելքի ամենամեծ գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը,  
որոնք հոսելով իրար զուգահեռ, անցնում են Միջագետքի  
հարթավայրով և թափվում Պարսից ծոցը, Ալիս գետը  
հոսում է Կեսարիայի հարթավայրով, թափվում Սև ծովը,  
Արաքսը (Սրասիսը), անցնելով Արևելյան Հայաստանով ու  
Ադրբեջանով, հասնում է Կասպից ծով: Պատմությունից  
հայտնի է, որ գետերի ափամերձերին տիրապետող պետու-  
թյունը տիրապետում է նաև այն տերիտորիաները, որոնցով  
հոսում են գետերը: Այդ հատկապես վերաբերում է Ասիա-  
յին,— ասում է ռուս ռազմական տեսարան Ավերյանովը<sup>82</sup>:

Մեծ էր Արևմտյան Հայաստանի ռազմաստրատեգիա-  
կան նշանակությունը Արևելքում նվաճողական պլաններ հե-  
տապնդող իմպերիալիստական Անգլիայի համար: Այդ է  
վկայում նաև գերմանական ժուռնալիստ Մակայի սված  
ղնահատականը: Նա գրել է. «Եթե Կոստանդնուպոլսի նվա-  
ճումը հարված կլինի Թուրքիայի գլխին, ապա հայկական  
վիլայեթների գրավումը հարված կլինի Օսմանյան կայսրու-  
թյուն սրտին, այնքանով որքանով Փոքր Ասիան կբաժան-  
վի Արաբիայից, կբայրայվի պետության իսլամական-  
հիերարխիայի հիմքը, և թուրքերը կընկնեն պաշարողական  
վիճակի մեջ»<sup>83</sup>:

Հայկական լեռնաշխարհը մարմնավորում էր ամբողջ Ա-  
ռաջավոր Ասիայի ռազմաստրատեգիական նշանակու-  
թյունը: Իրա համար էլ անգլիական կառավարությունը, ելնելով  
առևտրաարդյունաբերական ու ֆինանսական բուրժուազիայի

<sup>82</sup> См. П. И. Аверьянов. Этнографический и военно-политиче-  
ский сбор азиатских владений Османской империи. СПб., 1912.  
т. 33.

<sup>83</sup> Цит. по кн.: С. Степанян. Армения в политике империали-  
стической Германии, изд-во «Айастан», 1975, стр. 18.

Արևելքում ունեցած շահերից, դեմ էր արևմտահայության անցմանը ուստիան տիրապետության տակ և անցկացնում էր Հայաստանը Թուրքիայի կազմում պահպանելու քաղաքականություն: Անգլիական այդ քաղաքականությունը արևելագետ Լինչը հիմնավորում է նրանով, որ «Անգլիայի շահերը, որի մեջ կարելի է դասել նաև անգլիական Հնդկաստանը, սերտորեն կապված են Սամանյան կայսրության ասիական նահանգների հետ»<sup>84</sup>: Անգլիական խոշոր բուրժուազիան միտմամանակ ձգտում էր Արևմտյան Հայաստանը դարձնել արդյուպատ Ռուսաստանի դեմ: Նա արհեստականորեն մեծացնում էր ուստիան սպանալիքը, որպեսզի արդարացի իր նվաճողական պլանների իրագործումն Արևելքում: Լինչը բացահայտ պրտւմ է. «Ռուսաստանի հանդեմ դալն Արևմտյան Հայաստանում ուղղակի սպանալիք է Հնդկաստանին»<sup>85</sup>, իսկ պահպանողական ուղղության պատկանող, կառավարող շրջանների ձայնափող «Times»-ը նշում է. «Հայաստանը կարող է դառնալ Հնդկաստանի պատնեշը ուստիան արշավանքի դեմ»<sup>86</sup>: Հնդկաստանի նշանակությունն Անգլիայի համար այնքան մեծ էր, որ Քերզոնն ասել է. «Ես կարծում եմ, որ չի դառնվի մի անգլիացի, որը ժխտի այն, թե Հնդկաստանն անհրաժեշտ է պաշտպանել ոչ միայն նրա վրա կատարված հարձակումից, այլև այդ հարձակման սպանալիքից»<sup>87</sup>: Մի այլ անգամ նա հայտարարել է, որ Հնդկաստանի սահմանն անցնում է Եփրատի հովտով<sup>88</sup>: Համայնքների պալատում յուրյեր կեմինգտոնը և էլլենբորոն հայտարարեցին, որ դեմ են Ռուսաստանի ամրանալուն Արևմտյան Հայաստանում, պատճառատրանելով, որ նրա առաջ կբացվեն Եփրատի հովտի և Պարսից ծոցի ճանապարհները: «Պարսից ծոցը,—ասում է կեմինգտոնը. — դա Հնդկական ռահմանի պաշտպանությունն է...»<sup>89</sup>, իսկ էլլենբորոն նշում. «Ես կգերադասեի Ռու-

<sup>84</sup> X. Ф. Б. Линч. *նշված աշխատ.*, հատ. II, էջ 566:

<sup>85</sup> *նույն տեղը*, էջ 255:

<sup>86</sup> «Times», 1 մայիսի, 1878:

<sup>87</sup> М. Павлович. Великие железнодорожные и морские пути будущего СИБ., 1913, стр. 134.

<sup>88</sup> *Տե՛ս* «Военно-исторический журнал», 1940, № 1, էջ 39.

<sup>89</sup> Վ. Բ. Լենին, *Երկեր*, հատ. 39, էջ 392:

սաստանք տեսնել Կոստանդնուպոլսում, քան թե եվրոպական մի գլխաւոց Պարսից ծոցի ափերին»<sup>90</sup>։

Իմպերիալիստական Անգլիան Արեւմտյան Հայաստանում ուներ նաև տնտեսական շահեր։ Անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի ուշադրութեան կենտրոնում էին Հայաստանի լայն շուկաները, հոմքի հարուստ աղբյուրները և սարանցիկ առևտրական ճանապարհները։ Նա Արեւմտյան Հայաստան էր արտահանում ֆաբրիկագործարանային արտադրանքի դանազան ապրանքներ՝ բրդե ու բամբակե գործվածքներ, ապակյա ու հախճապակյա ամանեղեն, մետաղյա իրեր, լուցկի, սուրճ և այլն, իսկ ներմուծում էր անասուններ, անասնապահական մթերքներ, մասնավորապես բուրդ, մոհայրի այծի մազ, կաշվեղեն, գյուղատնտեսական ալլ-ապրանքներ, փայտանյութ, հատկապես ընկուղենի։ Հայաստանից տանում էր նաև բամբակ, թանկարժեք մորթեղեն՝ մուշտակների համար։

1880-ական թվականների կեսերին Անգլիան Արեւմտյան Հայաստանի առևտրում ուներ մենաշնորհ դիրք։ Այդ վկայում են Կարինի, Վանի, Բաղեշի և Տրապիզոնի վիլայեթների

Պետությունները	Արտահանումը	Ներմուծումը	Միջակայքը	% հարաբերակցուն
----------------	-------------	-------------	-----------	--------------------

Նոսր հազար սուլթաներով

Անգլիա	864,0	7827,1	8791,1	33,3
Տրանսիա	678,1	1611,5	2289,6	8,7
Դերմանիա	782,3	1375,0	2157,3	8,2
Ավստրիա	120,0	756,0	876,0	3,3
Ռուսաստան	486,7	906,1	1392,8	5,3
Բուրքիա և Եգիպոս	4870,2	2446,7	7316,9	27,7
Իտալիա	7,8	101,9	109,7	0,4
Այլ երկրներ	687,1	2723,1	3410,5	13,1

<sup>90</sup> Վ. Ի. Աեկև, Երկեր, հատ. 39, էջ 893։

հետ կատարված առևտրի վերաբերյալ եղած վիճակագրական տվյալները<sup>91</sup>։

Աղյուսակից հստակ երևում է, որ հայկական վիլայեթների հետ կատարվող առևտրում Անգլիային էր պատկանում առյուծի բաժինը, եվրոպական պետութուններից և ոչ մեկը չէր կտրող նրա հետ համեմատվել, անգամ Թուրքիայի ու Եգիպտոսի առևտուրը միասին վերցրած փոքր էր, քան անգլիականը։ Բացի այդ, աղյուսակը ցույց է տալիս, որ հայկական վիլայեթները կրկնակի շատ ապրանքներ են ներմուծում, քան արտահանում, որը վկայում է երկրի կիսագաղութային վիճակի և Ահմեմիկայի հետամնացության մասին։

Անգլիական ապրանքներն Արևմտյան Հայաստան էին բերվում Տրապիզոն—Կարին ճանապարհով, որն ավելի քան երկու հազար սննդի ծառայում էր Եվրոպայի ու ներքին Ասիայի միջև որպես հաղորդակցության ուղի, «անգամ շնչկաստանի առևտրի մի մասը կատարվում էր Կարինի վրայով»<sup>92</sup>։ Կարինի վիլայեթն ամեն տարի արտահանում էր 3000000 ղուրուշի, կամ մոտավորապես 6875 հազ ֆրանկներ<sup>93</sup>, որոնք ղլխավորապես գյուղատնտեսական էին։ 1886—1890 թթ. Կարինի վիլայեթը հիմնականում արտահանում էր<sup>94</sup>։

Անատոն	1300000 ղուրուշ	3.000000	ֆր
Հացահատիկ	6750000	»	1550000 »
Կարի հումք	2500000	»	575000 »
Բուրդ և ջամբակ	2400000	»	550000 »
Հանրաքար	1100000	»	250000 »

Ամեն օր Կարին էին մտնում ու դուրս գալիս եվրոպական ու արևելյան ապրանքներով բեռնված սաանյակ առևտրական բարտավաններ։ Կարինում կային 18 խոշոր շուկաներ, որտեղ կատարվում էր աշխույժ առևտուր, բացի այդ քաղաքի ամեն

<sup>91</sup> Աղյուսակը կազմված է Ֆ. Գրյազնովի բերած տվյալների հիման վրա։ Փ. Грязнов. Военный обзор передового театра Азиатской Турции. Тифлис, 1897, ч. II, էջ 172.

<sup>92</sup> X. Փ. Б. Линч. նշված աշխատ., հատ. II, էջ 266։

<sup>93</sup> Տե՛ս V. Guinet, La Turquie d'Asie, vol. 1, էջ 176.

<sup>94</sup> Տե՛ս նույն տեղը։

թաղամաս ուներ իր շուկան: Կարինի շուկաներում կար 1200 խանութ<sup>95</sup>: Կարինի ապրանքաշրջանառությունը եվրոպական պետութիւնների հետ ուներ հետևյալ պատկերը (ֆրանկներով)<sup>96</sup>.

Երկրները	Կարինից արտահանվում էր	Կարինի ներմուծում էր	Ընդամենը
Անգլիա	800000	2400000	3200000
Ֆրանսիա	1500000	2100000	3600000
Ավստրիա	300000	1800000	2100000
Թուսաստան	850000	1600000	2450000

Աղյուսակը ցույց է տալիս, որ կապիտալիստական խոշոր պետութիւնները Կարինի հետ պահպանում էին լայն առևտրական հարաբերութիւններ, ընդ որում նրանք արտահանում էին 2—6 անգամ շատ ապրանքներ, քան ներմուծում: Այդ ապացուցում է, որ Կարինի վիլայեթը դարձել էր եվրոպական արդյունաբերական ապրանքների վաճառահաման շուկա, իսկ նրա էկոնոմիկան՝ նրանց էկոնոմիկայի կցորդը: Բացի այդ, աղյուսակից երևում է, որ Կարին արտահանված արդյունաբերական ապրանքներով Անգլիան բռնում էր առաջին տեղերից մեկը:

Կարինի դերը մեծ էր նաև տարանցիկ առևտրի տեսակետից: Խոշոր առևտրական քարավանային ճանապարհները Տրապիզոնից Կարինի ու Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների վրայով ձգվում էին դեպի Թեհրան, Բազրիզ, Ապահան, Շիրազ և Խորեզմ: Այս ճանապարհներն ավելի շահաբեր ու հարմարավետ էին, քան քարավանային այն ճանապարհները, որոնք Միջերկրական ծովի սիրիական ափերից ավազուտ անապասներով դնում էին Իրան: Այդ խիստ պատճառով բուրժուական Անգլիան խիստ շահագրգռված էր Արևմտյան Հայաստանի թողնելու թուրքական տիրապետության տակ: Դեռ իր ժամանակին Կ. Մարքսը գրել է. «Հենց որ Կարսն ու Կարինը ընկնեն ուսաների ձեռքը, Անգլիայի ցամաքային առևտուրը Պարսկաստանի հետ Տրապիզոնի վրայով անմիջապես կկադարի»<sup>97</sup>: Տարանցիկ առևտրական ճա-

<sup>95</sup> Տե՛ս Я. С. Проскуряков. Заметки о Турции. «ЗКОИРГО», Тифлис, 1905, кн. XXV, вып. 1, էջ 52.

<sup>96</sup> Տե՛ս V. Cuinet. La Turquie d'Asie, vol. 1, էջ. 177—178.

<sup>97</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 11, стр. 637.

նապարհների դերն այնքան մեծ էր Անգլիայի համար, որ 1878 թ. անգլիական ճնշման տակ Սան-Ստեֆանոյի պայմանագրի փոփոխության վերաբերյալ Լոնդոնի ռուսական դեսպան Պ. Շուվալովի և Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի միջև կնքված համաձայնագրի 10-րդ հոդվածում ուղղակի ասվում էր, որ Ալաշկերտի «հովիտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհ և թուրքերի (ավելի ղեպքում պետք է հասկանալ անգլիացիներին—Լ. Բ.) աչքում ունի հսկայական նշանակություն...»<sup>98</sup>։ Դրա համար էլ իմպերիալիստական Անգլիան ձգտում էր իր դիրքերն ամրապնդել Արևմտյան Հայաստանում և ապահովել տարանցիկ առևտրական ճանապարհներում ազատ հաղորդակցությունը։ Անգլիական կառավարության այդ ձգտումն իր արտահայտությունն է գտել 1878 թ. մարտի 20-ի (ապրիլի 1-ի) արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի եվրոպական պետությունների մայրաքաղաքներում տնօրինական ներկայացուցիչներին ուղարկված շրջաբերականում։ Նա գրել է. «Հայաստանի բերդերի նվաճումը այդ մարզի բնակչությանը կրնի աչք պետության ազդեցության տակ, որը կսիրի նրանց։ Այդ պատճառով այժմյան Տրապիզոնի վրայով Պարսկաստանի նա կատարվող եվրոպական բնագործակառուցությունը, Քրդստանում<sup>99</sup> որոշ տեղեր գիշերուկ նստանքով, ենթակա կլինի ամեն անգամ սահմանափակման, ինչպես այդ կիշի Ռուսաստանի խելքին»<sup>100</sup>։ Այստեղից պետք է նաև հասկանալի լինի, թե առևտրական տեսակետից Արևմտյան Հայաստանը որրան կարևոր նշանակություն ուներ Անգլիայի համար, այնպիսի մի պետության համար, որին բնակչության մի միստր Չեմբերլենն ասում էր. «Կայսրությունն ապա տեսաւրն է, Markets, Markets»<sup>101</sup>։

<sup>98</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստագրերում (1828—1923)», պրոֆ. Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, «Հայաստան» հրատ., 1972, էջ 101։

<sup>99</sup> Անգլիական կառավարությունը խիստ թշնամաբար վերաբերվելով նաև Ժագրայի նկատմամբ, 1878 թ. Հայաստանի փոխարեն պաշտոնական դրագրություններում օգտագործում էր Քրդստան տերմինը։

<sup>100</sup> С. Жигарев. Русская политика в восточном вопросе. М., 1896, т. II, стр. 182.

<sup>101</sup> М. П. Павлович. Империализм и борьба за великие железно-железные и морские пути будущего. Л., 1925, стр. 16. 71

Հուլյն և հայ վաճառականները Տրապիզոնում դնում էին անգլիական ապրանքները և Հայաստանի վրայով արտահանում արևելյան շուկաները, որտեղ նրանք հաջողութեամբ մրցում էին տեղական տնայնագործական արտադրության ապրանքների հետ: «Կոստանդնուպոլիսը և, առանձնապես, Տրապիզոնը Ասիական Թուրքիայում,— գրել է Կ. Մարքսը,— ներքին Ասիայի, Տիգրիսի ու Եփրատի հովիտների, Պարսկաստանի և Թուրքեստանի հետ քարավանային առևտրի ղրվաժող կենտրոններն են: Եվ այդ առևտուրը նույնպես արագորեն աճում է: Վերսհիշյալ այդ երկու քաղաքների հուլյն և հայ վաճառականները ներմուծում են մեծ քանակությամբ անգլիական ֆաբրիկային ապրանքներ, որոնք, շնորհիվ իրենց ցածր գների, արագ դուրս են մղում ասիական հարեմների տնային ինդուստրիայի արտադրանքները»<sup>102</sup>:

Տարեկան Կարինի վիլայեթը ներմուծում էր 60 մլն դուրուշ (13 595 000 ֆր.) արժողությամբ արդյունաբերական ապրանքներ<sup>103</sup>: Միայն 1890 թ. Կարինի վրայով Իրան էին արտահանվել 12—16 հազ տոննա եվրոպական ապրանքներ 20—25 մլն ֆր արժողությամբ, սակայն անգլիական իմպերիալիստների շահերը Կարինի վիլայեթում չէին սահմանափակվում միայն առևտրական շրջանակներով: Նրանք ստրկացրել ու շահագործում էին Կարինի վիլայեթի բնակչությանը՝ Օսմանյան կայսրության պետական պարտքերի վարչության օգնությամբ: Միայն 1890—1891 թթ. ֆինանսական տարում վարչությունը Կարինի վիլայեթից ստացավ 4.012.251. դուրուշ (1.900.000 ֆր) եկամուտ:

Արևմտյան Հայաստանի մյուս խոշոր վիլայեթը Վանի վիլայեթն էր, որը, ինչպես Կարինը, շոճներ արդյունաբերություն և նրա բնակիչները իրենց կարիքները բավարարելու համար «հարկադրված դիմում էին օտարերկրյա առևտրական կենտրոններին»<sup>104</sup>: Անգլիայից և մյուս պետություններից Վանի վիլայեթը տարեկան ներմուծում էր 4028500 ֆր արժողությամբ արդյունաբերական ապրանքներ, այդ թվում բրդյա ու բամբակյա գործվածքներ, մետաղյա իրեր,

<sup>102</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 12.

<sup>103</sup> St. n V. Cuiuet. La Turquie d'Asie vol, I, էջ 177.

<sup>104</sup> ՀԱՍՀ ՊԿՊԱ, ֆ. 43/91, Դ. 33, Բ. 69:



իսկ արտահանում՝ 3 741 500 ֆր ապրանք, ղլխավորապես անասունների՝ ձի, ոչխար, ինչպես նաև անասնապահական և ոչ ուղատնտեսական ապրանքներ՝ բուրդ, մոհայրի այծի մազ, սոյոզ և ծխախոտ-հումք<sup>105</sup>։

1880 թ. տվյալներով Մուշի վիլայեթը տարեկան ներմուծում էր 60 հազ լիրա (540 հազ ռ.)<sup>106</sup>, Խարբեքի վիլայեթը՝ 200 հազ լիրա (1.800 հազ ռ.), իսկ Դիարբեքի վիլայեթը՝ 3 959 650 ֆր արժողությամբ արդյունաբերական ապրանքներ<sup>107</sup>, որոնց զգալի մասն անգլիական էին։

Արևմտյան Հայաստանի բերքառատ դաշտերը տալիս էին հացահատիկի, բրնձի հարուստ բերք, զանազան տիպի մրրդեր, սուրճ, դիտոր։ Հայաստանն արտադրում էր նաև բուրդ, մոհայրի այծի մազ, ներկած մորթիներ, կաշի և այլն։ Միայն Անգլիան Դիարբեքի վիլայեթից տարեկան գնում էր 200 հազ տոննա գիսոր<sup>108</sup>, իսկ Սեբաստիայի վիլայեթից՝ ամբողջ բուրդն ու մազը։ Վերջինս ուներ 2.092.333 գլուխ ոչխար և այծ։ Դիարբեքի վիլայեթի ներմուծած ապրանքների երեք քառորդն անգլիական էր<sup>109</sup>։ Ընդհանրապես Արևմտյան Հայաստանի առևտրում Անգլիան մենաշնորհ դիրք ուներ։ Անհամեմատ մեծ էր անգլիական առևտուրը Կիլիկիայի հետ։ 1890 թ. տվյալներով Կիլիկիայի ղլխավոր առևտրական նախահանգիստ Մերսինի տարեկան ապրանքաշրջանառությունը կազմում էր 5939 հազ. ռ.<sup>110</sup>։

Իմպերիալիստական Անգլիան Արևմտյան Հայաստանը դիտում էր նաև որպես կապիտալ ներդրումների երկիր, որը մեծ հեռանկարներ ուներ զարգացման համար, ուստի ձրգտում էր այն գործնելի իր գաղութը։ Արևմտյան Հայաստանն անգլիական գաղութարարների ուշադրությունը գրավում էր իր արդավանդ գաշտերով, անասնապահության դարգացման հեռանկարներով և հարուստ հանածոներով։ Բերքառատու-

<sup>105</sup> Տե՛ս V. Cuinet. La Turquie d'Asie, Paris, 1892, vol. 2, էջ 684.

<sup>106</sup> Տե՛ս «Արար», 1900, գիրք 1, էջ 22.

<sup>107</sup> Տե՛ս V. Cuinet. La Turquie d'Asie, vol. 2, էջ 444.

<sup>108</sup> Տե՛ս К. Мак-Коан. Индустриальный Турция, էջ 262.

<sup>109</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 260.

<sup>110</sup> Տե՛ս Д. Пугята. Записка о Малой Азии. СПб., 1896, էջ 134.

թյամբ աչքի էին ընկնում Սեբաստիայի, Կարինի, Բասենի, Ալաշկերտի, Մուշի և Կարսի դաշտավայրերը: Սեբաստիան հայտնի էր իր հացահատիկով ու ոչխարաբուծությամբ, բայց ճանապարհներ չէին ելու պատճառով չէր կարողանում արտահանել հացը: Եթե երկաթուղով Սեբաստիայի հացը հասցվեր սեծովյան նավահանգիստները, ապա այն հաջողությամբ ելրոպական շուկաներում կարող էր մրցել Օդեսայի հացի հետ: Ռուս ուսումնասիրողներից Ուշակովը Կարսի մարդը համեմատում է Ուկրաինայի հետ հացահատիկաչին կուլտուրաների հարուստ բերքով<sup>111</sup>, իսկ Բ. էսաձեն այն համարում է «Անատոլիայի շտեմարանը»<sup>112</sup>: Չնայած որ Արևմտյան Հայաստանն ուներ արգավանդ հողեր, բարենպաստ կլիմա և ոռոգման սիստեմի կառուցման համար մեծ հնարավորություններ, դաշտերի մեծ մասը չէր մշակվում երկրում դոշություն ունեցող, արտադրողական ուժերի զարգացումը կաշկանդող կիսաֆեոդալական կարգերի, սուլթանական կառավարության դադութարարական և հայատյաց քաղաքականության պատճառով:

Արևմտյան Հայաստանն անգլիական իմպերիալիստներին հրապուրում էր նաև ոսկու, արծաթի, երկաթի, քարի, բորակի, աղի, բրոմի, նավթի, թերթաքարի, ծիրանաքարի, սպիտակ գիպսի, մարմարի հանքերով և շինանյութերի մեծ պաշարներով: Նրանք նպատակ ունեին Արևմտյան Հայաստանում կատարել կապիտալ ներդրումներ, արտադրության ճյուղերը վերցնել իրենց ձեռքը և ստանալ դերձահույժներ: Գաղութարարական այդ քաղաքականությունն իմպերիալիստները փորձում էին քողարկել հումանիտական ֆրաւներով և քաղաքակրթություն ատրածելու դրուշով: Անգլիական իմպերիալիզմի ագրեսիվ ձգտումներն արտահայտող կինչը Հայաստանի էկոնոմիկան անգլիական կապիտալին ենթարկելը համարում էր բարեդործություն: Նա հայտարարում էր, որ անգլիական կապիտալը կարող է Հայաստանը դարձնել «հա-

<sup>111</sup> *Տե՛ս* Ушаков. Русско-турецкая война 1828—1829 гг. на Кавказе: 1847, էջ 72.

<sup>112</sup> Б. С. Эсадзе. Очерки Карсской области. Тифлис, 1912, вып. II, стр. 15—16.

մայա իրեալական շտեմալան»<sup>113</sup>։ Անգլիական իմպերիալլիզմի մյուս գաղափարախոս, պառլամենտի սնդամ Մակ Կոանը գրել է. «Անգլիական ձեռներեցությունը և անգլիական կառիտալը ասիական այդ նահանգներում կունենան լայն ու ռևալ հիմք կառուցելու խճուղիներ, երկաթգծեր, նավահանգիստներ, շրջաններու ճահիճները, նավարկելի դարձնելու գետերը և, վերջապես, միլիոնավոր ակր հողեր բերքառատ դարձնելու ոռոգման միջոցով»<sup>114</sup>։

Անգլիական իմպերիալիստների կողմից Արևմտյան Հայաստանը շրջանցելու հարցով հատուկ զբաղվել են նաև Անգլիայի գիվանագիտական գործիչները, հատկապես Փոքր Ասիայի գլխավոր հյուպատոս Զ. Ուիլսոնը։ Նկատի ունենալով Հայաստանի բարենպաստ կլիման ու արգավանդ հողերը, նա նշել է, որ Հայաստանի բազմաթիվ շրջաններում կարելի է աճեցնել շերամ, արտադրել բամբակ, բրինձ, ավիսն, ծխախոտ և գյուղատնտեսական այլ կուլտուրաներ։ Միաժամանակ Ուիլսոնն ընդգծում է, որ Հայաստանը հարուստ է գանազան շանրերով, շինանյութերով, որոնց ճիշտ շահագործումը կտա միլիարդի եկամուտներ<sup>115</sup>։ Անգլիական հյուպատոսներն իրենց գեկուցադրելում նշում էին, որ Վասի մոտ գտնվել են սրահյալ բարածխի ու նավթի հանքեր։ Բացի այդ, Վանա լիճը նման է բորակի հարուստ հանքի։ Հայաստանն իր բազմազան հանածոներով և ղյուղատնտեսական հումքով աշխարհի հարուստ երկրներից է։ Նրանք անգլիական կառավարության ուշադրությունը հրավիրում էին Վանի ու Բաղեշի վիլայեթների հետ ընդլայնված առևտուր կազմակերպելու հնարավորությունների վրա<sup>116</sup>։

Այսպիսով, վերոհիշյալ բոլոր փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ Անգլիայի իմպերիալիստական բուրձուադիան Արևմտյան Հայաստանում հետապնդում էր ռազ-

<sup>113</sup> X. Ф. Б. Липч. *Նշված աշխատութ.*, էջ 523։

<sup>114</sup> К. Мак-Коан. *Նշված աշխատութ.*, էջ 215—216։

<sup>115</sup> *SL* Ч. Уильсон. Заметки по физической и исторической географии Малой Азии, «ИКОИРГО», Тифлис, 1885, т. VIII, вып. 2, Приложение, էջ 58.

<sup>116</sup> *SL* «Blue Book», Turkey, 1897 № 7, վիլայետը-Քերրիին, 27 հեկտեմբերի, 1896։

մական, տնտեսական և քաղաքական հատուկ շահեր: Ելնելով այդ շահերից, ուս-թուրքական կոնֆլիկտների ժամանակ, նա պաշտպանում էր Թուրքիային, Ռուսաստանին: Թույլ չէր տալիս ամրանալ Արևմտյան Հայաստանում: Անգլիան ձգտում էր Հայաստանը պահպանել Օսմանյան կայսրության կազմում և օգտագործել նրա տերիտորիան որպես ռազմական պլացդարմ Ռուսաստանի դեմ:

Անգլիական իմպերիալիստների տնտեսական, քաղաքական և ռազմական ազդեցիվ պլանների պաշտպանությունը որոշվեց պահպանողականների ու լիբերալների կառավարությունների քաղաքականությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, ինչպես նաև նրանց պայքարը Ռուսաստանի ու մյուս եվրոպական պետությունների դեմ՝ Թուրքիան անգլիական ազդեցության ոլորտում պահելու համար: Անգլիական թագուհու, կառավարության ղեկավարների, պառլամենտի անդամներ Չ. Բրայսի, Արգայլի հերցոգի և մյուսների հայտարարությունը, թե արևելյան հարցի ճգնաժամի ժամանակ Անգլիան վարում է անշահախնդիր քաղաքականություն, ինչպես և հայ ժողովրդի «պաշտպան» Գլադստոնի հայտարարությունը՝ «ժառանգել հայերին, նշանակում է ժառանգել քաղաքակրթությանը» լսելի դիվանագիտական բնույթի ղեկավարությամբ հայտարարություններ էին, որոնցով փորձում էին քողարկել խարդախ Ալբիանի ազդեցիվ պլաններն ու սեակցիոն քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում:

## ԱՆԳՂԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, իրավական ու քաղաքական ծանր վիճակը, ինչպես և թուրքական տգետ պաշտանյութների կամայականությունները, բանասարկությունները, դանձադողությունը, կառավարության կողմից անցկացվող սոցիալին խտրականության ու արմենոցիդի քաղաքականությունը արևմտահայերին մղեց ազգային-ազատագրական պայքարի սուլթանական բռնակալական կարգերի դեմ:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ սովետացյալ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի թուրքասիրական քաղաքականության դեմ սուսական օրինետացիայի կոպուսակիցների օպոզիցիան: Սպոզիցիոներները նպատակ ունեն սպասարծել պատերազմական իրադրությունը և Արևմրտան Հայաստանը միացնել Ռուսաստանին, իսկ անհաջողության դեպքում՝ հայկական վիլայեթներում իրագործել սուլթանեֆորմներ: Պատրիարքարանն օպոզիցիայի ու ժողովրդական մասսայի ճնշման տակ, ինչպես և նկատի ունենալով սպառնալիկատներում Թուրքիայի անհաջողությունները, վերսեց իր քաղաքականությունը և սկսեց բանակցություններ վարել ռուսական պատվիրակության ղեկավար կամս Իզնատեի հետ՝ հաշտության պայմանագրի մեջ մտցրնելու հայկական հարցը:

Պամս Իզնատեը, ելնելով ցարիզմի արևելյան քաղաքականությունից և այդ քաղաքականության իրագործման ժամանակ թուրքահայատակ քրիստոնյա ժողովուրդների օգտագործման տակտիկայից, հավանություն տվեց հայերի խընդրանքին՝ Մեծ Հայքը միացնել Ռուսաստանին, Փոքր Հայքում էլ պահանջել անցկացնել ռեֆորմներ, իսկ եթե

հայկական վիլայեթները մնան թուրքական տիրապետության տակ, ուսական գորքերին ետ չկանչել այնտեղից մինչև ռեֆորմների իրագործումը՝ նկատի ունենալով սուլթանական կառավարության առատածնոն խոստումներ տալու և այն երբեիցե կյանքում չիրագործելու անցյալի փորձը<sup>1</sup>:

Իգնատևի հետ բանակցությունների ժամանակ պատրիարքը խոստովանում է. «Հայերը փրկությունը միայն Ռուսաստանից են սպասում»<sup>2</sup>: Երբ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդը իմացավ հայոց պատրիարքարանի ու Իգնատևի միջև վարվող զաղտնի բանակցությունների մասին, անմիջապես հայտնեց սուլթանին և խորհուրդ տվեց պատրիարքարանից պահանջել ներկայացնելու արևմտահայության պահանջները, դրանք քննարկելու և «իրագործելու» համար:

Պատրիարք Ն. Վարժապետյանը, սուլթանին նկարագրելով Արևմտյան Հայաստանի ծանր վիճակը, քրդերի ու շերքեզների կամայականությունները, պաշտոնյաների շորթումները, դատական մարմիններում աշխատողների ու վարչական մարմիններում ծառայողների ծախվածությունն ու ահավոր տգիտությունը, ժողովրդի բողոքների և կառավարության կողմից պատրիարքարանի բազմաթիվ դիմումների անուշադրության մատնելը, պահանջում է Արևմտյան Հայաստանում ստեղծել ազատություն, ապահովել անձի անվտանգությունն ու սեփականության անձեռնմխելիությունը, երաշխավորել դպրոցների, եկեղեցու և ուղղափառ այլ հաստատությունների գույքի ապահովվածությունը և ժամանակի ոգուն համապատասխան վերակառուցել վարչական մեքենան հայկական վիլայեթներում<sup>3</sup>:

Չնայած որ 1878 թ. հունվարի 31-ի Ադրիանապոլսի վիենադադարի պայմանագրում ոչինչ չէր ասված հայկական հարցի մասին, Իգնատևը այն բարձրացրեց Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքման բանակցությունների ժամանակ, հակառակ թուրքական ներկայացուցիչների կատաղի

<sup>1</sup> Տե՛ս ՆՍՈՂ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 24, թ. 3:

<sup>2</sup> «Московские ведомости», 1878, № 112.

<sup>3</sup> Տե՛ս «Голос», 1878, № 47, տե՛ս նաև Խ. Կարիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880), Բեյրութ, 1982, էջ 122—123, 140, 155:

զիմադրութեանը: Նա պահանջում է, որ սուլթանական կառավարութիւնը պարտավորվի Կարին, Վան, Մուշ, Տիգրանակերտ և Սեբաստիա հայկական վիլայեթներում ստեղծել ինքնախարութիւն և տալ ռեֆորմների իրագործման ռեալ երաշխիք: Սուլթանական կառավարութիւնը, Անգլիայի պաշտպանութեամբ, մինչև վերջ զիմադրեց ինքնավար Հայաստան ստեղծելուն, սակայն հարկադրված եղավ համաձայնվել Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածում մտցնելու հայկական հարցը, որում ասվում է. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդութիւնների, որոնք երկու պետութիւնների բարի հարաբերութիւնների վրա կունենան վնասակար ազդեցութիւն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայարնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգութիւններ, և ղերծ պահել հայերի անվտանգութիւնը քրդերից ու շերքեւներից»<sup>4</sup>:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 25-րդ հոդվածում էլ ասված է. որ ռուսական «զորքերի դուրս բերումը Ասիական Թուրքիայից կկտտարվի վեց ամսիա բնվազքում՝ հաշված վերջնական յաշտութեան կնքելու օրից»<sup>5</sup>:

այ ժողովրդի ազգային ձգտումը՝ Ռուսաստանի ռազմարարական օգնութեամբ բալկանյան ժողովուրդների նման խնամել սուլթանիզմի բարրարոսական լուծը, փրկվել Ֆիլիստինի բնաջնջումից ու բռնի ասիմիլյացիայից, կանգնել ազգային ազատագրութեան ու սոցիալական առաջադիմութեան ուղու վրա, հանդիպում էր ոչ միայն բռնակալական Թուրքիայի, այլ նաև եվրոպական խոշոր պետութիւնների, առաջին շրջին Անգլիայի ուժեղ զիմադրութեանը: Եթե ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականութիւնը համընկնում էր Թուրքական տիրապետութեան դեմ մաքառող հայ ժողովրդի ազգային շահերին, ապա այն յրիվ հակասում էր

<sup>4</sup> «Հայաստանը միջազգային ղիվանագիտութեան և սովետական արտարքն քաղաքականութեան փաստաթղթերում», էջ 92:

<sup>5</sup> Նույն տեղը, էջ 96:

անգլիական խաշոր բուրժուազիայի էքսպանսիոնիստական ձգտումներին, որովհետև վերջինս վաղուց էր երազում հաստատել իր միանձնյա տնտեսական ու քաղաքական գերիշխանությունը Օսմանյան կայսրությունում: Եթե սլավոնաֆիլների պարագլուխ Ի. Ակսակովը գտնում էր, որ «Ռուսաստանն իրավունք ունի նվաճելու Կոստանդնուպոլիսը, որովհետև նեղուցների աղատությունը նրա համար ունի կենսական նշանակություն»<sup>6</sup>, ապա բուրժուական Անգլիան «պաշտպանում» էր Թուրքիային, որպեսզի ձախողի Ռուսաստանի կողմից սևծովյան նեղուցների նվաճումը և ապահովի անգլիական գաղութարարների ազրեսիվ պլանների իրավորման Առաջավոր Ասիայում, միաժամանակ նախապատրաստելով «առաջին իսկ հարմար պահին,— ինչպես նշել է անգլիական պատմաբան Ա. Մորուան,— նվաճել Եգիպտոսը: Մենք դեռ կտեսնենք Դեզիին (Դիզրայելուն— Լ. Բ.) Մեմֆիսի հերցոգի դերում»<sup>7</sup>:

Շահագիտական նպատակներով պաշտպանելով Թուրքիային, Անգլիայի պրեմիեր-մինիստր Դիզրայելին դատապարտում էր թուրքահայաստակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարը և 1876 թ. պառլամենտում, ելույթի ժամանակ, նրանց բողոքները սուլթանիզմի լծի դեմ համարում է անհիմն, փառաբանում մարդասպան բաշիբոզուկներին ու չերքեզներին, նրանց համարում խաղաղասերներ, իսկ ալան-թալան անող քրդերի դեմ բողոքելը՝ մեկը ու ամոթ<sup>8</sup>: Նույն ժամանակ Կ. Պոլսի անգլիական դեսպան Շ. Էլիոտը, վախենալով եվրոպական մյուս պետությունների կողմից թուրքահայաստակ ժողովուրդների ազատագրական շարժումներն իրենց նեղ շահերի համար օգտագործելուց, Թուրքիայի ներքին գործերին միջամտելուց և իրենց դիրքերն ի վնաս Անգլիայի ամրապնդելուց, սուլթանին խորհուրդ է տալիս քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժման հրդեհը հանդգնել «առանց ընտրություն կատարելու դորժադրած միջոցառումների մեջ»<sup>9</sup>:

<sup>6</sup> И. С. Аксаков. Полн. собр. соч., М., 1866, стр. 240.

<sup>7</sup> А. Моруа. Карьера Дизраэли. М., 1934, стр. 334.

<sup>8</sup> SLՄ «Голос», 1876, № 216.

<sup>9</sup> А. А. Гирс. Россия и Ближний Восток. СПб., 1906, стр. 178.



Անգլիական հասարակական դործիչ, կառավարութեան քաղաքականութեան ու դիվանագիտութեան գաղափարների լավատեղյակ Արգայլի հերցոգը նույնպես վկայում է, որ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի ժամանակ, «Մենք փաստորեն ազդաշում էինք Դոանը՝ իր սեփական միջոցներով արագացնել խռովութեան ճնշումը, որպեսզի միայն վերկենք նրան օտարերկրյա միջամտութեանից»<sup>10</sup>:

Եվրոպական խոշոր պետութեանները, «գառազործելով պատերազմի առիթներ, մանավանդ ազգային-ազատագրական շարժումները, քրիստոնյա ժողովուրդների փրկարարի տեսքով, սմանք էլ սուլթանին պաշտպանելու պատրվակով, պատերազմի կամ դիվանագիտական օտարեր սղիծներով միջամտում էին Թուրքիայի ներքին գործերին, սուլթանական կառավարութեանից ստանում զիջումներ, արստոնութեաններ և ամրապնդում իրենց դիրքերը Բալկաններում ու Մերձասոր Արևելքում, ընդ որում, միշտ անտարբեր մնալով այդ ժողովուրդների ճակատագրի նկատմամբ: «Թե խոսքը գնում էր.— գրել է ցարական կառավարութեան արտաքին քաղաքականութեան երկար տարիների գեկափար Ա. Ա. Գիրսը,— ինչպես այն ժամանակի թուրքական գաղանութեանների մասին. թե այժմ՝ հայերի ճակատագրի բարելավման, կամ Ռուսաստանի և երիտասարդ բուլղարական պետութեան միջև նորմալ հարաբերութեանների վերականգնման մասին, այդ բոլորից երևում էր միայն Թուրքիայի անճարակութեանը, այդ բոլորում պայտում էր, որ հարցը ո՛չ հայերի, ո՛չ էլ բուլղարների, այլ օսմանների կայսրութեան գոյութեան հետագա պայմանների և Ռուսաստանի դաշիր գերի մեջ է»<sup>11</sup>:

1875-1876 թթ. արևելյան հրնաժամի ժամանակ Կ. Պոլսում նրավիրված Թուրքիայի «բարեկամ» եվրոպական վեց մեծ պետութեանների ներկայացուցիչների կոնֆերանսում, որը պետք է «խաղաղ ճանապարհով» կարգավորեր արևելյան հարցը, անգլիական ներկայացուցիչը բռնել էր հակառուսա-

<sup>10</sup> Герцог Аргайльский. Ответственность Англии в Восточном вопросе. СПб., 1908, стр. 55.

<sup>11</sup> А. А. Гирс. նշված աշխատ., էջ 145—146:

կան զիրք ու ձգտում էր հավերժացնել թուրքական տիրապետութիւնը բալկանյան սլավոնական ժողովուրդների և արևմտահայերի վրա, որպեսզի այդ ճանապարհով ուժեղացնէր իր ազդեցութիւնը և ամրապնդէր իր դիրքերը Մերձավոր Արևելքում: Ավստրո-Հունգարիան նույնպէս դեմ էր թուրքահպատակ ժողովուրդներից ինքնուրույն պետութիւններ ստեղծելուն, որպեսզի դրանք օրինակ շժառայէին ավստրո-հունգարական «կարկատանային» կայսրութեան մեջ ապրող փոքր ժողովուրդներին, և վերջիններս չբարձրացնէին ազատագրական պայքարի դրոշ: Բացի այդ, ավստրո-հունգարական կառավարութիւնը Բալկաններում հետապնդում էր էքսպանսիոնիստական նպատակներ, որոնց իրագործմանը կխոչընդոտէր այդպիսի պետութիւնների ձևավորումը: Գերմանական ներկայացուցիչը փորձում էր օգտագործել հարմար առիթը և սրել անգլո-ռուսական և ռուս-ավստրո-հունգարական հարաբերութիւնները՝ շահադիտական նկատառումներով: Նա խրախուսում էր թե՛ Ռուսաստանին և թե՛ Ավստրո-Հունգարիային՝ Թուրքիայի նկատմամբ անցկացնելու ակտիվ քաղաքականութիւն, լավ իմանալով, որ այն կհանդիպի Անգլիայի կատաղի դիմադրութեանը: Ռուսաստանի ռազմական միևիստր Գ. Ա. Միլյուտինը իր օրագրում գրել է, որ Բիսմարկը կոմս Շուվալովին խորհուրդ էր տալիս, որ այժմ Ռուսաստանի համար ամենահարմար ժամանակն է՝ Թուրքիայի հետ վարվելու ըստ իր հայեցողութեան: Ինքն այսպէս կլարվեր Ռուսաստանի կայսրի փոխարեն, եթէ Գերմանիան և Ավստրիան իրոստանային իրեն շղիմադրել<sup>12</sup>: Բիսմարկի այս «խորհուրդը» պրովոկացիոն բնույթի էր և նպատակ ունէր հրահրել անգլո-ռուսական ռազմական կոնֆլիկտ:

Եվրոպական պետութիւնների ներկայացուցիչների կոնֆերանսը Թուրքիայից պահանջում էր բոլոր քրիստոնահպատակ ժողովուրդների համար անցկացնել ռեֆորմներ: Սուլթան Աբդուլ-Համիդ II-ը ծանր վիճակից դուրս գալու, ինչպէս և «նոր օսմանների» օպոզիցիոն շարժումը թուլացնելու նպատակով, անգլիական կառավարութեան խորհրդով դի-

<sup>12</sup> Տե՛ս «Дневник Д. А. Милютин», М., 1949, т. II, էջ 35.

մում է խորամանկ քայլի՝ ընդունում սահմանադրություն և դրանով փորձում կանխել եվրոպական պետությունների կողմից սեփորմներ անցկացնելու պատրվակի տակ Թուրքիայի ներքին գործերին միջամտությունը: Անգլիական և թուրքական կառավարությունների այդ նենգ քաղաքական գործարքների մասին Միլյուտինը գրել է. «Կոստանդնուպոլսում նախկինի նման շարունակվում են էլիտի բանասերությունները: Շնորհիվ նրա ներշնչումների, սրտշված է թուրքական կայսրությունում հռչակել գավեշտական սահմանադրություն, որին ոչ ոք չի հավատում, սկսած սուլթանից և անձամբ էլիտից»<sup>13</sup>:

Կոնֆերանսի մասնակիցները կռահեցին սուլթանի ետին մտքերը և շարունակեցին աշխատանքը: Բայց քանի որ եվրոպական պետությունները, քրիստոնյաների համար սեփորմներ անցկացնելու պատրվակի տակ, տարբեր նպատակներ էին հետապնդում, անգրիական դեսպան Հ. էլիոտը սուլթանին խորհուրդ էր տալիս զիջման չգնալ, խոստանալով ռազմական կոնֆլիկտի ծագման դեպքում Անգլիայի օգնությունը, ինչպես այդ եզրով Արևմի պատերազմի մամանակ<sup>14</sup>: Սուլթանը զիջում չկատարեց և 1877 թ. սկզբին կոնֆերանսի աշխատանքը ձախողվեց:

Թուրքիային պաշտպանելը, հայերի և մյուս թուրքահպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին հակադրվելը բխում էր ոչ թե Անգլիայի թուրքասիրությունից, այլ Մերձավոր Արևելքում հատուկ նպատակներ հետապնդելուց, որը շատ լավ երևում է Հ. էլիոտի՝ արտաքին գործերի մինիստր Դերբիին դրած նամակից, որում ասվում է. «Մեղադրանքին, թե ես թուրքերի կույր կողմնակից եմ, միայն կպատասխանեմ, որ երբևիցե չեմ դեկավարվել սենսիմենտալ սիրով նրանց նկատմամբ, այլ միայն աներկբա մատուցելով ամբողջ ուժով պաշտպանել եմ Մեծ Բրիտանիայի շահերը պատշաճ մակարդակով»<sup>15</sup>: Անգլիական քա-

<sup>13</sup> «Дневник Д. А. Милютина», т. II, стр. 110.

<sup>14</sup> «Мем. «Россия и Англия в Турции в 1877—1878 гг.», в журн. «Русская старина», 1896, № 7, էջ 40—41.

<sup>15</sup> E. Freeman, The Ottoman Power in Europe. London, 1877, p. 51.

դաքականութեան լավատեղյակ Ա. Մորուան նույնպէս նշել է, որ Անգլիան հատուկ համակրանք չէր տաժում թուրքերի նկատմամբ, նա անտարբեր էր դեպի նրանց ճակատագիրը, անգամ կուղենար նրանց տեսնել Սև ծովի հատակում: Բայց անգլիական պահպանողական կուսակցութեան գործիչ և կառավարութեան ղեկավար Էիզրայելին Լոնդոնի թուրքական կառավարութեան ներկայացուցչին հավաստիացնում էր, որ Անգլիան ո՛չ կմիանա մյուս պետութիւններին, ո՛չ էլ նրանց թույլ կտա ճնշում գործադրել Թուրքիայի վրա: «Բանը բոլորովին էլ Թուրքիայի պաշտպանութեան մեջ չէր, ողջ հարցն ամբողջ աշխարհում ուսական կամ անգլիական գերիշխանութիւնը հաստատելու մեջ էր»: Նա ցանկանում էր ապահովել «Բրիտանական կայսրութեան միասնութիւնը և Անգլիայի փալլոսն ապագան»<sup>16</sup> և այդ ճանապարհին Թուրքիայում Անգլիայի ազդեցութեան պահպանումը դիտում էր որպէս կարևոր քայլ: Միանգամայն ճիշտ է Մորուան: Նա արտահայտել է կառավարութեան պաշտոնական կուրսը, որի նպատակը ձևակերպված է 1877 թ. ապրիլի 19-ին Վիկտորիա թագուհու պրեմիեր-մինիստրին գրած նամակում: Այնտեղ ասվում է. «Այդ Թուրքիայի պաշտպանութեան հարցը չէ, այլ բրիտանական կամ ուսական գերիշխանութեան հարցն է աշխարհում»<sup>17</sup>:

Անգլիական բուրժուազիան Ռուսաստանի կողմից Արևմտեան Հայաստանի զրավման մեջ տեսնում էր թուրքական պետութեան քայքայման և բրիտանական ազդեցութեան թուլացման սկիզբը Արևելքում: 1877 թ. դեկտեմբերի 12-ին Լեյարդը Սուլթերիին գրում է, որ եթե Ռուսաստանին անցնի Հայաստանը, Սփրատ և Տիգրիս գետերի ափունքները, ապա գետահովիտներով նա կիջնի պարսկական գավառները, կհասնի Բելուջիստան և վտանգի տակ կդնի Պարսից ծոցը: Միաժամանակ դեսպանը զգուշացնում էր, որ ուսական առաջին հաջողութիւնները կոգեշնչեն էպիրոսի, Թեսալիայի, Մակեդոնիայի հույն բնակիչներին, և նրանք կապս-

<sup>16</sup> A. Mopya. *Նշված աշխատ.*, էջ 344:

<sup>17</sup> W. F. Money Penny and G. E. Buckle. *The Life of Benjamin Disraeli of Beaconsfield* (1876—1881), London, 1920, v. VI, էջ 133.

տամբեն թուրքական տիրապետության դեմ: Հետևաբար, «թուլլատրելու չենք, որ Ռուսիա հողային զբաղումներ կատարէ Հայաստանի մէջ»<sup>18</sup>: Լեյարդը, ղեկավարվելով անգլիական նեղ շահերով, սուլթանի հետ բանակցութիւններից հետո, 1878 թ. մարտի 6-ի և ապրիլի 17-ի ղեկուցագրերում գրում է, որ Անգլիան ոչ թե Բալկաններում, այլ Փոքր Ասիայում և Միջագետքում ունի մասնավոր շահեր, ուստի Ռուսաստանի դեմ անգլո-թուրքական դաշինքի կնքումն անհրաժեշտութիւն է: Անգլիայի «օգնութեամբ» պետք է «զօրացնել թուրքիան Փոքր Ասիոյ մէջ... որպեսզի պահակ մնայ Միջերկրականի և Հնդկաստանի ճամբաներուն՝ ցամաքային թէ ծովային»<sup>19</sup>:

Անգլիայի շահերն Արևելքում ապահովելու համար գեսպանը կանգ չի առնում սուլթանին շանտաժի ենթարկելու ատուց: 1878 թ. ապրիլի 24-ին սուլթանին ասում է, որ մահմեդական բնակչութիւնը գտնում է, որ թուրքիան պետք է մերձենա Անգլիայի և ոչ թե Ռուսաստանի հետ, «Եթե սուլթանը սերտ յարաբերութիւն ընէ Ռուսիոյ հետ, շատ հաւանական է, որ կորսնցնէ զահր»<sup>20</sup>:

Լեյարդի Հակաստոտական բաղադրականութիւններ պաշտպարում է նաև զբոսավոր Մալմանը, որը 1878 թ. նոյեմբերի 26-ի նամակներում ասում է, եթե Ռուսաստանն արշավի Փոքր Ասիա, դրա՛վի Կարինը և մեծ գետերի ափունքները, տիրի հայկական բարձրավանդակին, ապա այնտեղից դուրին կլինի հասնել Պարսից ծոց, իր ազդեցութեան տակ գցել Պարսկաստանը և նախապէս ղեկի Հնդկաստան: Բացի այդ, Ռուսաստանը վտանգի տակ կգնի Փոքր Ասիան, սեծովյան նեղուցները, «կը վտանգուի անգլիական առևտուրը՝ Սև և Միջերկրական ծովերը, միջև Սուէզ և Սուրիա կը մնան իր ազդեցութեան տակ. Ռուսիոյ յառաջացումը վտանգ մըն է»<sup>21</sup>: Նա պահանջում է կառուցել ռազմական գիծ Տիգրանակերտից մինչև Արդնկու, որտեղ անգլիական դորքերը կկռվեն ռուսական զորքերի դեմ:

<sup>18</sup> Խ. Իարիկյան, նշված աշխատ. էջ 319—320, վավերագիր 9:

<sup>19</sup> նույն տեղը, էջ 321:

<sup>20</sup> նույն տեղը, էջ 322:

<sup>21</sup> նույն տեղը, էջ 342—343, վավերագիր 19:

Ելնելով Անգլիայի նեղ շահերից, թուրքիայի «սաշտպանութեան» քաղաքական կուրսը ղեկավարում էր պրեմիեր-մինիստր լորդ Բիքոնսֆիլդը: 1878 թ. նա հայտարարեց, որ չպետք է թուլլատրել Փոքր Ասիան (ինչպես վերը նշվեց, Հայաստան տերմինը նա չէր օգտագործում) գրավի ուրիշ պետություն: «Այդ չպետք է լինի»<sup>22</sup>: Անգլիան պարտավոր է դիմադրել այդ երկրի նվաճմանը և պատրաստ լինել պատերազմի: Ազրեսիվ քաղաքական այդ կուրսը լորդ Բիքոնսֆիլդը հիմնավորում է Հնդկաստանին «սայանացող» ռուսական վտանգով և փքուն բառերով առաջարկում է որոշել ու պաշտպանել «Հնդկական կայսրության գիտական ու ճշգրիտ սահմանները»<sup>23</sup>:

Այսպիսով, անգլիական դիվանագետները, բարձրաստիճան գինվորականները, որոնց իրատ անհանգստացնում էին Անգլիայի առևտրական և ֆինանսական շահերը Արևելքում, մանավանդ Հնդկաստանում<sup>24</sup>, միտումնավոր ձևով ուռճացնում էին ռուսական վտանգը, սրպեսզի արդարացնեին կառավարության ազրեսիվ քաղաքականությունը Արևելքում: Անգլիական քաղաքականությունը միանգամայն ճիշտ էր հասկացել Լոնդոնի ֆրանսիական դեսպանը, որ 1875 թ. նոյեմբերի 19-ին իր շեֆին գրում է. «Հարցը թուրքիոյ ամբողջականութիւնը կամ անկախութիւնը չէ... այսօր արևելքում հարցը Հնդկաստանի հարցն է և Ասիոյ մէջ Անգլիոյ կայսրութեան հարցը... Անգլիոյ տնտեսական շահերուն նկատմամբ Հնդկաստանի ստացումը միջ պետեղված՝ չի կրնար սակայն կշռի մէջ դրուել, այն գրաման քաղաքական շահուն հետ»<sup>25</sup> և նա իրավացիորեն գտնում է, որ անգլիական կառավարությունը պատրաստ է Հնդկաստանի համար պա-

<sup>22</sup> «Русская старина», 1914, т. 160, кн. 10—12, стр. 345.

<sup>23</sup> «Вестник Европы», 1879, т. 6, кн. 11, стр. 355.

<sup>24</sup> Անգլիան Հնդկաստանում իշխում էր 230—240 մլն բնակչության վրա: Նրա տարեկան ասրանքաշրջանառությունը Հնդկաստանի հետ հասնում էր 2 մլրդ ֆր, իսկ այնտեղ ներգրված հապիտալից ստացած տարեկան շահույթը՝ 40 մլն. ֆ. ստ., բացի այդ, Հնդկաստանի Անգլիային պարտք էր 250 մլն ֆ. ստ.:

<sup>25</sup> Խ. Գաբրիլյան, նշված աշխատ., էջ 315—316, վավերագիր 7:

տերազմ մղել Ռուսաստանի դեմ, որը կլինի «կյտ ձուկի և արջի պատերազմ մը»<sup>26</sup>:

Ահա թե ինչու անգլիական կառավարությունը տասնյակ հեռագրեր էր հղում թուրքական կառավարությանը, որոնցում սուլթանին հավաստիացնում էր, որ եթե Ռուսաստանն սկսի պատերազմ Թուրքիայի դեմ, ապա նույն օրն Անգլիան պատերազմ կհայտարարի Ռուսաստանին: «Միղձատ փաշան և մենք բոլորս Անգլիայի կողմից լիտիաբար խաբված էինք»<sup>27</sup>, — ասել է թուրք փաշաներից մեկը ոտն ժուռնալիստ Մոլչանովին: Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, երբ ցարական կառավարությունը բանակցություններ էր վարում եվրոպական կառավարությունների հետ նրանց դիրքը պարզելու համար, Իզնատեին Անգլիայի պրեմիեր-մինիստրը լորդ Բիքոնսֆիլդը (Դիլրայելին) ասում էր, որ Թուրքիայի կործանման դեպքում Անգլիային կհետաքրքրի Հնդկաստան տանող ճանապարհների պաշտպանությունը և Տիգրիս ու Եփրատ գետերի հովիտների ճակատագիրը: Այնուհետև լորդ Բիքոնսֆիլդը ընդգծված ձևով նշում է. «Նեղուցները պետք է պատկանեն սուլթանին, կամ Անգլիային և ուրիշ ոչ ոքի»<sup>28</sup>: Այդ նախարարությունը նա չի մոռացրում է Անգլիայի նախնի շահագրգռվածությունը:

Սեմիեր-մինիստրն այդքան սուր է դնում Կ. Պոլսի հարցը, որովհետև այն անգլիական իմպերիալիզմի համար, ինչպես նշվեց առաջին գլխում, ուներ խոշոր տնտեսական, էլ առավել ուժեղացող տեղական մեծ նշանակություն: Անգլիական խոշոր բուրժուազիան Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի և սեծովյան նեղուցների նվաճման մեջ տեսնում էր իր նամար աղետաբար հետևանքներ: «Անգլիան, — դեռևս 1855 թ. գրել է Կ. Մարքսը, — չի կարող հաշտվել, որպեսզի Ռուսաստանը գրավի Դարդանեղը և Բոսֆորը: Այդ իրադարձությունը և տնտեսական, և քաղաքական տեսակետից կհասցնի խոշոր, եթե ոչ մահացու հարված բրիտանական հզորու-

<sup>26</sup> Խ. Կարիկյան. *Նշված աշխատ.*, էջ 238:

<sup>27</sup> А. Н. Молчанов. Между миром и конгрессом. СПб., 1878, стр. 23.

<sup>28</sup> «Русская старина», 1914, № 159, стр. 6—13.

թյանը»<sup>29</sup>, Եթե Ռուսաստանը գրավի նեղուցները՝ «Սև ծովի այդ բանալիները»<sup>30</sup>, ապա նա կարող է փակել անգլիական արդյունաբերական ապրանքների մուտքը սևծովյան շուկաները և հաստատել իր հեգեմոնիան Առաջավոր ու Միջին Ասիայում:

Կ. Մարքսը բարձր է դնահատել նաև սևծովյան նեղուցների ռազմաստրատեգիական նշանակությունը Ռուսաստանի համար: Նա գրել է. «Դարդանելի և Թոսֆորի մոտ նեղուցն այնքան նեղ է, որ համապատասխան տեղերում կառուցված և լավ դիմված փոքրաթիվ ամրոցները, ինչպես այդ կանի Ռուսաստանը նեղուցներին տիրելուց հետո, կարող է ծիծաղել ամրոցը աշխարհի միացյալ նավատորմի դրա, եթե նա փորձի այնտեղից անցնել: Սև ծովն այդ դեպքում այլ բան չի կարող դասնալ, քան ռուսական ծով, նույնիսկ ավելի մեծ շափով, քան Կադուզայի լիճը»<sup>31</sup>: Այնուհետև Կ. Մարքսը նշել է, որ եթե ցարական Ռուսաստանը նվաճի Կ. Պոլիսը և Թուրքիան, ապա դրանով կփոխվի եվրոպական պետությունների ուժերի հարաբերակցությունը: Ռուսաստանի «ուժերը կմեծանան զրեթե երկու անգամ, և նա մնացած եվրոպայից միասին վերցրած, ավելի ուժեղ կլինի»<sup>32</sup>: Դրանից հետո ցարական կառավարության կողմից Մակեդոնիայի, Թեսալիայի, Ալբանիայի գրավումը որևիցե դժվարություն չի ներկայացնի, և մեծացած ու հզորացած Ռուսաստանը կանգ չի առնի «աշխարհակալ կայսրություն դառնալու հանապարհին»<sup>33</sup>:

Անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիան, Կ. Պոլսի ռազմաքաղաքական այդ կարևոր նշանակությունից ելնելով, ձեռնում էր սուլթանին բարեկամ, նրա սլաշտպան և Թուրքիային հրահրում Ռուսաստանի դեմ պատերազմի, հուսալով պատերազմի բռնկման դեպքում եվրոպական պետություններից ստեղծել հակառուսական կոալիցիա և ջախջախել նրան: Անգլիան բոլորովին շահագրգռված չէր Թուր-

<sup>29</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 11.

<sup>30</sup> Նույն տեղը, էջ 13:

<sup>31</sup> Նույն տեղը, էջ 14:

<sup>32</sup> Նույն տեղը, էջ 15:

<sup>33</sup> Նույն տեղը, էջ 14:



քիայի պաշտպանությամբ, նա վերջինին հովանավորում էր այնքանով, որքանով վերջինս Արևելքում ծառայում էր սրպես անգլիական շահերի պաշտպանության դիմակ: Այդ հաստատում են անգլիական բոլոր սկզբնաղբյուրները, այդ թվում և 1877 թ. փետրվարի 9-ի Ռիքոնսֆիլդի՝ հրահանգչական բնույթ ունեցող նամակն արտաքին գործերի մինիստր Դերբիին: Նամակում ասվում է. «Ես ենթադրում եմ, որ Ռուսաստանը երբեիցե այնքան շատ չի եղել շահագրգռված խաղաղության պահպանման մեջ, որքան այժմ... Եթե պատերազմն սկսվի, ես կարծում եմ այն կավարտվի Թուրքիայի մասնատմամբ: Ես չեմ կարող չիմանալ, որ Թուրքիան շունի համապատասխան ռեսուրսներ՝ ո՛չ փող, ո՛չ մեծ թվով մարդկային ուժ: Այդ դեպքում մենք, նպատակահարմար պահին, պետք է գործենք վճռականորեն և նվաճենք այն սմեները, ինչ հանդիսանում է մեր կայսրության անվտանգության համար անհրաժեշտություն: Ոչ ոք մեզ չի խոչընդոտի, ո՛չ այդ ժամանակ և ո՛չ էլ հետագայում»<sup>34</sup>:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու տառաջարկը լիկ պատրվակ էր քողարկելու անգլիական նվաճողական պլանները, դործնականում Անգլիան ձգտում էր մասնատել Օսմանյան կայսրությունը: Հավաստիացումները սուլթանին, թե Անգլիան նրա լավագույն բարեկամն ու պաշտպանն է, միայն դիվանադիտական բնույթի նայտարարություններ էին: Ազրեսիվ այդ պլանն իրագործելու նպատակով Անգլիան Թուրքիային հրահրում էր պատերազմել Ռուսաստանի դեմ: Անգլիական թերթերը գրում էին, որ Ռուսաստանը թույլ է, միջազգային ասպարեզում մեկուսացված ու ներքին հեղափոխական շարժումների հետեւանքով նշուժված, իսկ Թուրքիան պատրաստ է պատերազմին, «սուլթանի բանակը երբեիցե չի ունենա ավելի նպատակահարմար պահ, որպեսզի ջախջախի ոսոխին, և կոպիտ սխալ կլինի ձգձգել պատերազմը»<sup>35</sup>: Այդ ուղղությամբ հատկապես ուշքի էր քննում ջինգոիստները (նացլոնալիստների)

<sup>34</sup> W. F. Monypenny and G. E. Buckle. The Life of Benjamin Disraeli, vol. VI, p. 126.

<sup>35</sup> «Times», 30 հունվարի 1877.

օրգան «Pall Mall Gazette»-ն, որը, Թուրքիային սգևորելու նպատակով, ծավալուն հոդվածներում գրում էր՝ ուսսական զորքերը կազմալուծվում են ու քայքայվում: Նրանք տառապում են հիվանդություններով, իսկ նոր զորահավաքը ծախողվել է: Ռուսաստանն ի վիճակի չէ Թուրքիայի դեմ կրուճելու: Պատերազմից վախենալու բան չկա<sup>36</sup>: Նույն ժամանակ Բիքոնսֆիլդը Լոնդոնի ուսսական դեսպան Պ. Շուվալովին փորձում էր համոզել, որ Անդլիան թշնամաբար չի տրամադրված Ռուսաստանի դեմ, պատրաստ է համագործակցել նրա հետ, անհրաժեշտ է սկսել բանակցություններ, սրոնք կպսակվեն նրանով, որ Ռուսաստանի համար կստեղծվի ոչ միայն «սակի կամուրջ» դուրս գալու ծանր վիճակից, այլ նաև կդառնա «կամուրջ դեպի սուտակներն ու ադամանդները»<sup>37</sup>:

Անդլիան Երազում էր տեսնել ուսս-թուրքական ռազմական կոնֆլիկտի բռնկումը և չէր կասկածում Ռուսաստանի հաղթանակի վրա: Նա նպատակ ուներ պատերազմից օգուտ քաղել՝ հյուծել մրցակից Ռուսաստանին և թուլացնել Թուրքիային, սրպեսզի սուլթանն Անդլիային ավելի մեծ դիչումներ կատարեր:

Բիքոնսֆիլդի կառավարության երկդիմի քաղաքականությունը հաստատում են նաև անդլիական այլ ազբյուրներ: Անդլիական քաճանա, արևելյան հարցի լավասեղյակ և թուրքական պետական գործիչ Միդլտո փաշայի հետ մտերմական հարաբերություններ ունեցող Մակ Կոլլը գրել է, որ վերջինիս հետ բարեկամական գրույցի ժամանակ նա իրեն ասաց, որ սուլթանը երբեք չէր մերժի թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների համար սեֆորմներ անցկացնելու վերաբերյալ կվրոպական խոշոր պետությունների առաջարկը և չէր համարձակվի դիմել Ռուսաստանի դեմ պատերազմի, Եթե նա հաշվի շառներ «Անդլիայի կողմից դադանի խոստացված օղնությունը»<sup>38</sup>: Անդլիական պատմարան Սինկ-

<sup>36</sup> S. M. Mak-Kollev. Султан и держава. СПб., 1897, стр. 74.

<sup>37</sup> „The Slavonic Review“. March 1926, vol. IV, №12, p. 748. Շուվալովի նամակը Կարչակովին, 9(12) փետրվարի 1877:

<sup>38</sup> M. Mak-Kollev. նշված աշխատ., էջ 75:

լերը ճշմարտացիորեն նշել է, որ Անգլիայի արևելյան երկ-  
դիմի ու նենգ քաղաքականության նպատակը «պղտոր ջրում  
ձուկ որսալն էր... Այդ պատերազմի պատասխանատվությու-  
նը լրիվ ընկնում է Անգլիայի վրա»<sup>39</sup>:

Անգլիական կառավարության քաղաքականությունն պատ-  
ճառով ձախողվեցին թուրքահայատակ քրիստոնյաների համար  
սեֆորմներ մշակելու՝ Կ. Պոլսի եվրոպական խոշոր պետու-  
թյունների ներկայացուցիչների կոնֆերանսի աշխատանքնե-  
րը, է՛լ ավելի սրվեց արևելյան ճգնաժամը, և գործը հասավ  
սուս-թուրքական պատերազմին, որի ժամանակ Անգլիան  
չկարողացավ Ռուսաստանի դեմ ստեղծել ռազմական բյուր  
ու բռնեց շեղոր զիբբ: Բայց երբ ռուսական զորքերը 1877 թ.  
վերջին փայլուն հաղթանակ տարան Արևմտյան Հայաստա-  
նում և Բալկաններում, գրավեցին Ադրիանապոլիսը ու ընդ-  
նայ մտեցան Կ. Պոլսին, անգլիական կառավարությունը  
խիստ անհանգստացավ, ռազմանալեր ուղարկեց սեծովյան  
նեղուցները՝ Թուրքիայում գտնվող անգլոհայատակ քաղաքա-  
ցիների կյանքն ու գույքը պաշտպանելու պատրվակով,  
իրականում Ռուսաստանին սպառնալով պատերազմով:

1878 թ. ապրիլի 21-ին Բերլինի Բիրսնոֆիլդը թաղուհուն հայտ-  
նում է, որ կառավարությունը նպատակ ունի դարակոչել պա-  
հեստայիններին ու Հնդկաստանից զորամասեր ուղարկել  
Միջերկրական ծով, որպեսզի Ասիայի քանալիներ, սաղմա-  
սորատեգիական կարևոր կետեր Կիպրոս կղզին և Ալեքսան-  
դրես նավահանգիստը գրավեն: Բացի այդ, կառավարու-  
թյունը նախատեսում է Պարսից ծոցում ուժեղացնել ան-  
գլիական զորամասերը, որոնք կչեզոքացնեն Բաղդադի շրջ-  
անը և ի շիք կպարձնեն ռուսական նվաճումների նշանակու-  
թյունն ու աղղեցությունը Հայաստանում<sup>40</sup>:

Թաղուհու համաձայնությունով, Բիրսնոֆիլդի կարգադրու-  
թյամբ կատարվեց 38 հազ պահեստայինների զորահավար,  
կազմվեցին էքսպեդիցիոն զորախմբեր, միաժամանակ  
Հնդկաստանից ուղարկված զորամասերն անցան Սուեզի ջրը-

<sup>39</sup> Т. Сиклаер. Восточный вопрос прошедшего и настоящего. С. 116. 1878, стр. 109.

<sup>40</sup> Տե՛ս W. F. Monypenny and G. Buckle. The Life of Benjamin Disraeli, vol. VI, էջ 262.

անցրը և Մերձավոր Արևելքի ջրերում գրավեցին ռազմատորատեղիական դիրքեր: Բացի այդ, պրեմիեր-մինիստրը պառլամենտից պահանջեց՝ կառավարությանը թույլատրել կատարելու ևս 70 հազ. զինվորի զորահավաք<sup>41</sup>: Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Դիպրայելի կառավարության քաղաքականությունը ղինված միջամտության քաղաքականություն էր: Նա այդպես էր վարվում «ոչ թե Թուրքիային պաշտպանելու, այլ Ռուսաստանին ջախջախելու»<sup>42</sup> և Երիտանական կայսրության մենաշնորհային դիրքերը Թուրքիայում ամրապնդելու համար:

Երբ խարդախ Ալբիոնը (Անգլիան) ռուս-թուրքական պատերազմի ժամանակ լարում էր դիվանագիտական որոշայթներ, Ռուսաստանի վրա դործադրում ռազմաքաղաքական ճնշում, այն ժամանակ արևմտահայերը, ողեսրված Կ. Պոլսի կոնֆերանսում ռուսական պատգամավոր կոմս Իգնատևի կողմից Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու առաջ քաշած պահանջով, խնչպես և մեծ հույսեր կապելով ռուսական բանակի հաջողությունների հետ, բազմակողմանիորեն օգնում էին նրան: Հայ ժողովրդի հակաթուրքական արամագրության ուժեղացմանը նպաստեցին նաև պատերազմի նախօրյակին ու դրա ժամանակ թուրքական քաղաքացիական ու ռազմական իշխանությունների կողմից գործադրվող կամայականություններն ու բռնությունները: Այդ մասին Կարինի անգլիական հյուպատոս Ջոհրաբը արտաքին գերծերի մինիստր Դերբիին 1877 թ. մարտի 14-ին գրել է, որ Սերաստրայից ուղարկված 170 թուրք զինվորներն սկսել են սղծել հայկական եկեղեցիները, դաժանորեն ծեծել քահանաներին և հետապնդել հայ կանանց ու աղջիկներին<sup>43</sup>:

Հաջորդ ղեկուցագրում Ջոհրաբը պատմում է, որ սպաները վատ օրինակ են ցույց տալիս զինվորներին: Օրեցօր

<sup>41</sup>Տե՛ս «Hansard's Parliamentary Debates», 1876, vol. 239, էջ 73.

<sup>42</sup> M. Mak-Kolab, նշված աշխատ., էջ 78:

<sup>43</sup> Տե՛ս «Hansard's Parliamentary Debates», 1877, vol. 218, էջ 1108.

հայերի նկատմամբ վերաբերվում են ավելի վատ, ստեղծում են արհեստական վեճեր, որոնք վերջանում են կոպով ու ծեծով: Հայերին ու նրանց հավատին հրապարակայնորեն վիրավորանքներ են հասցնում: Գյուղերում «սպաներն անում են ամեն ինչ, ինչ թելագրում է նրանց գլուխները, որը ծայրաստիճան վրդովեցուցիչ է, անարգարություն է ու դաժանություն»<sup>44</sup>: Զինվորները խրախուսվում են ու ընդօրինակում սպաներին: Կառավարությունը ոչինչ չի անում կանխելու այդ ապօրինությունները:

Փոքրասիական անգլիական հյուպատոսների ղեկուցագրերը ընթերցում են պառլամենտում, որը բխում էր ոչ թե Անդլիայի՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած մարդասիրությունից, այլ շահագրիտական նպատակներով թուրքական կառավարությանը զգուշացնելու հաշվենկատությունից, որպեսզի թուրքերի ծայրահեղությունները տեղիք չտային հայերի ապստամբության, և պատերազմի դեպքում թուրքական բանակը չդրվեր ոչ միայն օգնությունից, այլև հայերի օրինապահությունից:

Թուրքական տեղական իշխանությունների կամայականություններն այն ստատիկան վրդովեցուցիչ էին, որ «Ռումելիայում ու Բուլղարիայում շերքեյների ու բաշիբոզուկների կողմից կատարվող բոլոր գազանությունները ոչինչ էին այն գազանությունների համեմատ, որ կատարվում էին Հայաստանում»<sup>45</sup> հայ ժողովրդի նկատմամբ:

Ռում-թուրքական պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանի միճակը դարձավ գծոխային: «Գոլոս» թերթը դրում է, որ քրիստոնյաներին հալածելու համար այնտեղ «մուսուլմանական ֆանատիզմը միշտ գտել է լրիվ ազատություն» և կիրառել ամեն տեսակի դաժան միջոցառում: «Նա հրով ու սրով քրիստոնյաներից կորզել է այն բոլորը, ինչ կորցրել է Եվրոպայում»<sup>46</sup>:

Թուրքական պառլամենտում Կարինի պատգամավոր Հ. Պալաուջյանը, մերկացնելով կառավարության հակահայկա-

<sup>44</sup> Harbord's, Parliamentary Debates, 1877, vol. 213, էջ 1168.

<sup>45</sup> «Голос», 1877, № 166.

<sup>46</sup> Նույն տեղը, № 297:

կան քաղաքականությունը, ասում է, որ հայկական վիլայեթներին վալիների հետ դրույցի ժամանակ վերջինները քուրդ բեգերի, շերքեզների ու բաշիբոզուկների կամայականություններին վերջ չդնելը բացատրեցին պետական գաղտնիքով: Բացահայտելով այդ գաղտնիքը, Պալարյանը հայտարարում է, որ կառավարությունը քրդերի, շերքեզների և մյուսների նկատմամբ ցուցաբերում է «ներողամտություն», որպեսզի քրիստոնյաների ապստամբության դեպքում նրանց ձեռքով ճնշել այն<sup>47</sup>: Հ. Պալարյանի եզրակացությունը ճիշտ է, այդ հաստատումն են բոլոր աղբյուրները և իրադարձությունների հետագա զարգացումը: Թուրքական կառավարության քաղաքականությունը ոչ թե իսկական ներողամտություն էր, այլ խրախուսման քաղաքականություն և այն իր սուր ծայրով ուղղված էր հայ ազգային-ազատագրական շարժումների դեմ:

Թուրքական բռնակալական վարչակարգը, սուլթանիզմի հայտնության քաղաքականությունը արևմտահայությանը նետում էին Ռուսաստանի դիրկը և ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ինչպես հաղորդում է Կովկասյան ռազմաճակատի հրամանատարն Ալեքսանդր II-ին, նրանք ցույց են տալիս «բոլոր ակնկալությունները գերադանցող հնադանդություն ու ծառայելու պատրաստակամություն» և այնքան շատ էին ազատագրված Կարսի փառասլությունում բռնակում ծառայել ցանկացողները, որ կորպուսի հրամանատար «գեներալ-ադյուտանտ Լոսիս-Մելիքովը միանդամայն անհրաժեշտ է դտնում հենց հիմա նրանցից կազմել մեկ հեծյալ սնկատնոն դոնդ, որի համար նրան տվին թույլտրվություն»<sup>48</sup>:

Հայ ժողովուրդը, միայն Ռուսաստանից փրկություն սպասելով, ռուսական բանակին ցույց էր տալիս բազմակողմանի օգնություն: Խաղաղ բնակչությունը ռուսական զորքին դիմավորում էր ող ու հացով, քահանաները՝ խաչով ու մուղթանքով, հովիվները՝ մատաղով, կանայք ու երեխաները՝

<sup>47</sup> Տե՛ս «Голос», 1877, № 106.

<sup>48</sup> «Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на Кавказско-малоазийском театре», СПб., 1903, выд. IV, стр. 5.

նուսական բանակի հաղթանակն օրհնելով: Ռուսական բանակին նյութական ու բարոյական օգնությունից բացի, հայ տղամարդիկ գեները ձեռքներին ուս ղիմվորների հետ կողք-կողքի կռվում էին թուրքական բանակի դեմ և օժանդակում միլիցիային: Կոլյուբակինի վկայությամբ, միայն միլիցիայում ծառայում էր 42000 հայ<sup>49</sup>:

Ռուսական բանակի տարած փայլուն հաղթանակի արդյունքը 1878 թ. փետրվարի 19-ի (մարտի 3-ի) Սան-Ստեֆանոյի հախնական հաշտության պայմանագիրն էր, որում, ինչպես վերը նշվեց, 16-րդ հողվածը վերաբերում էր Արևմրայան Հայաստանում ռեֆորմների իրագործմանը: Իգնատևը պայմանագրի մեջ 16-րդ հողվածը մտցնելը դիտում էր որպես ռուսական պիվանագիտության հաղթանակ և շատ գոհ էր, քանի որ այն ցարական կառավարությանն իրավական հիմք էր տալիս անընդմեջ միջամտելու թուրքիայի ներքին գործերին, ուժեղացնելու Կ. Պոլսի ռուսական դեսպանի ազդեցությունը և մեծացնելու Ռուսաստանի հեղինակությունը Հայաստանում<sup>50</sup>: Այսօր մենք կարող ենք ասել, որ Իգնատևը լրիվ շարժարացրեց հայ ժողովրդի հույսերը, բայց պետք է նշել, որ այնուամենայնիվ, 16-րդ հողվածը որոշակի երաշխիք էր ռեֆորմների իրագործման, մուսուլմանական ֆանատիկների կողմից հայերին հալածանքներից ու վրիժառությունից պաշտպանելու ուղղությամբ, մանավանդ որ խնդիր էր դրված «անհապաղ կենսագործել» բարենորոգումները և ռուսական զորքերը պահել հայկական վիլայեթներում մինչև ռեֆորմների իրագործումը, քաջ գիտենալով սուլթանի շուտ և մեծ խոստում տալու և արագ «մոռանալու», անգամ փորրը շիտարելու բաղաբաղանությունը:

Բայցրը չամողված էին, որ ռուսական զորքերի ետ գնալու դեպքում մուսուլմանները՝ կրոնական մուլեոանդությամբ ու մտամեղական հոգևորականության պրոպագանդայով հարբած, կսկսեն հայկական կոտորածներ, որի հետևանքով «այդ

<sup>49</sup> Տե՛ս «Русско-турецкая война 1877 - 1878 гг. на Кавказе и в Малой Азии», Составил Б. Колюбакин, СПб., 1906, ч. 1, էջ 148.

<sup>50</sup> Տե՛ս Сан-Стефано. Записки графа Н. П. Игнатьева, Пг. 1916, էջ 202 - 204.

տեղերում դրույթներ կղանա անցյալից ավելի վատ»<sup>51</sup>, չնայած որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 27-րդ հոդվածով Ռ. Գուռը պարտավորվել էր թույլ չտալ «հալածել այն թուրքահայատականներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ...»<sup>52</sup>: Հայերն զգում էին սուրբանաչափ վտանգը և, ուժքեր հնարավորություն ունենալով, ռուսական բանակի հետ գաղթեցին Արևելյան Հայաստան:

Այսպիսով, Սան-Ստեֆանոյի պայմանագրով Կարսի, Արդահանի, Բաթումի, Բայազետի և մինչև Սողանլուղ ընկած տերիտորիայի հայերը միացվելու էին արևելահայերին, իսկ Թուրքիայում մնացող հայերի համար խոստացան ապահովել անձի անվտանգություն, գույքի անձեռնմխելիություն՝ տեղական պահանջներից բխող ռեֆորմների իրագործում: Բացի այդ, ստաշին անդամ հայկական հարցը բարձրացավ միջազգային դիվանագիտության ասպարեզ, և սուլթանական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց նրա գոյությունը:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրն ունի իր թույլ և ուժեղ կողմերը, իր քննադատներն ու երկրպագուները: Հաշվի առնելով Ռուսաստանի համար նրա տնտեսական, ռազմաստրատեգիական և տերիտորիաներ նվաճելու իմաստով շահավետությունը՝ ֆինանսների մինիստր Ս. Վիտտեն այն համարել է «հրաշալի»<sup>53</sup> պայմանագիր, նրա 16-րդ հոդվածը ռուս ժուռնալիստ Օլգա Կոլիկովան համարում է «ոսկի արծուղ երաշխաւորութիւն»<sup>54</sup>:

Սան-Ստեֆանոյի պայմանագրի օբյեկտիվ գնահատականը տվել է Ֆ. Էնգելսը: Նա գրել է. «Ռումինիան, Սերբիան, Չեռնոսդորիան, որոնք բնդարձակել էն իրենց տարածքը և տնտեսություն ստացել շնորհիվ Ռուսաստանի, դրա համար պարտական էին նրան. Դանուբի և Բալկանների միջև եղած սահմանների քառանկյունը, Թուրքիայի այդ հզոր պատենը ժամանակավորապես քանդվել է... վերադարձված է 1856 թ»:

<sup>51</sup> «Русская старина», 1911, № 4, стр. 137.

<sup>52</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սուլթանական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 97:

<sup>53</sup> С. Ю. Витте. Воспоминания. М., 1960, т. 1, стр. 406.

<sup>54</sup> «Անր-Դար», 1895, № 21:



կորսված տարածքը Բևսարաբիայում, նվաճված են նոր կարևոր դիրքեր Հայաստանում... Վերջապես, Թուրքիան տերիտորիաների կորստի, հյուսիսային և ուժից վեր ազդմական ծախսերը հատուկ կու հետևանքով լրիվ կախման մեջ է բնկել Ռուսաստանից»<sup>57</sup> :

Անդլիական բուրժուազիան տաղնապով էր նայում ռուսական դիրքերի ուժեղացմանը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում, զրա մեջ տեսնելով իր դիրքերի թուլացումը Մերձավոր Արևելքում և սպառնալիք Հնդկաստան տանող առևտրական ու ազդմական ուղիներին: Իրա համար էլ 1878 թ. մարտի 27-ին անդլիական կառավարությունը հայտարարեց, որ համաձայնություն չի ապահովում Սան-Ստեֆանոյի պայմանագրին և Հնդկաստանից Միջերկրական ծով տեղափոխած զորքերի հրամանատարությունը կարգապահացրա՞նք իրա՞նք: Իհարժուրէ Բիրոնսֆիլդն այդ կարգադրությունը պատճառաբանեց նրանով, որ, իբր թէ, «Ռուսաստանը իր պատասխանատուութեամբ խախտել է նախօրոք տված խոստումը՝ իր հանցագործութեամբ բաժանել է այն տերիտորիաները, որոնք կոչվում էին Եվրոպական Թուրքիա և ձեռքը դրել է Հայաստանի մեծ մասի վրա»<sup>58</sup> :

Ռուսաստանի դեմ զիջանագիտական որոյալթներ լարելու, եվրոպական պետութուններին նրան հակադրելու և Սան-Ստեֆանոյի պայմանագիրը լրիվ վերանայելու նպատակով, ապրիլի 1-ին անդլիական կառավարությունը շրջաբերական է հղում եվրոպական պետութունների մայրաքաղաքների իր դեսպաններին, որով պահանջում էր հրավիրել 1856 թ. Փարիզի տրակտատը և 1871 թ. Լոնդոնի արձանագրությունները ստորագրած երկրների ներկայացուցիչների կոնֆերանս, որպէսզի քննեն ռուս-թուրքական հաշտութեան պայմանագիրը, բանի որ այն փոխել է ուժերի հարաբերակցութեանը Բալկաններում և Մերձավոր Արևելքում, ստեղծել Ռուսաստանի հովանավորութեան ներքո մեծ Բուլղարական պետություն, որի ծովափնյա կարևոր նավահանգիստները Ռուսաստանին հնարավորութուն կտան Սև ծովում հաս-

K. Марк и Ф. Энгельс. Соч., т. 22, стр. 44.

<sup>58</sup> R. W. Seton-Watson. նշված աշխատ., էջ 396:

տատել թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական հեղեմունիա<sup>57</sup>։

Միտումնավոր ձևով ուռճացնելով ոռոսական վտանգը՝ Բիքոնսֆիլդը հայտարարեց, որ եթե Սան-Ստեֆանոյի պայմանագիրն ուժի մեջ մտնի, այն կխախտի ազատ նավարկությունը նեղուցներում, Թուրքիան կդառնա Ռուսաստանի վասալը, ոռոսական զորքերի կողմից գրավված եվրոպական ու ասիական տերիտորիաներում կտիրի անարխիա, կփոխվեն Անգլիայի համար ճանապարհները դեպի Ասիա, ոռուսական բանակը կմտնի Սիրիա, կգրավի Եգիպտոսը և Սուեզի ջրանցքը։ Այս պայմաններում Անգլիայից պահանջվում էր սպառնալինվել<sup>58</sup>։ Մի այլ անգամ նա իր կշռվածում «գտնում է», որ Եվրոպայում թուրքական տիրապետությունը լիկվիդացնելու, Բուլղարիայի Սև և էդեյան ծովափերին նավահանգիստներ ձեռք բերելու հետևանքով Սև ծովը կասպից ծովի նման կդառնա ոռոսական լիճ, «խախտված է նաև համառարակչությունը Միջերկրական ծովում» և քանի որ բանակցությունների օգնությամբ դժվար է վերականգնել այն, նա թաղուհուն խորհուրդ է տալիս անցկացնել այնպիսի քաղաքականություն, որի նպատակը լինի «կայսրության պաշտպանությունը, Եվրոպայի պատությունը և առևտրի ապահովությունը»<sup>59</sup>։ Անգլիական գիշատիչ առևտրաարդյունաբերական բուրժուազիան այն աստիճանի էր մտահոգված իր համար Արևմտյան Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհների ապահովմամբ, որ բոլորովին հաշվի չառնելով հայ ժողովրդի կենսական շահերը, կանգ չառնելով նրա ֆիզիկական բնաջնջման առաջ, կառավարությունից պահանջում էր լրիվ վերացնել ոռուսական նվաճումները և «նրա ազդեցությունը Հայաստանում»<sup>60</sup>։

Բիքոնսֆիլդի ծայրաստիճան ակտիվ քաղաքականությունը պաշտպանում էր արտաքին գործերի մինիստր Սոլսբերին։ Կառավարության արտաքին քաղաքական կուրսը պաշտպանում էր նաև անգլիական բուրժուական մամուլը, որը

<sup>57</sup> *SL*՝ «Annuaire Diplomatique de l'Empire de Russie pour l'année 1878», էջ 233.

<sup>58</sup> *SL*՝ «Hansard's, Parliamentary Debates», 1878 vol. 239, էջ 773.

<sup>59</sup> «Правительственный вестник», 1878, № 66.

<sup>60</sup> R. W. Seton—Watson. *նշված աշխատ.*, էջ 364.

ձգտում էր ապահովումնորոշել հասարակական կարծիքը և Անգլիայի ագրեսիվ քաղաքականությունը հրամցնել որպես խաղաղասիրական, հումանիտական և պաշտպանողական, իսկ նրա կողմից միջազգային հարաբերությունները լարելու, նոր պատերազմ հրահրելու մեղքը բարդել Ռուսաստանի վրա: Անգլիական քաղաքական դործիչներն ու մամուլը ձգտում էին բրիտանական նեղ շահերի պաշտպանությունը ներկայացնել որպես համայն մարդկություն շահերի պաշտպանություն: Մակայն Բիքոնսֆիլդի կառավարության քաղաքականությունը մերկացվեց: 1878 թ. ապրիլի 29-ին և 30-ին կիսկերպուցում, Մանչեստրում, այնուհետև Բիրմինգհամում բանախոսական ժողովներում ու միտինգներում դատադարտում են կառավարության ռազմամուլ քաղաքականությունը, նշելով, որ այն օտարոտի է աշխատավորության շահերին<sup>61</sup>: Աշխատավորական միտինգներից մեկում գլուղական բանավորների առաջնորդ Ջոզեֆ Արչը հայտարարում է, որ փորձում են համոզել, թե Անգլիայի ազգային շահերը պահանջում են Գարգանելում ադատ նախարկություն: Այդ ամեննին ճիշտ չէ: Գարգանելում ադատ նախարկությունը բխում է միայն ասեարական բուրժուազիայի և ոչ թե ժողովրդի շահերից: Ժողովրդի շահերն Անգլիայում են և պահանջում են «ազդարարչին նարցը ճիշտ լուծել»<sup>62</sup>:

Մասնատների շարժման ու լիբերալների կուսակցության օպոզիցիայի ճնշման տակ Բիքոնսֆիլդի կառավարությունը հրաժարվեց Ռուսաստանի դեմ պատերազմից և վերսկսեց Էնդոսի սուսական դեսպան Պ. Շուլայովի հետ բանակցությունները, որոնք ավարտվեցին մայիսի 30-ի անգլո-ռուսական դադանի համաձայնագրի կնքմամբ<sup>63</sup>, ըստ որի Կարսը և Բաթումը պետք է անցնեին Ռուսաստանին, իսկ Բայազետը և Ալաշկերտի հովիտը վերադարձվեին Թուրքիային:

Անգլիայի հակառուսական քաղաքականությունը հավանություն դրավ ալիսարո-հունգարական կառավարության կողմից, որի քաղաքական շահերը պահանջում էին ճնշել

<sup>61</sup> See S. Maccoby, English Radicalism 1853–1886. London, 1938, էջ 232.

<sup>62</sup> И. И. Янжул, Британские интересы на Востоке. «Слово», май, 1878, стр. 41.

<sup>63</sup> See S. Maccoby, English Radicalism 1853–1886, 1938, էջ 238.

Թուրքահայաստակ հայերի, սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները և պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, որպեսզի ազատագրական շարժումների հաջողությունները չոգեշնչեին Ավստրո-հունգարական կայսրության հայատակ սլավոններին ապստամբության, որը կարող էր հասցնել Հաբսբուրգների կայսրության քայքայմանը: Այդ մասին 1878 թ. փետրվարի 4-ին Կ. Մարքսը գրել է Վ. Լիբկնեխտին. «Դրա արդյունքը պարպակա կլինի Ավստրիայի փլուզումը... Թուրքիան Ավստրիայի պատենչն է Ռուսաստանի և նրա սլավոնական շքախմբի դեմ»<sup>64</sup>: Այդ էր պատճառը, որ ավստրո-հունգարական կառավարությունը, շնայած 1876 թ. հուլիսի 26-ին Ռուսաստանի հետ կնքել էր Ռաջիշտադտյան գաղտնի պայմանագիրը Բալկանների վերաբերյալ, 1878 թ. սկզբին պատերազմով սպառնում էր Ռուսաստանին և պահանջում՝ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հորձնել և վրոպական պետությունների ներկայացուցիչների կոնֆերանսի քննարկմանը, իսկ արտաքին գործերի մինիստր Անդրաշի Բեռլինի ավստրիական ղեկավար Կարոլին ուղարկած հրահանգում ասվում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը պահանջում է «Կոնֆլիկտ կամ կոնֆերանս»<sup>65</sup>: Անգլիայի ու Ավստրո-Հունգարիայի տնտեսական ու քաղաքական շահերն արևելյան հարցում համընկնում էին և նրանց միջև հաստատվեցին սերա կապեր: Ավստրո-հունգարական կառավարությունը, ոգևորված Անգլիայի, ինչպես և Գերմանիայի<sup>66</sup> «պաշտպանությունը», կատարեց մասնակի շարահավաք. իսկ պառլամենտը՝ ռազմական նպատակով բաց թողեց 60 մլն ֆլորին մարկ: Կառավարությունը գործեր ուղարկեց Գանուբի ստորին հասանքը՝ Բալկաններում գտնվող ռուսական գործերին սպառնալով հարվածել թիկունքից:

<sup>64</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 54, стр. 247.

<sup>65</sup> „Die Crosse Politik...“, Bd. II, № 303 Անդրաշին-Կարոլին, 1878, հունվարի 28-ին:

<sup>66</sup> Վեյմարյան. — ասում է սուս գիվանալեա Մարքսի մոտը. — շատ հիմար է, նա անդամ չի տեսնում, որ նրա ոտերի վրա Միջերկրական ծով է դնում Բրամարիը, և ոչ թե գեներալ Իգնատևը, ինչպես օր ու գիշեր թվում է նրան»: Տե՛ս «Русская старина», 1914, т. 160, էջ 154.

Բիւմարկյան Գերմանիան, որը միշտ Ռուսաստանին հրահրում էր պատերազմի Թուրքիայի դեմ, խոստանում արևելյան հարցում լիովին պաշտպանել նրան «ոչ միայն դիվանագիտութեամբ, այլ նաև նյութապես՝ զորքով ու դրամով»<sup>67</sup>, այն, երբ Ռուսաստանին սպառնում էր սեպ վտանդ, բռնել էր «շեղոք» դիրք, շնայած որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի շուրջ վեճերի ժամանակ կայսրը հայտարարեց. «Ես առանց օգնութեան չեմ թողնի իմ քրոջ որդուն (ցարին—Լ. Բ.)»<sup>68</sup>: Ռուսաստանը Բիւմարկը նշում է, որ Գերմանիան «պետք է դիմ Ավստրիային»<sup>69</sup>:

Աստիճանաբար Անգլիայի ու Ավստրո-Հունգարիայի դիրքերին է հարում նաև Ֆրանսիան, որը պաշտպանելով Թուրքիային փոխառութուններ տված բուրժուազիայի շահերը, ապերախտաբար «մոռացավ» 1875 թվականի ռազմական արդյունքի ժամանակ Ռուսաստանի ցույց տված օգնութունը, իսկ Բալկաններում, Աֆրիկայում և Միջերկրական ծովում ագրեսիվ նպատակներ հետապնդող Իտալիան ձգտում էր բուռն պետութունների հետ սննեայ լավ հարաբերութուններ, որպեսզի իրագործեր իր պլանները:

Այսպիսով, Ռուսաստանը մեկուսացվել էր և ստաջացել շահատեսակյան բլուրի ստեղծման վտանգ, իսկ Թուրքիան, սգովելով Անգլիայի ու Ավստրո-Հունգարիայի հովանավորութունից, պայքել էր համարձակ, և հրաժարվում էր ճշտորեն կատարել դինագադարի պայմանագրի պահանջները: Ռուսաստանը, սրբազան խուսափել նոր պատերազմից, հարկադրված համաձայնվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ամօնել Եվրոպական խոշոր տերութունների ներկայացուցիչների կոնգրեսի քննարկմանը, որը տեղի ունեցավ Բեռլինում: Ռուսաստանի համաձայնութունը բացատրվում է նաև նրա բանակի ծանր վիճակով ու Երկրի ներքին պրոբլեմներ: Բանակը հյուծվել էր պատերազմում, զինվորների մեջ տարածվել էին համաճարակային հիվանդութուններ, իսկ Երկրում՝ սրվել դասակարգային պայքարը: Կ. Մարքսը Զոր-

<sup>67</sup> «Дневник Д. А. Милютин», т. II, стр. 144.

<sup>68</sup> «История», 1878, № 66.

<sup>69</sup> «Дневник Д. А. Милютин», т. III, М., 1950, стр. 19.

գեին պրել է, որ եթե մինչև հիմա Ռուսաստանը եղել է  
ռեակցիայի միջնաբերդ և հակահեղափոխական ուժերի ու-  
զերով, «որի դրուժյունը ես ուսումնասիրել եմ ռուսական պաշ-  
տոնական ու ոչ պաշտոնական բնագիր աղբյուրների հիման  
վրա... վաղուց արդեն կանգնած է հեղաշրջման շեմին, և  
բոլոր անհրաժեշտ տարրերը դրա համար հասունացել են»:  
Այնուհետև Կ. Մարքսը համոզված ձևով, մարպարեաբար  
ասում է. «Այս անդամ հեղափոխությունը կսկսվի Արևել-  
քում»<sup>70</sup>:

Երբ ռուսական կառավարությունը համաձայնվեց Բեռլի-  
նի կոնգրեսի հրավիրման հետ, արևմտահայերը որոշեցին  
խնդրանքով դիմել կոնգրեսին մասնակցող եվրոպական կա-  
ռավարություններին՝ հայկական հարցն արմատականորեն  
լուծելու համար: Այդ նպատակով 1878 թ. Կ. Պոլսի հայոց  
պատրիարքարանը ընտրեց պատվիրակություն՝ ականավոր  
հայրենասեր Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ, որը  
բանակցություններ վարելու նպատակով մեկնեց եվրոպական  
խոշոր պետությունների մայրաքաղաքները: Պատվիրակու-  
թյան անդամներն էին՝ Խոսրեն Եպիսկոպոս Նարբեյը, Ատե-  
փան Փափաղյանը և Մինաս Զերալը որպես քարտուղար:  
Խ. Նարբեյը մեկնեց Պետերբուրգ՝ ցարական կառավարու-  
թյանը ներկայացնելու հայ ժողովրդի խնդրանքը, իսկ Տեր-  
Բարդուղյանը՝ էջմիածին, որպեսզի կաթողիկոսարանը միջ-  
նորդեր ռուսական կառավարության առաջ՝ պաշտպանելու  
արևմտահայության պահանջը: 1878 թ. մարտի 8(20)-ին  
Մ. Խրիմյանը և Մ. Զերալն էլ մեկնեցին Եվրոպա՝ նախնա-  
կան բանակցություններ վարելու, հայկական հարցը խոշոր  
պետությունների համակրանքին արժանացնելու նպատակով,  
որպեսզի Բեռլինի կոնգրեսում նրանք պաշտպանեն հայոց  
դատը:

Հոսմում և Փարիզում բանակցությունների ժամանակ  
Իտալիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրները  
Խրիմյանին կեղծաբար խոստացան կոնգրեսում պաշտպանել  
հայկական հարցը: Փարիզում հայկական պատգամավորու-  
թյունը հանդիպում է անգլիական դեսպան լորդ Լայոնսի

<sup>70</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 34, стр. 229 и 230.

հետ, որը Խրիմյանին հավաստիացնում է, որ հայոց պատ-  
վիրակությանը Լոնդոնում լավ կընդունեն: 1878 թ. ապրիլի  
11-ին Մ. Խրիմյանը և Մ. Չերազը հասան Լոնդոն, որտեղ  
մնացին մինչև հունիսի սկիզբը և Լոնդոնի ու Մանչեստրի  
հայ գաղութների ներկայացուցիչների հետ ծավալեցին յայն  
դարձունեություն: Անգլիահայ կոմպրադորական բուրժուա-  
զիան դեռևս 1877 թ. Լոնդոնում հիմնել էր «Արևելյան հարցի  
բնկերությունը», որը հրատարակեց՝ «Հայաստանը և Լիբա-  
նանը» գրքուկը: Գրքուկի հեղինակ Ի. Վ. Պրոբին, նկարա-  
զրկյով հայ ժողովրդի թշվառ վիճակը, ասում է, որ եթե Արև-  
մուտյան Հայաստանը Լիբանանի նման ստանա ինքնավարու-  
թյուն, հայ ժողովուրդը կապրի վերածնություն, իսկ երկիրը՝  
ծաղկում: Հեղինակը, արտահայտելով անգլիահայ բուրժուա-  
զիայի շահերը, հավանություն է տալիս ինքնավար Հայաս-  
տանի ստեղծման գաղափարին և առաջարկում, որ նորա-  
ստեղծ ինքնավար Հայաստանը դաշինք կնքի Անգլիայի հետ:

1878 թ. Լոնդոնի հայկական գաղութի ներկայացուցիչները  
հրատարակեցին «Կոնգրեսը և հայերը» գիրքը, որում նկա-  
րագրվում են բրդերի, շերեպեղերի բնութկյունները, թուրք շի-  
նոմիսիկների կամայականությունները, հայկական վիսայեթ-  
ներում թագավորաց անարխիան, սուլթանիզմի հակահայ-  
կական քաղաքականությունը և հայ ժողովրդի ծայրաստի-  
ճան ծունր վիճակը: Նրանք, արտահայտելով անգլիահայ  
բուրժուազիայի բաղձանքը, պահպանողականների կառավա-  
րությունից խնդրում են օգնել արևմտահայերին ստանալու  
ինքնավարություն, որի համար վերջիններս երախտապարտ  
կղզան Անգլիայի առաջ և, որպես վարձահատուցում, իրենց  
սուտական օրինատացիան կփոխարինեն անգլիականով:

1878 թ. հայերի պաշտպանությամբ հանդես է գալիս ան-  
գլիացի լիբերալ, բուրժուական պացիֆիստ, Օքսֆորդի հա-  
մալսարանի պրոֆեսոր, իրավունքի ամբիոնի վարիչ Ջեյմս  
Բրայսը, որը նույն տարին հիմնեց Անգլո-հայկական կոմի-  
տե և պաշտպանեց Արևմտյան Հայաստանին ինքնավարու-  
թյուն տալու առաջարկը: Կոմիտեի նախագահ նշանակվեց  
բրդ շենրի Հորվարդ Կարնարվոնը, իսկ ինքն իր վրա վերց-  
րեց բարտուղարի պարտականությունները: Կոմիտեի խըն-  
դիրն էր օգնել անգլո-հայկական սերտ հարաբերությունների

ստեղծմանը և նպաստել անգլիական աղղկացության սարածմանն Արևմտյան Հայաստանում: Անգլիական լիբերալ-պայքիֆիստ մտավորականներից հայ ժողովրդի օգտին ելույթներ են ունենում նաև Բասեստներ, էշլին, էվելինը և ուրիշներ, սրոնք, դիմելով Բիբոնսֆիլդի կառավարությանը, խրնդրում են պաշտպանել արևմտահայերին ինքնավարություն տալու պահանջը:

Անգլիայում հայկական պատգամավորությունը հանդիպեց պետական ու բաղաբական մի շարք գործիչների, այդ թվում անգլիական եկեղեցու առաջնորդ Քենթրբերիի արքեպիսկոպոսի, լիբերալների կուսակցության ղեկավար Վ. Գլադստոնի, էդինբուրգի հերցոգի, պահպանողականների կառավարության ղեկավար Դիլրայնլիի, արտաքին գործերի մինիստր լորդ Սոլսբերիի և ուրիշների հետ: Հանդիպումների ժամանակ Մ. Խրիմյանը խնդրում և հույս էր հայտնում, որ նրանք կպաշտպանեն հայոց դատը և հայ ժողովրդի արդարացի պահանջները կստանան զրական լուծում: Խորամանկ ու դիվանագետ անգլիական գործիչները հայոց պատգամավորությանն ընդունում էին արտաքուստ հարգալից և բանակցություններ վարում խիստ շահավոր լեզվով, իսկ էդինբուրգի հերցոգը հայոց պատգամավորության պատվին անգամ կարգում է պատվավոր պահակություն և տալիս նախաճաշ: Մ. Խրիմյանի խնդրանքին ու հայտնած յույսին, ինչ Անգլիան կօգնի հայ ժողովրդին դեռ նեւտրալ խուրբական սարկության հինգդարյա շղթաները և վերականգնելու իր ինքնավարությունը, էդինբուրգի հերցոգը պատասխանում է «Իհարկե, իհարկե»<sup>71</sup> հավաստիացման բառերով: Պարզամիտ Խրիմյանն այն աստիճանի է հավատում խորամանկ անգլիական հերցոգին, որ դրանից հետո բացահայտ ասում է, որ Անգլիան կհարկադրի և՛ Ռուսաստանին, և՛ Թուրքիային հանաչելու ինքնավար Հայաստանը:

Հայկական պատվիրակությունը փորձեց Քենթրբերիի արքեպիսկոպոսի օղնությունը ազդել Բիբոնսֆիլդի կառավարության վրա, որպեսզի նա Բեռլինի կոնգրեսում պաշտպանի հայկական դատը: Սակայն արքեպիսկոպոսը, ձևանալով

<sup>71</sup> А. Н. Молчанов. նշված աշխատ., էջ 124:



նայ ժողովրդի անկեղծ բարեկամ, ոչինչ չխոստացալ, բայց նայերի փրկութեան համար անվերջ աղոթելուց<sup>72</sup>: Հայկական հարցի լուծմանը գործնական օժանդակութիւն չխոստացալ նաև հայերի ու բուլղարների դատի «պաշտպան», «մեծ հումանիտոս», իրբերալ բուրժուազիայի կուռք Գլադստոնը, որը հայ ժողովրդին սիրաշահելու, անդլիական օրինետացիայի կողմնակից դարձնելու նպատակով հայտարարեց. «Հայաստանին ծառայելը քաղաքակրթութեանը ծառայել է»<sup>73</sup>: Այժմ, երբ Բեալինի կոնդրեար պետք է քննէր հայկական հարցը, նա նայերի հասցէին մի քանի ջերմ խոսքերից հետո ասում է, որ ինքր կատաւարութեան դեկավար չէ, մեծ աղղեցութիւն չունի և ի վիճակի չէ օգնել հայկական հարցի լուծմանը<sup>74</sup>:

Խարդախ Ալբիոնն Արեւմտյան Հայաստանում հատուկ նպատակներ էր հետապնդում և դեմ էր ինքնավար Հայաստանի ստեղծմանը: Այդ իսկ պատճառով մայիսի 10-ին արտարին գործերի մինիստր Սուսբերին հայկական պատգամաւորութեան ընդունելութեան ժամանակ ցույց տվեց սառը վերաբերմանը և նրա թախանձագլին խնդրանքին պատասխանեց. «Իմ անունից բարեկարգ պարտն ներսեսին (Կ. Պոլսի Հայոց պատրիարքին Լ. Բ.) ու ասեք նրան, որ մտածի միայն Քարթլայում սպրոգ իր ժողովրդի խոովահույզ մըտքերը նանգատացնելու մասին»<sup>75</sup>: Երբ Խրիմյանը հաստատամտորեն պնդում է, որ հայերի համար ռեֆորմների իրագործումը անհետաձգելի անհրաժեշտութիւն է, անգլիական մինիստրը սառնասրտորեն պատասխանում է. «Իսկ ի՞նչ եք սպասում Անգլիայից: Նավատորմիդն ուղարկի հայկական սարահարթեր: Ո՛ր, ես ձեզ ասում եմ խաղաղվեք և համբերեք, եթե միայն չեք ցանկանում ավելի վատ բախտի արժանանալ: Ժողովուրդների պատմական բախտը չի գրսևորվում մի

<sup>72</sup> Տե՛ս Ա. Ալորյանցյան, Մինաս Չերազ, իր կյանքը և գործը, իր 60—ամրա հորեկյանի սովիվ, Կահիրե, 1927, էջ 170:

<sup>73</sup> Վեր. Հակոբ Կուրլեյան, Հայի հրաշայի գոյատեւումը և առաջադիմութիւնը անցյալի և ներկայի ապագա հեռատեսիլով, Չիկագո, Բլլինոյս, 1910, էջ 88:

<sup>74</sup> Տե՛ս Սարոխան, Եզված աշխատ., էջ 389:

<sup>75</sup> М. Нейман. Армяне. СПб., 1899, стр. 256, տե՛ս նաև ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 856, դ. 22, թ. 17—70:

քանի օրում: Չի կարելի բռնանալ սլայմանների վրա: Ամեն ինչի ժամանակը պետք է գա»<sup>76</sup>:

1878 թ. հունիսի սկզբին անգլիական պառլամենտում հայկական հարցը բարձրացրին լորդերի պալատի անդամ Շեֆտսբերին և Կարնարվունը: Շեֆտսբերին ասում է, որ Արևմտյան Հայաստանում ապրում են մոտ երեք միլիոն քրիստոնյա, որոնց շահերն անաեսվել են: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չի պաշտպանում նրանց այնպես, ինչպես բալկանյան քրիստոնյաներին և պահանջում է Բեռլինի կոնգրեսում արևմտահայերին տալ այնպիսի իրավունքներ, ինչպիսին կարվեն սլավոնական ժողովուրդներին, մանավանդ որ դեռևս 1856 թ. Փարիզյան տրակտատով հայերին ևս խոստացել էին անձի ապահովություն, գույքի անձեռնմխելիություն և իրավահավասարություն<sup>77</sup>: Իսկ Հ. Կարնարվունը նշեց, որ թուրքահայատակ քրիստոնյա ժողովուրդների մեջ ամենից շատ սանջվուղն ու հարածվողը հայ ժողովուրդն է: Հայերը բնականից օժտված են խելքով ու բարի բարքերով, դրավում են արդյունադործությանը ու սոսաբով: Արևելքում կատարած ճանապարհորդության ժամանակ ինքը տեսել է, թե ինչպես հայերը ենթարկվում են դանաղան հետապնդումների: Լեռներից իջնող քրդերն անխնա կողոպտում էին հայերին ու քայքայում նրանց տնտեսությունները: Եթե խաղաղ ժամանակ այդպես էր, ապա այժմ, երբ սլավոնացիներն է ու թուրքերն է կառավարության ազդեցությունը, պետք է սլավոնացիներին, թե ինչ աստիճանի են հասել Արևմտյան Հայաստանում քառասյին դրությունը և հայերի միանգամայն անտանելի վիճակը: Նա պահանջում է, որ անգլիական կառավարությունն ուղղակի և անուղղակի գործունեությամբ նսլաստի Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրադրոժմանը, բարելավի հայերի դրությունը և նվաճի նրանց համակրանքը, այլ կերպ այդ հնարավոր չէ, քանի որ Ռուսաստանում գտնվող մոտ մեկ միլիոն հայերն անհամեմատ ավելի լավ են ապրում, քան արևմտահայերը և վերջիններս

<sup>76</sup> М. Нейман. *նշված աշխատ.*, էջ 257:

<sup>77</sup> Տե՛ս „Hansard's, 'Parliamentary Debates', 1878, vol. 240, էջ 1242—1243.

տեսնելուով այն, ձգտում են միանալ Ռուսաստանին: Այդ հանդամանքը խթանում է Թուրքիայում հայկական շարժումների ծավալմանը<sup>78</sup>:

Պատասխանելով Շեֆտսբերիի և Կարնարվոնի ելույթներին, խորամանկ Սոլսբերին ասում է, որ Արևմտյան Հայաստանում կարգը վերականգնելու, հայերին քրոյերի, բաշիրուլուկների և շերքեզների կողոպուտներից պաշտպանելու նպատակով Սան-Ստեֆանոյի պայմանագրով սուլթանին պարտավորեցված է հայկական վիլայեթներում անմիջապես անցկացնել ռեֆորմներ: Այնուհետև ճանապարհ հարթելով կառավարության հակահայկական քաղաքականությունը հետադաշում արդարացնելու համար, միտումնավոր ձևով, աղավաղելով փաստերը, նշում է, որ հայկական վիլայեթներում հայերը շատ խառն են ապրում՝ զանազան ազգություններին պատկանող մուսուլմանների հետ: Ուստի արևմտահայերի յարցի լուծումն ավելի բարդ է, քան բալկանյան սլավոններին: Հայկական հարցը կբարձրացվի կոնգրեսում, սակայն ինքր չի կարող կոնգրեսի անունից խոսատումներ ասել, բայց յամսոված է, որ եվրոպական պետությունների ներկայացուցիչները մեծ յամակրանքով կրնեն այն ձգտելով բարելավել յայ մսղավրդի վիճակը<sup>79</sup>:

Անգլիական կառավարության դիրքը թշնամական էր: Նա դեմ էր ինքնավար Հայաստանի ստեղծմանը, վախենալով, որ այն, ի վնաս անգլիականի, Առաջավոր Ասիայում կուժեղացնի Ռուսաստանի ազդեցությունը: Բացի այդ, անգլիական խոշոր բուրժուազիան իր ազրեսիվ պլաններն ուներ Մերձավոր Արևելքում, որոնց իրագործման համար ձգտում էր ասանց գործադրվող միջոցառումների խորականության ոչընչացնել ռուսական ազդեցությունը: Այդ նպատակով Բիքոնսֆիլդի կառավարությունը միտումնավոր ձևով Սան-Ստեֆանոյի պայմանագրին վերադրում էր խիստ վտանգավոր հետևանքներ ամբողջ Եվրոպայի համար, որպեսզի եվրոպական պետություններից ստեղծեր բլոկ Ռուսաստանի դեմ և խաղում

<sup>78</sup> Տե՛ս «Hansard's Parliamentary Debates» 1878. vol. 240, էջ 1244.

<sup>79</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 1245—1246:

էր Թուրքիայի «անշահախնդիր» ու ջերմ «պաշտպանի» դեր, Միջերկրական ծովի արևելյան ափերին՝ թուրքական տերիտորիաներում ռազմական բազա ստանալու հաշվենկատությամբ:

Բիքոնսֆիլդ-Սոլսբերիի կառավարությունը հայկական հարցի բարեհաջող լուծման մեջ տեսնում էր ռուսական արևելյան քաղաքականության հաջողությունը, Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Պարսից ու Ալեքսանդրեոսի ծովածոցերը: Դրանում տեսնում էր սպառնալիք Անգլիայի տընտեսական ու ռազմաստրատեգիական շահերին, նրա արևելյան տիրույթներին, մանավանդ բրիտանական կայսրության թագի մարդարիտ Հնդկաստանին: Այդ է պատճառը, որ պառլամենտական ճառում Բիքոնսֆիլդը հայտարարեց. «... մեզի համար կարեւորը հայկական վտանգին դէմ պաշտպանուելու միջոցները գտնելն է»<sup>80</sup>, և նա մինչև վերջ համատարեն պիմադրեց հայկական հարցի լուծմանը: Միանգամայն իրավացի է Գ. Ահարոնյանը, երբ գրում է. «ԺԹ՝ յարու մեր ամբողջ ողբերգութեան ղլխաւոր բացատրութիւնը պէտք է փնտրել անգլ եւ ռուս մրցակցութեան ու թշնամութեան մէջ»<sup>81</sup>: Ահարոնյանը նկատի ունի, որ «հայկական վտանգից» պաշտպանվելու համար անգլիական կառավարությունը դեմագոգ ձևով նորից առաջ քաշեց Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու սկզբունքը<sup>82</sup>, որը մի կողմից՝ տալահովում էր անգլիական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի շահերի ու ազդեցիկ պլանների իրագործումն Արևելքում, իսկ մյուս կողմից՝ ամրապնդում սուլթանիզմի

80 Գ. Ահարոնյան, Մեծ երազի ճամփուն վրա, Բեյրութ, 1964, էջ 34:

81 Նույն տեղը:

82 Ռուսաստանի հաղթական պատերազմները Թուրքիայի դեմ որքան նպաստում էին նրա ազդեցության ուժեղացմանը Բալկաններում ու Մերձավոր Արևելքում, այնքան մեծանում էր Անգլիայի, Ավստրիայի, Յուրուսիայի և Գերմանիայի թշնամանքը Ռուսաստանի հանդեպ և նրանց ձրգտումը պահպանել Թուրքիայի «ստատուս քվոն»: Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու կուրսն տաշին անգամ առաջ ջաշվեց 1815 թ. Վիեննայի կոնգրեսում: Այդ քաղաքականությունն ուղղված էր Ռուսաստանի դեմ, բայց այն միաժամանակ ուղղվեց սուլթանի հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ և բարդացրեց ու դժվարացրեց թուրքական դժոխքից նրանց դուրս դալու ելքը:

տիրապետութիւնը Արեւմտյան Հայաստանում և պայմաններ ստեղծում սուլթանիզմի արմենոցիզի քաղաքականութեան իրագործման համար: Դեռևս 1876 թ. անգլիական դիվանագետ Հ. էլիոտը գրել է, որ Անգլիայի շահերի պաշտպանութիւնը սերտորեն կապված է Թուրքիայի գոյութեան ու նրա ամբողջականութեան պահպանման հետ: Անգլիացիները կարող են վրդովվել Թուրքարիայում թուրքերի կատարած գաղանթութիւններից, բայց նրանք պետք է դիմադրեն Բալկանների քաղաքական քարտեզի փոփոխմանը: Անգլիական շահերը պահանջում են կանգ շառնել «արդյոք 10 թև 20 հազար բուլղարներ ջարդվեցին հնազանդեցվելու ժամանակ» հարցի առաջ: Բուլղարական ջարդերի կաղմակերպման փաստը «չպետք է դառնա բավականաչափ պատճառ մեր շահերին միակ ձեռնտու քաղաքականութիւնը փոփոխելու նամար»<sup>83</sup>:

Այդպիսի դաժան ու շահագիտական քաղաքականութիւնն էր անցկացնում բուրժուական Անգլիան նաև հայ ժողովրդի նկատմամբ: Նրան բոլորովին չէր հետաքրքրում, թե ինչ պայմաններում են ապրում արևմտահայերը, կառավարման ինչպիսի ձև զոյսութիւն ունի Արեւմտյան Հայաստանում և այստեղ 10, 20 թև 100 հազար հայերի են կոտորելու: Անգլիական կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը դեկադարվում էր՝ Անգլիան շունի ո՛չ մնայուն բարեկամներ և ո՛չ էլ մնայուն թշնամիներ, այլ ունի միայն մնայուն շահեր: Պալմերստոնի առաջ քաշած մաքիավելչական սկզբունքներով: Այդ է վկայում լորդ Քեմպբելի ելույթը պառլամենտում: Նա հայտարարեց, որ անկախ նրանից, թե թ. Դուան կառավարման ձևը քրիստոնյա-հպատակ ժողովուրդների նկատմամբ լավ է թե վատ, Անգլիայի շահերը շարունակում են գոյութիւն ունենալ Բոսֆորում<sup>84</sup>: Իսկ լորդերի պալատի անդամ Նեպիրը, կարծեք Քեմպբելի ելույթը լրացնելու նպատակով, ասաց. «Անգլիայի առևտուրը Պարսկաստանի ու Միջին Ասիայի հետ, Հնդկաստան տանող կոմունի-

<sup>83</sup> E. Freeman նշված աշխատ., էջ 251:

<sup>84</sup> Տե՛ս «Hansard's Parliamentary Debates», 1876, vol. 230, էջ 399:

կացիոն ճանապարհների պաշտպանությունը և Հնդկաստանի հասարակական աշխատանքներում ներդրած բրիտանական կապիտալները այն նկատառումներն են, որոնք հաստատում են մեր մեծ շահագրգռվածությունը թուրքական կայսրության անկախության ու ամբողջականության պահպանման գործում»<sup>85</sup>։

Հարանման ոգով ելույթներ ունեցան նաև իշխաններ Վելինգտոնը և Դեոնրավըն։ Վելինգտոնը հայտարարեց. «Ռուսաստանի տիրելը Հայաստանի վրա՝ շատ վտանգալուր կը լինի Բրիտանիայի շահերին»<sup>86</sup>, իսկ Դեոնրավըն լորդերի պալատում հիմնավորելով անգլիական քաղաքականությունը, ասում է, որ եթե Ռուսաստանը նվաճի Հայաստանը, նա կիշխի Սև ծովի արևելյան ափերին, կհսկի Փոքր Ասիայի իրադարձությունների վրա և կհրամայի Եփրատի ու Տիգրիսի հովիտներին։ Այդ հակասում է Անգլիայի շահերին<sup>87</sup>։ Բուրժուական Անգլիայի խիստ շահագրգռվածությունը արևելյան հարցում խոստովանել է նաև Բիքոնսֆիլդը։ 1878 թ. հուլիսի 18-ին պառլամենտում պրեմիեր-մինիստրը, հիմնավորելով Բեռլինի կոնգրեսում Թուրքիայի տերիտորիաների ամբողջականությունը պահպանելու, նրա հետ դաշինք կընքելու կառավարության քաղաքականությունը և առաջարկելով ռատիֆիկացիայի ենթարկել Կիպրոսի կոնվենցիան, ասում է. «Մենք Թուրքիոյ ասիական մասի մէջ մասնաւոր գիրք մը ունինք, զոր շունի ոչ մեկ պետութիւն»<sup>88</sup>։ Ամեն անգամ մենք անհանդստանում ենք ու տագնապով նայում Ռուսաստանի առաջիադացման վրա, քանի որ Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը նշանակում է «Բ. Գոան վարկին անկումը և Թուրքիոյ քայքայումը։ Պարտաւոր էնք մեր շահերը պաշտպանելու համար (ընդգծումը մերն է—Լ. Բ.) արգիլել այդ կազմալուծումը»<sup>89</sup>։ Ահա Անգլիայի թուրքասիրական քաղաքականությունը հասկանալու բանալին և նրա հայտնաց կուրսի պատճառը։ Հետևաբար իրավացի էին «Գո-

<sup>85</sup> „Hansard's Parliamentary Debates“ 1876, vol. 230, էջ, 411.

<sup>86</sup> «Մշակ», 1878, № 60:

<sup>87</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>88</sup> Խ. Գարիկյան, նշված աշխատ., էջ 244:

<sup>89</sup> Նույն տեղը:

լուսը» և նրա կարծիքը պաշտպանող «Մշակը», երբ գրել են. «Ստեղծել Թիւրքաց Հայաստանում հայոց ինքնաւարութիւն Ռուսաստանի շահերին համապատասխան է, բայց Անգլիայի շահերի դէմ»<sup>90</sup>։

Պետական ու քաղաքական գործիչների բոլոր ելույթները դուրս են տալիս, որ անգլիական կառավարութիւնը ղեկավարվել է միմիայն շահագրիտական նկատառումներով։ Նրանց հայտարարութիւններն Օսմանյան կայսրութեան անկախութիւնն ու ամբողջականութիւնը պահպանելու մասին լոկ նպատակ են ունեցել քողարկել Անգլիայի ագրեսիվ պլանները Արևելքում, որը բացահայտվեց Բեռլինի կոնգրեսի ժամանակ։

Այսպիսով, անգլիական արդյունաբերական-ֆինանսական բուրժուազիայի նեղ շահերի պաշտպանութեամբ պետք է բացատրել Բիքոնսֆիլդի կառավարութեան քաղաքականութիւնը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ և մեկնաբանել, թե ինչու պառլամենտը հրաժարվեց բննարկել հայկական հարցը։ Պրեմիեր-մինիստրը երկար ժամանակ նրաժարվում էր բնորոշել հայկական պատգամափութեանը, իսկ երբ բնորոշեց, ալտերեց նրան զրուցել բազարական նարցերի շուրջը, կրիմյանը հնարավորութիւն շտապով բարձրացնել հայկական հարցը և շարադրել հայ ժողովրդի պահանջներն ու խնդրանքը։ Դրա մեջ էր նաև Սուրբերիի պատլամենաում ունեցած երկդիմի ելույթի գաղտնիքը, որի ժամանակ հասարակական կարծիքը մոլորեցնելու նպատակով նա փորձեց սպառնացել, թե Անգլիան հայ ժողովրդի նկատմամբ հումանիստորեն է տրամադրված, բայց Արևմտյան Հայաստանում հայերը կալմում են փոքրամասնութիւն, նրանք մյուս ազգութիւնների հետ ապրում են խառը, և սրայմանները թույլ չեն տալիս ստեղծել ինքնավար Հայաստան, իսկ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդը հայտարարեց, որ Հայաստանը ոչ թե երկիր է իր քնական սահմաններով, այլ աշխարհագրական հասկացողութիւն։ Այնտեղ հայերը բնակչութեան շնչին մասն են կազմում, ուստի վաղաժամ ու անհնար է հայերի համար ռեֆորմների

<sup>90</sup> «Մշակ», 1878, № 112։

իրագործումը: Չկա Հայաստան, այլ կա Քրդստան: Այն երկիրը, որ դուք անվանում եք իբրև Հայաստանի, նա Քրդստանն է, ազգաբնակչության մեծամասնությունը քուրդ<sup>91</sup>:

Հայկական պատղամավորության խնդրանքը Սուլթերիին՝ իրեն ընդունել երկրորդ անգամ, Արևմտյան Հայաստանում հայ բնակչության մեծամասնություն կազմելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար, մերժվեց: Խրիմյանին Սուլթերին երկրորդ անգամ ընդունեց Բեռլինում գտնված ժամանակ, կոնգրեսի բացման նախօրյակին և արևմտահայությանն ինքնավարություն տալու նրա թախանձադին խնդրանքին պատասխանեց մշուշապատ արտահայտությամբ, որ վերջապես հայերին սպասում է ազատագրություն, բայց «Հինգ դարու հիանդ մը մէկ օրուան մէջ չի կրնար առողջանալ»<sup>92</sup>:

Անգլիայում գտնված ժամանակ հայկական պատվիրակությունը բանակցություններ վարեց Լոնդոնի գերմանական, ավստրո-հունգարական և թուրքական դեսպանների, իսկ Ռուսաստանում Նարբեյր՝ կանցլեր և արտաքին գործերի մինիստր Գորչակովի հետ:

1878 թ. հունիսի 13-ին բացվեց Բեռլինի կոնգրեսը, որտեղ եվրոպական խոշոր պետությունների ներկայացուցիչները եկել էին իրենց սեփական պլաններով: Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Անդրաշին բերել էր 1876 թ. հուլիսի 6-ին Ռուսաստանի հետ կնքած Ռայխշտատտյան պայմանագիրը, ըստ որի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ շեղոք դիրք բռնելու համար պետք է ստանար Խորվաթիայի մի մասը և Հերցեգովինայի սահմանամերձ մի քանի մարզեր, իսկ Բիքոնսֆիլդը իր պորտֆելում ուներ 1878 թ. մայիսի 30-ին Ռուսաստանի հետ կնքած Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու վերաբերյալ համաձայնագիրը և 1878 թ. հունիսի 4-ի Թուրքիայի հետ կնքած պաշտպանողական դաշինքը: Եթե համաձայնագրում ասված

<sup>91</sup> ՏԷՍ «Մշակ», 1879, № 107:

<sup>92</sup> Ա. Ալպոյանյան, նշված աշխատ., էջ 192: ՏԷՍ նաև Խ. Գաբրիլյան, նշված աշխատ., էջ 227:



էր, որ Անգլիան համաձայն է Բաթումը, Արդահանը և Կարսն անցնեն Ռուսաստանին, և Քուրքիային պետք է վերադարձնել Բայազետն ու Ալաշկերտի հովիտը, որպես տարանցիկ տանաորրակն ճանապարհներ, որոնք Անգլիայի համար ունեն յուշոր նշանակություն և «ապագայում Ռուսաստանի սահմանը չի բնորոշում ասիական Քուրքիայի կողմից»<sup>93</sup>, ապա դաշնագրում որված էր. «Եթե Ռուսաստանին անցնեն Բաթումը, Արդահանը, Կարսը, կամ նրանցից մեկն ու մեկը» և այնուհետև երբևէ պետական կառավարությունը փորձ կատարի Ասիայում նոր նսպեր ձևաբ բերել, այն դեպքում Անգլիան պարտավորվում է Քուրքիայի հետ միասին զենքի ուժով պահպանել սուլթանի պետության արևելյան սահմանները և իրեն փոխհատուցում սուլթանը հավանություն է տալիս, որ «Կիպրոս կղզին գրավի ու կառավարվի Անգլիայի կողմից»<sup>94</sup>:

Այսպիսով, Անգլիան դաշնագրով ամրապնդեց իր դիրքերն ասիական Քուրքիայում, պարտավորվեց այդ անբնորոշաներն ապագայում պաշտպանել Ռուսաստանին միացվելուց և անշեղ ազդային-ազատագրական շարժումները, զրա դիմուց սաանալով Կիպրոսը իրեն կանխավճար և սուլթանից խոստում՝ միասին «մշակել ու իրագործել» թուրքահայտակար քրիստոնյաների համար բարենորոգումներ: Խարդախ Ալլիանը, սաանալով Կիպրոսը Արևմտյան Հայաստանը Քուրքիայի կազմում պահելու արժեքով, դրանով ավելի բարդացրեց հայկական հարցի լուծումը: Միանգամայն իրավապիտան «Մշակ»-ի խմբագիր Գ. Արծրունին գրել է, որ Անգլիան շահադիտական նկատառումներով թշնամաբար է սրամտությամբ հայ մողոմբուկի նկատմամբ: «...Անգլիայի համար նայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել»: Կիպրոսի պատմի դաշնագրի հակահայկական էությունը «նրա մէջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեն Հայաստանի մէջ, աքսորեն հայերին Հայաստանից»<sup>95</sup>:

Կիպրոսի կոնվենցիան դժգոհ թողեց բոլոր պետություններին: Իտալիան այն դիտեց որպես անգլիական պրոտեկտո-

<sup>93</sup> «Հայաստանը միջազգային դիմանագրության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 102:

<sup>94</sup> Նույն տեղը, էջ 104:

<sup>95</sup> «Մշակ», 1879, № 6:

բասի հաստատում Փոքր Ասիայում, որը ժամանակի ընթացքում կարող է նմանվել Հնդկաստանի վրա հաստատած անգլիական պրոտեկտորատին<sup>96</sup>, իսկ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վալդինգտոնը սպառնաց հեռանալ կոնգրեսից և չճանաչել նրա որոշումները: Բիքոնսֆիլդը, կոնգրեսում Ռուսաստանին չեղոքացնելու, Անգլիայի արևելյան քաղաքականությունն անցկացնելու նպատակով Իտալիային առաջարկեց դրավել Ալբանիան, որպես փոխհատուցում կիպրոսի դիմաց, Ավստրո-Հունգարիային խոստացավ պաշտպանել նրա ազրեսիվ պլանները Բալկաններում, իսկ Ֆրանսիային՝ չզիմադրել Թունիսը նվաճելու ժամանակ:

Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ամենավտանգավոր ու «աւանդական թշնամին»<sup>97</sup> բուրժուական Անգլիան էր: Անգլիական քաղաքականությունը ամրապնդում էր հայերի ու բալկանյան սլավոնների վրա թուրքական տիրապետությունը և նույստում նրանց բռնի ստիմիլյացիայի ու ֆիզիկական բնաջնջման սուլթանիզմի կուրսին: Ֆ. Էնգելսը, խոսելով Անգլիայի թուրքիայում անցկացվող status quo-ի քաղաքականության մասին, գրել է, որ այն «Բ. Դռան քրիստոնյա հպատակների համար նշանակում է միայն թուրքիայի կողմից նրանց ճնշման հավերժացում»<sup>98</sup>:

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում քննեցին հուլիսի 4, 6 և 8-ին: Հայոց սլատգամավորությունը շթույլատրեցին մասնակցել քննարկմանը: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի դեմ առաջինը ելույթ ունեցավ Սուսբերին: Նա երկերեսանիորեն հայտարարեց, որ կողմ է հայկական հարցի լուծմանը, բայց պահանջում է ռուսական զորքերը Արեւմտյան Հայաստանից հանել մինչև բարենորոգումների անցկացնելը, որը նշանակում էր վերացնել ռեֆորմների իրագործման նյութական երաշխիքը: Պ. Շուվալովը առարկում է Սուսբերիին, ասելով, որ եթե մինչև ռեֆորմների իրագործումը ռուսական զորքերը դուրս գան, ապա

<sup>96</sup> Տե՛ս «Московские ведомости», 1878, № 180.

<sup>97</sup> «Մշակ», 1878, № 48:

<sup>98</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 31.

նայկական վիլայեթներում կսկսեն հետապնդել հայերին, որը տեղիք կառ նոր հուզումների: Ինչպես վկայում է կանգրեսի աշխատանքների մասնակից Գ. Բ. Բոբրիկովը, բոլոր նորոցերի քննարկման ժամանակ սուսական պատգամավորությունը հանդիպում էր անդլիականի ուժեղ դիմադրութեանը, բայց այն «դարձավ կատաղի»<sup>99</sup>, երբ սրտշվում էին Քուրքիայի նոր սահմանները Հայաստանում:

Սուրբերին, պահանջելով ջնջել 16-րդ հողվածի առաջին տողերը, մինչև ռեֆորմների իրագործումը սուսական գորբերի հանելն Արևմտյան Հայաստանից, ցանկանում էր սուլթանին ազատել բարենորոգումների անցկացման գործում սուսական հակադրութեանից, վերջինին զրկել թուրքական կատարութեան վրա ազդեցութեան գործելու հնարավորութեանից և ճեղք թողնել՝ հետագայում անհրաժեշտութեան պեպում նայկական հարցը օգտագործելու Անգլիայի նեղ շահերի նամար: Իսկ Քուրքիայի ներկայացուցիչ Կարաթեոպոս փաշայի առաջարկը՝ 16-րդ հողվածի վերջում ավելացնել՝ Բ. Գուր սարատարութեամ է Արևմտյան Հայաստանում ռեֆորմների անցկացման սպասութեամբ ձեռնարկած միջոցառումների մասին սխառեմատիկ նադարել մեծ տերութեաններին, նպատակ ուներ նայկական բարենորոգումների հակադրութեանը Ռուսաստանի փոխարեն դնել եվրոպական վեց տերութեանների վրա, սրպեսզի նրանք իրար մեջ ունեցած նակասութեանների հետևանքով ի վիճակի չլինեն իրագործել այն:

Հուլիսի 8-ին Սուրբերի առաջարկով կոնգրեսը, հակասակ սուսական պատգամավորութեան կամքի, 16-րդ հողվածի փոխարեն քնդունեց նորը՝ Բեռլինի տրակտատի 61-րդ շարարտատիկ հողվածը, որում ստվում է. «Բարձր Գուր պարտարութեամ է առանց հետագա հապաղման իրագործել նայարնակ մարդերում տեղական կարիքներից հարուցված բարեկամութեաններն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվասանդութեանը շերքեղներից և քրդերից: Բարձր Գուր տերութեաններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների

<sup>99</sup> Г. И. Бобриков. Воспоминание о Берлинском конгрессе. «Русский вестник», 1889, т. 205, стр. 34.

մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»<sup>100</sup>,

1878 թ. հուլիսի 13-ին կոնգրեսն ավարտեց իր աշխատանքները Բեռլինի տրակտատի ստորագրմամբ, ըստ որի Անգլիան և Ավստրո-Հունգարիան՝ սուլթանի «անկեղծ» բարեկամները և ռուսական վտանգից Բ. Գոան «պաշտպանները», առաջինը զավթեցին թուրքական տերիտորիաները: Կոնգրեսը հանձնարեց ավելացնել Անգլիայի կողմից Կիպրոսի, իսկ Ավստրո-Հունգարիայի կողմից՝ Բոսնիայի ու Հերցեգովինայի նվաճումներին:

Կոնգրեսում, իրավացիորեն նշել է Բ. Բորյանը, «Միջազգային դիվանագիտությանը գործում էր որպես վաճառական, այնտեղ թաղավորում էր վաճառականական ոգին, և միջազգային հարցերը վճռվում էին ոչ թե կոնգրեսի սեղանի շուրջը, այլ փակ դռների հետևում»<sup>101</sup>: Սուլթանի պահապան հիպոթեզային մեծ պետությունները կատարեցին թուրքական տերիտորիաների մասնակի բաժանում:

Անգլիական պատմադրության մեջ անցկացվում է այն տեսակետը, որ, իբր թե, Անգլիայի կողմից Կիպրոսի նվաճումը սլանավորված չի եղել, այն սուլթանը կամավոր հանձնել է Անգլիային, Թուրքիայի պաշտպանության համար, իսկ Կիպրոսի կոնվենցիան մաքուր պաշտպանողական բնույթի է: Այս պնդումները հիմք չունեն: Կիպրոսն իր տնտեսական, քաղաքական և հատկապես սաղմաստրատոգիական նշանակությամբ վաղուց էր հրապուրում անգլիական դադուլթարներին: Այդ պարզ երևում է մայիսի 5-ի Քլեբնսֆիլդի՝ Անգլիայի թագուհուն գրած նամակից, որում ասված է, որ եթե Անգլիան ստանա Կիպրոսը, Թուրքիայի հետ էլ կնքի պաշտպանողական պայմանագիր, այն ժամանակ Մեծ Բրիտանիայի ուժը Միջերկրական ծովում շատ կմեծանա, անգլիական դիրքն էլ Հնդկաստանում բավականաչափ կամրանա<sup>102</sup>: Պրեմիեր-մինիստրը, նկատի ունենալով, որ «Կիպ-

<sup>100</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 128:

<sup>101</sup> Б. А. Борьян. Армения, международная дипломатия и СССР, М.-Л., 1928, ч. I, стр. 237.

<sup>102</sup> Տե՛ս Խ. Գաբիկյան, նշված աշխատ., էջ 192:

յոսն Արեւմտյան Ասիայի բանալին է»<sup>103</sup>, փոխում ու պնդում էր, որ կղզու նվաճման պլանն անպայման պետք է իրադր-  
 ծել: Քաջ հայտնի է նաև, որ Անգլիան Կիպրոսը դիտում էր  
 որպես ոչ միայն Սուեզի ջրանցքի և Հնդկաստան տանող  
 ջրային կարճ ճանապարհի հենակետ, այլ նաև որպես եգիպ-  
 տոսը գրավելու, Թուրքիայի ասիական նահանգները ներթա-  
 փանցելու բազա: Այդ բոլոր հարցերի կվինտ-էսենցիան  
 պտնում ենք Քերզոնի կոչով Ջորջին ուղղած նամակում: Նա  
 գրել է. «Զլիներ Հնդկաստանը, լորդ Բիքոնսֆիլդը չէր գնի  
 Սուեզի ջրանցքի ակցիաները, չլիներ Սուեզի ջրանցքը, մենք  
 չէինք լինի եգիպտոսում: Զլիներ Հնդաստանը՝ չէինք գրա-  
 վի Կոպի երկիրը և չէինք ընդլայնի նվաճումներն Աֆրիկա-  
 յում: Հնդկաստանը հարկադրել է մեզ գրավել Ադենը և նրա  
 հարևան արաբական պետութուններում հաստատել պրոտեկ-  
 տորատ: Հնդկաստանի պաշտպանության համար մենք նոր  
 ճանապարհ բնորոշինք, բայց մեզ կանգնեցրին ձյունապատ  
 Հիմալայան լեռները...»<sup>104</sup>: Միանգամայն իրավացի է և  
 «Մշակը», երբ Կիպրոսը նվաճելու անդլիսական նպատակների  
 ու այդ նվաճման ծանր շեղանքների մասին գրել է. «Կիպ-  
 րոս կղզին՝ անգլիացիների շամար ուրիշ բան չէ, եթե ոչ մի  
 ստեղծական գրասենյակ, իսկ Փոքր Ասիան և Հայաստանը  
 մի բնագործակ զործարան, որի բնական արդիւնքները  
 պետք է ծառայեն Անգլիային հարստացնելու համար, իսկ  
 բնիկ ժողովուրդը, պէտք է դառնայ մշակ դաս, որը պէտք  
 է Հնդկացիների պէս ստրկանայ տիրապետողների ձեռքում  
 և երբէք չըկարողանա ձգտել և հասնել ինքնուրույն քաղա-  
 րական կյանքի»<sup>105</sup>: Ինչպես տեսնում ենք, Կիպրոսի հափըշ-  
 տակումն Անգլիայի կողմից ոչ թե պատահական էր, կամ  
 ստեղծաձեռն սուլթանի նվերը, այլ անգլիսական իմպերիալիզ-  
 մի կողմից հետևողականորեն անցկացվող նվաճողական  
 պլանների իրազդրածման արգասիքը:

<sup>103</sup> W. E. Gladstone and G. E. Buckle. The Life of Benjamin Disraeli, vol. VI, p. 291.

<sup>104</sup> G. N. Curzon. The Place of India in the Empire. London, 1901, p. 10-11.

<sup>105</sup> «Մշակը», 1878, № 121:

Ահա թե ինչու Անգլիան ամեն ինչ արեց, որպեսզի նյութական ու մարդկային մեծ զոհերի զնով հայկական վիճակները գրաված Ռուսաստանը զրանք ետ վերադարձնի Թուրքիային, փոխել տա 16-րդ հոդվածը և ռուսական զորքերը հանվեն այնտեղից մինչև սեփորմների իրագործումը: Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածն էլ ըստ էության խոստումներ էր սեփորմների մասին, առանց նրանց իրագործման երաշխիքի: Այն արմատապես փոխեց 16-րդ հոդվածի բովանդակությունը ի վնաս հայ ժողովրդի: Անգլիան, սաշտպանելով Թուրքիայի ամբողջականությունը, դրանով իսկ պահպանեց «մի փոած, խարխուլ, ախտաւոր գոյութիւն ի վնաս միլիոնաւոր հեծկլտացող հայատակների, և գործեց պասմական անջնջելի մի ոճիր»<sup>106</sup>, քանի որ Անգլիայի շանքերով Արևմտյան Հայաստանը մնաց թուրքական տիրապետության տակ, Կիպրոսի կոնվենցիայով էլ երաշխավորվեցին սուլթանի ասիական տիրույթները: Բացի այդ, Անգլիան հանձն առավ սուլթանական կառավարության հետ համատեղ մշակել ու անցկացնել բարենորոգումներ, որոնք չիրագործվեցին: Անգլիան դարձավ Թուրքիայի դաշնակիցը, նրա բիրտ ու բարբարոսական կառավարության անագորույն քաղաքական կուրսի պաշտպանը, հետևարար և սուլթանի դմի արմենոցիդի քաղաքականության աջակիցն ու հայկական կոտորածների մեղսակիցը: Չնայած դրան, Անգլիայի գաղութային գործերի պետական բարտուղարի սեղակալ լորդ Սանդոնը սյառլամենտում մեծ պաթոսով հայտարարեց, որ մեկ տերության փոխարեն մեծ տերությունների տված երաշխիքը հայերին վնաս չի հասցնի, և նկարագրեց, թե ինչպես Անգլիան առատության եղջյուրից բարիքներ է թափելու հայերի դիմին: Փոքր Ասիայում հաստատված անգլիական պրոտեկտորատի շնորհիվ վայրի երկիրը կծաղկի վարդի նման, քրդերի՝ հրացանների մահացու գնդակների սուլտցները կփոխարինվեն շոգեգութանի ձայնով և Արևմտյան Հայաստանը այնքան արագ կբարգավաճի ու կհարստանա, որ անգլիական սպ-

<sup>106</sup> «Հայկական հարցն Արևմուտքում», Փարիզ, 1926, էջ 33:

րանքների համար կրացվեն նոր շուկաներ<sup>107</sup>: Լորդ Սանդոնը առաջադեմ հասարակությունից թաքցնում էր հայ ժողովրդի համար Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի կործանարար բնույթը: Նրա ելույթը տիպական է Անգլիայի քաղաքական երկերեսանիությունը:

Անգլիական կառավարությունը ոչ միայն շօզնեց Հայաստանի ծաղկմանը, այլ անդամ «մոռացավ» բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հանդիսավոր ձևով իր վրա վերցրած պարտականությունները, չնայած որ արևմտահայության ղիճակը գնալով ավելի էր ծանրանում: Պատմությունը հույց տվեց, որ 61-րդ հոդվածը Հայաստանը ոչ թե շենացնող, ժողովրդին փրկող էր, այլ՝ Հայաստանն ավերող, բնակչությանը կործանման դատասյարտող: Այդ փաստը 17 տարի հետո ընդունեց նաև պառլամենտի անդամ Վ. Հարկուրտը: Նա ասում է, որ 61-րդ հոդվածը ոչ թե «հիասթափեցնող էր», ինչպես այստեղ շատ փափուկ ասացին, այլ այն բացարձակապես չի համապատասխանել ճշմարտությանը, չի արտահայտել հայ ժողովրդի ղգացմունքները և Անգլիայի վերաբերմունքը սուլթանի նկատմամբ: Այդ հոդվածում չի ասված սուլթանի կողմից սեփորմներ չկիրառելու պայքարում ի՞նչ միջոցների սխալ է դիմեն տրակտատը ստորագրած պետությունները, որպեսզի իրագործել տան այն, չի պահանջվում հրավիրել եվրոպական կոնֆերանս Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով, «Այդ անհավատարի բացթողում է և անհնար է պատմելով շափագանցել սարսափելի իրադարձությունները, քան նրանք, որ այժմ տեղի են ունենում Հայաստանում, որոնց մասին շատ դժոխար է խոսել»: Գրանք Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով փոխարինելու ծանր հետևանքներն են<sup>108</sup>:

Իրավացիորեն «Մշակը» գրել է, որ Անգլիան ստանալով մի քանի կետեր Բոսֆորի վրա, այլևս չէր պնդում Թուրքիայի բրիտանյաներին «մարդավայել իրավունքներ տալու ան-

<sup>107</sup> Տե՛ս Մ. Մակ-Կոլլը. Ответственность Англии перед Арменией. Пер. с англ., в сб. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.». М., 1896, էջ 196.

<sup>108</sup> Տե՛ս «Hansard's Parliamentary Debates», 1896, vol. 37, էջ 96.

հրաժեշտութեան վրա»<sup>109</sup>։ Միանգամայն ճշտորեն, անգլիական դիվանագիտության սոցիալ-դասակարգային էությունը բնութագրելիս, Բ. Բորյանը ասել է, որ այն անգլիական իմպերիալիզմի շահերի արտահայտիչն է, նրա քաղաքականությունը «կայանում է նրանում, որ գաղութային ժողովուրդներին, տվյալ դեպքում հայերին, արյան զնով լցվեն լոնդոնյան Սիթիի սնդուկները»<sup>110</sup>։ Անգլիայի աշխատավորության վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ հակապատկերն էր անգլիական իմպերիալիզմի քաղաքականության։ Եթե ժողովուրդը համակրում էր թուրքական բռնակալության ճիրաններում տառապող հայ ժողովրդին, հրավիրում նրա պաշտպանության օղտին ժողովներ, կազմակերպում միտինգներ, հիմնում կոմիտեներ, հույկական հարցի վերաբերյալ լույս ընծայում պրբույկներ, լրագրերում տպագրում հոդվածներ, ապա կառավարող շրջանները մնում էին լուռ և պաշտոնական ոչ մի հայտարարություն, կամ դիվանագիտական դրազրությունների մեջ ոչ մի բառ չէին ասում Հայաստանին ինքնավարություն տալու մասին<sup>111</sup>։

Անգլիական կառավարության արևմտահայության նկատմամբ անցկացրած ոճրագործ քաղաքականությունը մերկացվում է նաև Անգլիայի պետական, քաղաքական և դիվանագիտական գործիչների մեմուարների, ելույթների ու ճառերի ուսումնասիրության օգնությամբ։ 1878 թ. հուլիսի 30-ին ամաչնքների պալատում Գլադստոնը, խոսելով թուրքահայատակ բրիտանյա ժողովուրդների համար Բեռլինի կոնգրեսի որոշումների ծանր հետևանքների մասին, ասում է. «Մեր ներկայացուցիչները Պերլինի մէջ ազատութեան կողմը բռնելու տեղը, ստրկութեան կողմը բռնեցին, վարչապետ ու արտաքին նախարար Մեթերնիխի շեշտերը ներկայացրին»<sup>112</sup>։ Իսկ պետական ականավոր գործիչ Լյուդ-Ջորջը իր մեմուարներում պրել է, որ 1878 թ. Բեռլինի տրակտատը, որն ամբողջովին հանդիսանում էր Անգլիայի կողմից Ռուսաստանին պատերազ-

<sup>109</sup> «Մշակ», 1881, № 29։

<sup>110</sup> Б Борьян. նշված աշխատ., մ. I, էջ 266։

<sup>111</sup> Տէ՛ս «Մշակ», 1878, № 60։

<sup>112</sup> Խ. Գաբիկյան, նշված աշխատ., էջ 245։



մով սպառնալու արդյունքը ու նրա մեծագույն հաղթանակը, հայության մեծ մասին արգելեց անցնել «ոուսական դրոշի պաշտպանության ներքո» և ուսաներին հարկադրեց հեռանալ Արևմտյան Հայաստանից: «Դժբախտ հայերին նորից ճնշեց իրենց հին հարստահարողների գարշապարը»<sup>113</sup>: Այնուհետև, խոսելով անդլիական այդ քաղաքականության աղետաբեր ու կործանարար հետևանքների մասին, նա ասում է, որ բուլլերին հայտնի է, թե ինչպես Թուրքիան խախտեց հայկական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնելու պարտավորությունները, շնայած որ Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակ վերադարձնող եվրոպական պետությունների: Բաղմիցս բողոքեցին: «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությունը հասցրեց 1895—1897 և 1909 թվականների սարսափելի կոտորածներին և 1915 թվականի ահավոր ջարդերին»<sup>114</sup>: Կլոյդ Ջորջն ընդունում է, որ անգլիական կառավարությունը դորժել է անարդարացի, նա պատասխանատու է պատմության առաջ հայկական կոտորածների համար: «Հենց մենք... գրել է նա... Թուրքերին հնարավորություն տվեցին, կատարելու այդ հանցագործությունը, մեր վրա ընկավ բարոյական պարտք օղտագործելու առաջին իսկ առիթը, որպեսզի ուղղենք մեր կողմից թույլ տրված անարդարությունը և, սրբանով կներեն մեր ուժերը, անհնարին դարձնել այդ սարսափների կրկնությունը, որի համար պատմությունը միշտ մեր վրա կբարդի հանցանքի պատասխանատվությունը»<sup>115</sup>:

Յեռլինի կոնգրեսում Անգլիան, ինչպես և մյուս խոշոր եվրոպական պետությունները, բարձրացնելով հայկական հարցը, հետամտում էին իրենց երկրների խոշոր բուրժուազիայի շահերը: Նրանցից ոչ մեկը չահագրգռված չէր հայկական հարցի լուծմամբ և ջանք չխնայեց սուբյեկտիվ նպատակներով օղտագործել այն, ինչպես ժողովրդական ստան է ասում՝ «իր մանածը ներկելու համար»: Դրա հա-

<sup>113</sup> Д. Ллойд Джордж. Правда о мирных договорах. М., 1957, т. 2, стр. 390.

<sup>114</sup> Նույն տեղը:

<sup>115</sup> Նույն տեղը:

մար էլ 61-րդ հոդվածը, 16-րդ հոդվածի համեմատ, մի քայլ ետ էր և այն ճակատագրական հետևանքներ ունեցավ արևմտահայության համար: Միանգամայն իրավացիորեն Մ. Սերոբյանը գրել է, որ Բեռլինի կոնգրեսը «գերեզման եղաւ հայկական ինքնավարութեան հետապնդումներուն»<sup>116</sup>, իսկ ֆրանսիացի Բերտրան Բարելը ասել է. «61-րդ հոդվածը, էլ հետադարձում դարձավ Տաճկահայաստանի տասլանագիրը»<sup>117</sup>: Հայ ժողովրդի համար 61-րդ հոդվածի աղետաբեր հետևանքներն ընդունել է նաև ֆրանսիացի դիվանագետ Դումերգը: Նա գրել է, որ Բեռլինի տրակտատը հայ ժողովրդի առաջ փակեց ադասության դուռը, այն «անարդար ու զղվելի էր... սխալից ավելին, ոճիր դորժալրված հայերի դեմ», որի հետևանքները դարձան 1878—1896 թթ. արյունալի ջարդերը և Արևմտյան Հայաստանի դյուղերի ու քաղաքների ավերումը<sup>118</sup>: «Եվրոպան և առանձնապես Անգլիան, — խոստովանել է կինչը, — դժբախտ ազգի (հայ—Լ. Բ.) նկատմամբ խաղացին ստոր խարեբայի դեր»<sup>119</sup>:

Անգլիական հասարակական-քաղաքական դործիչ Արդայլի Ներցոզը նույնպես նշում է, որ հայ ժողովուրդը ոչ միայն շօգտվեց Բեռլինի տրակտատից իր դրությունը բարելավելու համար, այլ այն նպաստեց արևմտահայությանը «դառնալու թուրքական դամանությունների ու ճնշման զոհը»<sup>120</sup>: Սուլթանի այդ դաման քաղաքականության և արևմտահայերի վրա նրա տիրապետության պահպանման մեջ «մենք տեսնում էինք մեր սեպի շահերի շատ թե քիչ պաշտպանությունը»<sup>121</sup>: Անգլիական բուրժուազիայի շահամուլ քաղաքականությունը դարձավ հայ ժողովրդի ազգային դժբախտության պատճառը: Այդ փաստը խոստովանել է նաև Բիքոնսֆիլդի կառավարության արտաքին քաղաքականության լավատեղյակ,

<sup>116</sup> Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 71:

<sup>117</sup> Bertrand Barèille. Les Turcs. Paris, 1917.

<sup>118</sup> St. Doumerque Gabriel. L'Arménie. Les massacres et la Question d'Orient. Paris, 1896, էջ 10—11.

<sup>119</sup> X. Փ. Բ. Լինչ. նշված աշխատ., հատ. II, էջ 11:

<sup>120</sup> Герцог Аргайльский. նշված աշխատ., էջ 76:

<sup>121</sup> նույն տեղը, էջ 29:

պառլամենտի անդամ լորդ Բրայսը, որն ասել է. «Անգլիական ժողովուրդը մեղավոր է հայերի առաջ: Եթե մենք չփոխեինք ուս-թուրքական պայմանագրի 16-րդ հոդվածը Բեռլինի կոնգրեսի շարաքաստիկ 61-րդ հոդվածով, Ռուսաստանը վաղուց Հայաստանը միացրած կլիներ իր տիրույթներին, բազմաառանց հայ ժողովրդին ազատագրելով Թուրքիայի բարբարոսական տիրապետությունից»<sup>122</sup>:

Արևմտահայությունը թուրքական տիրապետության տակ պահելու անգլիական քաղաքականության ծանր հետևանքներն ընդունում են նաև Անգլիայի մյուս պետական ու քաղաքական գործիչները: 1878 թ. Քրոյզդոնում արտասանած ճառում, կառավարության դիվանագիտական մութ ժալքերի քաջամաց լորդ Շերբուրուկը հայտարարեց, որ Անգլիան հայերի համար «փակեց գծոսքից դուրս գալու ելքը»<sup>123</sup>:

Բուրժուական Անգլիան ամենից շատ շարաշահեց հայկական հարցը Թուրքիայից առանձնաշնորհումներ կորզելու նպատակով: Նրա գլխավորությամբ եվրոպական պետությունների հանդիսավոր ձևով տված հայկական բարենորոգումների վերաբերյալ խոստումներն էլ լուր պատրանք էին, ձեռքան և չիրազրծվեցին: Անցան տարիներ, սուլթանն որոշումարեց 61-րդ հոդվածը, իսկ եվրոպական պետություններն էլ «մոռացան» իրենց վրա վերցրած պարտավորությունները: Հայ ժողովրդի պահանջին՝ բարելավել դրությունը, սուլթանիզմը, «քաղաքակիրթ» բուրժուական Անգլիայի լուր համաձայնությամբ, պատասխանեց հայերի հետապնդման ուժեղացմամբ և անպատիժ կարգով սխառեմատիկ կազմակերպվող անմեղ ու անդեն իաղաղ բնակչության կոտորածով, որն առաջավոր մարդկությունը միշտ կնշյալակի որդևս արմենոցիդի քաղաքականություն:

Անգլիական կառավարությունը շատ լավ դիտեր, որ թուրքական դիվանագիտության արվեստը առաստաձեռն խոստումներն են, կատարելության աստիճանի հասած քաշքշուկներ, ու սովորություն դարձած խարերայությունը, և եթե սուլ-

<sup>122</sup> «Кавказское слово», 1918, № 272.

<sup>123</sup> М. Мак-Колль. Ответственность Англии перед Арменией, в сб. «Положение армян в Турции...», стр. 196.

Թանին շնորհակալություն, նա չի իրագործի բարենորոգումները, բայց Անգլիան գործնական քայլերի շղթան գաղարեցնելու հայկական կոստրածները: Այդ փաստան այնքան ցայտուն է, որ Լոյդ Զորջը, խոստովանելով այդ դառը ճշմարտությունը, գրել է, որ Բեռլինի կոնգրեսի որոշումը «մեծարվում էր մեր կողմից որպես Անգլիայի մեծագույն հաղթանակ, նրա կողմից թելադրած պատվավոր խաղաղություն: Հայաստանը ողջակիզվեց մեր կառուցած հաղթանակի զոհասեղանի վրա»<sup>124</sup>:

Բեռլինի կոնգրեսը, որն անցավ Բիքոնսֆիլդի դիրիժորությունում, Հայաստանի ճակատագրի որոշումը Ռուսաստանից հանձնեց եվրոպական մեծ տերությունների ողորմածությունը: Ռեֆորմներ անցկացնելու նրա խոստումն էլ նպատակ ուներ մոլորեցնել հասարակական կարծիքը: Բիքոնսֆիլդը, անգլիական բուրժուազիայի շահերի նկատառումով, «պահպանեց» Խուրրիայի ամբողջականությունը, նրա կողմից ստրկացված ժողովուրդների «ամեն տեսակի տառապանքների դնով»<sup>125</sup>: Կիպրոսի անգլո-թուրքական կոնվենցիան հայ ժողովրդի ողբերգության պատճառներից մեկը դարձավ: Պրոֆ. Լեոն իրավացիորեն գրել է, որ Անգլիան սիրելի շղթա, նա վաճառականի պես միայն հաշվել գիտի: Նրա վաճառականական հաշիվը պահանջում է ամբողջ ժողովուրդների ոչնչացում: Նրա մեջ մտնում է նաև արևմտահայությունը<sup>126</sup>:

Անգլիական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ ռեակցիոն ու իշնամական էր: Նրա խոստումները՝ Հայաստանին տալ ինքնավարություն, կեղծ էին: Միակ երկիրը, որից հայ ժողովուրդը վայրոզ էր ստանալ ռեակցիոնություն, Ռուսաստանն էր: Անգլիան, ինչպես նշել է «Մշակը» կցանկանար, որ արևմտահայությունը ոչնչանա, նրա տեղը զբաղեցնեն անգլիական գաղութարարները: Այդ նպատակով էլ Անգլիան ձգտում էր նվաճել Փոքր Ասիան և Հայաստանը, որպեսզի «հայերը գաղթեն իրենց երկրից ու ասպարեզը

<sup>124</sup> Д. Ллойд Джордж. Незадолго издано, հատ. 2, էջ 390:

<sup>125</sup> Герцог Аргайльский. Незадолго издано, էջ 134:

<sup>126</sup> Տե՛ս Ան, Խուրրահայ հեղափոխության պալատարարությունը, Փարիզ, 1934, հ. Ա, էջ 83:

խողնեն անգլիացիներին»<sup>127</sup>; Մեկ այլ անգամ «Մշակը» գրում է, որ՝ ստում են Անգլիան ամենաքաղաքակիրթ երկիրն է, աստված մեզ հետու պահե այդ քաղաքակիրթ երկրից<sup>128</sup>:

Բեռլինի կոնգրեսի նախօրյակին Անգլիայի պետական, քաղաքական ու դիվանագիտական գործիչները մեծ խոստումներ տվեցին հայկական պատվիրակությանը, անգամ ի պատիվ նրա կաղմակերպեցին ճոխ ընդունելություն, բայց հայ ժողովրդի թիկունքում Անգլիան Քուրքիայի հետ կնքեց պաղտնի պայմանագիր հայկական վիլայեթները թուրքական տիրապետության տակ պահպանելու վերաբերյալ, որի դիմաց ստացավ Կիպրոսը և հայտարարեց, որ հայերը չեն շատանացել ինքնավարություն ստանալու համար: Անգլիայի համար հայ ժողովրդի շահերը ոչ մի նշանակություն չունեին. «Հայերն Անգլիայի անսիրտ վաճառականական քաղաքականութեան զոհ դարձան»<sup>129</sup>: Բիքոնսֆիլդն առաջարկեց «Հայաստանի փոխարեն օգտագործել Քրդստան» անունը: Հեռուարար, նշել է Գր. Արծրունին, ըստ Անգլիայի այլևս չկա Հայաստան: Այդ հանդիսություն և անխղճություն է հայ ժողովրդի նանդեպ. «Կուցլ բիամիա անգլիականները կը համարվեն որրան անկեղծ էր Անգլիայի սերը գեպի հայոց աղբը...»<sup>130</sup>:

Լերմանյան Հայաստանը Խուսաստանին շահանալու հիմնական պատճառը խարզախ Ալբիոնի և բարբարոսական Քուրքիայի հակահայկական միասնական քաղաքականությունն էր: Չնայած այդ միասնությանը, Անգլիան Քուրքիայի նկատմամբ անցկացնում էր զազուխարարական քաղաքականություն: Նա գրավեց Կիպրոսը, մոտեցավ Սուեզի ջրանցքին և ստեղծեց բազա Եգիպտոսը նվաճելու համար:

Բեռլինի կոնգրեսի աշխատանքները ցույց տվեցին, որ բուրժուական դիվանագետները հարցերը լուծում են ո՛չ թե օրջեկտիվորեն, այլ սուբյեկտիվորեն, ո՛չ թե արդարության, այլ շահադիտական դիրքերից, ո՛չ թե բաց, այլ գաղտնի:

<sup>127</sup> «Մշակ», 1878, № 142:

<sup>128</sup> Տե՛ս «Մշակ», 1876, № 44:

<sup>129</sup> «Մշակ», 1878, № 116:

<sup>130</sup> «Մշակ», 1879, № 107:

Ֆ. Էնդելսը քննադատել է բուրժուական դիվանագետների գործունեության այդ խարդախ մեթոդները և նշել, որ բուրժուական «դիվանագիտությունը մշտապես հետնամուտը գնները բաց թողնելու, սակարկելու և շահելու կարողություն ունենալու դիվանագիտություն է... մի խոսքով առևտրականներ են ամեն ինչում»<sup>131</sup>։ Այդ առումով հատկապես աչքի էր ընկնում անդլիական դիվանագիտությունն իր արտակարգ նենգությամբ և բուրժուական քաղաքակրթությանը ներհատուկ բարբարոսական բնույթով, որն անգլիական կառավարությունը հայ ժողովրդի նկատմամբ անցկացնում էր բացահայտ, շքողարկված ձևով։

Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը եվրոպական դիվանագիտության ամենամութ ու ամենաամթալի էջերից է և Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համեմատ՝ խայտառակություն։ Սխալ է կետն, երբ 16-րդ հոդվածը հայերի համար համարել է մեծագույն չարիք ու հանցագործություն<sup>132</sup>, քանի որ ելև այն արևմտահայությունը հոյանավորող ու փրկող էր, ապա 61-րդ հոդվածը ժողովրդի մասսայական ջարդերի ու Հայաստանն ավերակների վերածելու շարագուշակ բռթն էր։

Բեռլինի կոնգրեսը դիվանագիտական «լիտի կոմեդիա էր»<sup>133</sup>։ Այն նոյաատկ ուներ առաջավոր մարդկության ուշադրությունը շեղել և մոլորեցնելու նրա սրտշումներն ունեին խիստ հակառուսական և շտիտնայիական սղի, որը ներշնչել էին Բիբոնսֆիլդն ու Սոյսերին, «Ռուսոմադաշտում,— գրել է Ե. Ա. Ռագոդինան,— հաղթեցինք մենք, բայց մեզ գրա համար անգամ չթույլատրեցին զբոսնել Յարդրադի փողոցներում, մինչդեռ Անգլիան ստացավ Կիպրոսը, որը նրան վաղուց էր դուր եկել, Ալստրիան հպանցումով զավթեց Բոս-

<sup>131</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 31, стр. 249.

<sup>132</sup> Տե՛ս Լեո. Թորքահայ ներափոխության գաղափարաբանությունը, Տ. Ա., էջ 78։

<sup>133</sup> «История XIX века», под ред. Лавинса и Рамбо. М., 1937, т. 7, стр. 430.

նիան ու Հերցեգովինան, իսկ Թուրքիային բռնի հազցրին ծաղրածուի կապան, որով նա մինչև հիմա պճնվում է»<sup>134</sup>։

Բեռլինի կոնգրեսի որոշումներն ունեն ազազակող անարգարացի բնույթ։ Կոնգրեսում կողոպտվեց Թուրքիան։ Առանց մի զնչակ արձակելու ու առանց մի կաթիլ արյուն թափելու Օսմանյան կայսրության հողերը զավթեցին Անգլիան ու Ավստրո-Հունգարիան։ Թուրքիայի ստրկական տիրապետության տակ վերադարձրին Ռուսաստանի օգնությամբ սուլթանիզմի լուծը թոթափած Արևելյան Ռումելիայի բուլղարներին և արևմտահայերին, նրանց դատապարտելով ֆիզիկական բնաջնջման ու բռնի տսիմիլյացիայի։ Ահա քաղաքակիրթ բուրժուական Եվրոպայի մեծ տերությունների ղեկավարները սղորմածությամբ արևելյան հարցի «հումանիստական» սկզբունքով լուծման պատկերը։ Այդ պատկերն այնքան վրդովեցուցիչ էր, որ անգամ բուրժուական պատմաբանները կոնդրեսի աշխատանքները հանրազումարի բերելուց հետո պրել են. «Պատմության մեջ բիչ կդռնվեն այգպիսի ահավոր և անարդարացի որոշումներ»<sup>135</sup>։

Անգլիայի բաղարականությունն արգելակեց Արևմտյան Հայաստանի դարդապլուծը և հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան նստվածների միախորումը։ Կոնգրեսի կողմից հսկանալու արգելած Արգուլ-Համիդ II-ը ավելի ոգեշնչվեց։ Նա ոչ թե դադարեցրեց արևմտահայերի հալածանքը, այլ, ընդհակառակն, ավելի ուժեղացրեց այն, որը վերածվեց ժողովրդի պանդվածային ջարդերի։ «1878 թվականից,— գրել է էմ. Կրլոնը,— մեր միջամտության շնորհիվ, մաքուր մարդասիրական տեսակետից, հասած արդյունքի էությունը կայանում է նրանում, որ հայկական հինգ նահանգներում հաստատվեց կառավարման դազանային սիստեմ, որի համեմատ հարավային նահանգների (ԱՄՆ-ի—Լ. Բ.) ստրկատիրական դաժան սիստեմը հանդիսանում է աննշան շարաշահություն։ Մենք հանդիսավորությամբ ոչնչացրինք քաղաքանր և ակնհայտ նպաստեցինք դժխախ ստեղծմանը» Հա-

<sup>134</sup> Е. А. Рагозина. Из дневника русской в Турции перед войной 1877—1878 гг., СПб., 1910, стр. 142.

<sup>135</sup> «История XIX века», под ред. Лависса и Рамбо. т. 7, стр. 447.

յաստանում: «Մենք թողեցինք, որպեսզի հիմար կառավարման անկանոն սխտեմը աստիճանաբար վերածվի անխնա ջարդերի հրեշավոր քաղաքականության»<sup>136</sup>:

էմ. Դիլոնը օբյեկտիվորեն է գնահատել Անգլիայի և արևմտանվրույական մյուս պետությունների քաղաքականության ծանր հետևանքները: Պատմության մեջ քիչ են աչդքան դաժան, վիրավորական, նվաստացուցիչ, ժողովուրդներին հիասթափեցնող որոշումները, ինչպիսին 61-րդ հոդվածն է, որը, փոխանակ բարելավելու հայ ժողովրդի վիճակը, նրան դատապարտեց անհուն տառապանքների: Հայկական հարցը մնաց բաց հարց, «արչունսս ու արցունքոտ»<sup>137</sup> հարց: Պատմությունը ցույց տվեց, իրավացիորեն գրել է սովետական պատմարան տկաղեմիկոս Վ. Մ. Խվոստովը, որ 61-րդ հոդվածը արեմաահայերի համար դարձավ ճակատադրական և «նրանց մատնեց ֆիզիկական բնաջրնչման»<sup>138</sup>:

Անգլիական կառավարության շահամոլ ու թշնամական քաղաքականությունն առաջացրեց բնդհանուր դժգոհություն և հիասթափություն Անգլիայից: Ալատության համար մարտընչող հայ ժողովուրդը հասկացավ, որ բուրժուական Անգլիայից և բռնակալական Թուրքիայից ինքնավարություն ստանալը ուտսոյիտ է, իսկ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով սեֆորմների խոստումը՝ վերացական: Բայց նա չվրհատվեց և իր հույսերը կապեց իր սեփական ուժերի հետ:

Այսպիսով, 1877—1878 թթ. տրեկյան ճգնաժամի ժամանակ անգլիական կառավարությունը հայկական հարցի նկատմամբ անցկացրեց շահադիտական քաղաքականություն և չրիվ անտեսեց հայ ժողովրդի կենսական շահերը: Անգլիայի տիրապետող դասակարգերը, Օսմանյան կայսրության ամբողջականությունը սլաշտպանելու պատրվակի տակ, նպատակ ունեին անտեսապես ու քաղաքականապես լրիվ

<sup>136</sup> Эм. Диллон. Положение дел в Турецкой Армении, в сб. «Положение армян в Турции...», стр. 329.

<sup>137</sup> Հ. Քումանյան, Իրկերի ժողովածու, Հայպետհրատ, 1951, հատ. 4, էջ 226:

<sup>138</sup> В. М. Хвостов. История дипломатии. М., 1963, т. II, стр. 333.



ստրկացնել Թուրքիան, ապա՝ նովնել Հայաստանի վրայով դե-  
պի արևելյան երկրները ձգվող սարանցիկ սուևտրական ճա-  
նապարհներում ազատ հաղորդակցությունը, ամբապնդել  
Աստուգամբ Ասիայում Անգլիայի սազմաստրատեղիական դիր-  
քերը և պայմաններ ստեղծել գաղութային քաղաքականու-  
թյան հետագա ծավալման համար: Այդ նպատակով Անգլիան  
Արևմտյան Հայաստանը պահեց թուրքական պետության  
կազմում, հայ ժողովրդին արդելեց թոթափել իր դարն ապ-  
րած թուրքական բարբարոսական յուծը, փրկվել սուլթանիզ-  
մի պանսոսմանիզմի, պանիսլամիզմի և արմենոցիդի քաղա-  
քականությունից, միավորվել ու ձևոք բերել ազդային ան-  
կախություն, ապրել վերածնություն, կամ անցնել Ռուսաս-  
տանի սիրապետության տակ և դարգանալ սոցիալական  
սուաջադիմության ուղիով: Անգլիան փակեց սուլթանիզմի  
դժոխքից արևմտահայության դուրս գալու ելքը և նրան դա-  
տապարտեց կործանման:

Բեռլինի տրակտատով հայկական հարցը դարձավ միջ-  
ազգային դիվանագիտության հարց, եվրոպական պետու-  
թյունների ձևորին սոսուծախի սոսարկա և շահադիտական  
նկատաստումներով Թուրքիայի ներքին գործերին միջամտելու  
միջոց. իսկ Բեռլինի տրակտատի ԾԷ-րդ նոզվածը՝ արևմտա-  
հայության համար՝ հակասապրական:

**ԱՆԳՂԻՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՌԼԻՆԻ  
ԿՈՆԳՐԵՍՄԻՑ ՀԵՏՈ**

Բեռլինի կոնգրեսը շուծեց հայկական հարցը, այն մնաց բաց հարց: Մ. Խրիմյանի պատվիրակությունը դժգոհեց և բողոքեց եվրոպական պետությունների դեմ, որոնք չբավարարեցին Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հայ ժողովրդի օրինական պահանջը: Նրանք արևմտահայաբնակները զրկեցին իր հինավուրց հայրենիքում ազատ ապրելու հնարավորությունից: «Պոռնկացած երոպական դիվանագիտությունը»<sup>1</sup> իր շահադիտական ու նենգ քաղաքականությամբ հիասթափեցրեց ժամանակավորապես մոլորված հայ առաջադուր ու հայրենասեր մտավորականությանը, որը հույսեր էր կապել նրա հետ: Հայ մտավորականությունը հասկացավ, որ հայկական հարցի լուծումը պետք է փնտրել ո՛չ Բեռլինում, ո՛չ Կոնդոմում և ո՛չ էլ եվրոպական մյուս պետությունների մայրաքաղաքներում, այլ բուն Հայաստանում, և որ այն կլուծվի ոչ թե եվրոպական դիվանագետների ձեռքով, այլ հայ ժողովրդի միասնական ուժերով: Բոլորին քաջ հույսով և մեծ հույսերով եվրոպա մեկնած, քաղաքակիրթ քրիստոնյա խոշոր պետությունների հումանիզմի վրա հույս դրած Խրիմյանի հիասթափությունն ու այնտեղից վերազանակույց հետո պատմած Բեռլինի կոնգրեսում «Շարիսա բաժանելու» հայտնի պատմությունը, որի վրա մենք շենք ցանկանում մանրամասն կանդ առնել, այլ առենք, որ նա ճիշտ գնահատեց իրադրությունը և հասկացավ՝ բուլժուական հասարակարգում իրավունքն ուժի մեջ է և ոչ թե խղճարարների: Այդն իր իրավունքը կարող է պաշտպանել սրի

<sup>1</sup> Մ. Ջևրազ. Առգալին խնդիրներ, Փարիզ, 1927, էջ 9:

... անշնորհ ու թշուառները: Գրիգոր Արծրունին, դարձաշնորհ երկնյանի միտքը, գրեց. «Այն ազգը, որ ինքն իր վրա չոչս չունի, նա ապագայ չունի»<sup>2</sup>:

Հայ առաջավոր մտավորականությունը դիտակցելով, որ բեռինի տրակտատի 61-րդ հոդվածով անտեսվել են հայ ժողովրդի կենսական շահերը, կոչ արեց շնուսահատվել ու շարունակել աշատագրական պայքարը, քանի որ ժողովուրդների ձակատագիրը միշտ լուծվում է հարատև պայքարի միջոցով: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանը, պիմելով ժողովրդին, ասում է, որ թող մեր հայրենասեր երիտասարդները, ուսուցիչները, բժիշկները, արհեստավորները, վաճառականները դնան Հայաստան, այնտեղ վերջ դնեն սովին, համաճարակներին, պայքարեն կյանքի ու պատվի համար, կառուցեն ճանապարհներ, ջրանցքներ, մշակեն երկրի հարուստ ընդերքը, հիմնեն գործարաններ ու ֆաբրիկաներ, պարզուցեն ազգային առևտուրն ու արդյունաբերությունը: Նա պահանջում է համախմբել ազգային ուժերը և ձեռք-ձեռքի տված պայքարել ընդհանուր նպատակի համար՝ «Մշակը», հավանություն տալով պատրիարքի տեսակետին, գրում է, որ Արեմտյան Հայաստանը պետք է լուսավորել, ամեն ինչ իր ուժերի շուքով պետք է օդնի Հայաստանի բարգաժանմանը, օտար երկրներում ապրող հայերն էլ շպետք է մոռանան իրենց եղբայրների մասին: Անհրաժեշտ է այնտեղ բացել դպրոցներ, պատրաստել բանասերներ, բնագետներ, երկրաբաններ, բժիշկներ, գյուղատնտեսներ, ինժեներներ և այլ մասնագետներ: Պետք է հիմնել գրադարաններ, կազմակերպել վեպերի հրատարակություններ, կառուցել երկաթուղիներ, կամուրջներ, խճուղիներ, ջրանցքներ, գործարաններ, մանտվանդ որ Հայաստանն ունի բնակլիմայական նպատավոր պայմաններ և հարուստ է զանազան հանածոներով ու հումքով:

Արեմտահայ և արևելահայ հայրենասեր առաջավոր մտավորականությունը գտնում էր, որ խոշոր պետություններ

<sup>2</sup> «Մշակ», 1879, № 125:

<sup>3</sup> Տե՛ս և. Գաբրիկյան, նշված աշխատ., վավերագիր 6, էջ 355: Տե՛ս նաև «Մշակ», 1878, № 159:

<sup>4</sup> Տե՛ս «Մշակ», 1879, № 42:

րի վրա չպետք է հույս դնել, որ հայերն էլ ազգ են և պետք է արժանի լինեն իրենց հերոսական անցյալին: Նրանց անհրաժեշտ է սպառազինվել լուսավորության ու գիտության դեմքով, կազմակերպել միություններ, հիմնել քննկերություններ, պատրաստվել ազատագրական պայքարին և գործել հետևողական: Դրա մեջ է փրկության միակ ուղին և հաղթանակի հասնելու գլխավոր գրավականը:

Հայկական հարցի վերաբերյալ Բևոլինի կոնդրեսի որոշումն ուժեղ դժգոհություն արտառացրեց նաև արևելահայություն մեջ: Աղգային-ազատագրական պայքարի գաղափարախոսներ Բաֆֆին, Պատկանյանը և մյուսները դատաստատում են «արյունաժարավ գոված» Եվրոպային, որն «սպերտիս»<sup>5</sup> գտնվեց հայ ժողովրդի նկատմամբ: Պատկանյանը գրում է, որ Եվրոպան

«Չուզեր զխտննայ, որ աշխարհիս մեջ հայ կա,  
Հայի մեջ ալ մարդկային սիրտ, հոգի կա»<sup>6</sup>:

Բևոլինի վեհաժողովի մասնակից եվրոպական պետությունների ղեկավարները, հետապնդելով իրենց նեղ շահերը, զայրույթով նշում է Պատկանյանը, հաշվի չառան հայ ժողովրդի կենսական պահանջները, անսուսնեցին հայության հոգու վիշաք, բոթն ու սուզը, աղեխարշ աչքերի արտասուքը. «Լուսավոր Եվրոպ կույր ու խուլ մնաց»<sup>7</sup>:

Բաֆֆին ու Պատկանյանը իրավացիորեն գտնում էին, որ ԵՄ-ը հողվածով հայ ժողովուրդը ոչինչ չստացավ, այն լուկ պատրանք էր: ԵՄ-ը հողվածը Հայաստանը «խեղդեց իսպառ», հայության սիրտն ու հոգին արավ «պատառ-պատառ»<sup>8</sup>: Հայ ժողովրդին նրանք բացատրում էին, որ ազատությունը ձեռք է բերվում ուժով, ազատության ձգտող ժողովուրդը պետք է այդ իրավունքը նվաճի դեմքով և ոչ թե մտրալով: Արևելյան հարցը, որի մեջ մտնում էր նաև հայկական հարցը, այդ «բաղմաղարյան խճճված հանգույցը

<sup>5</sup> Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1963, ՀՈՍՀ ԳԱ, հատ. 1, էջ 122:

<sup>6</sup> Նույն տեղը, էջ 127:

<sup>7</sup> Նույն տեղը, էջ 154:

<sup>8</sup> Նույն տեղը, էջ 141:

պեսք է լուծվի սրով»<sup>9</sup>: Պատկանյանի ու Բաֆֆու հայրենա-  
սիրական-քաղաքացիական քնարը նպատակաւաց ու մար-  
տաշունչ էր: Նրանք ժողովրդին ուսուցանում էին հայրենա-  
սիրություն և ազգային ինքնագիտակցության բարձրացում:

«Պարզամիտ եղբայր՝ Ե՞րբ խելքի պիտի գաս,  
Որ օտարեն ընավ նրդասար շի հուսաս»<sup>10</sup>:

Ազատագրական պայքարի մարտիկների առաջ նրանք խնդիր  
էին դնում լինել քաջ, խիզախ, հանուն ազգի փրկության  
պատրաստ լինել ինքնազոհաբերության, հավատալ ժողովրդ-  
դի ուժերին և ազատագրական պայքարի հաղթանակին:  
«Ազատություն,— գրում է Բաֆֆին,— տրվում է այն ազ-  
գերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գի-  
տեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց  
զուճերի փրկություն»<sup>11</sup>:

Արևելահայ առաջավոր մտավորականությունն անարգան-  
քի սյունին է դամբում եվրոպական մեծ տերություններին և  
բողոքում սուլթանիզմի չալտոյաց քաղաքականության  
դեմ: Նա գտնում է, որ հայ ժողովրդի ազատագրական պայ-  
քարը Թուրքիայի սուլթանիզմի քաղաքական կար-  
գերի դեմ չալերի սրբազան իրավունքն է: Մերկացնելով  
եվրոպական շահամուլ պետությունների քաղաքականությունը,  
Բաֆֆին գրում է. «Եվ ի՞նչ նշանակություն կարող են ունե-  
նալ մեր բողոքները եվրոպական ընդհանուր մարդասիրու-  
թյունից զուրկ, ևսական քաղաքականության առջև, քանի որ  
սլավոնական ցեղերի թնդանոթների որոսամունքը և նրանց  
թափած արյան մրմունջը ազդեցություն չեն գործում»<sup>12</sup>:

Բաֆֆին հատկապես դատապարտում է խարդախ Ալբիո-  
նի քաղաքականությունը, որը Բեռլինի կոնգրեսում պիտավո-  
րում էր եվրոպական պետությունների հակառուսական ու  
հակահայկական կուրսը, որին զոհ գնաց հայ ժողովրդի արև-  
մրտյան հատվածը: Նա գտնում է, որ արեմտահայության  
փրկության համար «հարուստը չսկեսք է ինայե իր արծաթը,

<sup>9</sup> Ու. Պատկանյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 196:

<sup>10</sup> Նույն տեղը:

<sup>11</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, «Հայպետհրատ», 1964, հատ. 9, էջ 268:

<sup>12</sup> Նույն տեղը, էջ 272:

գիտնականը չպետք է խնայե իր հանձարը, եկեղեցականը չպետք է խնայե իր ազդեցությունն ու ջանքը, իսկ աշխարհականը, սամիկը չպետք է խնայե իր արյունը»<sup>13</sup>։ Հաղթանակին շուտ և ավելի քիչ զոհերով հասնելու համար Րաֆֆին խնդիր է դնում սուլթանիզմի դեմ համախմբել հայ, քուրդ, ասորի, ելդի և թուրք աշխատավորներին, որոնք նույնպես կարոտ են ազատության։ Նա կոչ է անում մեծ հավատով և ինքնազոհաբերության պատրաստակամությամբ գնալ դեպի հայրենիքն ազատագրելու սուրբ նպատակը։ Րաֆֆին դրա մեջ էր տեսնում հաղթանակի հասնելու գլխավոր գրավականը։

Սուլթանիզմի դեմ պայքարում բոլոր ազգությունների աշխատավորներին համախմբելու գաղափարը լայն արտահայտություն է գտել նաև «Մշակի» էջերում։ Թեքթի առաջնորդում Գ. Արծրունին դրել է, որ Հայաստանում թուրք երկրագործը, քուրդ հովիվը, կամ քուրդ մշակն ու բանվորը չեն կարող հայ երկրագործի, բանվորի ու արհեստավորի թշնամին լինել, քանի որ նրանց բոլորի սոցիալական վիճակը նույնն է։ Բոլոր ազգությունների աշխատավորների դիրքը, նրանց հարաբերությունները հայ վաշխառուի, թուրք պաշտոնյայի, քուրդ բեգի նկատմամբ միևնույնն են։ «Հայաստանցի հայ, թուրք և քուրդ ստորին դասի մարդիկ նոյն շահով ճնշվում են հայ վաշխառուից, թուրք պաշտոնեայից և քուրդ բէյից, կամ քուրդ ավազակառից։ Ուրեմն երկրագործ, բանուր, մշակ, արհեստաւոր քիւրճի, հայի և քիւրդի մէջ համերաշխութիւնը, եղբայրութիւնը նսարաւոր է, քանի որ նրանց բոլորի վիճակը և շահերը մի են»<sup>14</sup>։ Մեկ այլ անգամ, ընդգծելով մարտական պայքարի անհրաժեշտությունը, Գ. Արծրունին գրել է, որ Արևմտյան Հայաստանում ստեղծված իրողությունը պահանջում է, որ «Հայը մի ձեռքով մուրճ, արօր կամ բահ բռնելով, միւս ձեռքով՝ հրացան էլ բռնի»<sup>15</sup>։ Այդ է միակ միջոցը, որով թուրքահպատակ հայերը կարող են պահպանել իրենց գոյությունը։

<sup>13</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 269։

<sup>14</sup> «Մշակ», 1882, № 103։

<sup>15</sup> Գր. Արծրունի, Թուրքացի հայերի տնտեսական դրությունը, Յիֆլիս, 1894, էջ 33։

Այսպիսով, ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ առաջավոր դործիչները իրենց հույսերը կապում էին ժողովրդի հետ և ձգտում էին համախմբել աղատագրական շարժման ուժերը և նրանց պայքարը դարձնել նպատակասլաց: Ընդ տ է Գ. Արվանձտյանցը, երբ իր հերոսի՝ Թորոս աղբարի բերանով ասում է. «Հայաստանի մէջն է բուն Հայկական խնդիրն, և մենք Պէրլինի մէջ կ'որոնենք լլայն...»<sup>16</sup>:

Բեռլինի կոնգրեսից հետո հայ ազգային-աղատագրական շարժումն ստացավ անհամեմատ կազմակերպված բնույթ, այն ծավալվեց մի նոր թափով և ընդգրկեց հասարակության ավելի լայն խավերի: Աղատագրական շարժումներն իրենց սուր ծայրով ուղղված էին սուլթան Զուլումի բռնակալուլլայն դեմ, սրբ հայ ժողովրդի ամենաոխերիմ խշնամին էր:

Հայ ժողովրդի ազգային-աղատագրական շարժումն ինքնարուխ էր և օբյեկտիվ պայմանների հետևանք: Այն սոսկ սոցիալին անկախությունը վերականգնելու ձգտման արտահայտությունը չէր, այլ սուլթանական կառավարության կողմից անցկացվող բարբարոսական մեթոդներով բացահայտ կոտորածի և ֆիզիկական բնույթի սպանանցող վտանգի դեմ ժողովրդի պայքարը պահպանելու աղատագրական պայքար էր: Ազգային-աղատագրական պայքարի առաջին խմբակները հիմնվեցին ղեռնա Բեռլինի կոնգրեսից առաջ: 1869 թ. հիմնվել էր Ալեքսանդրապոլի «Բարենպատակ ընկերությունը», 1872 թվին՝ Վանի «Միություն ի փրկություն» խմբակը, 1874 թվին՝ Ղարաքիլիսայի (Կիրովականի) «Հայսենիքի սիրո զրասենյակը», իսկ Բեռլինի կոնգրեսից հետո, 1881 թ., կազմակերպվեց Կարինի «Պաշտպան հայրենյացը», 1882 թվին՝ Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերները միությունը» և 1882 թ. վերջերին, կամ 1883 թ. սկզբներին՝ Բիֆրիսի հայրենասիրական խմբակը: Այս կազմակերպությունները շնայած որ միատարր չէին և գաղափարապես ու կազմակերպչական տեսակետից էլ ունեին

<sup>16</sup> Գ. Վ. Արվանձտյանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, Կ. Պոլս, 1879, 1 մ., էջ 270:

որոշ թերություններ, այնուամենայնիվ կապված էին ժողովրդի հետ, արտահայտում էին նրա ազատագրական իղձերը, բարձրացնում մասսայի ազատագրական պայքարի ոգին և շարժմանը հաղորդում որոշակի կազմակերպված բնույթ: Նրանց հիմնական նպատակը ժողովրդի ու հայրենիքի ազատագրությունն էր: Սկսվեց նաև արևելահայերի կամավորական շարժումը:

1880-ական թվականների երկրորդ կեսից ձևավորվեցին նաև հայ քաղաքական կուսակցությունները: 1885 թ. արտասահմանում՝ Ֆրանսիայի Մարսել քաղաքում, Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ հիմնվեց արմենականների կուսակցությունը, որը հրատարակեց «Արմենիա» առաջադիմական թերթը: «Արմենիան» իր էջերում քննադատում էր հայ ժողովրդի ներքին ու արտաքին թշնամիներին: Կուսակցության «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» ծրագրում ասվում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը պետք է կատարել հայ ազգի ուժով, ղենքով, փողով, երբեմն էլ օտարերկրյա պետությունների օգնությամբ: Մարտնչող ժողովրդի լուսույզը պետք է լինի «մահկամ ազատություն» նշանաբանը: Ազատագրական պայքարին անհրաժեշտ է, որ մասնակցեն 15—45 տարեկան տղամարդիկ, որոնց հավատը, կրոնն ու ազոթքը Հայաստանի ազատությունն ու անկախությունն է լինելու: Արմենականների ուշադրության կենտրոնն Արևմտյան Հայաստանն էր: Այդ կուսակցությունն առաջադիմական կազմակերպություն էր, որն այժմ դործում է սփյուռքահայության շրջաններում: 1921 թ. արմենականները կոչվում են ռամկավարների կուսակցություն և պայքարում են հայկական դատի արդար լուծման համար: Նրանք բարեկամական դիրք ունեն Սովետական Հայաստանի նկատմամբ:

1887 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում կովկասահայ ուսանողները Ա. Նազարբեկյանի գլխավորությամբ հիմնեցին հնչակյան կուսակցությունը, որի օրդանը «Հնչակ» թերթն էր: Հնչակյանները կրում էին մանրրուրժուական սոցիալիզմի և ռուսական նարոդնիկների ազդեցությունը, իրենց համարում էին սոցիալիստներ և քննադատում կապիտալիստական հասարակարգը: Սակայն հնչակյանների հիմնա-



կան նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրութունն էր և հայ ժողովրդի փրկութունը ստրկական վիճակից: Ազատագրության հիմնական միջոցը նրանք համարում էին ղինված պայքարը, հեղափոխությունը<sup>17</sup> և Արևմտյան Հայաստանում հիմնում էին գաղտնի կազմակերպություններ, պիմում ցույցերի, ղինված ելույթների և տեռորիստական ակտերի: Հնչակյաններն իրենց անվանում էին մարքսիստ սոցիալ-դեմոկրատներ, բայց այդ իրականությունը չի համապատասխանում: Հնչակյան կուսակցությունը մանրբուրժուական ազգային կուսակցություն է: Հետադաշտում նրա մի մասը հարեց մաքսիզմին և մտավ կոմունիստական կուսակցության շարքերը: Հնչակյան կուսակցությունը գործում է արտասահմանում, համագործակցում ռամկավարական կուսակցության հետ, պահանջում հայկական հարցի արդար լուծում և կանգնած է Սովետական Հայաստանի բարեկամների դիրքերում:

1890 թ. Թիֆլիսում հիմնվեց դաշնակցական կուսակցությունը՝ Բ. Միրալյանի ղեկավարությամբ: Նրա օրգանը «Գրոշակ» թերթն էր: Դաշնակցությունը հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունն էր և հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանի ազատագրության ծրագրով: Բայց նրան շահողվեց համախմբել ազգի ուժերը թուրքական տիրապետության դեմ, հաճախ էլ հակադրվում էր հնչակյաններին, համագործակցելու փոխարեն պառակտում ազգի միասնությունը և իր պայքարի արկածախնդրական մեթոդներով թուրքական կառավարությանը տալիս նորանոր առիթներ կոտորածներ կազմակերպելու համար: Դաշնակցության փորձերը հայդուկային պայքարի միջոցով եվրոպական խոշոր պետությունների ուշադրությունը հրավիրել հայկական հարցի վրա և հարկադրել նրանց լուծել այն՝ անհիմաստ էին ու անցան ապարդյուն, քանի որ պետությունները վարում էին շահամոլ քաղաքականություն և նրանց չէր մտահոգում արևմտահայության ողբերգական վիճակը: Մի շարք անհայտություններից հետո, 1907 թ. դաշնակցությունն իր ծրագրում մտցրեց սոցիալիստական գաղափարներ՝ մասսային մոլորեցնելու և իր ետևից տանելու համար, սակայն այդ

<sup>17</sup> Տե՛ս «Հնչակյան կուսակցության ծրագիրը», Փարիզ, 1930:

նրան շփրկեց, քանի որ դաշնակցությունը, ինչպես նշել է ականավոր մարքսիստ Ստ. Շահումյանը, հայ բուրժուազիայի կազմակերպությունն է, նրա հոգևոր դավակը, բուրժուազիայի շահերի լավագույն արտահայտիչն ու պաշտպանը: Գրա համար էլ դաշնակցական կուսակցության «սոցիալիստական փետուրները» շեն կարող ծածկել նրա «տղեղ բուրժուական կերպարանքը»<sup>18</sup>: Այժմ դաշնակցական կուսակցությունը գործում է արտասահմանում և Սովետական Միության ու Սովետական Հայաստանի նկատմամբ վարում է խիստ թշնամական քաղաքականություն<sup>19</sup>:

Բեռլինի կոնգրեսից հետո Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունն ավելի վատթարացավ և քաղաքական մթնոլորտը շիկացավ: Սուլթանական կառավարությունը մտադրություն չունեի իրագործել 61-րդ հոդվածի համաձայն հայ ժողովրդին խոստացված սեփորմները: Սուլթան Աբդուլ-Համիդ II-ը հայտարարել էր, որ «նա գերազանցում է մեռնել, քան իրագործել այդ հոդվածը»<sup>20</sup>, ուստի և ուժեղացրեց հայ ժողովրդի նկատմամբ հալածանքներն ու հետապնդումները, որոնք արտահայտվեցին մոտ 200 հազ մուհաջիրների Արևմտյան Հայաստանում բնակեցնելու<sup>21</sup>, հայ

<sup>18</sup> Ստ. Շահումյան, Երկեր, «Հայաստան» հրատ., 1975, հատ. 1, էջ 226:

<sup>19</sup> Մենք հանդամանորեն կանգ չենք առնում վերահիշյալ խմբակների և քաղաքական կուսակցությունների պատմության ու գործունեության վրա, նկատի ունենալով, որ այդ մասին դրված են մի շարք աշխատություններ: Մենք խիստ համասոս նշեցինք նրանց մասին, որքան անհրաժեշտ էր մեր ասուջ գրված պրոբլեմների հետագա ուսումնասիրության ու վերլուծության համար:

Տե՛ս Մ. ներսիսյանի Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, Վ. Պարսամյանի Հայ ժողովրդի պատմություն, III հատոր, և Խուրշուդյանի Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից Հոսանքում, Ռ. Հովհաննիսյանի Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Վ. Քարամյանի ձեռագիրը՝ Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը և մի շարք այլ պատմաբանների աշխատությունները:

<sup>20</sup> E. K. Саркисян. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., АН Арм. ССР, 1972, стр. 98.

<sup>21</sup> Տե՛ս «Правительственный вестник», 1880, № 199.

գյուղացիների հողերը մասսայական կարգով բռնագրավելու, երկրի էկոնոմիկան քայքայելու, ֆինանսական, դատական և վարչական մյուս մարմինների գործունեությունը դաժանությունից աստիճանի հասցնելու, հակահայկական պրոպագանդան ուժեղացնելու ու հայերի գեմ թուրքերին, շերքեզներին, հատկապես քրդերին դիմելու, համիդիեական հեծյալ զնդեր կառնելու, սրհեստական կոնֆլիկտներ հրահրելու և հայ բնակչությանը հարկադրական գաղթի մղելու մեջ: Սուլթանի ցմբ ձգտում էր հայկական հարցը լուծել հայերին արմատախիլ անելու միջոցով:

Այդ հատակ երևում է 1879 թ. օգոստոսի 19-ին Վանի անդլիական հյուպատոս Քլեյթի հաղորդումից: Նա գրում է, որ Վանում սպանել են ավելի քան 200 հայ: Մարդասպան քրդերը մնում են անպատիժ: Քրդերը մշտապես հարձակվում են հայկական գյուղերի վրա և ավերում ու կողոպտում: Բերրի հողերի մեծ մասը մնում է անմշակ: Մշակած հողերի բերքն էլ տանում են քրդերը: Հայ գյուղացիները խիստ աղքատ են: Քրդերն ավազակությունը են զբաղվում նաև Մուշի և Բիթլիսի շրջաններում: Տեղական գառապարներն անխիղճ են, կաշատակերներ և սևրազորությունների մեղսակիցներ: Մոսակա գավառներում 40 տարի առաջ 1000 հայ ընտանիք կար, այժմ մնացել է 300 ընտանիք: Հասարակական կարգի վերականգնման համար ուղարկված զինվորները նույնպես չարիքներ են գործում, որի առաջ սպաները փակում են աչքերը: Զինվորները բնակվում են հայ գյուղացիների ընտանիքներում և շեն վճարում: Թուրքական հարկերը շատ ծանր են և այն հավաքում են անկանոն: Հայաստանը հարուստ երկիր է: Եթե ապահովվի հայերի կյանքն ու գույքը, երկիրը արագ կբարգավաճի, քանի որ նրանք աշխատասեր և ընդունակ են<sup>22</sup>: Հայ ժողովրդի ծանր վիճակը հաստատում է նաև Հ. Լեյարդը: 1880 թ. ապրիլի 27-ին նա արտաքին դործերի մինիստր Գրենվիլին գրել է. «Հայերու վիճակը վատթարացած է: Հարստահարութեանց վրայ սուելացած է նաև սովը»<sup>23</sup>:

<sup>22</sup> Տե՛ս Խ. Գաբրիկյան, նշված աշխատ., էջ 269:

<sup>23</sup> Նույն տեղը, էջ 358, վավերագիր 21:

Սուլթանական կառավարութեան հայերին հալածելու, Հայաստանում անարխիայի վիճակ ստեղծելու, բյուրաժոր աղետներ հրահրելու քաղաքականութիւնը, որի նետեանքով սովը ստացել էր ընդհանուր բնույթ, արևմտահայերին հարկադրում էր դիմել մասսայական գաղթի: Կ. Պոլսում լույս տեսնող «Ստամպուլ» թերթը գրում է. «Հարիւրաւոր ընտանիքներ գիւղերէն Կարին կը մամանեն Կարս երթալու համար, կարծես թէ Երուսաղեմ ուխտի կ'երթան... Հայաստանի մէջ մէկ ծայրէն միւսը բնաւ հայ պիտի չմնայ: Պատմութեան մէջ նման գաղթի մը օրինակը չկայ»<sup>24</sup>:

1889 թվականից սուլթան Զուլումն անձամբ իր վրա է վերցնում հակահայկական քաղաքականութեան ղեկավարութիւնը: Այդ մասին Կ. Պոլսի հայոց նոր պատրիարք Խ. Աշրգյանը Մակար կաթողիկոսին հազարգում է, որ սուլթանի անձնական քարտուղարից իմացել է, որ Աբդուլ-Համիդ II-ը ասել է. «Թէ՛ անհնարին է ինձ դիջանել աալ զինքնօրէնութիւն գոր հայք երազեն, և ոչ միայն ինձ՝ ալ և ամենեցուն, որ զկնի իմ գալոց են Սուլթանք նգով դնեմ ի վերայ շտալ հայոց այնպիսի ինչ, ալ մանաւանդ ցջնջումն բովանդակ իսլամութեան յերեսաց երկրի ուխտ դնեմ պատերազմել ընդդէմ անկախութեան հայոց»<sup>25</sup>:

Աշրգյանի գրութիւնից հստակ երևում է, որ Թուրքիայում հայկական հարցը զրված էր ամենայն սրութեամբ, մինչդեռ թուրք պատմաբաններ է. Զ. Կարալը «Հայկական հարցը և իրադարձութիւնները», Ի. Օղթունը «Թուրքիայի պատմութիւնը սկզբից մինչև մեր օրերը» և մյուսներն իրենց աշխատութիւններում կեղծում են պատմական փաստերը, փորձում մխտել Թուրքիայում հայ-ազգային ազատագրական շարժումների համար ներքին գործոնների առկայութիւնը: Նրանք, փառաբանելով Զուլումի վարչակարգը, ասում են, որ Համիդ II-ի օրոք հայերն օգտվել են մեծ արտոնութիւններից, ապրել խաղաղ ու երջանիկ և ընդհանրապես Թուրքիայում հայկական հարց չի եղել, այն ներմուծվել է

<sup>24</sup> Խ. Գաբրիլյան, նշված աշխատ., էջ 256:

<sup>25</sup> Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 193:

գրուից՝ Ռուսաստանում ու Եվրոպական մյուս պետութիւններում գտնվող հայկական կոմիտեաների կողմից, վերոհիշյալ պետութիւնների հրահրմամբ<sup>26</sup>:

Բեռլինի տրակտատով հայերին խոստացված ռեֆորմների իրագործման վրա հսկելու պարտավորութիւն վերցրած եվրոպական պետութիւններն ուշադրութիւն չէին դարձնում Արեւմտյան Հայաստանում իրադարձութիւնների սրման վրա և սուլթանից էլ չէին պահանջում իրագործել բարենորոգումները: Ընդհակառակը, նրանք, հատկապես Անգլիան, պատրաստ էին օգտագործել ծավալվող հայկական ազատագրական շարժումները Թուրքիայի ներքին կյանքին միջամտելու և Արևելքում իրենց ազդեցիկ նոր պլաններն իրագործելու համար:

Բեռլինի կոնգրեսից մեկ տարի անց՝ 1879 թ. անգլիական կառավարութիւնը, հետապնդելով սպեկուլյատիվ նպատակներ, բարձրացրեց հայկական հարցը: Նա, հանդես գալով սրեմտահայերի բարեկամի ու պաշտպանի դիմակով և ձեռնալով բարենորոգումների իրագործման կողմնակից, ցանկանում էր նախ՝ ճնշում գործադրել սուլթանի վրա, սպտանալ նրան Անատոլիայում, սրպեսզի հող նախապատրաստեր Ազիատոսը նվաճելու, ապա՝ շեղել ցարական Ռուսաստանի ուշադրութիւնը Միջին Ասիայից և Աֆղանստանից, որտեղ անգլո-ռուսական ուժեղ պայքար էր դնում տրեստական ու քաղաքական հեգեմոնիա հաստատելու համար: Այնուհետև նա ցանկանում էր հարկադրել Թուրքիային շփոխել անգլիական օրինենտացիան ռուսականով և շրարձրացնել կիպրոս կղզին անգլիացիներից ազատելու հարցը: Նկատի ունենալով այդ հանգամանքները, «Մշակը» գրել է. «Վերջին ժամանակները Անգլիայի ազդեցութիւնը Թուրքաց կառավարութեան վրա թուլացած է և սուլթանը վերջին ժամանակները աշխատում է վայր գցել իր վրայից Անգլիայի հոգեբարձութիւնը»<sup>27</sup>, իսկ անգլիական «Pall Mall Gazette»-ն նշում է, որ Անգլիայի պրոտեկտորատը Փոքր Ասիայի

<sup>26</sup> Տե՛ս Է. Կ. Տարկիսյան, նշված աշխատ., էջ 93:

<sup>27</sup> «Մշակ», 1879, № 138:

Վրա նման է միրածի, Կիպրոսի կոնվենցիան էլ կորցրել է իր նշանակությունը<sup>28</sup>։

Անգլո-թուրքական հարաբերությունների լարվելու սլափառաբանական բիրտնաֆիլդի կարիները, որը հայտնի էր «թուրքսֆիլ» և հայատյաց քաղաքականությունում, այժմ փոխում է իր քաղաքական կուրսը՝ դառնում «հայասեր» և թուրքասույաց։ 1879 թ. հուլիսին պառլամենտում Սոլսբերին հայտարարում է, որ անգլիական կառավարությունը կշարունակի սուլթանական կառավարությանը «շտապեցնել վերանորոգութիւնների գլուխ բերելու գործը»<sup>29</sup>։ Կառավարության ձայնափող «Times» թերթը, արձագանքելով նոր քաղաքական կուրսին և ձգտելով ճնշում գործադրել սուլթանի վրա, գրում է, որ քանի դեռ 61-րդ հոդվածը իրագործված չէ, կառավարությունը իր վրա վերցրած պարտականությունները չի կարող համարել կատարված։ Թուրքիան պետք է հասկանա, որ Անգլիան նրան կարող է հովանավորել, եթե Բ. Գուռը իրագործի բարենորոգումները և ոչ թե անորոշ խոստումներ տա։ «Անգլիան չը կրնար թող տալ, որ անիշխանութեան վիճակ մը, որոյ գոյութիւնն ապացուցված ու ճանաչուած է, անորոշ կերպիւ երկարաձգի»<sup>30</sup>։ Այնուհետև թերթը գրում է, որ արևելյան հարցը պետք է լուծել ազդու և կտրուկ միջոցառումներով։ Կ. Պոլսի անգլիական դեսպան Հ. Լեյարդը սուլթանական կառավարությանը բողոքի նոտա է նղում. սրում ասվում է, որ սուլթանը եվրոպայի և երկու պաշտանագրով Անգլիայի առաջ պարտավորվել է Հայաստանում բարենորոգումներ անցկացնել, մինչդեռ նրա գործունեությունը տված խոստումների հակապատկերն է։ Փամանակը եկել է, որ սուլթանը կատարի իր ստանձնած պարտավորությունները և այն նորից չձգձգի<sup>31</sup>։

Թուրքական կառավարության վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով արտաքին գործերի մինիստրությունը հրատարակում է «Կապուչտ գրքի» նոր համարներ, որոնցում տպագրվում են Հ. Լեյարդի և հյուպատոսների դեկուցագրերը։ Նրան-

<sup>28</sup> Տե՛ս «Մշակ», 1879, № 120։

<sup>29</sup> Նույն տեղը, № 108։

<sup>30</sup> «Մշակ», 1879, № 160։

<sup>31</sup> Նույն տեղը։

ցում նկարագրվում է Արևմտյան Հայաստանի հոռի վիճակը՝ անարխիայի թագավորութիւնը, հայերի կյանքի ու դուրքի անապահովածութիւնը և նրանց դաժան շահագործումը Կառավարութեան հանձնարարութեամբ Լեյարդը սուլթանին ստում է. «Բ. դուր պետի փութայ ի գործ դնել բարենորոգումներն, որոնց անդլիական կառավարութիւնը խիստ մեծ կարեւորութիւն կուտայ, և որոնց վրայ պնդելու իրաւունք ունի»<sup>32</sup>: Անգլիայի բուրժուական մամուլը պաշտպանում է կառավարութեան քաղաքականութիւնը և մեղադրում սուլթանին: «Times»-ը գրում է, որ մինչև այժմ ռեֆորմների շիրագործման պատճառը ոչ Անգլիան է և ոչ էլ նրա ներկայացուցիչները Թուրքիայում, այլ սուլթանական կառավարութիւնն է, որին բաղմիցս հանդիմանել են, բայց արդյունք չի տվել<sup>33</sup>: Պառլամենտում լիբերալների օպոզիցիան, հայկական հարցի պատրվակով, մեղադրում է Բիքոնսֆիլդի պահպանողական կառավարութեանը, որ նա վճռական միջոցների չի գիտնում, Թուրքիայի նկատմամբ անցկացնում է մեղմ քաղաքականութիւն: Լեյարդ թագուհին դատական ճառում ստում է, որ Թուրքիայում բարենորոգումները «գործադրելու կարեւորութեան վրա տրդեն պնդած եմ և պիտի շարունակեմ պնդել»<sup>34</sup>:

Անգլիական կառավարութիւնը նույնիսկ կանգ չի առնում սուլթանին բացահայտ ձեռով սպառնալու առաջ: Հայերին հովանավորելու պատրվակի տակ Աբդուլ Համիդին հասկացնում է, որ եթե նա շարունակի հակաանգլիական քաղաքականութիւնը, ապա դահընկեց կանի նրան և սուլթանական դահր կհանձնի նրա եղբայր Ռաշիդ-էֆենդիին<sup>35</sup>: Բացի այդ, Բիքոնսֆիլդի կառավարութիւնը սուլթանի վրա գործադրում է ֆինանսական ճնշում, Կ. Պոլսից ետ է կանչում Թուրքոֆիլ գեսայան Զ. Էլիոտին և ռազմանավեր ուղարկում Ալեքսանդրիա՝ անգլիական գործերի հավասարմատար Ուիլսոնին Օզիսլոտոսից հեռացնելու առիթով: Արևելյան հարցում թագուհու, կառավարութեան, լիբերալների օպոզիցիայի և մա-

<sup>32</sup> «Մշակ», 1879, № 197:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, № 202:

<sup>34</sup> Նույն տեղը, № 160:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը, № 186:

մուլի միասնական քաղաքականությունը բացատրվում է նրանով, որ Թուրքիայի նոր մինիստրությունը հրաժարվում էր Անգլիայի պրոտեկտորատից Փոքր Ասիայի վրա և պահանջում, որ վերջինս ազատի Կիպրոս կղզին: Սուլթանին Լեյարդը պատասխանում է, որ Անգլիան այլևս Թուրքիային չի վերադարձնի Կիպրոսը<sup>36</sup>:

Հայ ժողովուրդը Բիքոնսֆիլդի կառավարության վրա հույս դնել չէր կարող: Ոչ մի կառավարություն Հայաստանի նկատմամբ չէր վարում այնպիսի երկդիմի կեղծ քաղաքականություն, ինչպես անգլիականը: Անգլիայում մի կողմից՝ կազմակերպում էին հայ ժողովրդի նկատմամբ համակրական միտինգներ, պետական գործիչներն արտասանում էին սրտառուչ ճառեր, մամուլը տպագրում բարյացակամ ոգով բազմաթիվ հոդվածներ, ձգտում ցույց տալ, որ անգլիական կառավարությունը բոլորից շատ է «մտահոգված» շուտափույթ լուծելու հայկական հարցը՝ հայերին աղատագրելու թուրքական լծից, իսկ մյուս կողմից՝ Բիքոնսֆիլդի կառավարությունն իրեն զրսևորում էր որպես հայ ժողովրդի անհաշտ թշնամի: Այդպես էր վարվում նա հայ ժողովրդի նկատմամբ նաև Բեռլինի կոնգրեսից հետո: Կ. Պոլսի անդլիական նոր դեսպան Լեյարդն ինտրիգներ էր սարքում արևմտահայերին ինքնավարություն տալու դեմ: «Մշակը» դայրույթով գրում է. «Ահա Անգլիայի երկդիմի, ահա նրա ստոր և անարժան քաղաքականությունը... Այսօր շարունակվում է նույն քաղաքական անամօթ կատակերգությունը...»<sup>37</sup>: Հայ ժողովրդի նկատմամբ Բիքոնսֆիլդի կառավարության խարդախ քաղաքականությունը դատապարտում է նաև Մեյիքզադեն (Բաֆֆին): Նա արդարացիորեն գրել է, որ անգլիական կառավարությունը խիստ շահախնդիր է և անխիղճ, և թե հնարավորություն ունենա, հայերին Հայաստանից արմատախիլ կանի, «հայը իր իրական պաշտպանութեան մասին իսկի բրիտանական առիծից որ և իցէ ակնկալութիւն ունենալու չէ»<sup>38</sup>:

<sup>36</sup> Տե՛ս «Մշակ», 1879, № 177:

<sup>37</sup> Նույն տեղը, № 107:

<sup>38</sup> Նույն տեղը, № 132:



Անգլիական կառավարությունը չէր ղեկավարվում հայասիրության դգացմունքներով: Նրա «քաղաքականությունն ձեռնկալ ոչ սէր, և ոչ էլ մարդասիրութիւն»<sup>39</sup>: Անգլիայի սկզբունքները շահագիտական էին: Չէր կարելի հավատալ բուրժուական Անգլիայի հայասիրական աղմուկին: Նրան բոլորովին չէր հետաքրքրում Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը: Այդ հստակ երևում է Սուսերեղիին Լեյարդի գրած ղեկուցագրից: Դեսպանն ասում է, որ Հայաստանի վերականգնելն այնքան անհնար է, որքան Հրեաստանի վերականգնելը: Նա ժխտում է հայ ազգի գոյությունը և Հայաստանին ինքնավարությունն տալու գաղափարը համարում է ցնորք: Հայ մողովրդի միանգամայն արդարացի ինքնավարություն ստանալու պահանջը Լեյարդը համարում է Խուսափանքի խարդավանք և որ ռուսական կառավարությունը ջանում է «ստեղծել մի շեղած հայոց ազգութիւն»<sup>40</sup>:

1880 թ. Անգլիայի պառլամենտական ընտրությունների ժամանակ հայկական հարցը ստացավ հատուկ նշանակություն: Յուրաքանչյուր կուսակցություն ձգտում էր շարաշահել այն՝ խաղալ մոլովրդի ղեմոկրատական-հայասիրական դգացմունքների հետ և ընտրություններում տանել հաղթանակ: Լիբերալների լիդերներից Հարինգտոնը հայտարարեց՝ եթե ընտրություններում իրենք հաղթանակեն և կազմեն կառավարություն, Անգլիան այլևս չի պաշտպանի Բ. Դոանը, մինչև որ նա չիրագործի ռեֆորմները<sup>41</sup>: Ընտրություններն ավարտվեցին լիբերալների կուսակցության հաղթանակով և կազմվեց Գլադստոնի կառավարությունը, որը շարունակեց սահմանափակների արևելյան ազդեցիվ քաղաքականությունը: Հայկական դատի պաշտպանության պատրվակով նա ձգտում է հարկադրել սուլթանին ստեղծելու անգլոֆիլ կառավարություն և հող է նախապատրաստում Եգիպտոսը գրավելու համար: Այդ պլանների իրագործման նպատակով արտասքին գործերի մինիստր Գրենվիլը շրջաբերական ուղարկեց անգլիական դեսպաններին, պահանջելով, որպեսզի դեսպան-

<sup>39</sup> «Մշակ», 1879, № 189:

<sup>40</sup> Նույն տեղը, № 198: Տե՛ս նաև Խ. Գաբրիկյան, նշված աշխ., էջ 323:

<sup>41</sup> Տե՛ս «Մշակ», 1880, № 54:

ներք կվրոպական խոշոր պետութիւնների առջև հարց բարձրացնեն և սուլթանից պահանջեն իրագործել Բեռլինի տրակտատի հոդվածները: Կառավարութեան ազդեցիկ նախատակները թաքցնելու համար Գրենվիլը հայտարարում է, որ Անգլիան թշնամաբար չի տրամադրված Թուրքիայի նկատմամբ, միայն ցանկանում է, որ սուլթանը կատարի իր վրա վերցրած պարտավորութիւնները<sup>42</sup>: Միաժամանակ նա, ձեռնալով արևմրտահայերի կարեկցող, լորդերի պալատում ասում է, որ Հայաստանի դրութիւնը սարսափելի է: Մինչև օրս ոչինչ չի կատարվել ո՛չ Բեռլինի տրակտատի և ո՛չ էլ Կիպրոսի կոնվենցիայի համաձայն<sup>43</sup>: Իսկ թագուհին մայիսի 8-ին գահաձառում նշեց, որ սուլթանը Թուրքիայում պետք է ռեֆորմներ անցկացնի և «իր հպատակներին հաւասար իրաւունքներ տայ»<sup>44</sup>:

Մայիսին կաղմակերպվեց կամոյանիա՝ Արևմտյան Հայաստանի սովյալներին օգնութեան ցույց տալու համար: Սովը ընդունել էր զարհուրելի մասշտաբներ: Իռլանդական վարչութեան քարտուղար Ֆոստեր Տրալիեն այդ մասին դրում է, որ Կ. Պոլսից ստացած հավաստի տվյալների համաձայն Արևմրտյան Հայաստանում սովից «հազարաւոր մարդիկ կը մեռնին» և որ «մեռնելու վիճակի մէջ գտնուողք մեռածներու դիակով կայրին, ոմանք ալ իրենց զաւակներին սպանելով՝ կուտեն: Հարիւրաւոր մանկունք իրենց ծնողքէն լքուած են, և փողոցներու մէջ կը մեռնին»<sup>45</sup>: Այդ մամանակ Անգլիայում լույս տեսաւ Զեյմս Գրիգի «Հայերը, քրդերը և թուրքերը» գիրքը, որում ասվում է, որ հայերի վիճակը նման է հին Հունաստանի Սպարտայի սարուկների վիճակին: Նրանց առաջագիմութիւնը, անձի ասպահովածութիւնը և բարօրութիւնն անհնար է, քանի դեռ վերջ չի տրված քրդերի ավազակութիւններին, բռնութիւններին և կամայականութիւններին: Հայաստանում «ոչ կեանքը, ոչ էլ կայքը ասպահոված չէ»<sup>46</sup>: Իրոք, Հայաստանի վիճակը շատ ծանր էր, ապագան էլ՝ մշուշապատ: Այդ ան-

<sup>42</sup> Տե՛ս «Մշակ», 1880, № 81:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղը, № 82:

<sup>44</sup> Նույն տեղը, № 83:

<sup>45</sup> Նույն տեղը, № 91:

<sup>46</sup> Նույն տեղը, № 92:

մխիթարական վիճակի դիտավոր պատասխանատուներից մեկը անգլիական կառավարությունն էր: Միանգամայն արդարացի էր Արգայլի գուբը, երբ պատրամենտում հայկական շարքի շուրջը բացված մտքերի փոխանակության ժամանակ ստաց, որ Սուլթերին անընդհատ կրկնում է, որ Թուրքիայի վրա ճնշում գործադրելն անհնար է, Սվրոպան ոչինչ անել չի կարող, եթե այդ այդպես է, նշանակում է Սուլթերին Բեռլինի կոնգրեսում հայ ազգի գլխին աղետ բերեց: Այժմ անգլիական կառավարությունը պարտավոր է ուժի գործադրմամբ հարկադրել Թուրքիային ռեֆորմներ անցկացնել<sup>47</sup>: Ուժի դիմելու առաջարկը պաշտպանում են նաև պատրամենտի այլ անդամներ: Հուլիսի 23-ին Չ. Բրայսն իր ճառում ասում է. «Վստահ եմ, որ Անգղիայ արդի կառավարութի նմայս խնդիրն յառաջ կը տանի իւր շարքի նախ և բարօլական մեծութեան արժանի ոգով մը», որպեսզի բարենորոգումներն իրագործվեն և «քաղաքակրթութեան հին վայրերն իրենց առջի բարգաւաճ վիճակին վերադարձնեն»<sup>48</sup>:

Հայկական հարցի շուրջ Ելույթներ սնեցան նաև Թուրքիայի կողմից կաշառված պատրամենտի անդամներ կարուշերը և Աշմեա Բարթլերը: Կարուշերը մեղադրում է արտաքին գործոց մինիստրի տեղակալ Դիլկին և բուլսը նրանց, ովքեր պահանջում էին Թուրքիայի դեմ գործադրել ուժ: Անգլիան, ասում է նա, չպետք է խառնվի իրեն չվերաբերող գործերին: Անգլիան մարզկային ցեղի Դոն Քիշոտը չէ, նա չպետք է դիմի վենքի ուժին: Իսկ Աշմեա Բարթլերը լիտիաբար հայտարարում է, որ անարդարություն կլինի սուլթանից պահանջել կենսագործել Բեռլինի տրակտատով իր վրա վերբրած պարտավորությունները<sup>49</sup>: Հայկական հարցի շուրջ մտքերի փոխանակությունն ավարտվեց Գլադստոնի Ելույթով: Նա ասաց, որ լիբերալների կառավարությունը փոխում է Անգլիայի ավանդական քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Մինչև հիմա Անգլիան մյուս խոշոր պետությունների հետ առաջնակարգ հարց էր համարում Թուր-

<sup>47</sup> Տե՛ս «Մշակ», 1880, № 104:

<sup>48</sup> Նույն տեղը, № 149:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղը, № 157:

քիայի ամբողջականության պահպանումը, իսկ քրիստոնյաների իրավունքների պահպանելը՝ երկրորդական: Այդ քաղաքականության հետևանքով Թուրքիան Անգլիայից ստացել է 200 մլն. ֆ. ստ., բայց ոչ մի փորձ չի արել վարչական ռեֆորմներ անցկացնելու ուղղությամբ: Եթե հիմա էլ Թուրքիան հրաժարվի ռեֆորմներ անցկացնելուց, ապա Անգլիան ներքան չի հովանավորի, նա ստիպված կլինի ինքն հոգալ իր ամբողջականության ու անկախության պաշտպանությունը: Գլադստոնն իր ելույթն ավարտում է՝ ասելով, որ կառավարությունն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում օգտվելու իր ռազմական ուժերից Թուրքիայի դեմ: Անգլիան առանց եվրոպական պետությունների էլ կարող է միայնակ գործել, կառավարությունը պարտավորվում է իրագործել տալ Բեռլինի դաշնագրի բոլոր սրուշումները<sup>50</sup>:

Պատվամեծությամբ ազմկալի ելույթները, միտինգներում արտաստնված ճառերի բարձր տոնը, մամուլի հողվածների փոքուն սճը «Մշակի» մոտ հույս է առաջացնում, որ «վերջապես կադատվեն տաճկահայերը»<sup>51</sup>, սակայն իզուր հույսեր էին կապում անգլիական իմպերիալիստների հետ, քանի որ նրանց գործունեության սկզբունքը շահամոլությունն էր և ոչ թե հումանիզմը: Նրանք շարաշահում էին հայկական հարցը, սուլթանի վրա ճնշում գործադրելու, զիջումներ ստանալու նպատակով և ոչ թե մտահոգվում արևմտահայերի ազատագրությամբ: Դրա համար էլ հայկական հարցը մնում էր անշարժ, Հայաստանը գտնվում էր արյան ու կրակի մեջ, իսկ սուլթանը՝ անդրդվելի: Ռեֆորմներն անցկացնելու պահանջին նա պատասխանում էր, որ ռեֆորմները կմտցվեն ոչ թե հայերի, այլ ամբողջ երկրի համար: Այդ նշանակում է, որ սուլթանը չէր ցանկանում Հայաստանին ինքնավարություն տալ:

1879—1880 թթ. Անգլիան հայկական հարցի շարաշահմամբ չկարողացավ հասնել նպատակին: Ուստի նա փոխեց իր գործունեության տակտիկան Թուրքիայի նկատմամբ: Եթե առաջ նա խոսում էր ուժ գործադրելու քաղաքականու-

<sup>50</sup> SL՝ «Մշակ», 1880, №№ 160, 162:

<sup>51</sup> Նույն տեղը, №№ 68, 174:

Քյան դիրքերից, այս 1880 թ. վերջերից խոսում է շափա-  
վոր լեզվով: Այդ է ցույց տալիս Գլադստոնի նոյեմբերի 12-ի  
կույթը Լոնդոնի լորդ մերի ճաշկերույթում: Պահպանողա-  
կան կուսակցության մամուլը պրեմիեր մինիստրի այդ կույ-  
թը բնութագրեց որպես դամբանական ճառ լիբերալների կա-  
ռավարության արևելյան քաղաքականության վրա<sup>52</sup>: Կառա-  
վարության քաղաքականության տատանումները պայտն  
ձևով արձագանքող «Times»-ը գրում է, որ անգլիական  
կառավարությունը առաջվա նման պատրաստ է նպաստել  
արևելյան հարցի լուծմանը, բայց չունենալով առանձին շա-  
հեր Արևելքում, նա իր վրա չի առնի «այդ խնդրի վճռելու  
ինիցիատիվը»<sup>53</sup>:

Վերջին անգամ Գլադստոնը հայկական հարցին անդրա-  
դարձավ 1881 թ. հունվարին: Մ. Չերալի հետ պրույցի ժա-  
մանակ նա ասաց, որ իր կառավարությունը նպատակ ունի  
լրիվ իրադրծել Բեռլինի դաշնագրի բոլոր հոդվածները,  
մասնավորապես Հայաստանի բարենորոգումների հոդվածը:  
Այդ են պահանջում մարդասիրությունը և անգլիական շահե-  
րը: Հայկական սեփորմների իրադրծման հարցը շուտով  
գոհացուցիչ լուծում կստանա: Հայկական հարցն Անգլիայի  
նստալի բողկացուցիչ մասն է կաղմում: Հայերի փրկության  
միակ միջոցը նրանց ինքնավարություն տալն է, այդ «վտոր-  
չութիւնը ձեղ շնորհելու համար Անգլիան մեծապէս պիտի  
աշխատի»<sup>54</sup>:

Անգլիական կառավարությունը և մամուլը երկդիմի խաղ  
էին խաղում: Անգլիական զաղութարարներին բոլորովին չէր  
հետաքրքրում հայ ժողովրդի դրության բարելավումը: Հայ-  
կական հարցը լեկ պատրվակ էր սուլթանի վրա ձնշում դուր-  
ծադրելու, որպեսզի Եգիպտոսում ամրապնդեն իրենց պիր-  
րերը: «Times»-ի թղթակիցը գրում է. «Եգիպտոսը... կատա-  
րելապէս պէտք է հպատակվի Անգլիայի հսկողութեանը...  
Անգլիացիների համար արևելեան հարցը մինչև այն ժամա-  
նակ գոյութիւն ունի, քանի դեռ նրանք չեն տիրապետում

<sup>52</sup> Տե՛ս «Մշակ», 1880, № 200:

<sup>53</sup> Նույն տեղը, № 216:

<sup>54</sup> «Մշակ», 1881, № 18:

Եգիպտոսի վրա (ընդգծումը մերն է—Լ. Բ.)»<sup>55</sup>։ Լրագրի խմբագրությունը լրիվ համաձայն է թղթակցի հետ և իր կողմից ավելացնում է. «Եգիպտոսը միայն Անգլիային պէտք է պատկանի»<sup>56</sup>։ Ահա անգլիական կառավարության ու դիվանագիտության կողմից նրբորեն քողարկված նպատակը, փայփայած իդեալը և «հայասիրության» գաղտնիքը։

Եգիպտոսը վաղուց էր դուրսում անգլիական գաղութաբարենրին։ Սուեյի ջրանցքի կառուցումից հետո է՛լ ավելի էր մեծացել նրա տնտեսական և ռազմաստրատեգիական նշանակությունը։ Եգիպտոսը դարձել էր բամբակամշակման խոշոր պլանտացիաների ու Մանչեսթրի մանածագործական արդյունաբերությանը հումք մատակարարող երկիր, իսկ ջրանցքը՝ դեպր Անգլիայի արևելյան գաղութները տանող ամենակարճ ջրային ճանապարհը։

Անգլիայի կողմից հայկական հարցի բարձրացնելը, նրա պատրվակի տակ Եգիպտոսը նվաճելու պլանը շի վրիպել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի տեսադաշտից։ Նրանք բացահայտել են անգլիական կառավարության դիվանագիտական գործարքը, մերկացրել նրա կեղծիքը և ցույց տվել, որ անգլիական քաղաքականության ակտիվացումը հայկական հարցում հետապնդում էր Եգիպտոսը նվաճելու նպատակ։ Դիվանագիտական այդ խտրդախ գործարքն առաջ էր քաշել Գլադստոնը և հող նախապատրաստել գրավելու այն, իսկ Ռուսաստանի դիմադրությանը շահնդիպելու համար, վերջինին առաջարկում էր գրավել Արևմտյան Հայաստանը։ «Անգլիան,—հեգեանքով գրել է Ֆ. Էնգելսը,—խաղաղ ժամանակ պետք է գրավի Եգիպտոսը, որպեսզի խեղճ Ռուսաստանը—նույնպես խաղաղ ժամանակ—շնորհիվ դրան հարկադրված լինի, ինքնապաշտպանության նպատակով նվաճել Հայաստանը»<sup>57</sup>։

Հայոց դատի պաշտպանության, բարենորոգումներն արագ կենսագործելու, հայասիրության շուրջը Անգլիայի բարձրացրած մեծ աղմուկը լոկ մշուշ էր քողարկելու սեփա-

<sup>55</sup> «Մշակ», 1881, № 182։

<sup>56</sup> Նույն տեղը։

<sup>57</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 35, стр. 76.

կան աղբյուրով քաղաքականության բուն նպատակը: Այդ բոլորը, — գրել է Ֆ. էնդելսը, — «թվացողություն է, ֆարս և պատրվակ»<sup>58</sup>: Անգլիական դիվանագիտական խարդախ քաղաքականության հիմնական նպատակը Եգիպտոսը նվաճելն է: Ծաղրելով անգլիական գաղութարարների հումանիտար, Ֆ. էնդելսն ավելացնում է. «Էստ Գլադստոնի չէ որ աշդ նույնպես կլինի «քրիստոնեական» մի երկրի ազատագրումը մահճակալական լծից»<sup>59</sup>:

Ֆ. էնդելսի ասույթներից մեկ անգամ ևս հստակ երևում է, որ իմպերիալիստական Անգլիային հետաքրքրում էր ոչ թե հայկական հարցի լուծումը, այլ սպիտակ ոսկու հայրենիք Եգիպտոսի նվաճումը և Արևելքի ժողային կարճ ճանապարհների ոսկեղեն բանալի Սուեզի ջրանցքի տիրույթումը:

Անգլիական կառավարությունը, հետևողականորեն անցկացնելով փարավոնների երկիրը նվաճելու նպատակով հայկական հարցի օգնությամբ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու քաղաքականություն, «Կապույտ գրքում» սկսեց հրատարակել Կ. Պոլսի դեսպանի, Արևմտյան Հայաստանի պանդան քաղաքների անգլիական հյուպատոսների ու փոխհյուպատոսների զեկուցագրերը Հայաստանի ծանր դրության ու հայ ժողովրդի թշվառ վիճակի մասին: Միաժամանակ կառավարության հրամանով բրիտանական ռազմանավատները դեմոնստրացիայի կարգով Մալթայից շարժվում է դեպի թուրքական ջրերը: Անգլիական բուրժուական մամուլը, պաշտպանելով կառավարության արևելյան ագրեսիվ քաղաքականությունը, սկսում է հակաթուրքական կամպանիա: Պատվամենտը քննարկում է հայկական հարցը: Ելույթ ունեցողներ Բրայսը, Իլլիք և մյուսները դատապարտում են սուլթանի դի քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ և նշում, որ Բեռլինի կոնգրեսից հետո հայկական ազգաբնակչության վիճակն ավելի է վատացել: Հայաստանում իշխում է լրիվ անարխիա՝ չկա անձի անվտանգություն, գույքի ապահովվածություն և ոտնահարվում են հայերի

<sup>58</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч. т. 35, стр. 298.

<sup>59</sup> Նույն տեղը, էջ 76:

տարրական իրավունքներն ու պատիվը, իսկ Գլադստոնը, սպառնալով սուլթանին, 1880 թ. հունիսի 23-ին պառլամենտում հայտարարում է. «Եթե Թուրքիան շվճոխ կատարել իր վրա վերցրած պարտավորությունները, նա ինքը հարկազրկած էլինի որոշել, թե ինչպես կարող է փրկել իր տերիտորիաների ամբողջականությունն ու անկախությունը»<sup>60</sup> և հուլիսի շիպպի անգլիական օգնության հետ:

Երբ Անգլիան բարձրացրեց հայկական հարցը, Բևուլինի տրակտատը ստորագրած բոլոր պետությունները միացան նրան և 1880 թ. հունիսի 11-ին Թուրքիային հղեցին նոտա: Նրանք կասկածեցին, որ Անգլիան միայնակ կարող է միջամտել Թուրքիայի ներքին գործերին ու ի վնաս իրենց սամրասնդել իր ղիրքերն այնտեղ: Նրանց շէր հետաքրքրում հայ ժողովրդի վիճակը: Գրա համար էլ նոտայում պետությունները շէին պնդում ռեֆորմների անցկացման վրա, այլ միայն սուլթանական կառավարությանը նախադգուշացնում էին «չուրջ ուշադրություն դարձնել» այդ հարցի վրա: Եվրոպական պետությունների նման միջամտությունը մի կողմից՝ կարճատես հայ հասարակական-քաղաքական գործիչների մոտ հույս էր առաջացնում՝ Եվրոպայի օգնությամբ լուծել հայկական դատը, իսկ մյուս կողմից՝ թուրքական կառավարությանն ավելի զրգոում հայ ժողովրդի դեմ: «Եվրոպան և առանձնապես Անգլիան, — միանգամայն արդարացիորեն գրել է Լինչը, — դժբախտ հայ ազգի նկատմամբ ստոր խաբեբայի դեր էին խաղում. նրանք իրենց հրապուրիչ հովաստիացումներով նրա մոտ առաջացնում էին ապարդյուն հույսեր», որոնք սուլթանն ընդունում էր տազնապով և քրդական բեգերի կազմած հորդաներին բաց էր թողնում հայերի դեմ»<sup>61</sup>:

Խոշոր պետությունների նման տիպի միջամտությունը արտաքուստ հայերի պաշտպանության օգտին էր, իսկ իրականում՝ նրանց դեմ: Եվրոպայի վրա հույս դնելը և նրանից օգնություն խնդրելը ծայրաստիճանի զրգոում էր սուլթանի

<sup>60</sup> О. Бисмарк. Мысли и воспоминания. М., 1940, т. II, стр. 245, примечание 7. Տե՛ս նաև «Մշակ», 1880, №№ 160, 162:

<sup>61</sup> X. Ф. Б. Линч, Իշված աշխատ., հատ. II, էջ 11:



թշնամանքը ու զայրույթը հայերի դեմ և ուժեղացնում սուլթանիզմի հայատյաց քաղաքական կուրսը, իսկ Եվրոպան էլ գործնական քայլերի շէր դիմում: Այսպես, օրինակ, 1880 թ. հունիսի 11-ի եվրոպական պետությունների նոտան սուլթանի կառավարությունից պահանջում էր անհապաղ իրագործել 61-րդ հոդվածը և Բ. Դոանը զգուշացնում՝ նկատի ունենալ, որ ռեֆորմների կենսագործումը որքան անհրաժեշտ է Օսմանյան կայսրությանը, այնքան էլ կարևոր է Եվրոպայի շահերի համար: Սակայն նրանք չէին նշում, որ Լիե թուրքական կառավարությունը շարունակի ձգձգել բարենորոգումների կենսագործումը, ապա կդիմեն կոնկրետ միջոցառումների և կհարկադրեն նրան իրագործել 61-րդ հոդվածը:

1880 թ. հուլիսի 5-ին Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Աբեդին փաշան, որը շատ լավ տեղյակ էր խոշոր պետությունների ներքին սուր հակասություններին, որոնց պատճառով էլ նրանք չէին կարող ընդհանուր լեզու գտնել ու ճնշում գործադրել Թուրքիայի վրա, պատասխանելով նրանց նոտային, գրում է, որ ստեղծված է հանձնաժողով, որը ձեռնամուխ է եղել ռեֆորմների անցկացմանը և մշակում է միջոցառումներ ապահովելու հայերի անվտանգությունը: Պատասխան նոտան կազմված էր շատ տակտով և նպատակ ուներ եվրոպական պետություններին զցել մոլորության մեջ ուցույց տալ, որ Թուրքիայում ամեն ինչ կարգին է, բայց նա զրպարտությունների դոճ է: Նոտայի վերջում միտումնավոր ձևով նշվում էր, որ պաշտոնական տվյալներով հայ բնակչությունը Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Կարինի, Սեբաստիայի վիլայեթներում կազմում է 17%, մահմեդականները՝ 79%, իսկ մնացած աղբյուրները՝ 4%<sup>62</sup>:

Անգլիական կառավարությունը, որը ձգտում էր հայկական հարցի շարաշահման գնով հասնել Նեղոսի հովտի ու Սուեզի ջրանցքի տիրապետմանը, Աբեդին փաշայի նոտայի պատճեններն ուղարկեց Թուրքիայում գտնվող իր հյուպատոսներին, պահանջելով շատապ ստուգել ու ղեկուցել: Եվ ստացավ ութ պատասխան, որոնք բովանդակությամբ իրարից չէին

<sup>62</sup> Տե՛ս Մ. Րոլեն-Ջեկմեն. Армения, армяне и трактаты. Пер. с франц. в сб. «Положение армян в Турции...», էջ 94.

տարբերվում: Պատասխաններում ասված էր, որ ռեֆորմները չեն սկսվել, հանձնաժողովը ոչինչ չի արել, նիդամի գատարանների անջատումը գործադիր իշխանությունից ունեցել է միայն բացասական հետևանք, հարկային սիստեմը չի բարելավվել, ոստիկանական մարմինները չեն վերակառուցվել: Սուլթանական կառավարությունը մատ-մատի չի խփել Արևմտյան Հայաստանի դրությունը բարելավելու ուղղությամբ:

Ստանալով վերոհիշյալ պատասխանները, անգլիական կառավարությունը նորից անցավ գրոհի: 1880 թ. սեպտեմբերի 7-ին վեց խոշոր տերությունների Կ. Պոլսի դեսպանները թուրքական կառավարությանը նոր նոտա հղեցին, սրում ասված էր, որ Աբեղին փաշայի հաղորդումը Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածին համապատասխան հայաբնակ նահանգներում ռեֆորմներ անցկացնելու մասին «չեն համապատասխաներ յիշեալ յօդուածոյն ո՛չ ոգոյն և ո՛չ տառին»<sup>63</sup>, դատական մարմինների վերակառուցումը, արդարադատության գործը, ինչպես երևում է հյուպատոսների ղեկուցադրերից, ոչ միայն չի բարելավվել, այլև ավելի է վատացել: Ոստիկանական մարմինների վերակառուցում չի կատարվել: Սուլթանի կառավարության պատասխանը բուլտրովին չի գոհացնում պետություններին: Իսկ դա վկայում է, որ թուրքիան չի դիտակցում Բեռլինի տրակտատով իր վրա դրված պարտականությունները, չի պատկերացնում հայկական նահանգներում անարխիայի շափը, որն «այն ընդարձակ դաւառաց մէջ բնակող քրիստոնեայ ժողովրդոց բնաջինջ լինելուն առիթ պիտի ըլլայ», տրամադրություն չունի վերջ դնելու քրդերի և շերքեվների կողոպուտներին ու կամայականություններին և ոչ էլ անհապաղ անցկացնելու տեղական կարիքներից բխող բարենորոգումներ: Կոյեկտիվ նոտան ամենից առաջ անհրաժեշտ է համարում վարչական կարգով սահմանադատել քրդերին հայերից, քանի որ նստակյաց և էֆեսքոշվորական ժողովուրդներին անհնար է դնկավարել միևնույն օրենքներով ու եղանակով: Չի կարելի լնաներում անարող քոշվորական ցեղերին, սրունք դաշտ են իջ-

<sup>63</sup> Աե, Հայոց հարցի վավերագրերը, էջ 173:

նում կողոպուտներ կատարելու համար, մտցնել այդ նահանգների բնակչության վիճակագրական տվյալների մեջ և ասել, թե հայկական վիլայեթներում հայերը կազմում են ազգաբնակչության փոքրամասնությունը: Թուրքական կառավարության կողմից «Առաջարկեալ բարենորոգմանց անբաւականութիւնն, ընդհանուր առմամբ, այնքան մեծ է, որ գրեթէ անօգուտ է Բ. Գոան ծրագրոյն պակասութեանց վրայ վիճարանիլ»: Սուլթանական կառավարությունը պետք է վերացնի քուրդ բեգերի կողմից հայերից բռնագանձվող անօրինական հարկերն ու պարհակների կատարումը: Հայկական ազգաբնակչության վերաբերյալ սրատասխան նոտայում բերված տվյալները հայոց պատրիարքի ցույց տված տվյալների համեմատ այնքան փոքր են, որ համոզեցուցիչ չեն: «Ամենակարևոր է,— ասվում է վեց պետությունների կոլեկտիվ նոտայում,— առանց մամանակի կորստեան՝ իրականացունել այն բարենորոգումներն՝ որ յատկացեալ են Հայոց կեանքն ու ինչքը ապահովելու, ձեռնարկել անմիջապէս բըրդաց ասպատակութիւնները դադարացնելու միջոցներուն, գործադրել անյատյող ելմտական նոր կազմութիւն, աւելի դո՛ւստացիլ կացութեան մը վերածել՝ առժամանակեայ կերպով, պինակիր պահնորդութիւնը, և մանաւանդ պարզեւել ընդհանուր կառավարչաց աւելի կայուն իշխանութիւն մը և ընդարձակագոյն պատասխանատուութիւն»<sup>64</sup>:

Կոլեկտիվ նոտան արատաքուստ ցույց է տալիս եվրոպական պետությունների համերաշխ քաղաքականությունը հայկական հարցում: Այն ուներ սպառնացող տեսք և սկզբունքային բնույթ: Հայ ժողովրդի «հովանավորողները» թուր էին շաշեցնում և երկնքից հուր ու կրակ թափում սուլթանական կառավարության գլխին: Իրականում նոտայի տողամեջերում կարդացվում է, որ եվրոպական կառավարությունների միջև համերաշխություն չկար, սպառնալիքը թվացողական է, իսկ սկզբունքայնությունը՝ փոխարինված շահամոլություն: Այդ էր պատճառը, որ նոտան ավարտվում է «ստոսագրեալ կրկուսիբեն միւս անգամ ևս Բ. Գոան ուղարարիւնը (ընդգծումը մերն է— է. Բ.) սա էական իրողու-

<sup>64</sup> Ան., Հայոց հարցի վավերագրերը, էջ 137:

թեան վրայ, որ հայարնակ նահանգաց մէջ մուծանելի բարենորոգմունք, պարտին լինիլ համապատշաճ տեղական և դործադրուիլ ընդ հսկողութեամբ տէրութեանց...»<sup>65</sup>, փոխանակ նախատեսելու կոնկրետ միջոցառումներ ու սպառնալու սուլթանական կառավարութեանը, եթե նա շարունակեր ձյձղել Հայաստանում բարենորոգումների իրագործումը:

Թուրքական կառավարութիւնը հասկացաւ այդ և 1880 թ. հոկտեմբերի 3-ին Եվրոպական պետութիւնների կոլեկտիվ նոտային պատասխանեց իրիստ սուլթանական ձևով, որը շատ հուսադրող էր, բայց կոնկրետ ոչինչ չիոստացող: Այն ուներ գրգռիչ բնույթ: Սակայն մեծ տերութիւնները դրա դեմ չբողոքեցին: Հետևաբար նրանց աղմուկը հայկական հարցի շուրջը ձևական էր, Թուրքիային սպառնացող նոտաները՝ թղթե կոմեդիա, իսկ սուլթանական կառավարութեան խոստումները՝ սին: Դրանից հետո սուլթանն իր ձեռքերն ազատ է զգում հայկական ռեֆորմների շինարարական հարցում, իսկ Արեղին փաշան Կ. Պոլսի անգլիական դեսպան Գոշենին հեզնանքով ասում է, որ Անգլիային քաջ հայտնի է, թե որքան ժամանակ է անհրաժեշտ իռլանդական դժվարութիւնները<sup>66</sup> հաղթահարելու համար, մինչդեռ դժվարութիւնները Փոքր Ասիայում 15 անգամ մեծ են, քան Իռլանդիայում<sup>67</sup>:

Անգլիական կառավարութիւնը, շարունակելով հայկական հարցն իր սպեկուլյատիվ նպատակների համար օգտագործել, մեկ անգամ ևս այն բարձրացրեց 1881 թ. հունվարի 12-ին: Արտաքին գործերի մինիստր լորդ Գրենվիլը շրջաբերական ուղարկեց Բեռլինի, Հոոմի, Պետերբուրգի, Վիեննայի և Փարիզի իր դեսպաններին՝ պահանջելով մեծ տերութիւնների ուշադրութիւնը նորից հրավիրել հայկական հարցի վրա, սակայն շղատվ համապատասխան արձագանք: Անգլիայի այս անդամվա «հայասիրական» քայլը նույնպես պլատոնական էր: Դրանից հետո անգլիական կառավարութիւնը նո-

<sup>65</sup> Ան, Հայոց հարցի վավերագրերը, էջ 187:

<sup>66</sup> Արեղին փաշան նկատի ուներ իռլանդացիների ազգային-ազատագրական պայքարը, որն ընդմիջումներով շարունակվում էր ափելի քան 200 տարի: Անգլիան հրաժարվում էր բավարարել իռլանդական ժողովրդի պահանջը՝ տալ համասլ (ինքնավարութիւն):

<sup>67</sup> Տե՛ս «Правительственный вестник», 1880, № 154.

րից լուեց: Երա երկայստե լուծվոնը ու հայկական հարցի գոյութեան «մտաացութեանը» բացատրվում է նրանով, որ 1882 թ. օգոստոսին Անգլիան օգտագործեց «Եգիպտոսը եգիպտացիների համար» եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը և օկուպացրեց այն: Գլադստոնը, որպեսզի տեղիք չտար եվրոպական խոշոր պետութիւնների բողոքին, փարիսեցիաբար հայտարարեց, թե անգլիացիները «Եգիպտոսում են ոչ թե որպես տերեր, այլ որպես եգիպտական կառավարութեան բարեկամներ»: Եգիպտոսն Օսմանյան կայսրութեան բաղկացուցիչ մասն է, օկուպացիան՝ «ժամանակավոր»<sup>68</sup>: Կ. Պոլսի անգլիական դեսպան Դուֆֆերեն, որին տեղափոխեցին Եգիպտոս, հասարակական կարծիքը մուրեցնելու նպատակով, բազմիցս հայտարարեց. «Անգլիան ամենևին դիտաւորութիւն չունի իւրացնել Եգիպտոսը»<sup>69</sup>: Երականում Եգիպտոսը գաղութացվեց, խեղիվը դարձավ Անգլիայի մարիոնետը, իսկ անգլիական բանկիրների դրածու լորդ Կրոմերը՝ երկրի իսկական ղեկավարը: Անգլիան, իշխելով Զիբրալթարում և ամբանալով Սուեզի ջրանցքում, իր ձեռքը վերցրեց Միջերկրական ծովի ելքի ու մուտքի բանալիները և այնտեղ փաստորեն հաստատեց իր հեգեմոնիան: Կ. Մարսըր, դատաւարատելով ու անարգանքի սյունին գամելով անգլիական դաղութարարների քաղաքականութեանը, գրել է. «Երոք, կարո՞ղ է արդյոք լինել այլեւի անամոթ և կեղծ-բարեպաշտական նվաճում, քան Եգիպտոսի նվաճումն է, նվաճում, երբ տիրում է խոր խաղաղութեան»<sup>70</sup>:

Ամենապահանջողական բուրժուական «Times» լրագիրը Եգիպտոսի օկուպացիայի առիթով գրել է, որ եգիպտական հարցը լուծելու համար Անգլիան դաշնակիցների կարիք չունի: Անգլիան չի կամենում Եգիպտոսը միացնել իրեն, բայց նա ցանկանում է կառավարել այն բնդհանուր շահերի համար: Դրա համար Անգլիային հարկավոր չէ «Եվրոպայի ուղարմած գործակցութեանը»<sup>71</sup>: Անգլիական իմպերիալիզ-

<sup>68</sup> «История XIX века», под ред. Лависса и Рамбо, т. 8, М., 1939, стр. 28.

<sup>69</sup> «Մշակ», 1882, № 220:

<sup>70</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 35, стр. 353.

<sup>71</sup> «Մշակ», 1882, № 185:

մի դադարափարսիս Մ. Մակ-Կոլը, որն արդարացնում է Եզիպտոսի նվաճումը, նույնպես դեմ է Եզիպտոսի վրա եվրոպական խոշոր պետությունների վերահսկողության սահմանմանը: Նա դրում է, որ աստված Եզիպտոսին հեռու պահի եվրոպական պետությունների համերգից, մանավանդ վերջին տասնամյակներում Թուրքիայի վրա նրանց հսկողությունը սեփականուց հետո<sup>72</sup>:

Թուրքական կառավարության բոլոր փորձերը անգլիական կառավարության հետ վարել բանակցություններ և վերականգնել իր սղոցեցությունն ու իրավունքները Եզիպտոսում, Գլադստոնի կողմից հանդիպեցին ուժեղ դիմադրության: Վերջինս ոչ միայն չի ցանկանում ճանաչել սուլթանի իրավունքները Եզիպտոսի վրա, այլ նույնիսկ սպառնում է նրան, հրահանգեելով՝ եթե սուլթանը շարունակի բարձրացնել եզիպտական հարցը, ապա ինքն էլ կբարձրացնի չայկական ռեֆորմների հարցը:

Թուրքական կառավարությունը հարկադրված հաշտվեց Եզիպտոսի՝ անգլիական նվաճման հետ, որպեսզի վերջինս նորից չբորբոքեր չայկական հարցը: Հենց դրան էլ ձգտում էին անգլիական գաղութարարները: Ահա բուրժուական Անգլիայի «հայասիրական» քաղաքականության գաղտնիքը և նրա վերծանելու բանալին: Անգլիական կառավարությունը հասավ նպատակին և մինչև 1887 թ. «տեր» չկանգնեց հայաց դատին:

1887 թ. չայկական հարցի նորից բարձրացնելը բացատրվում է նրանով, որ Անգլիան ցանկանում էր Ռուսաստանի ուշադրությունը Միջին Ասիայից ու Աֆղանստանից շեղել գեպի Մերձավոր Արևելք: 1870—1880-ական թվականներին Անգլիայի ու Ռուսաստանի միջև ուժեղ պայքար էր գնում այդ երկրների տիրապետման համար: Դեռևս 1868—1874 թթ. Գլադստոնի կաբինետը առաջ քաշեց Միջին Ասիան ու Աֆղանստանն անգլո-ռուսական ազդեցության ոլորտների բաժանելու հարցը<sup>73</sup>, բայց համաձայնության չեկան: Պրա-

<sup>72</sup> Տե՛ս M. Мак-Колль, Султан и державы, էջ 319.

Տե՛ս նաև «Մշակ», 1882, № 206:

<sup>73</sup> Տե՛ս R. Seton-Watson, Britain in Europe 1789—1914. Cambridge, 1937, էջ 50

նից հետո Անգլիան ավելի ուժեղացրեց բանսարկութիւնները և հրահրեց ներքին պատերազմներ՝ Աֆղանստանը թուլացնելու և նվաճելու նպատակով: Բայց երբ այդ էլ արդյունք չտվեց, նա սկսեց բացահայտ նվաճողական պատերազմ (1878—1880 թթ.), որն ընթանում էր փոփոխակի հաջողութիւններով: Բիքոնսֆիլդի կառավարութիւնը հարկադրված համաձայնվեց լիբերալների օպոզիցիայի հետ, որը կառավարութիւնից պահանջում էր աֆղանների հետ գործ ունենալիս օդտագործել «թալշե ձեռնոցներ»: Այդ խոստում էր սպին մասին, որ անգլիական ղիրքերն Աֆղանստանում շատ թույլ էին և «բրիտանական առյուծը այնքան հիվանդոտ», որ աֆղանները համարձակվում էին շլսել նրան<sup>74</sup>:

Հետագա տարիներին իմպերիալիստական Անգլիան շարունակեց իր ագրեսիվ քաղաքականութիւնը Աֆղանստանի դեմ և այն արդարացնում էր ռուսական ագրեսիան ուռձացնելու ու ցարիզմի կողմից Հնդկաստանին սպառնալու պատրրվակով: Անգլիան հաստատակամորեն վճռել էր, ինչ դնով էլ ուզում է լինի, ամբանալ Աֆղանստանում: «Բարեկարգութեան մասին հայտարարող, — գրում է Սոլսբերին յորդ նորոգրութիւն, — երկրօրնոյ: Երեսի միակ երկիրը (Աֆղանստանը և Ք.) թույլ չի տալիս մեր ներկայացուցչին իր տերիտորիան ... Ես համաձայն եմ ձեր կարծիքի հետ, որ ռուսական հարձակումը Հնդկաստանի վրա հանգիստանում է ցնարք: Բայց ես համոզված եմ, որ Աֆղանստանը նվաճելը հավանական է»<sup>75</sup>: Միաժամանակ անգլիական կառավարութիւնը Աֆղանստանին հրահրում էր ցարական Ռուսաստանի դեմ պատերազմի, որպեսզի վերջինս շտաբանար Միջին Ասիայում և իր ազդեցութիւնը շտաբաժեր Հնդկաստանին ստանձանամերձ Աֆղանստանում: Էմիր Աբդուռահմանը հասկացով, որ խարդախ Ալբիոնը ցանկանում է Աֆղանստանը դարձնել իր հակառուսական քաղաքականութեան կուլը գործիրը, խուսափեց անգլիական ղիվանագիտութեան լարած դավերից: Անգլիայի ակտիվ քաղաքականութիւնը Աֆղա-

<sup>74</sup> Տե՛ս «Вестник Европы», октябрь, 1878, էջ 435.

<sup>75</sup> Դ. Cecil. Life of Robert Marquis of Salisbury, London, 1931, vol. 2, էջ 71.

նրստանում և ձգտումը իր ազդեցությունը տարածել Միջին Ասիայում, ծայր աստիճանի լարեցին անգլո-ռուսական հարաբերությունները: Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը գրել է. «1885. Մազ է մնացել, որ Ռուսաստանը պատերազմ սկսի Անգլիայի դեմ: Կողոպտում («բաժանում են») Միջին Ասիան (Ռուսաստանը և Անգլիան)»<sup>76</sup>:

Սակայն, երբ 1887 թ. ճշտվեցին Ամու-Դարիայից մինչև Զուլֆագար անգլո-ռուսական տիրույթներն ու ազդեցության շրջանները և Անգլիան Աֆղանստանի արտաքին քաղաքականության վրա սահմանեց իր հսկողությունը, նա դարձյալ «մոռացավ» հայկական հարցի գոյությունը, մինչդեռ այն մնում էր բաց հարց, 61-րդ հոդվածը՝ մեռած տառ, սուլթան Զուլումի ձեռքերն էլ աղատ, և նա անպատիժ շարունակում էր իր արյունաբերու քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում: Մինաս Զերապր, բնորոշելով կացությունը, միանգամայն իրավացիորեն ու դիպուկ գրել է.

«Հայաստան կուղէ ճար,  
Անգլիան կուտայ ճառ»<sup>77</sup>:

Երբ Անգլիան իրագործեց իր նվաճողական պլանները, հասարակական-քաղաքական ու պետական գործիչները արևելյան հարցի մասին խոսելիս փոխեցին իրենց տոնը: Նրանք ասում էին, որ հայկական հարցում հաջողության կարելի է հասնել, եթե մեծ տերությունները գործեն միասնաբար: Անգլիան չի կարող իր վրա վերցնել ամբողջ Եվրոպայի պատասխանատվությունը: Այդ նշանակում է, որ ժամանակավորապես վերացել էին այն դրդապատճառները, որոնց համար Անգլիան բարձրացնում էր հայկական հարցը: Անգլիական գործիչների կողմից հայկական հարցի բարձրացումը շատ ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, քանի որ նրանց միջամտությունը Թուրքիայի ներքին գործերին ավելի էր զրգոում սուլթանի դմին հայերի դեմ, սրում քաղաքական միջնորդարը և ուժեղացնում հայկական բնակչության հետապնդումը: Սակայն բուրժուական Անգ-

<sup>76</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 843:

<sup>77</sup> Մ. Չեռագ, Ազգային խնդիրներ, Փարիզ, 1917, էջ 27:



լիան անտարբեր էր արևմտահայության տառապանքների նկատմամբ: Երբ 1888 թ. մարտի 29-ին Լոնդոնի հայկական համայնքը և ապրիլի 30-ին Վանի հայերը դիմեցին անգլիական կառավարությանը, խնդրելով նրան օգնել ու պաշտպանել արևմտահայերին, Սուլթերիի կառավարությունը ոչ միայն չկատարեց նրանց խնդրանքը, այլև դատապարտեց նրանց՝ մեղադրելով հեղափոխական շարժումների կազմակերպման մեջ և արգարացրեց սուլթանական կառավարության հայ ժողովրդի նկատմամբ գործադրած բարբարոսությունները<sup>75</sup>:

Սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության ուժեղացման հետևանքով Արևմտյան Հայաստանում դատակարգային ու ազգային-ազատագրական պայքարն ավելի սրվեց: Այդ պայմաններում ուժեղացան ադիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքները, հիմնրվեցին դադանի ընկերություններ և կազմակերպվեցին կամավարական ջակատներ: Հաճախակի դարձան ժողովրդական նախամները: Սուլթանիցմի դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարում այս ժողովուրդը սղեշնչվում էր բաղկածուն և մյուս երկրների ժողովուրդների, նաեկապեա բուլղարների, ազատագրական պայքարի օրինակով: Բուլղար ժողովրդի ներստական պայքարի ազդեցությունն այնքան մեծ էր, որ այն իր արտացոլումն էլ դաել հայերի կազմած խնդրագրերում: 1876 թ. շորս հուլիս արևմտահայեր կաթողի՛նսին հղած խնդրագրում պահանջում են անհապաղ օգնություն կազմակերպել ժողովրդի պրոթյունը բարեկամելու նամար, հակառակ դեպքում, ասված է խնդրագրում, մտադիր են բուլղարների օրինակով ապստամբել: Իրենց աչքի առջ է բուլղարների փորձը, նրանց օրինակով իրենր էլ արյուն կլնափեն և դեն կշարտեն թուրքական ստրկական լուծը<sup>76</sup>:

հայկանյան ժողովուրդների ազատագրական պայքարը սղեշնչել է նաև սրեկյահայերին: 1894 թ. գեկտեմբերի 1-ին

Տե՛ս Հ. Պ. Վաղանյան, Արևմտահայերի ազատագրության նախըր, ՀՍՍՀ ԳԱ նրատ., 1967, էջ 125—126:

<sup>76</sup> Տե՛ս ՀՍՍՀ Մատենագարան, Կաթողիկոսի աղիիվ, 1876, թղիտպանակ, 282, փ. 23:

Գանձակի (ներկա Կիրովաբադի) հայ հասարակությունը, դիմելով կաթողիկոսին, գրել է, որ հայ ժողովուրդը գիտի բալկանյան սարկացված ժողովուրդների օրինակը, որոնք այժմ ազատագրված են թուրքական լծից: Նրանց պատմությունը խրախուսում է և կոչ անում շնուսահատվել ամենօրյա իրադարձությունների տպախորություններից: Ընդհակառակը, նա մեզ քաջալերում է և սգեշնչում<sup>80</sup>: Պաշտոնական դրույցի ժամանակ Կ. Պոլսի պատրիարք Մ. Օրմանյանը ուսական դեսպան Նելիգովին ասում է. «Հույների օրինակը երիտասարդներին հարկադրում է մտածել, որ Թուրքիայից միայն ուժով ու արյունով կարելի է հասնել որևէ արդյունքի»<sup>81</sup>:

Բայց հայ ժողովրդի ազատագրական պայքարի վրա ամենից ուժեղ ու անմիջական ազդեցություն է ունեցել ուսական պրոլետարիատի ու գյուղացիության ազատագրական հեղափոխական պայքարը, ուս հեղափոխական դեմոկրատների ու սոցիալ-դեմոկրատների դադափարախոսությունը: Այդ ազդեցությունը բացատրվում է ուսական ինքնակալական կարգերի դեմ ուղղված պայքարի առաջադիմական ու դեմոկրատական բնույթով: Բացի այդ, Ռուսաստանում կրթություն էր ստանում հայ երիտասարդության մի զգալի մասը, որը յուրացնում էր ուս առաջադիմական գաղափարները և տարածում Հայաստանում:

Թուրքական կառավարությունը հակահայկական քաղաքականության անցկացման ժամանակ ճարպկորեն օգտագործում էր նվրոպական մեծ տերությունների ներքին հակասությունները, մերթ մերձենում մեկին, մերթ՝ մյուսին, հատկապես Գերմանիային, և ռեֆորմները կենսագործելու, հայ ժողովրդի դրությունը բարելավելու փոխարեն անցկացնում հայկական հարցը հայերին բնաջնջելու միջոցով լուծելու կուրսը: Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Տիսսոյի հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթանը ցինիկորեն ասում է, որ որոշել է հայկական ռեֆորմների ժամկետի ու իրագործման եղանակի հարցում իրեն ազատ զգալ: Եվրոպական պետու-

<sup>80</sup> Տե՛ս ՀՊԿՊԱ., ֆոնդ 56, դ. 46, Բ. 3:

<sup>81</sup> АВПР, ф. «Канцелярия», 1897, д. 30, л. 212—213. Нелидов-Муравьеву, 11 марта 1897, № 40.

Սլյունները շեանոգորական շարքի լուծումից հետո պետք է հրաժարվեն կեսի, Հայկի կամ Արամի թոռների օգտին Թուրքիայի վրա ճնշում գործադրելուց<sup>82</sup>։

1880-ական թվականներից «Թուրքական ժառանգության» համար մղվող պայքարին սկսեց ակտիվ մասնակցել նաև նորաթուխ դեմանական կայսրությունը, որն իր քաղաքականութունն արգարացնում էր Արևելքում «քաղաքակրթություն» տարածելու պատրվակով։ Այդ գաղափարն առաջ էին բաշել դեռևս 1840-ական թվականներին բուրժուական արևմտեանողտները։ Այն ժամանակ, նշել է Կ Մարքսը, «Պրուսիան եվրոպական պետությունների կառանիվի հինգերորդ ճաղն էր»<sup>83</sup> և «սղորմելի մեծութուն»<sup>84</sup> Թուրքիայի ճակատագրին վերաբերվող շարքերի լուծման ժամանակ 1885 թ. ավրստրիական տնտեսագետ Ե. Պեկցը իր «Գերմանիայի սոցիալական կարիքը և Արևելքը» գրքույկում գրում էր, որ յուրաքանչյուր քաղաքակիրթ ազգ իր միսիան ունի։ Անգլիան պետք է «քաղաքակրթի» Հնդկաստանն ու Ավստրալիան, Ֆրանսիան՝ Հյուսիսային Աֆրիկան, Ռուսաստանը՝ Առաջավոր ու Միջին Արևելքը։ Նա պահանջում էր, որ Գերմանիան չիմենի գանուրչան նախադնայության բնկերություն, մինչև Հնդկաստան կասուցի երկաթուղի, Արևելքը դարձնի դեմանական արևատանոց, բնակչության «ավելորդ» մասից Բարելոնում ստեղծի գաղութ, որպեսզի Գերմանիան ազատվի «ստիպած պրուկտարիատից»։ Իր նպատակին հասնելու համար հեղինակն առաջարկում է ջախջախել Ռուսաստանը, ոչնչացնել նրա կողմից Արևելքի ճանապարհին բարձրացրած շինական պարիսպները, նվաճել Կոստանդնուպոլիսը և արևմելյան երկրների հետ ստեղծել լայն կապեր<sup>85</sup>։ Կոստանդնուպոլիսը, որի դերն ու նշանակությունը պատկերավոր ձևով նկարագրելով Կ. Մարքսը ասել է, «Արևելքի ու Արևմտարի միջև սակե կամուրջն է» և «արևմտյան քաղաքակրթությունը արևի նման չի կարող շրջապատույս կատարել

<sup>82</sup> Տե՛ս «Московские ведомости», 1880, № 269.

<sup>83</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 34, стр. 218.

<sup>84</sup> Նույն տեղը, տ. 10, стр. 138.

<sup>85</sup> Տե՛ս А. Peetz. Deutschlands soziale Noth und der Orient, Frankfurt a/M., 1855, էջ 24—25.

երկրագնդի շուրջը, շանցնելով այդ կամուրջը»<sup>86</sup>, վաղուց էր հրատարում կապիտալիստական պետություններին:

Գերմանիայի վերամիավորումից հետո էլ ավելի ուժեղացավ շովինիզմի մոլուցքը և «Drang nach Osten» («բռնն գրոհ դեպի Արևելք») քաղաքականության պրոպագանդան, սրբ պուգակցվում էր բացահայտ ոռուսացաց կուրսի հետ: 1870-ական թվականների սկզբին Կ. Ֆրանցը առաջարկում է, որ «քաղաքակիրթ Եվրոպան», հանձին Գերմանիայի, ուսններին պետք է Արևելք շարտի Դվինա ու Դնեպր գետերից, իսկ թուրքերին՝ Կաստանդնուպոլսից<sup>87</sup>: Գերմանիայի ազրեսիվ քաղաքականության պրոպագանդան իր գաղաթնակետին հասավ 1890-ական թվականներին՝ կապված պանգերմանական միության գործունեության հետ: Գերմանական նացիոնալիստ Դե Լազարդը (Բևտախները) կոչ է անում գրավել Ալստրու-Հունգարիան, հիմնել դանուբյան միապետություն, կազմակերպել գաղութներ, սահմիլյացիայի ենթարկել սլոնակի հունգարներին ու սլավոնական ժողովուրդներին, որոնք, ըստ հեղինակի, Եվրոպայի համար ավելյարդ բեռ են: Գերմանիայի սահմանները Լյուրսեմբուրգից հասցնել Մեմել, Աե ծովի ափերը, Տրիեստ, Փոյքը Առիա և նրանից էլ հարավ<sup>88</sup>, Հետագայում գերմանական շովինիստներից այս գաղափարը ժառանգեցին ֆաշիստները, Չ. Լիստին անվանելով «Արևելքի մարդարև», իսկ Դե Լազարդին՝ իրենց հոգևոր նախակազմավոր:

Ալստրիական հրադարակախոս, մարանչոզ պանգերմանիստ և անտիսեմիտ Դե Ննն առաջարկում է Գերմանիայի դիտալորություններ ստեղծել դանուբյան կոնֆեդերացիա, գրավել Եվրոպան, բացառությամբ Անգլիայի ու Ռուսաստանի, Բալկաններում ու Մերձավոր Արևելքում հաստատել տնտեսական ու քաղաքական հեղեմոնիա: Նա Անգլիայի ու Ֆրանսիայի կապիտալի գործունեությունը թուրքիայում համարում է կոռւթանարար, իսկ սուլթանից նրանց պահանջած արտա-

<sup>86</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 240.

<sup>87</sup> Տե՛ս К. Franz. Die Naturlehre des Staates, als Grundlage aller Staatswissenschaft. Leipzig und Heidelberg, 1870, էջ. 442—458.

<sup>88</sup> Տե՛ս Paul de Lagarde. Deutsche Schriften, Göttingen, 1892, էջ 111—112.

բասա զեղեցիկ սեփորմենների իրագործումը՝ երկրի ֆինանսական ու տնտեսական դրուժյան համար, վնասակար, մինչդեռ ավսարո-գերմանական կապիտալի ներթափանցումը Թուրքիա՝ դիտում բարեկործական և ստեղծարար, որի շնորհիվ, ըստ հեղինակի, կրարգավաճի ույն: Ավսարո-Հունգարիային ու Գերմանիային նա հայտարարում է Թուրքիայի անկեղծ բարեկամներ, որոնք շահագրգռված են վերջինի քաղաքական անկախությամբ ու տնտեսական ծաղկմամբ: Գեհնը խնդիր է գնում, որ Գերմանիան միջամտի արևելյան նարցում՝ երևելով Բալկաններում և Անատոլիայում զերմատակուն զաղութներ իմնադրելու ազրեսիվ պլանից: Այդ ապրտակով նա ստաջարկում է Թուրքիա ուղարկել զերմատակուն շինախմբիներ, սպաներ, կասուցել այնտեղ երկաթուղիներ, որոնք Գերմանիան ուղիղ գծով Փոքր Ասիայի, Միջագետքի և Երանի վրայով կմիացնեն Հնդկաստանին, առանձնապես շեշտը գնելով Եվրոպայից Պարսից ծոց երկաթուղազեմ կասուցելու վրա, որը կապահովեր ավսարո-գերմանական տնտեսական ու քաղաքական մենաշնորհը Բալկաններից մինչև Երան<sup>89</sup>:

Հատուկ ուշխատություններով հանգես են պայրտ արևելազես ձե. Շտրենդերր<sup>90</sup> և Քյոլնի արդյունաբերող Կոնհենր<sup>91</sup>: Նրանք գտնում են, որ Գերմանիան պետք է գաղութացնի Մերձավոր Արևելքը, հատկապես Միջագետքը, որը շեղես չի նվաճված մյուս խոշոր պետությունների կողմից, բույի ույղ, գաղութացման համար Առաջավոր Ասիան ունի շատ արգավանդ հողեր, բարենպաստ կլիմա, ոռոգման սխտակի ստեղծման հեանկարներ, առատ հումք, սուտորի գաղաշյման ու կապիտալ ներդրումների լայն հնարավորություններ: Նրանք գտնում էին, որ Օսմանյան կայսրության

<sup>89</sup> Տե՛ս P. Dehn. Deutschland nach Osten!, T. I, München und Leipzig, 1886.—1890, Deutschland und die Orientbahnen. München, 1883.

<sup>90</sup> Տե՛ս A. Sprenger. Babylonien das reichste Land in der Vorzeit und das lohnendeste Kolonisationsfeld für die Gegenwart. Heidelberg, 1886.

<sup>91</sup> Տե՛ս H. Loehnis. Beiträge zur Kenntnis der Levante. Leipzig, 1882.

մասնատման գեոլոգում Գերմանիան պետք է ստանա «թուրքական ժառանգությունից» առյուծի բաժինը:

1880-ական թվականներից խոշոր ֆինանսիստների, արդյունաբերողների և ռազմամուլ շրջանների ճնշման տակ գերմանական կառավարությունն ավելի կոնկրետ է դնում թուրքիայի տնտեսապես յուրացման հարցը: «Երկաթյա կանցլեր» Բիսմարկի քաղաքականությունն ապրում է տրանսֆորմացիա: Նա սկսում է անցկացնել թուրքիայի հետ մերձենալու, ապա նրան դադարեցնելու քաղաքականություն: Այդ նպատակով դեռևս 1876 թ. նա Կ. Պոլսի դերմանական ներկայացուցչությունը դարձրեց դեսպանություն, իսկ 1880 թ. էլ «գոյարևելյով» տասնյակ շինովնիկներ ու սպաներ, ուղարկեց թուրքիա, նրա վարչական մեքենայի ու բանակի վերակառուցմանն օգնելու պատրվակով: Միաժամանակ արևելյան հարցի օգնությամբ Բիսմարկը ձգտում էր լարել մեծ տերությունների հարաբերությունները, ամրապնդել նորաթուխ գերմանական կայսրությունը, դաշինք կնքել Ավստրո-Հունգարիայի հետ և ձևանալով թուրքիայի անշահախնդիր բարեկամ՝ հարթել գերմանական կապիտալն Արևելք ներթափանցելու ճանապարհ: Արևելյան հարցում Բիսմարկը հաշվենկատ էր և ոչ թե պլատոնական սիրով տարված թուրքիայի նկատմամբ: Գերմանիայի «չեղոք» դիրքը խորամանկ դիվանագիտական խաղ էր և ոչ թե ռեալականություն: Բիսմարկի հայտարարությունը, թե ողջ արևելյան հարցը չարժև պոմերանական զինվորի մի կողոսկր՝ շինծու էր, ոչ անկեղծ:

Գերմանիայի արևելյան քաղաքականության ակտիվացումը համընկավ թուրքիայի՝ Գերմանիայի հետ մերձենալու ձգտմանը: Ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանական կառավարության հարաբերությունները լարվել էին Ռուսաստանի հետ, Բոսնիան ու Հերցեգովինան նվաճելու պատճառով՝ Ավստրո-Հունգարիայի, Կիպրոսն ու Եգիպտոսը դրավելու հետևանքով՝ Անգլիայի, Թունիսն օկուպացնելու համար՝ Ֆրանսիայի հետ: Մանր էր նաև թուրքիայի ֆինանսական վիճակը: Ալսպիսի պայմաններում թուրքիան հույսեր էր դնում Գերմանիայի վրա: Սուլթանը ցանկանում էր Գերմանիայի օգնությամբ մի կողմից՝ հակադրվել կայսրությունը մասնատող պետություններին, իսկ մյուս կողմից՝ ամրապնդել իր գահը:

ճնշել ազգային-ազատագրական շարժումները և որոշ շահով վերականուցել բանակը, որի համար ո՛չ գումար ունեւր, և ո՛չ էլ մասնագետներ: Բիսմարկը, մերձենալով թուրքական կառավարութեան հետ, ձգտում էր պայմաններ ստեղծել դերմանական կապիտալի թուրքիա ներթափանցման, ինչպես և ռուս-գերմանական կոնֆլիկտ ծագելու դեպքում թուրքական բանակը Ռուսաստանի դեմ օգտագործելու համար: Հետեւաբար սուլթանը Գերմանիային դիտում էր որպես փրկիութեան խարիսխ և ցանկանում նրա հետ դաշինք կնքել, իսկ Բիսմարկը՝ թուրքիային նայում էր Գերմանիայի կոնտինենտալ բաղարականութեան տեսակետից, որպես փոխանակութեան մտերադրամ:

Թուրքիայում Գերմանիայի անմիջական քաղաքականութեան անցկացնողներին մեկը 13 տարի թուրքական ծառայութեան մեջ գտնվող գերմանական գլխավոր շտաբի սպա ֆոն դեր Հոլցն էր, որի մասին գերմանական պատմաբան Պ. Հալպարտենը գրել է. «Կոլմար ֆոն դեր Հոլցն արտակարգ փայլուն գեմք է. կեսգիտնական, կեսլինվորական, կիսագերմանացի, կիսաթուրք, կիսաարիստոկրատ, կիսադեմոկրատ, կիսաշտաբական, կիսահետախույզ, բավական կրթված, որպեսպի շիկի շովինիստ, բայց բավական ղինվորական, որպեսզի լինի այն»<sup>92</sup>:

Խորամանկ ու հնարամիտ Բիսմարկը, վարելով ղգույշ քաղաքականութիւն, Թուրքիայի հետ անմիջապես դաշինք չկնքեց և Բեռլինի ռուսական դեսպան Սաբուրովին Թուրքիա սպաների ուղարկելը բացատրում էր Անգլիային հակադրվելով, իսկ անգլիական ու ֆրանսիական կառավարութիւնների հարցադրմանը պատասխանում, որ գերմանական կառավարութիւնը սպաներին չի դործուղել, այլ միայն համաձայնել է նրանց թուրքական բանակում ծառայութեան մեջ մտնելու հետ, այն պայմանով, որ թուրքական կառավարութիւնը չդիմադրի Բեռլինի կոնգրեսի սրտումներին կենսագործմանը<sup>93</sup>: Գերմանիան Թուրքիայի հետ սիրախաղ էր խաղում

<sup>92</sup> Г. Хальгартен. Империализм до 1914 года. М., 1961, стр. 459.

<sup>93</sup> Տե՛ս Н. Нойборн. Deutschland und die Türkei, Berlin, 1926 էջ. 19 և 36.

սուլթանին ու նրա մոտ կանգնած մարզկանց զուր գալու համար, որպեսզի իրագործեր արդյունաբերական-ֆինանսական շրջանների ագրեսիվ պլաններն Առաջավոր Ասիայում: Իր նպատակին հասնելու համար Բիսմարկն օգտագործում է նաև հայկական հարցը: 1881 թ. դեկտեմբերին սուլթանի Բեռլին ուղարկած միտիան, որը Վիլհելմ I-ին հանձնեց թուրքական «Նիշանի—Իմտիալ» շքանշան և նրանից խնդրեց օգնություն մի շարք հարցերի լուծման համար, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու անգլիական ճնշման դեմ պաշտպանություն, Բիսմարկը պատասխանեց, որ Գերմանիան չի ցանկանում, որպեսզի հայկական հարցի լուծման ժամանակ եվրոպական պետությունները սուլթանի նկատմամբ դիմեն հարկադրական միջոցների, ինչպես այդ կատարվեց 1880 թ. Գուլցինոն Չեռնոգորիային հանձնելիս<sup>94</sup>:

Շահագիտական նկատառումներով բանելով հակահայկական դիրք, 1883 թ. սեպտեմբերի գերմանո-թուրքական բանակցությունների ժամանակ Բիսմարկը երկրորդ անգամ հայտարարեց, որ իր կարծիքով սուլթանն Արևմտյան Հայաստանում չպետք է անցկացնի ռեֆորմներ, այն կլցի նրա հեղինակությունը հայկական վիլայեթների բնակչության աչքում և էլ ավելի կբարոյացնի հայկական հարցի լուծումը, քանի որ Հայաստանը բաժանված է երեք տերությունների միջև<sup>95</sup>: Բացի այդ, Բիսմարկը փորձեց հայկական հարցի օգնությամբ հրահրել պատերազմ եվրոպական պետությունների միջև ու Գերմանիայի թշնամի պետություններին ջախջախել մեկին մյուսի ձեռքով: Այդ նպատակով նա ցարական կառավարությանը հրուպուրում էր գրավել «իր տան բանալի» Կոստանդնուպոլիսը, լավ իմանալով, որ եթե Ռուսաստանը մտնի Բոսֆոր, կլարվեն միջերկրածովյան պետությունների, ինչպես նաև Անգլիայի, հարաբերությունները Ռուսաստանի հետ, որը և տեղիք կտա պատերազմի: Բիսմարկի արևելյան քաղաքականության գաղտնիքը պարզ

<sup>94</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“ Bd IV, № 723.

<sup>95</sup> Տե՛ս H. Holborn. Deutschland und die Türkei. Berlin, 1926, էջ 111 - 113. և 116.



էր ուսական դիվանագետներին և նրանք վարում էին գլուխ կուրս ու խոստափում նրա լարած թակարդից:

Քուրքիային մերձենալու նպատակով Գերմանիայի բռնած հակահայկական դիրքը և Արեմտյան Հայաստանում սեփարմներ շանցկացնելու սուլթանի բաղարականութեան պաշտպանութիւնը սղեշնչում էր Զուլումին, որն առանց այն էլ խիստ թշնամաբար էր տրամադրված ինչպես հայերի դեմ, այնպես էլ Քուրքիայում արեմտյան քաղաքակրթութեան սարածման նկատմամբ: Իր հիշողութիւններում սուլթանը գրել է. «Արեմտյան երկրների քաղաքակրթութիւնը մեզ համար մահացու թույն է, որն առաջարկում են մեզ գիվական շարախինդ ձայնով»<sup>96</sup>:

Սուլթանական կոտավարութիւնն իր հայաջինջ քաղաքականութեան իրագործման համար օգտագործում էր քրդական հեծյալ գնդերին, որոնք կազմակերպվել էին ուսթուրրական սահմանները պաշտպանելու պատրվակի տակ: Բացի այդ, նա պրովոկացիան նպատակով «իր գործակալներն էր ուղարկում հայերին քարոզելու խոսվութիւն և զրգելու ապստամբութեան իրենց սանջուղների դեմ»<sup>97</sup>:

Հայ ժողովրդի դեմ բրդերին օգտագործելու փաստը խոստովանել ևն նաև բրդական ավազանու ներկայացուցիչները: Այդ մասին նրանցից մեկն ասում է, որ հայկական հարցը բարձրանալու ժամանակից սկսած սուլթաններն սկսել են բուրդ բեզերիս հետ բարեկամանալ, որպեսզի մեք ձեռքերով Հայաստանը մաքրեն հայերից: Այդ նպատակով գաղտնի աշխատանք է կատարվում<sup>98</sup>:

Հայ ժողովրդին ապստամբութեան հրահրելու սուլթանիզմի բաղարականութիւնը իր արատահայտութիւնն է գտել նաև գեսալանների ու հյուպատոսների գեկուցադրերում: Կարինի ուսական հյուպատոս Վ. Մաքսիմովը հաղորդում է, որ քրիստոնյա բնակչութեան վիճակը տեղում և հարևան Ասսուրի

<sup>96</sup> Sultan Abdul Hamid II. Gedanken und Finnerungen, Tagebuchblätter,—„Nord und Süd“, 1913, Bd. 144, s. 143.

<sup>97</sup> M. Mak-Koalъ. Султан и державы, стр. 250.

<sup>98</sup> Տե՛ս Ա. Քոխմախյան, Մասիս լեռան հարավային ստորոտները, Քիֆլիս, 1882, էջ 51

կազայում ծայր աստիճանի ծանր է: Համիդիեական ջոկատները հայերին բացահայտ «ծեծում, կոշոպտում և հաչհոյում են»<sup>99</sup>: Մյուս զեկուցագրերում հայտնում է, որ թուրքական իշխանությունների տեղական մարմինները ոչ միայն չեն արգելում համիդիեականներին վայրագություններ կատարել, այլև իրենք են միանում վերջիններին, ինչպես Խուլայի կայմակամը: «Ահա միակ պատճառը, որն առաջացրեց Սասունի արյունահեղությունը»<sup>100</sup>: Հայկական ջարդերի ժամանակ իշխանության տեղական մարմինների համիդիեականներին միանալու փաստը հաստատում է նաև Վանի և Մուշի վիլայեթներում ճանապարհորդություն կատարած իսպանացի Խիմենեսը<sup>101</sup>: Սակայն անգլիական կառավարությունը սառնարյուն ձևով դիտում էր Արևմտյան Հայաստանում օրը օրին ծավալվող ողբերգական իրադարձությունները: Եթե 1879—1880 թթ. մարկիզ Սուլբերին օգտագործում էր Բեռլինի տրակտատը և Կիպրոսի կոնվենցիան ու դեմագոգ ձևով սուլթանից պահանջում հայկական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնել, որպեսզի հող նախապատրաստի Եգիպտոսի օկուպացիայի համար, ապա 1889 թ. հունիսի 28-ին, երբ անգլիական շահերը չէին պահանջում այդ պահին միջամտել Թուրքիայի ներքին գործերին, նույն Սուլբերին, պառլամենտում պատասխանելով լորդ Կարնարվոնի հարցին, ասում էր, որ Անգլիան իր վրա որևէ պատասխանատվություն չի վերցրել Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովրդի վերաբերյալ, և, իր կարծիքով, «Անգլիան Թուրքիայի հովանավորը չէ ու չի կարող նրա նկատմամբ խնամակալի իրավունք գործադրել»<sup>102</sup>:

Սուլբերիի այդ պատասխանը անգլիական կառավարության փարիսեցիական քաղաքականության արտահայտությունն էր հայկական հարցում: Անգլիան միշտ երկդիմի ու խիստ շահագիտական քաղաքականություն էր վարում: Այդ տեսակետից տիպական է նաև Ֆինանսների մինիստր Նոր-

<sup>99</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л. 19. Максимов-Нелидову, 13 августа 1894.

<sup>100</sup> Նույն տեղը, л. 29. Максимов-Нелидову, 8 октября 1894. № 420.

<sup>101</sup> Տե՛ս նույն տեղը, Թ. 30:

<sup>102</sup> М. Ролен-Жекмен. *Կրթած աշխատ.*, էջ 46:

կուտի լիվերպուլյան ամպագորգու ճառը: Նա ասում է. «Անգլիայի ձայնը միշտ հնչելու է ճնշված ժողովուրդների օգտին» և իր բոլոր ուժերը կօգտագործի ճնշմանը վերջ դնելու համար, բայց «մենք պարտավոր ենք ամենից առաջ մտածել Անգլիայի շահերի մասին»<sup>103</sup>: Անգլիական կառավարությունը մշտապես խաղում էր երկդիմի ղիվանագիտական նենգ խաղ:

1894—1896 թթ. քաղաքական ճգնաժամը Արևմտյան Հայաստանում հասնում է իր դադաթնակետին: Այն ավելի է բարդանում սովի տարածման հետ, որը սուլթանիզմի քաղաքականությունից հետևանքն էր: Հացի արժեքը բարձրացել էր ավելի քան 12 անգամ: 30 հազ. համիդիականների ու թուրքական իշխանությունների կամայականությունները, ինչպես և մոլեղնոց սովը, շիկացնում էր քաղաքական մթնոլորտը: Այդ կապակցությամբ 1894 թ. փետրվարի 20-ին Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոնը հաղորդում է Փարիզ. «Եթե թուրքական կառավարությունը շարունակի գրգռել անմեղ բնակչությանը, շարժումը կընդգրկի Ասիական Թուրքիայի բոլոր բնակավայրերը և այն ժամանակ Հալեպից մինչև Տրեպիզոն և Անկարայից մինչև Կարին ընկած տարածություններում հանկարծ կարող են տեղի ունենալ այնպիսի իրադարձություններ, որոնք, ամենայն հավանականությամբ, կպահանջեն Եվրոպայի միջամտությունը»<sup>104</sup>: Կամբոնի հաղորդումը համապատասխանում է իրականությանը, քանի որ սուլթանական կառավարությունը փութաջանորեն պատրաստվում էր հայկական ջարդերի կազմակերպմանը: Նա խրախուսում էր քրդերին և մուսուլմանական մյուս ազգություններին հալածել հայերին, սպառնալ նրանց կյանքին, պատվին և բռնագրավել գույքը, որպեսզի առաջացնեն դժպտություններ, հուզումներ և արդարացիներ իր հայաջինջ քաղաքականությունը առաջավոր մարդկության առաջ: Այդ նպատակով սուլթանը համիդիեական հեծելազորի հրամանատարներ նշանակեց ամենահայտնի հանցագործներին՝ Հյուսեին բեգի գլխավորությամբ, որին ժողովուրդը անվանում

<sup>103</sup> «Кавказ», 1878, № 11.

<sup>104</sup> «Братская помощь пострадавшим в Турции армянам». М., 1897, ч. II, стр. 91 и 92.

էր «հրեշ»: Սուլթանն անձամբ ընդունեց համիդիեական հրամանատարներին, ի պատիվ նրանց կազմակերպեց ճոխ ընդունելութուն և Հյուսեին բեգին տվեց փաշայի կոչում: Վերջինս դարձավ «հայերի պատուհասը»: Համիդիեական հրամանատարութունը վերադարձավ Հայաստան, ունենալով սուլթանի հրամանը՝ ամայացնել Հայաստանը<sup>105</sup>:

1894 թ. ամռանը Բիթլիսի (Բաղէշ) վիլայէթի Սասունի կապալում սուլթանի հակահայկական քաղաքականության պեմ լեւնարնակ հայերը ապստամբեցին, դիմելով ինքնապաշտպանության: Սուլթանից սօգտագործեց Սասունի իրադարձութիւնները և արեւմտահայության հուլածման քաղաքականությանից անցավ նրա ֆիզիկական բնաջնջմանը: Կառավարութիւնը ինքնապաշտպանության դիմած շուրջ 2000 պենք կրող սասունցիների դեմ սուլարկում 1, 7—8 հազար պիւլոսը՝ շորրորդ կորպուսի հրամանատար Զեքի փաշայի հրամանատարութեամբ և շուրջ 30 հազ. համիդիեական, որոնք օգոստոսի 3-ին պինդորական փողերի հնչյունների տակ հարձակվեցին Սասունի գյուղերի վրա, օգտագործելով անդամ թնդանոթներ: Հայերն օգտվում են լեւնային տեղանքից և հմտորեն պաշտպանվում: Տղամարդկանց հետ հերետաքար կոչում են նաև կանայք ու պատանիները, կայծքորի հրոցաններով, դաշույններով և բարերով: Նրանց վառեղը շատ քիչ էր<sup>106</sup>:

1894 թ. օգոստոսի 24-ին ընկան սասունցիների վերջին պաշտպանության կետեր Անպոկր և Ֆրֆրաքարը: Սասունի հայերը պարտութուն կրեցին՝ գերազանց ղիճված և ավելի քան քսան անգամ թվապես շատ կանոնավոր բանակի պինդորների ու համիդիեական զորամասերի կողմից: Կառավարության կարգադրութեամբ Սասունում կազմակերպեցին ահաւոր ջարդ: Սպանեցին նրանց, ուլքեր դենքը ձեռքերին մինչև վերջ պաշտպանվում էին, սպանեցին և նրանց, ուլքեր վիրավոր էին, կամ հանձնվում էին հազարողների ողորմածութեանը: Գնդակահարեցին ծերերին, կա-

<sup>105</sup> Տե՛ս М. Мак-Коль. Султан и державы, стр. 247—250.

<sup>106</sup> Տե՛ս АВПР, «Посольство в Константинополе», 1894, д. 3176,

նանց և երեխաներին<sup>107</sup>։ Սասունն օկուպացրած գինձորներն ու համիդիեականները բարբարոսաբար հրկիզում էին գյուղերը, կողոպտում բնակչությանը, տանում կահկարասիքը և գյուղատնտեսական ինվենտարը։ «Հայերը,— հազարդում է Վ. Մաքսիմովը,— 1894 թ. Սասունի ջարդերի ժամանակ կորցրին ամեն ինչ... բոլոր անասունները, գյուղատնտեսական գործիքները, տնային կահկարասիքը և բնակարանները»<sup>108</sup>։

Սասունի ավերումից հետո սուլթանական կառավարությունը շարունակում է հայերի արչունալի կոտորածները մյուս վիլայեթներում, որոնք կրում էին սիստեմատիկ ու կազմակերպված բնույթ։ 1895—1896 թթ. հայկական ջարդեր կազմակերպվեցին Երզնկայում, Մարաշում, Տրապիզոնում, Ուրֆայում, Կարինում, Աղանայում, Մալաթիայում, Շապին-Գարահիսարում, Դիարբեքիրում, Արաբկիրում, Խարբերդում, Թորաթում, Սեբաստիայում, Ամասիայում, Ալյուրնում, Ալնթափում, Ակնում, Կեսարիայում, Վանում, Կ. Պոլսում և ուրիշ շատ վայրերում։ Որոշ տեղերում կոտորածները կրկնվեցին մի քանի անգամ<sup>109</sup>։ Ականտատեաներն ու ժամանակակիցները գրում են, որ «Այդ անցագործությունների ամենատարած օրցիտ կը. սպանություններով խակական հարկեյտություն»<sup>110</sup>։ Արևմտյան Հայաստանում կրկնվում են նաև Թեմուրի շրջանի սարսափները։ Մարզկանց կենդա-

<sup>107</sup> ՏԷՊ АВПР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, лл. 72—75. Свидетельство Мевлиод-ага перед Турецкой следственной комиссией по делу сасунских событий.

<sup>108</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л. 131. Секретное донесение Максимова от 29 апреля 1895, № 197.

<sup>109</sup> ՏԷՊ АВПР, ф. «Посольство в Константинополе», 1896—1897, д. 3184, лл. 195—205. Донесение епархиального начальника в Мусе архимандрита В. Акоюна католикосу М. Хримиану от 26 декабря 1896. Об этом же, В. Максимов-Нелидову, 18 ноября 1895, № 495. Ф. «Посольство в Константинополе», 1895, д. 3179, лл. 143—147. Там же, лл. 254—263. Обращение армянского константинопольского патриарха М. Измирляна к послам европейских держав в Константинополе.

<sup>110</sup> Герцог Аргайльский. *նշված աշխատ.*, էջ 94։

նի-կենդանի թաղում էին կամ նետում կրակի մեջ<sup>111</sup>։ Սուլթանիզմի կարգադրությունը կտաարող հայ ժողովրդի դահիճներ Ձեքի փաշան, Հյուսեինը, Իբրահիմը և զորքերի մյուս հրամանատարները սուլթան Զուլումի կողմից արժանանում են շքանշանների, բարձր պաշտոնների ու դատազան պարգևատրումների<sup>112</sup>։

Սուլթանիզմի կազմակերպած 1890-ական թվականների ջարդերին ղոճ գնացին շուրջ 300 հազ հայ։ Ավերվեցին ու մոխրակույտերի վերածվեցին շուրջ երեք հազար հայկական գյուղեր<sup>113</sup>։ Մոտ հարյուր հազար հայ էլ, ղրկված լինելով տնից ու տեղից և գտնվելով ոչնչացման վտանգի տակ, փախան հայրենիքից և ապաստան գտան Ռուսաստանում, Եվրոպայի ու Ամերիկայի զանազան երկրներում, որտեղ հիմնեցին հայկական գաղութներ<sup>114</sup>։

Եթե ժամանակի առանձին թուրք պատմաբանները խոստովանում էին սուլթան Աբդուլ-Համիդի արյունարբու քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ, ապա ներկայիս պատմաբանները լրիվ ժխտում են այն և փառաբանում սուլթան Զուլումին, որպես իմաստուն պետական գործչի։ «Աբդուլ-Համիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը» աշխատությունում Օսման Նուրին, որը, շնայած միակողմանի է լուսաբանել հարցերը, այնուամենայնիվ խոստովանում է, որ Մուրադ V-ի գահակալությունից հետո ուժեղացան հալածանքները հայերի նկատմամբ, նրանց բաղմիցս խոստացած բարենորոգումներից և ոչ մեկը չկենսագործվեց, Բեռլինի սրահատարի 61-րդ հողվածով նախատեսված ռեֆորմներն անտեսվեցին, խիստ հսկողության

<sup>111</sup> Տե՛ս Ի. Ի. Голобородько. Старая и новая Турция. М., 1912, էջ 250.

<sup>112</sup> Թուրքական կառավարությունը հայկական ջարդերի կազմակերպման վրա առաջին վեց ամսում ծախսեց 5,5 մլն. ֆրանկ և աչքի ընկած գանդուտերներին պարգևատրեց 640 շքանշանով։ Տե՛ս «Անահիտ», 1901, № 3, էջ 65։

<sup>113</sup> Տե՛ս «Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ VI-ի 1945 թվի նոյեմբերի 27-ի դիմումը երեք մեծ տերությունների ղեկավարներ Ի. Վ. Ստալինին, Հ. Մ. Տրումենին, Կ. Խ. էտայիին», «էջմիածին», 1945. նոյեմբեր-դեկտեմբեր։

<sup>114</sup> Տե՛ս «Սովետական Հայաստան», 1945, № 264։

տակ վերցրին հայերին, փակեցին հայկական դպրոցները, հարկերի գանձման ժամանակ սկսեցին դիմել խնստության ու բռնության: Միևնույն ժամանակ քուրդ բեգերն էլ, իշխանության տեղական մարմինների օժանդակության վրա վստահ, մկսեցին գործել իրենց ցանկությունների համաձայն, հայերի վիճակը ծայրաստիճան դժվարացավ, և նրանք «համոզվեցին, որ Աբդուլ Համիդից քաղցրությամբ ոչ մի բան չի կարելի ձեռք բերել»: Հայ ժողովուրդը դժգոհում էր, «արդարև գյուղացիները տանջվում էին, ողբում էին»: Սատունում քուրդ բեգերը «հայերից հարկ էին վերցնում», բացի այդ, հայերը հարկ էին տալիս նաև կառավարությանը, երբեմն մեկ տարում երկու անգամ: Երբ 1892 թ. նրանք հայտարարեցին, որ ի վիճակի չեն հարկ վճարել քուրդ բեգերին և նույն տարում երկու անգամ էլ կառավարությանը, այն ժամանակ կուսակալը որոշեց սասունցիներից վրեժ լուծել նա «բորբոքեց քրդերի մուլեռանդությունը» հայերի դեմ, որի օրինակին հետևեցին Մուշի հարևան վիլայեթների կուսակալները: Կրկնակի հարկերի գանձման ժամանակ հանդիպելով հայերի դիմադրությանը, կառավարությունը ներանց գեմ դորք ուղարկեց: Զինվորները հրկիպում էին դյուղերը և կուսորում բնակիչներին: Քրդերի հարձակումը հայերի վրա, ասում է Օսման Նուրին, ոսնեք երկրորդական նշանակություն, որովհետև իշխանության տեղական մարմինների ձեռքին «քրդերը դարձել էին գործիք»: Մուշի կուսակալի օրինակով գործող Դիարբեքիի կուսակալ էնիս փաշայի գլխավորությամբ Զեմիլ փաշայի բնակարանում հրավիրվում է ժողով և մշակվում հայերի դեմ գործելու վտանգավոր ծրագիր: Ժողովից հետո մղկիթների պատերին փակեցնում են ազդարարություններ, որոնցում ասվում էր, որ հայերը պատրաստվում են հարձակվել մղկիթների վրա, նրանց «պահանջած բարենորոգումը վնասակար է մուսուլմաններին»: Դրանից հետո Դիարբեքիում կաղմակերպվեց հայկական ջարդ<sup>115</sup>:

Ներկայիս թուրք պատմաբաններ Ն. Ֆադիլը և Զ. Դանիշ-

<sup>115</sup> Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», Երևան, 1972, հատ 4, էջ 174—178:

մանք իրենց աշխատություններում, կեղծելով պատմությունը, գովերգում են սուլթան Զուլումին, իդեալականացնում նրա կառավարության ներքին քաղաքականությունը և Աբդուլ-Համիդ II-ին վերագրում մեծ հումանիտար ու խոշոր սեփական գործչի գեր: «Մեծ միապետ Աբդուլ-Համիդ խան» աշխատությունում Ն. Ֆալիլը գրում է, որ նա «ամենաբարի սուլթանն էր, որի նմանն աշխարհը չգիտի»: Հայերի կողմից նրան տրված «արյունոտ սուլթան» անունը հարյուր տոկոսով հակասում է իրականությանը<sup>116</sup>, իսկ Զ. Գանիշմանը ավելի հեռուն է գնում: Նա գրել է. «Այդ վիճակը քաղաքական սուլթանը իր կյանքում մահվան ոչ մի վճիռ չի հաստատել», իսկ «ինչ վերաբերում է իր հպատակների կոտորածների կաղճակերսման հարցին, անհրաժեշտ է ասել, որ Աբդուլ-Համիդն իր ամբողջ կյանքում խուսափել է արյունահեղությունից և ասել է այն»<sup>117</sup>:

Հայկական, ռուսական և օտարերկրյա բոլոր աղբյուրները հերքում են թուրք պատմաբաններ Ն. Ֆալիլի ու Զ. Գանիշմանի հորինվածքները և ցույց են տալիս, որ Աբդուլ-Համիդ II-ը եղել է հայ ժողովրդի դահիճը, և սուլթանի կողմից դադանարար հաշվեհարդար է տեսել անմեղ ու անպեն, խաղաղասեր ու աշխատասեր հայ ազգաբնակչության հետ: Անդամ հայության նկատմամբ թշնամաբար տրամադրված Կ. Պոլսի գերմանական դեսպանը հայկական կոտորածների մասին գրել է. «Տեղեկություններն... այնպիսին են, որ մարդու մտքերը բիզ-բիզ են կանգնում: Կարինի շրջակայքը վերածվել է անապատի և ծխացող ավերակների: Գյուղերը մինչև օրս մասամբ այրվում են: Կարինում գիակները, որոնք չեն շտաղնում թողել, պարզապես մեռում են շնորհիվ ուտելու... Տիպրանակերտի վերջին կոտորածը վերազանցում է բոլորին»<sup>118</sup>, իսկ անգլիական պատմաբան Գրենվիլը գրել է, որ ամենուրեք «օրսում էին հայերին... շինալիլով ոչ

<sup>116</sup> Տե՛ս E. K. Саркисян. նշված աշխատ., էջ 155:

<sup>117</sup> Նույն տեղը:

<sup>118</sup> „Die Grosse i chittk...“ Bd X, № 2457. Զատրվան-ուայխականց-լերին, 11 նոյեմբերի 1895:



կանանց, ոչ երեխաներին, ոչ ծերերին»<sup>119</sup>, միայն Աերֆու-  
լում երեք հազար հայ կանանց, երեխաների ու տղամարդ-  
կանց սղջակիդեցին Լկեդեցում:

Քուրքիայում հայկական ջարդերը պատահականություն  
չէին և ոչ էլ հայ-քրդական ազգամիջյան ընդհարման հետե-  
վանք, ինչպես հրամայում է սուլթանական կառավարության  
վարկածը: Չարդերը սուլթանիզմի կողմից նախօրոք նախա-  
տեսված էին, պլանավորված ու հրահանգավորված: Այդ  
փաստը չափաառում է Կարինի ուսսական չյուպատոս Ա.  
Մաքսիմովը: Իր գեկուցադրում նա ասում է. «Պարտքը նմ  
չամարում գեկուցել, որ սեղաջիններից ու եվրոպացիներից  
ընձ վիճակիել է լսել Սասունի հայերին ալսպես կում  
ալնպես վերջ տալու Բիթլիսի վալիի տրամադրության մե-  
սին»<sup>120</sup>:

Հայկական սկոտորածները պլանավորելու և սուլթանի  
հրամանով կազմակերպելու փաստը հաստատվում է ան-  
գամ Սասունի իրադարձություններն ուսումնասիրող թուր-  
քական բննչական անձնաժողովի աշխատանքի ժամանակ:  
Շարքարննիվոյներից շատերը իրենց ցուցմունքներում ասում  
են, որ ջարդերը կազմակերպվեցին անձամբ սուլթանի կար-  
գադրովյամբ: Քուրքիան շաուշ (Ֆելզֆեբել) Մուստաֆա  
Մուլեյման օղլին իր ցուցմունքում վկայում է, որ Սասունի  
Շենիկ և Սեմալ հայ գյուղերի բնակիչները սպաներին բե-  
շեցին «ոսկի, նոխրներ և խնդրեցին նրանց հսկանավորել  
իրենց», բայց սպաները, կատարելով սուլթանի հրամանը,  
«նրանց ձեռեցին ու բշեցին»: Չորքերի հրամանատարույնու-  
նը իր վրա վերցրեց Մուշից ուղարկված գնդապետ Իսմայել  
բեյը, որի հրամանով քարատուղարները զորքի առաջ վար-  
դացին սուլթանի հրովարտակը, որում ասված էր. «Հայերն  
ապստամբել են նորին մեծության գեմ, և որ անհրաժեշտ է  
նրանց պատժել, նրանց արյունը թափել, որպեսզի այն օրի-  
նակ ծառայի մյուսներին»: Ռրանից հետո Իսմայել բեյը

<sup>119</sup> I. A. S. Grenville. Lord Salisbury and Foreign Policy. The  
Close of the Nineteenth Century, — „University of London Historical  
Studies“. London, 1964, էջ 75.

<sup>120</sup> АВНР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л.  
19. Максимов-Мелидову. 13 августа 1894.

ճառ արտասանեց, որով «զրգոեց ղինվորներին հրկիզել հայկական գյուղերը ու ջարդել խոռվարարներին, ավելացնելով, որ ղինվորները կարող են անել ինչ որ ցանկանան՝ կենդանի ամեն ինչ ոչնչացնելու պայմանով: Այդպիսին է սուլթանի հրամանը»<sup>121</sup>:

Սուլթանիզմի կաննիբրալական քաղաքականությունը հաստատում է նաև Արևմտյան Հայաստանի դաժնազան քաղաքների ուսական հյուպատոսների զեկուցագրերի ուսումնասիրությունը: Կոնիա քաղաքի հյուպատոս, հայկական ջարդերի ականատես Լիվիտսկին հաղորդում էր այնպիսի փաստեր, որոնք ապացուցում են, որ կոտորածները կազմակերպել էր կառավարությունը, իսկ իշխանության տեղական մարմինները ամեն ինչ արել են ջարդերը կազմակերպված անցկացնելու համար: Լիվիտսկին վկայում էր, որ հայկական կոտորածներից մեկ օր առաջ Կեսարիայում և Գյուրունում համիդիեական ջոկատների հրամանատարն իր մոտ էր կանչում հայ կաթողիկեների քահանային և առաջարկում կաթողիկեների տների վրա պայմանական նշան դնել, որպեսզի նրանց ապահովի ոչնչացումից և «կոզոպուտից»<sup>122</sup>:

Լիվիտսկու զեկուցագրից երևում էր, որ, նախ, Կեսարիայի ու Գյուրունի ջարդը նախատեսված ու պլանավորված է եղել, ապա՝ սուլթանիզմը հատուկ նպատակ է ունեցել առաջին հերթին ոչնչացնել հայ-լուսավորչականներին և ոչ թե հայ կաթողիկեներին, որոնք գտնվելով կաթողիկ քահանաների քարոզների ազդեցության տակ, մոլորոթյան մեջ պահպանում էին թուրքական օրինեստայիլա: Այնուհետև ուսական հյուպատոսը նշում է, որ երբ Մեսիֆունի ջարդերի ժամանակ հայ բողոքական քահանան, գիմելով թուրք ղինվորին, հարցնում է, թե ինչո՞ւ նա չի պաշտպանում սպանվող հայերին, վերջինս պատասխանում է. «Դեռևս չի անցել շորս ժամը»: Եվ,

<sup>121</sup> АВІР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л. 98—99. Максимов-Нелидову, 13 августа 1894.

<sup>122</sup> АВІР, ф. «Посольство в Константинополе», 1896—1897, д. 3184, лл. 146—159. Приложение к донесению Ливитского—Нелидову, 14 марта 1896, № 4.

իրոք, չորս ժամից հետո դադարեցին հայերի կոտորածները<sup>123</sup>։

Հայկական բնակչության կազմակերպված ջարդերի թուրքական քաղաքականությունը մերկացվում է նաև Ռիլնի սուլթանական հյուպատոս Ալ. Գիպպիուսի պեկուցագրերի ուսումնասիրությամբ։ Նա հազարգում է Պետերբուրգ, որ 1895 թ. սեպտեմբերի 26-ին առավոտյան ժամը 11-ին Տրապիզոնում սկսվեց հայերի ջարդը։ Սկզբում եղավ երկու ատյուր։ Նաևակից նամուզարկ, որին հաջորդեց զինվորական շեփորների ազդանշանը։ Զարդարարները դուրս եկան փողոց, որտեղ մահմեդական հոգևորականները բարբոքեցին նրանց կրոնական ֆանատիզմը և զրգոեցին հայերի դեմ։ Ժամը 12-ին զինվորական շեփորների երկրորդ ազդանշանով ջարդարարներն սկսեցին հայերի կոտորածը և կողոպուտը, իսկ ժամը 13-ին՝ շեփորների երրորդ ազդանշանով դադարեցրին դապանությունները<sup>124</sup>։

Լիվիտսկու և Գիպպիուսի պեկուցագրերից հստակ երևում է, որ հայկական ջարդերը մահմեդականների կրոնական ֆանատիզմի տարերային բարբոքման հետևանք չէին, ինչպես պնդում է թուրքական պաշտոնական վարկածը, այլ նախօրոք մտածված քաղաքականության արդյունք, եթե ոչ՝ ջարդարարները սրի կբաշեին բոլոր քրիստոնյաներին, ու մյուս այլահավատներին և ոչ թե միայն հայ-լուսավորչականներին։ Հոգևորականության ակտիվ մասնակցությունը, զինվորական շեփորների ազդանշաններով ջարդերի սկսելն ու ավարտելը մեկ անգամ ևս ապացուցում են, որ Տրապիզոնի կոտորածները կազմակերպվել են զինվորական և տեղական քաղաքացիական ու հոգևոր իշխանությունների միացյալ ուժերով ու ղեկավարությամբ։

Սուլթանական կառավարության հանցագործությունը հաստատում են նաև Հալեպից, Սեբաստիայից, Վանից և Կ. Պոլսից ստացված դեսպանական ու հյուպատոսական զե-

<sup>123</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1896—1897, д. 3184, лл. 146—159. Приложение к донесению Ливитского—Нелидову, 14 марта 1896, № 4.

<sup>124</sup> СМ «АВПР, ф. «Посольство в Константинополе», 1895, д. 3179, лл. 113—119. Гиппиус—Нелидову, 6 ноября 1895, № 183.

կուցադրերը: Հալեպի սուսական հյուպատոս Յակիմանովին  
 գրում է. «Ուրֆալի, Ալնթափի և Մարաշի, Ինչպես և Կիսանց  
 շրջակայքի գյուղերի արշունալի կոտորածները, կախելի է  
 ասել, եղան թուրքական կառավարության հրահրմամբ»<sup>125</sup>:  
 Արդ տեղերում, ջարդերի նախօրյակին, տեղական իշխանու-  
 թյունները հայերից հավաքել էին բոլոր զենքերը և բաժու-  
 նել ջարդարարներին, անգամ վերջիններին բաժանել խմբե-  
 րով: Իշխանակելի ղեկավարներ ու պայմանավորվել հարձակ-  
 ման օրը<sup>126</sup>, նույնիսկ փորել էին տվել փոսեր՝ սպանվածնե-  
 րին թաղելու համար, և «Բոլոր նրանց, ովքեր պատկանում  
 էին այս ազգին (այսինքն՝ հայեր էին—Լ. Բ.), անպայման ճո-  
 րտակցին»<sup>127</sup>: Հաճախ դադանարար այլանդակում էին զիակ-  
 նեցը: Զարդերից առաջ մահամեղականների մուկանդուլյունը  
 պրզուելու և նյութապես նրանց շահադրուելու նպատակով  
 իշխանության ներկայացուցիչները հայտարարում էին, որ  
 հայերը սպառնում են մուսուլմաններին, «ջարդեցեք գյատր-  
 ներին և մի վախեցեք ոչ մի բանից», կողոպտեք ու վառեք  
 նրանց տները, հայերի «հարստությունը պետք է պատկանի  
 ձեզ»<sup>128</sup>:

1896 թ. օգոստոսին սուլթանական կառավարությունը  
 բուն մայրաքաղաքում ու նրա շրջակայքում կազմակերպեց  
 հաշկական ջարդեր: Երկու օրվա ընթացքում սպանվեցին  
 ալեկի բան 5500 հոգի, իսկ ընդհանուր զոհերի քանակը Կ.  
 Պոլսում հաշվվում էր ավելի բան 10 հազար: Այդ կոտորած-  
 ների մասին Կ. Պոլսի սուսական ղեկավարա-  
 նան կցորդը գրել է. «Որոշակիորեն ուղաշուրջված է, որ ջար-

<sup>125</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1895, л. 3179, л. 195. Якиманский—Нелидову, 22 ноября 1895, № 105. Об этом же, Шелкунов—Нелидову, 10 октября 1895, № 505. ф. «Посольство в Константинополе», 1895, л. 3179, л. 58. См. также секретное донесение Нелидову из г. Сиваса. ф. «Посольство в Константинополе», 1896—1897, л. 3184, л. 220.

<sup>126</sup> Տե՛ս Մ. Դ. Գուր. Новейшая история Турции и Персии (XVIII, XIX, XX столетия). Тифлис, 1913. Приложение № 7, էջ 50.

<sup>127</sup> „Die Grosse Politik.“, Bd XII, № 2903, Չառուճան-Հոհեկու-  
 ներն, 1 սեպտեմբերի 1896:

<sup>128</sup> «Братская помощь...», ч. II, стр. 52.

դիւրս կաղմակերպել են կառավարութեան կողմից նախօրոք ստեղծված հրոսակները՝ ստիկանական աստիճանավորների ղեկավարութեամբ»<sup>129</sup>։

Քուրքիայում հայերի կաղմակերպված ջարդերի փաստը հաստատվում է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Իդմիրլյանի սուլթանին ուղղած դիմումում, որտեղ նա րոզորում է սուլթանի դմի արշունարքու քաղաքականութեան դմ. «Այդ սճրագործութեանները,— գրել է նա,— եղել են նախապես պղանավորված։ Տեղական իշխանութեանները ոչինչ չարին։ Կամ խրախուսեցին ջարդերն ու կողոպուտը։ Զորքերն էլ մասնակցեցին անկարգութեաններին»<sup>130</sup>։

Սուլթանական կառավարութեանը ողջ աշխարհի առաջադեմ հասարակութեան ատաջ իր բարբարոսական ու կաննիբալական քաղաքականութեանն արդարացնելու համար հորինեց հայերի ապստամբութեան մասին վարկածը և 1894 թվականին ստեղծեց հանձնաժողով «Նետարնելու հայերի հանցագործութեանները»<sup>131</sup>։ Այդ հանձնաժողովի մեջ մտան նաև Անդրիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները։ Քուրքական կառավարութեան բոլոր փորձերն՝ ապացուցելու Սասունի հայերի ապստամբութեանը, օգտագործելով բնակչութեան վրա վարչական ապարատի ճնշումը, վկաներին նախօրոք «մշակելը», միակողմանի հարցաքննութեանը և այլն՝ լրիվ ձախողվեցին։ Քուրքական բննչական հանձնաժողովի աշխատանքների լավատեղյակ ուսական ներկայացուցիչ Պրժևալսկին հաղորդում է, որ հանձնաժողովի գործուղած ջանքերը՝ հերքել վկաների ցուցմունքները և հաստատել, որ Սասունում հայերը իբր թե պինված ապստամբութեան են բարձրացրել և իրենք հրկիզել իրենց գյուղերը, չհաստատվեցին։ Հանձնաժողովի աշխատանքի բնթացքում բաշտահայտվում էր սուլթանի դմի իսկական քաղաքականութեանը, ուստի հանձնաժողովը շտապեց փակել իր նիստերը

<sup>129</sup> АВНР, ф. «Политархив», 1896, л. 3449, л. 184. Доклад русскому военному агенту, 19 августа 1896, № 36.

<sup>130</sup> Սուլթանին ուղղված, л. 63—64. Обращение М. Измирляна, 4 декабря 1895.

<sup>131</sup> АВНР, ф. «Канцелярия», 1894, л. 25, л. 536. Жадовский—Гирсу, 29 ноября 1894, № 157.

Մուշում և տեղափոխվեց Բիթլիս<sup>132</sup>։ Միաժամանակ թուրքական կառավարությունն իր քաղաքականությունն արդարացնելու համար, Փարիզում պահում էր իր գործակալ Ն. Նիկոլայդիսին, որը հրատարակում էր «La Turquie» շաբաթաթերթը։ Վերջինս հատուկ դբադվում էր հայկական հարցով՝ հայերին մեղադրելով սուլթանիզմի դեմ ապստամբության մեջ։ Թուրքական լակեյը հայերին քարոզում էր հույս դնել սուլթան Զուլումի հայրական հողատարության վրա, շուրջստամբել, կապեր շհաստատել Եվրոպական պետությունների հետ՝ օգնություն ստանալու նպատակով։ Հայերի միակ փրկությունը սուլթանի նկատմամբ ունեցած հավատարմության մեջ է, իսկ Եվրոպայի հասարակական կարծիքը մուսուլման մեջ դցելու նպատակով նա գրում էր, որ սուլթանի արդարացի քաղաքականության շնորհիվ Հայաստանի «գաւաւների մէջ աիրում է կատարեալ զոհութիւն, խաղաղութիւն, երջանկութիւն»<sup>133</sup>։ Ն. Նիկոլայդիսը կաշվից դուրս գալով փորձում էր ապացուցել, որ հայկական հարցը շինծու է, սուլթանի թշնամիների սարքած գործը։

Սուլթանիզմի հակահայկական քաղաքականությունը չի պաշտպանվել թուրք և քուրդ աշխատավորության կողմից։ Տարբեր աղգությունների աշխատավորներ իրար հետ ապրել են հաշտ ու խաղաղ։ Սասունի հայերը, որոնք աչքի էին ընկնում իրենց մարտունակությամբ և քաջությամբ, նույնպես «խաղաղ ապրում էին Սասունի քրդերի հետ, լինելով դաշինքի մեջ, նրանց հետ մշտապես օգտվում էին աջնպիսի անկախությունից, ինչպես Վանի վիլայեթի Հեքյարիի և նման այլ վայրերի բնակիչները»<sup>134</sup>։ Անգամ թուրքական բանակի զինվորները փորձում են հակադրվել սուլթանիզմի հակահայկական քաղաքականությանը։ Նրանք կարեկցում են Սասունի հայերին և հրաժարվում կատարել սպանների հրամանները՝ կոտորել հայերին։ 1894 թ. Վանի անդլիական փոխ-

<sup>132</sup> Տե՛ս АВІР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л. 87.

<sup>133</sup> «Մշակ», 1893, № 7։

<sup>134</sup> АВІР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л. 3. Донесение Циммермана Нелидову из Эрзерума, 5 октября 1893, № 324.

Տյուրպատու Գուլվերդը Կ. Պոլսի անգլիական դեսպանին դեկուցում է, որ երբ գեներալ Օսման փառապան զինվորների առաջ կարդում է սուլթանի հրովարտակը, որով պահանջվում էր անմիջապես սկսել հայերի ջարդը Սասունում, «զինվորներն սկզբում չհաշտվեցին դրա հետ, բայց սպաները սպառնալիքով հարկադրեցին նրանց»<sup>135</sup>: Գուլվերդի հաղորդումը համապատասխանում է իրականությունը: Այն հաստատվում է թուրքական քննչական հանձնաժողովին տված Շենիկ գյուղացի Խեբոյի ցուցմունքով: Խեբոն պատմում է, որ երբ սպաները զինվորներից պահանջեցին կատարել հրամանը, նրանք «հրամարվեցին... որի համար ոմանց բանտ նետեցին»<sup>136</sup>: Սասունի բուրդ աշխատավորները հրաժարվում են օգնել թուրքական զորքերին հայերի դեմ: Դրա համար սպաները զինվորներին հրամայում են սպանել հայերին համակրող քրդերին: Այդ կապակցությամբ «Նովոյե վրեմյա» թերթը գրել է, որ Սասունում «տեղական քրդերը հրաժարվեցին աջակցել թուրքերին, որի պատճառով զինվորները կոտորել են բազմաթիվ քրդերի»<sup>137</sup>: Միանդամայն իրավադատներն Մ. Մակ-Կոլլը գրել է, որ հայկական ջարդերը հետևանք չեն մահամեղսականների կրոնական մոլեռանդության, այլ «ամբողջապես կադմոսկերպվել են Յելդզ-Քյոշքի կողմից: Իրականում բոլոր մասնաշախատիկայի ջարդերը թուրքիայում կառավարության, և ոչ թե տեղական բնակչության ձեռքի գործն է... կառավարությունը շարիֆների սկիզբն է ու սկզբնաղբյուրը»<sup>138</sup>: Մի այլ անդամ նա նշել է. «Այդ սարսափելի կոտորածները կատարում են ոչ թե մուսուլմանական գյուղական բնակչությունը, այլ ավազակային ոստիկանությունը (տեղական գյուղական բնակչության հաշվին ապրող) և բանակը, հիմնականում անկանոն բանակը և թափառաշրջիկ գերվիշները, ու աշատվադուրի պաշտոնեությունը, որը սովորաբար աշխատաւճարձ չի ստանում և ապրում է կաշառքներով ու շոր-

<sup>135</sup> АВПР, ф. «Политархив», 1894—1895, д. 3435, л. 155—156.

<sup>136</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3176, л.

90. Приложение к донесению Максимова, 4 марта 1895, № 100.

<sup>137</sup> «Новое время», 8(20) сентября 1894, № 6716.

<sup>138</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 21.

խումբներով՝ քրիստոնյաների վրա ունենալով լրիվ ու բացարձակ իշխանություն»<sup>139</sup>։

Նշելով Քուրբիայում ղանազան աղգուիթյունների աշխատավորների հաշտ ու խաղաղ իրար հետ ապրելու փաստը, միաժամանակ պետք է ասել, որ սուլթանիզմը ճկունորեն կարողանում էր օգտագործել կայսրության մուսուլմանական ժողովուրդների քաղաքական ու կուլտուրական հետամնացությունը, նրանց ղավանանքի տարբերությունը քրիստոնյաների ղավանանքից, մահմեդականների կրոնական ֆանատիզմը, ինչպես և ապագատակարգացնացված տարրերին՝ խուժանին, հայկական կոտորածների ժամանակ։ Քուրբական խուժանը միշտ կույր գործիքի դեր է կատարել սուլթանների ձեռքին և խոչընդոտել հասարակության առաջադիմությունը։ «Քուրբ բնակչության,— գրել է Կ. Մարքսը,— զլխավոր ուժը Եվրոպայում... Կ. Պոլսի և մի քանի ուրիշ քաղաքների խուժանն է։ Նա առավելապես թուրքական ծագում ունի և, չնայած որ նրան բաշխատանք աճողները քրիստոնյա կապիտալիստներն են, նա այնուամենայնիվ համառորեն պաշտպանում է իր երևակայական առավելությունը և արտադիցիոն արտոնությունը՝ անպատիվ էքսցեսներ կատարել քրիստոնյաների նկատմամբ։ Այդ այն խուժանն է, որին պետական ամեն մի հեղաշրջման պեպոսում անհրաժեշտ է կաշառելու և շողորսրվելու միջոցով իր կողմը գրավել... Վաղ թե ուշ բացարձակ անհրաժեշտություն կզգացվի մեր մուլդցամաքի ամենա խասրանը՝ մասերից մեկն ազատել խուժանի տիրապետությունից, խուժան, որի հետ համեմատած հոսմնական կայսրության ժամանակների խուժանը իմաստունների և հերոսների հավաքածու էր հանդիսանում»<sup>140</sup>։

Սուլթանիզմի արմենոցիդի քաղաքականությունը թուրքական իշխող դասակարգերի քաղաքականությունն էր, իսկ արյունարբու սուլթան Զուլուժը՝ նրա մարմնագետը, որն «օգտագործեց ողջ պետական մեքենան, հետադիմական մահմեդական հոգևորականությունը և կազմակերպեց հայ աշ-

<sup>139</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 33.

<sup>140</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, стр. 6—7.



խատասեր ու շինարար ժողովրդի բարբարոսական ջարդը: Միանգամայն ճիշտ է Ռ. Լյուքսեմբուրգը, երբ գրել է. «Մամուլի մի մասում դեռ վերջերս Թուրքիան ներկայացվում էր սրպես հերիաթային մի աշխարհ, ուր «տարբեր ազգությունները դարերով կողք-կողքի խաղաղ ապրում էին», «ամենակատարյալ ինքնավարություն վայելում» և որտեղ միայն եվրոպական դիվանադիտության միջամտությունը արհեստականորեն ստեղծել է դժգոհություն... որը միաժամանակ... խանդարում է տնտեսական սուլթանին իր «քանիցս հավանությունն արժանացած ռեֆորմներին» իրականացնելու: Նման սկզբունքները խարտիված են պայմանների խոր անդիտանկյության վրա»<sup>111</sup>: Իրականում Թուրքական կառավարող շրջանները, որոնք Արևմտյան Հայաստանում անցկացնում էին դադութարարական քաղաքականություն, միշտ օգտագործում էին ժողովուրդների ազգային ու կրոնական տարբերությունները և նրանց հրահրում ու թշնամացնում իրար դեմ, սրպեսզի արգելակեին ազգային ճնշման ու դաժան սոցիալական հարստահարման ենթարկվող ժողովուրդների ազգային ու դասակարգային ինքնապիտակցության բարձրացմանը և նրանց միավորմանը սուլթանական կարգերի դեմ՝ իրենց ախրս սկետությունը հավերժացնելու նամար:

Թուրքական իշխող դասակարգերի պանօսմանիզմի, պանխորանիզմի ու արմենոցիզի քաղաքականության մարմնացնողներն ու անցկացնողները, լինչպես վերը նշվեց, սուլթան Զուլումն էր ու արքունական կամարիլիան, որոնք, որպես արսնոմա, երբեիցև մտադրություն չունեին բարեխափել հայ ժողովրդի դրությունը: Մ. Մակ—Կուլը նշում է, որ Արգուլ-Համիդ II-ը «Մարդկային ցեղի ճիվաղն է», «տասնիններորդ հարյուրամյակի մեծագույն հանցագործն ու մարդասպանը», որը Թուրքիայում ստեղծել էր «տեսորի թագավորություն»: Կասկածամտությունը սուլթանի բնածին հասկությունն էր, նրա վախկոտությունը հավասար էր նրա դաժանությանը: Սուլթանն անգամ Կ. Պոլսի փողոցները հեղեղեց անմեղ հայերի, նույնիսկ կանանց ու ծծկեր կրեխաների արյունով: Մշտապես անպատիժ մնալը, եվրոպական մեծ տերություն-

Ռ. Լյուքսեմբուրգ, նշված աշխատ., էջ 48:

ների կառավարությունների քար լուծությունը սուլթանին ներ-  
շնչել էր համարձակություն, ինչպես մարդկային արյունը  
փորձած վազրին, որը թռչկոտում է իր հանցագործության  
վայրում: «Սուլթանը և նրա ավագակային հրոսակախումբը...  
բոլոր աղեսաների սկզբնաղբյուրն էին»<sup>142</sup>, իսկ աղետները  
բյուրավոր էին ու անվերջ: Միայն 1890-ական թվականնե-  
րին սուլթանիզմի աղետաբեր քաղաքականության հետևան-  
քով Աբևմտյան Հայաստանում ավերվեց 2600 գյուղ ու քա-  
ղաք, կործանվեց 568 եկեղեցի ու վանք, հարկադրական  
կարգով մահմեդականություն ընդունեցին 559 գյուղի բնա-  
կիչներ՝ մոտ 100 հազար հայեր, 328 եկեղեցի վերածվեց  
մզկիթի և 546 հազ. կին ու երեխա այրիացան ու դուրձան  
որբ, մնալով առանց խնամքի<sup>143</sup>:

Նկատի ունենալով վերոհիշյալ փաստերը և ընդհանրաց-  
նելով իր տպավորությունները թուրքիայի վերաբերյալ,  
Մ. Մակ-Կոլլը ճիշտ եզրակացության էր հանդում, որ թուր-  
քիան «բարբարոսական սկսություն» էր, իսկ «թուրքական  
կառավարությունը՝ ամենաբռնակալականը, բոլոր կառավա-  
րություններից ամենագիշատիչը»<sup>144</sup>:

1894—1896 թթ. սուլթանիզմը մտացածին ու պլանավոր-  
ված ձևով ավերեց Հայաստանը, ամայացրեց գյուղերն ու  
քաղաքները, հատկապես այն վիլայեթները, ինչպես հաղոր-  
դում է 1895 թ. դեկտեմբերի 13-ին Կ. Պոլսի անգլիական դես-  
պանը պրեմիեր-մինիստր Սուլթերիին, որտեղ հախատնսչում  
էին անցկացնել սեֆորմներ և, որոնց տերիտորիան ավելի մեծ  
էր, քան Անգլիայինը: Պատահական չէր, որ հայկական  
ջարդերից հետո մեծ վեպիրը սուլթանին հավաստիացնում էր,  
որ Հայաստանում «նա այլևս վախենալու բան չունի, քանի  
որ մուսուլմանական տարրը այսուհետև ամենուրեք կաղ-  
մում է մեծամասնություն»<sup>145</sup>: Մեծ վեպիրի հավաստիացու-  
մից բացահայտ երևում է հայկական դանդաղացի ջարդե-  
րի կաղմակերպման թուրքական կառավարության քաղաքա-  
կանության նպատակն ու գաղտնիքը:

<sup>142</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 229, 230, 231, 349.

<sup>143</sup> SE'а «Братская помощь...», Предисловие.

<sup>144</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 68 и 109.

<sup>145</sup> Նույն տեղը, էջ 263 և 264:

Հայ ժողովրդի նկատմամբ սուլթանիզմի կողմից անցկացվող գենոցիդի բազաբակահանությունը դատապարտում էր ողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը: Անգլիական պառլամենտի վերին պալատի անդամ լորդ Ստանմորն իրավա-ցիտրեկն հայտարարում է, որ ներկա պահին ամբողջ Եվրոպայում չկա մի մարդ, որին շանհանգստացնի հայկական հարցը և շղատապարտի հայերի դահիճ սուլթանին<sup>146</sup>: Մինչդեռ եվրոպական դիվանագիտությունը գործնական ոչ մի քայլի չդիմեց ջարդերը դադարեցնելու համար: Նա միայն Աբդուլ Համիդի վրա «խիզախաբար» կրակում էր թղթյա գնդակներով, վերջինս էլ ավելի «խիզախաբար» կոտորում հայերին<sup>147</sup>:

Արևմտյան Հայաստանում կատարված ողբերգական իրադարձությունների մեղավորն իրոք սուլթանական կառավարությունն էր, բայց չպետք է երկրորդական համարել եվրոպական մեծ տերությունների, առաջին հերթին բուրժուական Անգլիայի մեղքը, որոնք Բեռլինի կոնգրեսում տապալեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը և այն փոխարինեցին Բեռլինի արակատաի 61-րդ հոդվածով, ինչպես արդեն մեկ անգամ նշվեց, խոչընդոտեցին ոչ միայն հայկական դիվանագիտության մի դպարի մասի միացմանը Ռուսաստանին, այլ նաև վերացրեցին հայկական ռեֆորմների իրագործման ռեալ երաշխիքը՝ պահանջեցին այնտեղից ետ կանչել ռուսական զորքերը մինչև քարենորոգումների իրագործումը: Հայկական կոտորածների համար Անգլիայի մեղավոր լինելու փաստը հաստատում է նաև ռուս ժուռնալիստ Նովիկովան: «Նոր-դար»-ում տպագրված հոդվածում նա ասում է. «Իսկական յանցապարտները և քաղաքակրթուած աշխարհի անուան ամօթ բերող բարրարեսութիւնների պատասխանատուն քիւրդերը չեն ամենեկին... այլ թիւրք կանոնաւոր զօրքերը, որոնց հրամայում էին թրքական կառուարութեան կողմից բացարձակ պատուհրներ ունեցող թիւրք սպաները: Թեև Բ. Դոան ունեցած մասնակցութիւնն այդ նողկալի արարքների մեջ չէ հերքում նոյն իսկ Ստամբուլի փա-

<sup>146</sup> Տե՛ս Hansard's Parliamentary Debates, 1896, vol. 40, էջ 863.

<sup>147</sup> Տե՛ս М. Мак-Козль. Султан и держава, էջ 213.

շաների կողմից, սակայն նրանց վրա չէ՛ որ ծանրանում է այդ սարսափելի պատահարների պատասխանատուութիւնը, այլ այդ պատասխանատուութիւնն ընկնում է ամենից արաջ Անգլիայի վրա»<sup>148</sup>: Միանգամայն իրավացի է նովիկովան՝ հայկական կոտորածների համար Անգլիային համառելով պատասխանատու, քանի որ Թուրքիան հայերի բնաջնջման սանկցիան փաստորեն ստացավ Բեռլինի կոնգրեսում, որտեղ պիսավոր «դիրքիծորը» Բիրոնֆիլդն էր:

Նովիկովան առաջինն ու վերջինը չէր, որ մեղադրում էր անգլիական կառավարութեանը: Հայկական կոտորածների համար Անգլիային մեղադրել է նաև բելգիացի անվանի դիտնական, ուշիարճապետ, հումանիտա ժյուլ Լեկլերկը: Նա ասում է, որ Բեռլինի կոնգրեսում հայերի ինամակալութեան գործը Թուսաստանի փոխարեն իր վրա վերցրեց Անգլիան ընամեն բան մնաց առաջվայ զրոյթյան մէջ, կամ աւելի յառն է ասենք, աւելի վատացաւ»<sup>149</sup>: Իրոք, եվրոպական վեց տերութեանների կոլեկտիվ ինամակալութեանը՝ վատթարացրեց արեւմտահայութեան դիճակը և փրոպարձութեանների հետագա բարգաւաճումը հասցրեց 1890-ական թվականների սարսափելի ջարդերին, որի համար մեղավոր էր անգլիական կառավարութեանը: Լեկլերկը մեղադրում է Անգլիային, որ նա շարաշահեց Եվրոպայի վատասութեանը, չհետևեց ռեֆորմների իրագործմանը, հումանիզմի փոխարեն ղեկավարվեց շահամոլութեան սկզբունքով՝ Կիպրոսն իր ձեռքում պահելու նպատակով: Անգլիան «իր յանձն տառձ պարտավորութեանները իրագործելու եղանակով նմանվում է Բարձրագոյն Գոանը (բնագծումն իմն է— Լ. ի.)»<sup>150</sup>: Մենք համամիտ չենք Լեկլերկի բուրժուական Եվրոպայի մասին սենցած բորձր կարծիքին, բայց նա միանգամայն արդարացի է անգլիական կառավարութեան գործունեութեանը հայկական հարցում գնահատելու մեջ:

Հայոց դատի «սրաշտպան» բուրժուական Անգլիան և մյուս եվրոպական մեծ տերութեանները հայկական կոտոր-

<sup>148</sup> «Նոր-գար», 1895, № 21:

<sup>149</sup> «Մշակ», 1893, № 8:

<sup>150</sup> Նույն տեղը:

րաժների ժամանակ կոնկրետ քայլերի շղիմեցին հայության փրկության համար: Նրանք լռեցին, կարծես թե Բեռլինի արակտատի 61-րդ հոդվածով ոչ թե Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու և հայերին պաշտպանելու պարտավորություններ էին վերցրել իրենց վրա, այլ սուլթանիզմին մանդատ էին տվել հայերին ջարդելու, և մենք պետք է արձանագրենք, որ «մանդատ» տվողների մեջ առաջինը Կիպրոսի պաշմանադրով Թուրքիայի դաշնակից դարձած անդլիական կառավարությունն էր, որը արակտատով ու պարտավորությունով հայերին պաշտպանելու ուղղությամբ իր վրա կրկնակի պատասխանատվություն էր վերցրել:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսից հետո, եթե հայ ժողովրդի շահերն արտահայտող առաջավոր մատվորականությունը ազգային սպասարկության հարցը կապեց ժողովրդի կազմակերպված պայքարի հետ, ապա սուլթանական կառավարությունը սրուշեց՝ հայկական հարցը «լուծել» Արևմտյան Հայաստանի Լեոնտիկան քայքայելու, արևմտահայությունը նախաձեռնելու, բռնադատվելի պարտադրելու և վերջապես հայ ազգաբնակչությունը ֆիզիկապես բնաջնջելու միջոցով:

Բայց սկզբնաղբյուրները լրիվ ներքում են թուրք պատմաբաններ Ն. Ֆուլլիի, Զ. Կոնիշմանի տեսակետը սուլթան Աբդուլ Համիդ Է-ի համանիզմի մասին և ցույց են տալիս, որ նա ոչ թե «իր կյանքում մահվան ոչ մի վճիռ չի հաստատել», այլ մի ամբողջ ժողովրդի կործանման և դատապարտելի: Սկզբնաղբյուրների ուսումնասիրմամբ հերքվում են նաև Արևմտյան Հայաստանի սղբերգական իրադարձությունները կրոնական ֆանատիզմի տարերային բորբորումով, հայ-բլթղական սոցիալիզմի ընդհարումներով բացատրելու կառավարական վարկածը և ցույց են տալիս, որ հայ ժողովրդի ողբերգության պատճառը սուլթանիզմի կողմից հետևողականորեն անցկացվող պանօսմանիզմի, պանիսլամիզմի և արմենոցիդի քաղաքականությունն էր:

Միջնաղբյուրների ուսումնասիրությունից հստակ երևում է, որ հայ ժողովրդի արդար դատի «պաշտպան» բուրժուական Անգլիան հայկական հարցը միշտ բարձրացրել է շահադիտական նկատառումներով: Եթե առաջին անգամ անդլիական գողութարարները հայկական հարցի շարաշահ-

մամբ նվաճեցին Կիպրոսը և ամրապնդեցին իրենց դիրքերը Թուրքիայում, ապա երկրորդ անգամ՝ հայկական հարցի սպեկուլյացիայի օգնությամբ գրավեցին Եգիպտոսը, ամրացան Սուեզի ջրանցքում, իսկ երրորդ անգամ՝ հաստատեցին իրենց քաղաքական ազդեցությունն Աֆղանստանի վրա: Անգլիայի քաղաքականության նպատակը բոլորովին էլ չի եղել հայ ժողովրդի փրկությունը թուրքական յաթաղանից, շնայած որ Արևմտյան Հայաստանում ռեֆորմների իրադրոժման ուղղությամբ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով և Կիպրոսի կոնվենցիայով նա մեծ խոստումներ էր տվել ու մեծ պարտավորություններ վերցրել իր վրա, այլ եղել է գաղութների նվաճումն ու ազդեցության ոլորտների ստեղծումը: Բուրժուական Անգլիան միշտ էլ անտարբեր է եղել հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, որի պատճառով հայկական հարցը մնում էր բաց հարց, 61-րդ հոդվածը՝ մեռած տառ, սուլթանի ձեռքերն էլ ազատ՝ հայկական ջարդերի կազմակերպման գործում: Անգլիան տրակտատով ու կոնվենցիայով կրկնակի պատասխանատվություն է կրում հայկական ջարդերի համար:

Առաջադեմ մարդկությունը դատապարտեց սուլթանի հայաջինջ քաղաքականությունը և եվրոպական կառավարություններից պահանջեց ձեռնարկել հայությանը փրկելու միջոցառումներ, սակայն մեծ տերությունները, ղեկավարվելով արդյունաբերական ու ֆինանսական կապիտալի մագնատների թելադրանքով, անտարբեր էին հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ և նրանցից յուրաքանչյուրը պայքարում էր Արևմտյան Հայաստանի իրադարձություններն իր նեղ շահերի համար օգտագործելու, այնտեղ իր դիրքերն ամրապնդելու, իսկ Թուրքիան մասնատելու դեպքում «հիվանդ մարդու» ժառանգությունը, հնարավորության սահմաններում, իրեն ձեռնտու ձևով բաժանելու համար: Սուլթանը, խաղայով Արևելքում մեծ տերությունների, առաջին հերթին անգլո-ուսական հակասությունների վրա, մեկ մերձենում էր մեկին, մեկ էլ մշտաին և հայկական ռեֆորմներն իրագործելու, հայ ժողովրդի դրությունը բարելավելու փոխարեն իր ձեռքերին ազատություն տալիս ու շարունակում՝ հայերի մասսայական ջարդերի արշունարբու քաղաքականությունը:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԳԼԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՁ  
1890—ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի 90-ական թվականներին՝ հայկական մասսայական շարքերի տարիներին, իմպերիալիստական Անգլիան նորից է բարձրացնում հայկական հարցը՝ Թուրքիայի ներքին շարժերին միջամտելու նպատակով, ձեռնարկելով Բեռլինի արակտատի 61-րդ հոդվածը և 1878 թվականի հունիսի 4-ի Կիպրոսի կոնվենցիան։ Անգլիական կառավարությունը Թուրքիայի նկատմամբ փոխեց իր քաղաքականությունը։ Եթե մինչև 70-ական թվականներին երկրորդ կերպ Անգլիան կողմնակից էր Թուրքիայի «ամբողջականություն» պահպանմանը, ապա 90-ական թվականներին նա բացահայտորեն առաջ էր քաշում Օսմանյան կայսրության մասնամասն պլանը։ Անգլիայի արտաքին քաղաքականության այդ շրջադարձը բացատրվում էր նրա սոցիալ-տնտեսական դրությունամբ և միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններով։

Անգլիան, որպես կապիտալիզմի զարգացման «հին ուժ»՝ երկիր, XIX դարի վերջին քառորդում կորցրեց իր առևտրաարդյունաբերական առաջնությունն աշխարհում։ Կապիտալիզմի անհավասարաչափ տնտեսական ու քաղաքական զարգացման հետևանքով երիտասարդ կապիտալիստական պետությունները հասան ու անցան Անգլիային։ Գերմանիային անհրաժեշտ եղավ երկու տասնամյակ, իսկ ԱՄՆ-ին՝ ավելի քիչ ժամանակ, Անգլիային հասնելու ու անցնելու համար։ Անգլիան դադարեց «աշխարհի արհեստանոց» լինելուց։ Եթե մինչև 70-ական թվականները Անգլիան համաշխարհային

1 Վ. Ի. Աեհին, ՆԼԺ, հատ. 27, էջ 383:

շուկայում ուներ հեղեմանխառն և արտապրում էր համաշխարհային արդյունաբերական արտադրանքի կեսը, ապա դարավերջին նա անվերադարձ կորցրեց իր առևտրական ու արդյունաբերական առաջնությունը, որից օգտվում էր մի ամբողջ նարչուրամշակ: Գերմանական, ամերիկյան, բելգիական ապրանքները համաշխարհային շուկայում հաջողությամբ մրրցում էին անգլիական ապրանքների հետ: Գերմանական արդյունաբերությունն այնքան է զարգանում, որ գերմանական ապրանքները անգլիական ապրանքներին դուրս են մղում ոչ միայն համաշխարհային շուկայից, բրիտանական գաղութներից, այլ նաև բուն Անգլիայի ներքին շուկայից: Անգլիական արդյունաբերությունը հանդիպում է ոչ միայն գերմանական ծանր ինդուստրիայի, այլև թեթև արդյունաբերության ուժեղ մրցակցությունը: Նկատի ունենալով այդ, անգլիական արնտեսագետ Ն. Ուելլամսը գրել է, որ անգլիական թեթև արդյունաբերության կենտրոն Մանչեստրի ապագան «նույնպես մասյլ է, ինչպես մասյլ է այլ բաղաժնի ինքը»<sup>2</sup>: Անգլո-գերմանական առևտրական մրցակցությունն այնքան ուժեղ էր, որ սին իր արտադրումն է դանում ոչ միայն անգլիական ու գերմանական մամուլում, այլ նաև պաշտոնական գրադրություններում, պետական ու բաղաժնի գործիչների ելույթներում: 1896 թ. հոկտեմբերի 25-ին Ալիսելմ II-ը գրել է. «Մեր առևտուրն անգլիականի նեղ կենոց ու մահու պայքար է մղում, թե՛ր մամուլն ամեն օր բարձր աղմկում է այդ մասին»<sup>3</sup>: Այդ կյանքի ու մտնելուն դատեմարտում առավելությունը գերմանական առևտրի կողմն էր:

Անգլիական արդյունաբերական ապրանքներն ուժեղ մրրցակցություն են հանդիպում նաև Քուրբիայում: «Ասիական Քուրբիայում,— գրել է Հոֆմանը,— Գերմանիան, Ավստրիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Ամերիկան մրցում են մի շարք ապրանքներով... Բրիտանական առևտուրը օտարակերպ առևտրի համեմատ չի աճում համապատասխան շու-

<sup>2</sup> E. E. Уильяме. Торжество германской промышленности. СПб, 1891, стр. 88.

<sup>3</sup> „Die Große Politik.“ Bd. XIII, № 3396 Ալիսելմ II—Հոկտեմբեր 1896, 25 հոկտեմբերի 1896:



մաշափությամբ»<sup>4</sup>: Թուրքիայում, ինչպես և մյուս երկրներում, Անգլիայի գլխավոր առևտրական թշնամին Գերմանիան էր: Այդ պատճառով էլ Փոքր Ասիայի անգլիական հյուպատոսներն ահազանգում էին գերմանական առևտրական սպառնալիքի մասին: «Տխրությամբ պետք է խոստովանել, — գրել է Ջրմյունիայի անգլիական հյուպատոսը, — որ անգլիացիների առևտուրն օրրստօրե կրճատվում է Ջմյունիայում»<sup>5</sup>: Նման հաղորդումներ Լոնդոնում ստանում էին նաև Անատոլիայի զանազան քաղաքներից:

Անգլիական մոնոպոլիստներն ապրանքների վաճառքը և օտարերկրյա շուկաներում իրենց մենաշնորհն ապահովելու համար սովորաբար են դադարեցնում կամ սահմանափակում իրենց քաղաքականությունը: Ընդհանրապես 1880—1890-ական թվականները հայտնի են որպես գաղութների բաժանման համար մեծ տերությունների միջև մղված դաժան պայքարի ժամանակաշրջան: 1895 թ. հոկտեմբերի 25-ին արտաքին գործերի մինիստրի տեղակալ Քերզոնն ասում էր. «Կար ժամանակ, երբ Անգլիան մրցակիցներ չուներ: Ինչ 50 տարի սրանից առաջ մենք վայելել էինք շարժման լիակատար ազատութիւն, կարող էինք գնալ, ուր ցանկանում էինք: Վերջին քսան տարույց մեջ տարածութիւնը այնքան սահմանափակվել է, որ այժմ հաղիւ կարողանում ենք մեր ոտները շարժել: Շուտով գուցէ զրանից էլ զրկվենք»<sup>6</sup>: Եմպերիալիստները ձգտում էին նվաճել նոր երկրներ, նոր վաճառահանման շուկաներ և հումքի աղբյուրներ, քանի որ «Միայն գաղութին տիրելը տալիս է մոնոպոլիայի հաջողության լիակատար երաշխիք հակառակորդի դեմ մղվող պայքարի բոլոր պատահականությունների հանդեպ»<sup>7</sup>: Եթե 1852 թ. անգլիական պետական ակադեմիայի գործիչ Գիզրայելին ասում էր, որ «գաղութները ջրադացքաբեր են մեր մտից կախված», ապա դարավերջին անգլիական իմպերիալիստների «օրվա հերոսներ» Սեսիլ Բոդարը և Ջոզեֆ Չեմբերլենը «բացահայտ

<sup>4</sup> R. I. S. Hoffman. Great Britain and the German trade rivalry 1875—1914. Philadelphia, 1933. p. 34.

<sup>5</sup> Ж. Блондель. Торгово-промышленный подъем Германии. СПб, 1900, стр. 125.

<sup>6</sup> «Մշակ», 1895, № 129:

<sup>7</sup> Վ. Ի. Լեևին, ՆԺԺ, հատ. 27, էջ 463:

կերպով խմայերիալիզմ էին քարոզում և ամենամեծ ցինիկոսթյամբ վարում էին խմայերիալիստական քաղաքականություն, որպես «Ճշմարիտ, իմաստուն և խնայողաբեր քաղաքականություն»<sup>8</sup>: Անգլիական խմայերիալիստները գաղութների մինիստր Չեմբերլենին մինչև երկինք էին բարձրացնում կաշարության տերիտորիաները ընդլայնելու համար:

Համաշխարհային շուկայում Անգլիայի հեղեմոնիայի կորուստի պատճառով մոնոպոլիստներն ուժեղացնում են բանվոր դասակարգի շահագործումը: Բացի այդ, 1890-ական թվականների սկզբին արդյունաբերական հզնաժամը մեծացրեց դործազուրկների քանակը, որոնց թիվը հասավ 2—4,5 մլն. մարդու, որը կազմում էր երկրի բնակչության 5—10 %-ը<sup>9</sup>: Անգլիայում, գրում է «Մշակը», «Մի կողմից ահագին հարստութիւններ դիզվում են առանձին անհատների ձեռքում, միև կողմից՝ սով, ծանր օրհասական վիճակ, մուրացկանութիւն...»: Գործազուրկներն «այսօր թափառում են Լոնդոնի անկիւններում, մատնված բաղգին և կշանքի ալիքներին»<sup>10</sup>: Այդ բոլորի հետևանքով Անգլիայում խիստ սրվում է դասակարգային պայքարը և գործազուրկային շարժումների ալիքը ծածկում է ողջ երկիրը: Հակառակ տրեղյունիոնների ու բանվորական կուսակցությունների օպորտունիստ լիդերների կամքի՝ գործազուրկային պայքարը ծավալվում է և լուրջ վտանգ սպառնում բուրժուական կարգերին: Անգլիական կառավարությունը սարսափելով աճող բանվորական հեղափոխական շարժումներից, ձգտում էր պրոլետարիատի ուշադրությունը շեղել դասակարգային պայքարից դեպի արտաքին արկածախնդրական քաղաքականությունը՝ Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում և Հարավային Աֆրիկայում: Միաժամանակ անգլիական խմայերիալիստները նշանակալից էին նվաճված ու դադուխացված երկրների կողուպտման հաշվին ստանալ գերշահույթներ, նրանց մի մասով կաշառել բանվորական արիստոկրատիային, պառակտել սլլոլետարական շարժումը և այն դարձնել բուրժուադիայի համար անվտանգ:

<sup>8</sup> Վ. Ի. Լենին, Եկժ. հատ. 27, էջ 457—458:

<sup>9</sup> Տե՛ս «Мировые экономические кризисы 1848—1935 гг.», М., 1937, т. 1, էջ 671.

<sup>10</sup> «Մշակ», 1894, № 40:

Անգլիայի իմպերիալիստական քաղաքականության շատա-  
զո՛ր ֆինանսական արքա Սեսիլ Ռոդոն ասում էր. «Միացյալ  
Քաղաքավորության 4) միլիոն բնակիչներին քաղաքացիական  
սպանիչ պատերազմից փրկելու համար մենք՝ զաղութային  
քաղաքագետներս, պետք է նոր հողեր նվաճենք... Եթե դուք  
չեք ցանկանում քաղաքացիական պատերազմ, դուք պետք է  
դառնաք իմպերիալիստներ»<sup>11</sup>։

XIX դարի վերջին տասնամյակներում Անգլիայի մերձավոր  
արևելյան բաղաբաղականության փոփոխությունը բացատրվում  
է նաև նրանով, որ անգլիական կապիտալիստների ուշադրու-  
թյունն ավելի մեծ չափով պրայմալ էր ոչ թե Քուրքիան, այլ  
Հետտօր Արևելքը, Հնդկոստանը, Եգիպտոսը, Հարավային  
Աֆրիկան և Լատինական Ամերիկան։ Անգլիայի քաղաքական  
գործիչներն աստիճանաբար հրաժարվում են Քուրքիային  
«պաշտպանելու» ավանդական քաղաքականությունից, շնայած  
որ ուրան «ազնիվ» բարեկամը շատ էր «օգնում» սուլթանին,  
այնքան Քուրքիան ավելի շատ էր կորցնում կայսրության  
ժայռամասերի տերիտորիաները և ավելի շատ տնտեսապես ու  
ֆինանսատպես կոխման սեզ ընկնում Անգլիայից, կորցնելով  
իր ինքնուրույնությունը։

1880-ական թվականներից հակահայկական քաղաքակա-  
նության ընդհանուր հողի վրա որքան Քուրքիան մերձենում  
էր Ռուսաստանին, որքան ուժեղանում էր Գերմանիայի սըն-  
տեսական ու քաղաքական ազդեցությունը Քուրքիայում և  
թուլանում անգլիական կապիտալի դիրքերը Մերձավոր Արև-  
մելքում, այնքան Անգլիայում հասունանում էր «թուրքոֆիլ»  
բաղաբաղականությունից հրաժարվելու, Օսմանյան կայսրությու-  
նը մասնատելու կուրոր, որպեսզի «հիմանդ մարդու» ժառան-  
գությունը բաժանելու միջոցով կարգավորեին Անգլիայի միջ-  
ազգային հարաբերությունները, ամրանային Եգիպտոսում և  
լուծեին անգլո-ռուսական տարաձայնությունները։ Արտաքին  
քաղաքականության այս նոր ուղղությունը պաշտպանում էին  
պետական ու քաղաքական ախանափոր գործիչներ Ռանդոլֆ

11 Վ. Ի. Անիև, *եկժ*, հատ. 27, էջ 458։

Զերչիւր, Զոդեֆ Զեմբուլենը, Սուլսերին, Գլադստոնը, Բեուլի-  
նի անգլիական դեսպան Մալետը և ուրիշներ<sup>12</sup>։

Սուեզի ջրանցքի բացման հետևանքով կարճացան ծովա-  
յին ճանապարհները դեպի Արևելք, իսկ Հնդկաստանի և հա-  
ղաղ օվկիանոսի երկրների հետ մեծացան առևտրական կա-  
պերն ու շահագրգռվածութիւնը, մինչդեռ նույն ժամանակ  
Թուրքիայում անգլիական առևտրի տեսակարար կշիռը գնա-  
լով փոքրանում էր, ներդրվող կապիտալները՝ նվազում, իսկ  
հսկողութիւնը ֆինանսների վրա՝ թուլանում։ Անգլիան առև-  
տրի ու ֆինանսական հարցերում իր տեղը զիջում է Ֆրանս-  
սիային, երկաթուղաշինարարութեան ասպարեզում՝ Գերմա-  
նիային։ Ֆրանսիական բանկիրների ձեռքն անցավ Սամանյան  
բանկի և Թուրքիայի հասարակական պարտքերի վարչութեան  
ղեկավարութիւնը։

Թուրքիայի նկատմամբ Անգլիայի քաղաքականութեան փո-  
փոխութեան վրա ազդեց նաև անգլիական իմպերիալիստների  
շահերի շոշափումն Առաջավոր Ասիայում և Եգիպտոսում։  
1890-ական թվականների սկզբներից, Ֆրանսիայի պաշտպա-  
նութեամբ, սուլթանական կառավարութիւնը հարց բարձրաց-  
րեց անգլիական զորքերը Եգիպտոսից հանելու մասին։ Բացի  
այդ, միջադպշին հարաբերութիւններում բավական վատա-  
ցել էր Անգլիայի դրութիւնը՝ Սև աշխարհամասի վանադան  
մասերում Գերմանիայի ու Ֆրանսիայի հետ սուր պայքարի  
մեջ մտնելու, Հեռավոր Արևելքում Ռուսաստանի ու Ճապո-  
նիայի արտաքին քաղաքականութիւնն ուժեղանալու, Գեր-  
մանիայի կողմից Տրանսվալի Բուրական հանրապետութիւ-  
նը պաշտպանելու, Սամոա կղզու շուրջը Գերմանիայի դեմ  
պայքարելու, խոշոր պետութիւնների կողմից Անգլիային շե-  
ղորացնելու և մի շարք այլ պատճառներով։

Վերոհիշյալ պրոբլեմները հոգուտ Անգլիայի լուծելու և  
խոշոր պետութիւնների հետ հարաբերութիւնները կարգա-  
վորելու նպատակով, անգլիական իմպերիալիստները ձգտում  
են Թուրքիան և Արևմտյան Հայաստանն օգտադործել փոխա-  
նակութեան մանրադրամի տեղ և շահագիտական նկատառում-

<sup>12</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd. IV, էջ 868.

ներով շարաշահել հայկական հարցը<sup>13</sup>: Փորձված պետական գործիչ, հեռատես դիվանադետ Սուլբերին աշխատում է արտաքին քաղաքականության մեջ դժվարությունները լուծել «արևելյան հարցի» միջոցով՝ այլ ժողովուրդների հաշվին, դիվանագիտական կոմբինացիաների ու որոգայթների օգնությամբ: Անգլիական իմպերիալիստներն իրենց սնտեսական ու քաղաքական ազդեցությունն Առաջավոր Ասիայում վերականգնելու և Եգիպտոսում դիրքերն ամրապնդելու նպատակով, հայերին օգնելու պատրվակի տակ միջամտում են Թուրքիայի ներքին գործերին, ճնշում գործադրում սուլթանի վրա, սրպեսպի վերջինս հաշտվի Անգլիայի կողմից Եգիպտոսի գրավման փաստի հետ և հրաժարվի Ռուսաստանի հետ մերձենալուց: Միաժամանակ անգլիական կառավարությունը գաղտնի բանակցություններ է վարում ռուսական կառավարության և Սոյակ միության հետ՝ Օսմանյան կայսրության մասնատման վերաբերյալ: Անգլիական պահպանողական կառավարության քաղաքականությունը միանգամայն ճիշտ հասկանալով, Լոնդոնի գերմանական դեսպան Հատցֆելդը հաղորդում է Բեռլին, որ Սուլբերիի կառավարությանը «կամ կհաջողվի իրական ուժորմների իրազսրծման օգնությամբ թուրքական պետությանը կենդանի պահելու պլանը և դրանով իսկ նրան կհանի Ռուսաստանի բացառիկ ազդեցության տակից, կամ այդ պլանը չի հաջողվի և գործը կհասնի կրախի ու Թուրքիայի մասնատմանը»<sup>14</sup>: Հատցֆելդի հաղորդումից պարզ երևում է, որ Անգլիան ձգտում է վերականգնել իր տնտեսական ու քաղաքական մենաշնորհը Թուրքիայում, իսկ այդ պլանի անհաջողության դեպքում՝ մասնատել այն: Անգլիական կառավարությունը սուլթանին ակնարկում է անգամ ֆինանսական օգնություն, և՛ թե Թուրքիան ռուսական օրիենտացիան փոխարինի անգլիականով: Անգլիական այդ քաղաքականությունը հաստատում է նաև Մետերնիխը: Նա գրել է, որ Կ. Պոլսի

<sup>13</sup> Այս պրորլեմի ուսումնասիրությանն է նվիրված նաև սլատմ. գիտ. թեկնածու Գ. Մ. Հարությունյանի «Անգլիան և հայկական հարցը XIX դարի 90-ական թվականների կեսերին» բովանդակալից հոդվածը: Տե՛ս «Новая и новейшая история», 1959, № 6:

<sup>14</sup> „Die Grosse Politik...“ Bd. XII, № 3086, Հատցֆելդը-Ղոնենլոհերն, 22 դեկտեմբերի 1896.

անդլիական դեսպան Ֆ. Քերրիի առաջ խնդիր է դրված սուլթանին հակադրել Ռուսաստանին, վերականգնել Անգլիայի ազդեցությունը Քուրքիայում, նպատակին շահասնելու դեպքում տապալել Աբդուլ-Համիդ II-ին, որպես ռուսական օրինատացիայի պաշտպանի<sup>15</sup>։ Այդ մասին Անգլիայի արևելյան քաղաքականության լավատեղյակ Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիզովը հաղորդում է Պետերբուրգ. «Սուլթանը, որքան ավելի շատ է վստահություն հանդես բերում Ռուսաստանի նկատմամբ և ցանկանում նրա հետ մերձենալ, այնքան ավելի շատ տարբեր կողմերից ուժ է գործադրվում, որպեսզի նրան մեզնից կտրեն և գրգռեն նրա կասկածամտությունը, իբր թե մենք նրա նկատմամբ ունենք թշնամական մտադրություններ»<sup>16</sup>։

Օսմանյան կայսրության մասնատման դեպքում Անգլիան նախատեսում էր գրավել իր համար տնտեսական ու ռազմաստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող թուրքական տերիտորիաները։ Զանազան աղբյուրներից ցույց են տալիս, որ «հիվանդ մարդու» ժառանգության բաժանման ժամանակ իմպերիալիստական Անգլիան մտադիր էր ստանալ առյուծի բաժինը՝ հավերժացնել Եգիպտոսի օկուպացիան, ամրանալ Միջագետքում, արաբական երկրներում և Կիպրոսում, իսկ Ռուսաստանին թուլյատրել գրավել Կ. Պոլիսը, Բոսֆորի նեղուցը և Արևմտյան Հայաստանը։ Դարդանելը Ռուսաստանին հանձնելու հարցում, ինչպես խոստովանել է Բեռլինի անգլիական դեսպան Լասցելսը Վիլհելմ II-ին, անգլիան տատանվում էր<sup>17</sup>։

Իմպերիալիստական Անգլիայի «դիջողական» քաղաքականությունը բացատրվում է նրանով, որ դարավերջին արևելյան առևտուրը, սևծովյան նեղուցները և Արևմտյան Հայաստանն ու նրա վրայով դեպի Արևելք ձգվող առևտրական տարանցիկ հանապարհները այլևս չունեին անգլիական բուրժուազիայի համար այն նշանակությունը, ինչ որ նրանք ունեին մինչև 1870-ական թվականները։ Սուեզի ջրանցքը շահադարձման

<sup>15</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd. XII, № 3073. Մեակրնիսի հաղորդումը, 25 նոյեմբերի 1896.

<sup>16</sup> АВПР, ф. «Канцелярия», 1893, д. 24, л. 590. Секретное донесение Нелидова Гирсу, 28 декабря 1893, № 151.

<sup>17</sup> Տե՛ս «Красный архив», 1931, т. 4—5 (47—48), էջ 53.

հանձնելուց հետո անգլիական գաղութարարների ուշադրության կենտրոնը դարձավ փարավոնների աշխարհը՝ ջրանցքի հետ միասին: «Մեզ համար Արևելքն Աֆրիկան է (այսինքն Եգիպտոսը — Լ. Բ.)»<sup>18</sup>, — ասում էր Փարիզի անգլիական դեսպան Մոնսոնը:

Անգլիայի «սիչոզականությունը» բացատրվում է նաև նրանով, որ նա ցանկանում էր դաշնակցել Ռուսաստանի հետ Թուրքիայի դեմ, քանի որ, ինչպես վերը նշվեց, 90-ական թվականների սկզբներից, Ֆրանսիայի պաշտպանությամբ, Թուրքիան Անգլիայից համառորեն պահանջում էր ազատել Եգիպտոսը, ետ կանչել զորքերը<sup>19</sup>: Եգիպտական հարցում Ֆրանսիան պաշտպանում էր Թուրքիային, որովհետև նա ինքը հավակնություն ուներ փարավոնների աշխարհի նկատմամբ: Ֆրանսիական կառավարությունը սուլթանին հայտնում է, որ Եգիպտական հարցում «նա պատրաստ է Թուրքիայի հետ դործել միասնաբար»<sup>20</sup>:

90-ական թվականների կեսերին անգլո-թուրքական պայքարը Եգիպտոսի շուրջն ավելի է սրվում: Անգլիան մեծացնում է Եգիպտոսում գտնվող զորքերի թիվը և նախապատրաստվում նրա ժամանակավոր օկուպացիան դարձնել նվաճում ու գաղութացում: 1895 թ. օգոստոսի 21-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ Քերզոնը պառլամենտում հայտարարում է, որ անգլիական կառավարությունը Եգիպտոսում շարունակելու է իր նախկին քաղաքականությունը, իսկ կառավարող կուսակցության օրգան «Standard»-ը, պաշտպանելով կառավարության քաղաքականությունը, գրում էր. «Անգլիան բոլորովին մտադրություն չունի ազատել Եգիպտոսը»<sup>21</sup>: Մինչդեռ Ֆրանսիան անգլիական կառավարությունից շարունակում էր պահանջել Եգիպտոսից հանել օկուպացիոն զորքերը: Այդ առթիվ «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթը դրել է. «Ֆրանսիան հաստատակամորեն Անգլիային հիշեցնում է, որ

<sup>18</sup> «Историк-марксист», 1929, № 13, стр. 30.

<sup>19</sup> СБ « АВПР, ф. «Канцелярия», 1890, д. 24, л. 171. Донесение Нелидова от 3 апреля 1890, № 47.

<sup>20</sup> АВПР, ф. «Канцелярия», 1890, д. 24, л. 202. Нелидов—Гирсу, 24 апреля 1890, № 57.

<sup>21</sup> «Московские ведомости», 20 августа 1895, № 228.

ժամանակն է ազատելու Եդիպոտոսը»<sup>22</sup>: Ֆրանսիայի արտաքին դործերի մինիստր Հանտոտն աղգային ժողովում հայտարարում է, որ Ֆրանսիական կառավարությունն օրինական չի ճանաչում Անգլիայի տիրապետությունը Նեղոսի հովտում<sup>23</sup>:

Նեղոսի հովտում ընդմիջտ ամրանալու և ֆրանսիական կառավարության դիմադրությունը եգիպտական հարցում թուլացնելու նպատակով 1894 թ. դեկտեմբերին Անգլիան Ռուսաստանին առաջարկեց հայկական վիլայեթներում «կարգի վերականգնման» համար ժամանակավորապես իր զորքերը մտցնել Արևմտյան Հայաստան, անգամ պատրաստ էր Ռուսաստանին թույլատրել գրավելու Կ. Պոլիսը, միայն թե նա փոխհատուցման կարգով ազդեր Ֆրանսիայի վրա, որպեսզի վերջինս չդիմադրեր Անգլիայի եգիպտական քաղաքականությունը<sup>24</sup>: 1890-ական թվականներին Կ. Պոլիսը Անգլիայի համար շուներ այնպիսի նշանակություն, ինչպիսին ուներ Եգիպտոսը: Ռուսաստանի կողմից «Կոստանդնուպոլսի տիրապետումը,— գրել է Մակ-Կոլլը,—... ինչպես արդեն ճանաչված է, Մեծ Բրիտանիայի շահերի համար շունի ոչ մի նշանակություն»<sup>25</sup>: Ցարական Ռուսաստանը մերժեց անգլիական առաջարկը, զգուշանալով, որ հայկական վիլայեթների ռուսական օկուպացիան կսառեցնի հարաբերությունները Ֆրանսիայի հետ և կթուլացնի ռուս-ֆրանսիական դաշինքը:

Իմպերիալիստական Անգլիան Արևմտյան Հայաստանի և Կ. Պոլսի հարցերում Ռուսաստանին «ցիջում» էր կատարում նաև այն պատճառով, որ նրա ուժերը կենտրոնացված էին Հարավային Աֆրիկայում, որտեղ նա զաղութային պատերազմ էր մղում Բուրական հանրապետության դեմ: Բացի այդ, Անգլիան շուներ դաշնակից պետություն, իսկ Ֆրանսիայի ու Գերմանիայի հետ էլ նրա հարաբերությունները խիստ լարված էին: Անգլիան վախենում էր, որ Մերձավոր Արևելքում անջատ դործողությունները կարող են վերածվել համակոչրոպա-

<sup>22</sup> «Московские ведомости», 19 марта 1895, № 77.

<sup>23</sup> Նույն տեղը, 31 марта 1895, № 89.

<sup>24</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“ Bd. IX, № 2196 Խաղաղիկի հաղորդումը, 20-ին դեկտեմբերի 1894.

<sup>25</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 23.



կան ռազմական կոնֆլիկտի Անգլիայի հետ, իսկ Անգլիան առանց դաշնակիցների չէր կարող պատերազմել:

Անգլիական իմպերիալիզմի տնտեսական շահերի կենտրոնը Մերձավոր Արևելքից ուրբան տեղափոխվում էր Հնդկաստան և Հեռավոր Արևելք, այնքան նրա համար բացառիկ նշանակություն էին ստանում Օսմանյան կայսրության այն տերիտորիաները, որոնցով անցնում էին Հնդկաստան ու Չինաստան տանող ճանապարհները: Անգլիան անդամ նախատեսում էր կառուցել Կահիրե-Կալկաթա երկաթուղայիծ, որը պետք է լիներ Կեպտաուն-Կահիրե ծրագրվող երկաթգծի շարունակությունը և անցներ Հյուսիսային Արաբիայի, Միջագետքի ու Հարավային Իրանի տերիտորիաներով: Անգլիան այդ երկրները պետք էր սրպես կամուրջ Եվրոպայի ու Ասիայի միջև և ձգտում ստեղծել ասիա-աֆրիկյան կայսրություն:

Իմպերիալիստական Անգլիան իր ագրեսիվ պլաններն Առաջավոր Ասիայում և Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում արդեն նշվել է, ձգտում էր օգտագործել հայկական շարքը, ընդ որում անապրեր մնալով հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Այդ հասակ երևում է պրեմիեր-մինիստր Սոլոբերինի և Էնդրյու Քուրրական գեսպանի միջև տեղի ունեցած զրույցից: Այդ զրույցի մասին գեսպանի զեկուցագրում, որի պատճենը Քուրրական պաշտոնյաներից մեկը վաճառել էր Կ. Պոլսի սուսական գեսպանին, ասվում է, որ Սոլոբերին հայտարարեց, որ անգլո-թուրքական հարաբերությունների բարելավման համար անհրաժեշտ է, որպեսզի սուլթանական կառավարությունը իր ռուսական օրինատացիան փոխարինի անգլիական օրինատացիայով և երբեք չբարձրացնի եգիպտական հարցը. հակառակ գեսպանը «Բարձր Դուռը իրեն կպատճառի միայն անհանդատություն, ոչինչ չշահելով»<sup>26</sup>: Դրանով Սոլոբերին Քուրրական ներկայացուցչին հասկացնում էր, որ եթե սուլթանի կառավարությունը շարունակի պահանջել Երկրորդ համաշխարհային պատերազմի հարցում, ապա անգլիական կառավարությունն էլ կհամառի հայկական ռեֆորմներն իրագործելու՝ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցում:

<sup>26</sup> В. М. Хвостов. История дипломатии. М., 1963, т. II, стр. 335.

Սուլթանի վրա ճնշում գործադրելու միջոցով Եգիպտոսի օկուպացիան հավերժացնելու նպատակով, անգլիական կառավարությունը 1894 թ. նոյեմբերին Կ. Պոլսի դեսպան Տ. Քերրին հանձնարարում է Բեռլինի տրակտատը ստորագրած պետությունների առաջ հարց հարուցել՝ ստեղծել հաճախողով և ուսումնասիրել Սասունի իրադարձությունները: Միաժամանակ շարաշահելով անգլիական աշխատավորների հումանիտարական զգացմունքները, նա 1894 թ. աշնանը և 1895 թ. ձմռանը կազմակերպեց հակաթուրքական ցույցեր, սրոնք վրլխավորում էր բարձր հոգևորականությունը, որպեսզի նրանց տար կառավարությանը ձեռնառու ուղղություն: Յուցարարները բողոքում են սուլթանիզմի բարբարոսական քաղաքականության դեմ և կառավարությունից պահանջում միջամտել Թուրքիայի ներքին գործերին: 1894 թ. դեկտեմբերի 29-ին Դյադուտոնը հրապարակայնորեն հայտարարեց, թե ինքը հույս բնի, որ Անգլիան կդիմի համապատասխան միջոցառումների, իսկ Ռոզբերիի կառավարությունն առաջարկեց հայկական վրլայեթների համար մշակել ռեֆորմներ Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածի և Կիպրոսի կոնվենցիայի ոգով: Այդ օրերի մասին անգլիական թագուհին իր օրագրում գրել է. «Եգիպտոսը հարուցում է անհանգստություն, իսկ հայկական հարցը շափազանց ծանր է»<sup>27</sup>:

Հայկական հարցի օղնությամբ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու դիվանագիտական խարդախ խաղը ճիշտ էր հասկացել նաև Կ. Պոլսի ռուսական ներկայացուցիչ Մ. Պրժևալսկին, որը հաղորդել է. «Անգլիական քաղաքականության ձեռքին հայկական հարցի բորբոքումն ի միջի այլոց հանդիսանում է թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու միջոցներից մեկը՝ իրենց շահերը հետապնդելու ժամանակ»<sup>28</sup>:

Անգլիական կառավարությունը «համակրելով» հայ ժողովրդին ու առաջ քաշելով «ինքնավար» Հայաստան ստեղծելու

<sup>27</sup> „The Letters of Queen Victoria“, 2nd series, vol. II, London, 1931, p. 473.

<sup>28</sup> АВПР, ф. «Посольство в Константинополе», 1894, д. 3178, л. 409. Секретное донесение М. Пржевальского, 29 сентября 1895.

հարցը, միայն ցանկանում էր հարկադրել սուլթանական կառավարությանը դիջումներ կատարել Անգլիային: Վերջինիս հետաքրքրում էր ոչ թե հայկական հարցի լուծումը, այլ Երիզտոսի նվաճումը, Ասիայում ազրեսիվ պլանների իրագործումը: Նրա համար Ասիայի թափուաներում, կամ Նեղոսի հովտում մի հողաշերտն ավելի մեծ նշանակություն ուներ, քան տասնյակ հազար հայերի կյանքը, որոնց կոտորում էին Քուրքիայում: Անգլիական բուրժուական պատմաբան Մակ Կոանը, կեղծելով պատմական փաստերը, փորձում է քողարկել անգլիական իմպերիալիզմի հանցավոր քաղաքականությունը արևմտահայության նկատմամբ և արդարացնել այն: Իմպերիալիստական Անգլիային նա հանդես է բերում Օսմանյան կայսրությունում ապրող մանր ժողովուրդների շահերի պաշտպանի և Քուրքիան ուսական վտանգից փրկող սուրբ հրեշտակի դերում: «Մեր նպատակը,— գրել է Մակ Կոանը,— ոչ միայն ժողովրդի դրության բարելավումն է, այլև գերադանցապես այն, որպեսզի երկիրը փրկվի անարխիայից և Ռուսաստանից»<sup>29</sup>: Մակ Կոանի հայտարարությունը լրիվ անհիմն է: Պատմությունը ցույց է տալիս, որ Անգլիան ուներ ամենաապրեսիվ մտադրություններ: Մեծ տերություններից և ոչ մեկը նրա շափ դադութներ չէր նվաճել և ժողովուրդներ չէր ստրկացրել: Անգլիական պատմության անհերքելի փաստերի հիման վրա, մերկացնելով անգլիական իմպերիալիզմի գաղութարարական քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը գրել է, որ անգլիական կառավարությունն «աշխարհում ամենից ավելի աներսիոնիստական կառավարությունն է»<sup>30</sup>: Լենինյան այս դատահատականը հավասարապես տարածվում է ինչպես լիբերալների, այնպես էլ սոցիալանոդականների կուսակցությունից կաղմված կառավարությունների վրա, որոնք XIX դարի վերջին միապետակ էին արտահայտում թե՛ արդյունաբերական-ֆինանսական բուրժուազիայի, թե՛ լենդլորդերի շահերը և վարում էին ազրեսիվ արտաքին քաղաքականություն: Պեռևս դարակեսին Կ. Մարքսը, բացահայտելով անգլիական երկկուսակցական կառավարման սիստեմի դասակարգային էությունը, ցույց է տվել, որ Անգլիայում «Օլիգարխիան հա-

<sup>29</sup> К. Мак-Коан. *История Англии*, т. 350—351:

<sup>30</sup> В. И. Ленин, *Соч.*, т. 32, с. 14:

վերժացնում է իրեն ոչ միայն մշտապես իշխանությունը մի ձեռքում պահելու օգնությունը, այլ նաև նրանով, որ նա իշխանությունը փոխ առ փոխ բաց է թողնում մի ձեռքից, որպեսզի նույն պահին այն որսա մյուս ձեռքով»<sup>31</sup>:

Անգլիական կառավարությունը, երբ համոզվեց, որ բանակցությունների միջոցով չի կարող վերականգնել Անգլիայի տնտեսական ու քաղաքական հեղեմոնիան Քուրթիայում, սկսեց բանակցություններ գերմանական կառավարության հետ Օսմանյան կայսրության մասնատման վերաբերյալ, ձևական հիմք ընդունելով ողբերգական իրադարձությունները Մրեմրտյան Հայաստանում: 1895 թ. հուլիսի 10-ին Հատցֆելդի հետ պուլյցի ժամանակ Սուլբերին, ձգտելով իմանալ գերմանական կառավարության սրամաղրությունը և ընդհանրապես Քուրթիայի մասնատման համար հող նախապատրաստելու նպատակով ասում է, որ անգլիական կառավարությունը շատ մտահոգված է Քուրթիայում տեղի ունեցող իրադարձություններով: Անգլիական հասարակությունը վրդովված է սուլթանական կառավարության կողմից սխտեմատիկաբար հայկական ջարդեր կազմակերպելուց և ավելացնում է. «Կարող է գալ այն պահը, երբ Անգլիան ու Ռուսաստանը կմիանան, իսկ այդ կնշանակի վերջ թուրքական սլետությունը»: Հատցֆելդն առարկում է Սուլբերին և ասում, որ շատ դժվար կլինի անգլո-ռուսական համաձայնությունը, քանի որ Ռուսաստանը դեմ է ինքնավար Հայաստանի ստեղծմանը: Ի պատասխան դրան, պրեմիեր-մինիստրը որոշակիորեն հայտարարում է, որ այդ «ակնհայտ է, բայց փոփոխությունները, ոչոնք տեղի կունենան, ըստ երևույթին կլինեն բոլորովին այլ, Ռուսաստանին բարենպաստ, հետևաբար և նրա համար ընդունելի»<sup>32</sup>: Հատցֆելդը, նկատի ունենալով Անգլիայի՝ Քուրթիայի պաշտպանության ավանդական քաղաքականությունը, Սուլբերինի հայտարարությունը լուրջ չի ընդունում, բայց և այնպես իր պարտքն է համարում այդ մասին հաղորդել կանցլեր Հոհենլոհեին: Գերմանական դեսպանը գրում է, որ Սուլբերին հավա-

<sup>31</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. II, стр. 372.

<sup>32</sup> "Die Grosse Politik...". Bd. X, № 2396. Հատցֆելդը-Հոհենլոհեին,

նական է նկատի ունի Թուրքիայի մասնատումը, որի ժամանակ հայկական վերայեթներից կկազմվի ոչ թե ինքնավար Հայաստան, այլ նրանք կմիացվեն Ռուսաստանին: Ձեկուցագրի վերջում Հատցֆելդը, արտահայտելով իր անձնական կարծիքը, ասում է. «Ես չեմ տարակուսում, որ Սուլթերին բարձրացնելով արևելյան հարցը, նկատի ունի Թուրքիայի մասնատման հնարավորությունը»<sup>33</sup>: Գերմանական դեսպանի զեկուցագրից երևում է, որ Սուլթերին փորձում է շարափել դերմանական կառավարության տրամադրությունը և հայկական հարցում անգլո-ուսական համաձայնության կնքման հեռանկարի սպասնալիրով ստանալ Գերմանիայի համաձայնությունը, Թուրքիայի վրա ճնշում դործադրելու նպատակով:

Երկրորդ անգամ Սուլթերին Հատցֆելդի հետ անդրադառնում է հայկական հարցին 1895 թ. հուլիսի 30-ին, երբ դերմանական դեսպանը նրան ցույց է տալիս Իտալիայի արտաքին գործերի մինիստր Բլանկիի դադտնի հուշագիրը, սրում վերջինը, նշելով Իտալիայի Եռյակ միությունում երկար տարիների ընթացքում «անբասիր» ու «նվիրական» ծառայությունը, Գերմանիայից պահանջում է հատուցում: Բլանկին դրում էր, որ Ռուսաստանը և Ֆրանսիան Իտալիային դիմադրում են կարմիր և Միջերկրական ծովերի ավազաններում, իսկ Անգլիան անտարբեր է Իտալիայի շահերի նկատմամբ, և եթե Գերմանիան Իտալիային շօգնի ու շահատուցի, ապա նա, հասկացնում էր Բլանկին, կպառակտվի Եռյակ միության հետ ու կմիանա՝ ուս-Ֆրանսիական դաշինքին, քանի որ Ռուսաստանն ու Ֆրանսիան յբբ թե իրեն առատաձեռն խոստումներ են տալիս իրենց միանալու դեպքում օգնել նրան հողեր գրավելու նգիպասում և Տրիպոլիտանիայում<sup>34</sup>:

Բլանկիի հուշագիրը կազմված էր շանտաժի մեթոդով: Նա ցանկանում էր այդ ճանապարհով ճնշում դործադրել դերմանական կառավարության վրա և նրա հովանավորությամբ կարմիր ծովի աֆրիկյան ափում գրավել Ցեյլա նավահանգիս-

<sup>33</sup> „Die grosse Politik...“. Bd. X, № 2396. Հատցֆելդը-Հոհենլոհեին, 10 հուլիսի 1895:

<sup>34</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd X, № 2369. Բյուլլոլը-Հոհենլոհեին, Հոռմ, 15 հուլիսի 1895 և Bd X, № 2370-ի հավելվածը, Արտաքին գործերի մինիստրությունը—Հատցֆելդին, 18 հուլիսի 1895:

տր և մի մարզ, որն իտալական լմպերիալիստների կղարձ-  
 ներն պլացդարմ Հաբեշաստանը նվաճելու համար: Բլանկիի  
 հուշագրի կապակցութեամբ Սուլբերին Հատցֆելդին ասում է,  
 որ Անգլիան վճռականորեն դեմ է Իտալիայի Յեյլա նախա-  
 հանգստում ամրանալուն, քանի որ այն Կարմիր ծովում ան-  
 գլիական շահերի պաշտպանութեան համար ունի առաջնու-  
 կարգ նշանակություն: Սուլբերին Յեյլայի փոխարեն առա-  
 ջարկում է Իտալիայի ուշադրությունը հրավիրել Թուրքական  
 Ալբանիայի ու Տրիպոլիտանիայի վրա, քանի որ «Թուրքական  
 տիրապետությունը փտել է և մոտ ժամանակներս կսկսվի նրա  
 անկումը և, հետևաբար, մասնատումը»: Այնուհետև Սուլբերին  
 ավելացնում է, որ Անգլիան այլևս թույլ չի տա Արիմի պա-  
 տերազմի նախօրյակի սխալը, «երբ մերժեց Թուրքիայի մաս-  
 նատման նիկոլայ I-ի առաջարկը»<sup>35</sup>:

Պրեմիեր-մինիստրն այդ հայտարարութեամբ նպատակ  
 ուներ Իտալիային զրավել Անգլիայի կողմը և հայկական հար-  
 ցի սրման ժամանակ Իտալիայի հետ միասնաբար գործել Ռու-  
 սաստանի ու Ֆրանսիայի դեմ, միաժամանակ Իտալիայի հետ  
 միասին ճնշում գործադրել սուլթանի վրա:

Հայկական իրադարձությունների առիթով Օսմանյան կայ-  
 սրությունը մասնատելու վերաբերյալ անգլիական առաջար-  
 կին Գերմանիան հավանություն չտվեց: Արտաքին գործերի  
 մինիստրության խորհրդատու Հոլշտայնը անգլիական առա-  
 ջարկը դիտում է որպես «Բալկաններում հրդեհ առաջացնելու  
 նախադիժ»<sup>36</sup>, ավստրո-իտալական հակասությունները բոր-  
 բոքելու և Եռյակ միությունը պառակտելու միջոց, քանի որ  
 Ավստրո-Հունգարիան դեմ էր Իտալիայի ամրապնդմանը  
 Բալկաններում: Բացի այդ, ավստրո-հունգարական կառավա-  
 րությունը վախենում էր Թուրքիայի մասնատումից, որովհետև  
 այն կարող էր տեղիք տալ սլավոնական ժողովուրդների ազ-  
 գային-ազատագրական պայքարի վերելքին և Բալկաններում

<sup>35</sup> „Die Grosse Politik...“ Bd X, № 2371. Հատցֆելդը-Հունցերեն, 30 հուլիսի 1895 և Bd X, № 2372, Հատցֆելդը-Հոլշտայնին, 31 հուլիսի 1895.

<sup>36</sup> „Die Grosse Politik...“, Bd X, № 2377. Հոլշտայնը-Կրյեբլեն-Վեյ-  
 սերլին, 3 օգոստոսի 1895:

բարդութիւններ առաջացնել: Այդ պայքարին կարձադանքին Ավստրո-Հունգարական կայսրութեան սլավոնական ժողովուրդները և «կարկատանային» կայսրութեան գոյութիւնը կղբիներ հարցականի տակ: Գերմանական կառավարութիւնն անգլիական առաջարկը դիտում էր նաև որպէս կարմիր ծովից Իտալիային դուրս մղելու, Եգիպտոսում անգլիական դիրքերն ամրապնդելու փորձ<sup>37</sup>: Ահա թե ինչու Գերմանիան Սուրբերիի առաջարկը դիտում էր որպէս «մարտը անգլիական պլան»<sup>38</sup> և սրոշում է մերժել այն:

Հայկական հարցի առիթով Թուրքիայի մասնատման անգլիական ստաշարկի էութիւնը բացահայտել է նաև Վիլհելմ II-ը: Հատցֆելդի դեկուցագրի վրա կայսրը մակագրել է «Քանի որ Անգլիան շունի բանակ, ապա Ավստրիան պետք է նրա շահերի համար կատարի վարձու հետևակի ծառայութիւն, և երբ Ավստրիան ընդգրկվի պատերազմի մեջ, Եռյակ միութիւնը պետք է հետևի նրան, և այն ժամանակ Սուրբերիին մեր դեմ կհրահրի Գալիային: Ամեն ինչ ավարտված է, և Աֆրիկան մեզ համար կորած»<sup>39</sup>:

Իմպերիալիստական Գերմանիան, որն օգտագործում էր ամեն մի դեպք, ինչպիս և սլաշտպանում սուլթանիզմի հակա-նայկական քաղաքականութիւնը, որպէսզի ձևը բերեր սուլթանի վստահութիւնն ու բարեհաճ վերաբերմունքը գերմանական կապիտալի Թուրքիա ներթափանցման համար, դտնում էր, որ ինքը շահագրգռված չէ «Թուրքիայի կործանման արագացման մեջ»<sup>40</sup>: Գերմանական կառավարութիւնը ձգտում էր սլահայանել Թուրքիայի «ամբողջականութիւնը», որպէսզի ժամանակ շահեր ու հող նախապատրաստեր նրան ամբողջութեամբ կլանելու համար, և ոչ թե մասնակցեր Թուրքիայի մասնատմանը, որի ժամանակ Գերմանիային կհասներ մի փոքրիկ կտոր, իսկ Անգլիային՝ առյուծի բաժինը: Դրա հա-

<sup>37</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“ Bd X, № 2374.

<sup>38</sup> „Die Grosse Politik.“. Bd X, № 2380. Կիդերլեն-Վեխտերը-Արտաքին գործերի գերատեսչութեանը, 5 օգոստոսի 1895.

<sup>39</sup> „Die Grosse Politik...“ Bd XII, № 3100. Հատցֆելդի դեկուցագիրը, 7 հունվարի 1897.

<sup>40</sup> „Die Grosse Politik...“ Bd X, № 2404.

մար էլ Հատցֆելդին հրահանգում են Սուլբերիի հետ բանակցությունների ժամանակ նախաձեռնություն հանդիս չբերել և առաջ չքաշել Թուրքիայի մասնատման որևիցե պլան, ինչև զուսպ և զգուշ<sup>41</sup>։

1895 թ. ամռանը Վիլհելմ II-ը դիվանագիտական խորհրդատու Կիդերլեն-Վելստերի հետ մեկնեց անդլիական Կառլսբադաքը, որտեղ հանդիպեց Սուլբերիի հետ։ Այդ հանդիպման նախօրյակին Հատցֆելդը Հոլշտայնին հաղորդում է, որ Թուրքիայի մասնատման Սուլբերիի պլանով նախատեսվում է Ռուսաստանին հանձնել Կ. Պոլիսը և այն բոլորը, ինչ վերաբերում է Թուրքական մայրաքաղաքին։ Անդլիական պլանի պաշտպանության դեպքում Գերմանիան կստանա լիարժեք հատուցում Թուրքական տերիտորիաներից, կամ Աֆրիկայում, ինչպես օրինակ, Զանդիբարը։ Միայն մաս չի ստանա Ֆրանսիան, որի հետ դաշնակցելու կարիքը Ռուսաստանը չի ուզա, քանի որ կիրականանա Կ. Պոլիսը և նեղուցները նվաճելու նրա դարավոր երազանքը<sup>42</sup>։ Հատցֆելդի այս զեկուցագրից հետո Հոլշտայնը փոխեց իր դիրքը Թուրքիայի մասնատման անդլիական պլանի նկատմամբ երկու պատճառով՝ նախ Գերմանիան կստանար հավասարազոր հատուցում, ապա, որ ամենից դիտավորն էր Գերմանիայի համար, Ֆրանսիան կըզրկվեր իր դաշնակից Ռուսաստանից և կչեզոքացվեր։ Ուստի Հոլշտայնը գտնում է, որ «Սուլբերիի հետ բանակցությունների վարելն անհրաժեշտ է և ցանկալի»<sup>43</sup>։ Դրանից հետո Հոլենլոհեն Հատցֆելդին, իսկ Հոլշտայնը՝ Կիդերլեն-Վելստերին հրահանգում են՝ Ռուսաստանի պահանջները բավարարելու միջոցով «Ֆրանսիային շեղոքացնելու կուրսը խրախուսել»<sup>44</sup>։ Սակայն այս հրահանգը Վիլհելմ II-ին ուշ հասավ, Սուլբերիի

<sup>41</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd X, № 2374 Ռուսկանը-Հատցֆելդին, 2 օգոստոսի 1895.

<sup>42</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd X, № 2381. Հատցֆելդը-Հոլշտայնին, 5 օգոստոսի 1895.

<sup>43</sup> „Die Grosse Politik...“. Bd X, № 2382. Հոլշտայնը-Հոլենլոհեին. 5 օգոստոսի 1895.

<sup>44</sup> „Die Grosse Politik...“. Bd X, № 2383 Հոլշտայնը-Կիդերլեն-Վելստերին, 6 օգոստոսի 1895.



հետ ունեցած հանդիպումից հետո, որի ժամանակ կայսրը վճռականորեն մերժել էր պրեմիեր-մինիստրի պլանը: Երկրորդ անգամ կայսրի ու Սուլթերիի հանդիպումը տեղի չունեցավ, վերջինիս «խիստ զբաղված» լինելու պատճառով:

Կաուսի բանակցությունների ձախողումից հետո անգլիական կառավարությունը Թուրքիայի մասնատման պլանը առաջարկում է Ֆրանսիային, խոստանալով նրան հատուցել Մարոկկոյով, առանց Տանժերի: Այդ մասին Հատցֆելդը իմանում է Լոնդոնի ֆրանսիական դեսպան Կուրսելից<sup>45</sup>: Հոլշտայնը, ստանալով Հատցֆելդի պեկուցագիրը անգլո-ֆրանսիական բանակցությունների վերաբերյալ, գտնում է, որ խարզախ Ալբրոնը երբևիցե չի հաշտվի Կ. Պոլիսն ու սեծովյան նեղուցները Ռուսաստանին, իսկ Մարոկկոն՝ Ֆրանսիային տալու հետ: Նա հասկացավ, որ Անգլիան Արեմտյան Հայաստանի իրադարձությունների հողի վրա հանդես գալով Թուրքիան մասնատելու պլանով, հետասկզմ է համաեվրոպական պատերազմ հրահրելու նպատակ, որի ժամանակ Անգլիան կչախչախի իր հակառակորդ պետություններին մեկը մյուսի ձեռքով, իսկ ինքը չի մասնակցի ու կխաղա սուպերարբիտրի (դերի-րավարարի) դեր<sup>46</sup>:

Գերմանիան սկզբունքորեն դեմ չէր Թուրքիայի մասնատմանը, միայն թե այն կատարվեր ոչ թե անգլիական, այլ գերմանական պլանի համաձայն: Ուստի Կաուսի բանակցություններից հետո, 1895 թ. օգոստոսի վերջին, Վիլհելմ II-ը ընդունում է Բեռլինի անգլիական դեսպանատան ռազմական կցորդ գնդապետ Սուայնին և ասում, որ օր առ օր սպասվում է Թուրքիայում իրադարձությունների բարդացում, և եթե Անգլիան իր նավատորմիղը մտցնի Մարմարա ծովը, Գերմանիան կպաշտպանի նրան, միայն թե Թուրքիայի տերիտորիաների բաժանման ժամանակ Ալստրո-Հունդարիային հանձնվի թուրքական Բալկանները մինչև Մալոնիկ, Իտալիային տրվի Տրիպոլիտանիան և Մուդանը, Ռուսաստանը ստանա Կ. Պոլի-

<sup>45</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd X, № 2387. Հատցֆելդը-Արտաքին գործերի գերատեսչությանը, 14 օգոստոսի 1895.

<sup>46</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“. Bd X, № 2388. Հոլշտայնը-Հատցֆելդին, 14 օգոստոսի 1895.

սը, Փոքր Ասիան և Սիրիան<sup>47</sup>: Վիլհելմ II-ը ցանկանում էր Թուրքիայի մասնատումը կատարել այնպես, որ այդ հողի վրա Ռուսաստանին ընդհարեր Ֆրանսիայի հետ և շեղյալ դարձներ 1893 թ. ռուս-ֆրանսիական դաշինքը: Կայսրն իր այդ մտադրության մասին պատմել է նաև Պետերբուրգի դեյմանական դեսպան գեներալ Շվայնիցին, որի հարցին, թե ի՞նչ կստանա Գերմանիան, Վիլհելմ II-ը պատասխանել է, որ Գերմանիան «որոշ բան կստանա Աֆրիկայում... բայց ամենից կարևորն այն է, որ Ֆրանսիան ոչինչ չի ստանա և դրա համար կպառակտվի Ռուսաստանի հետ»<sup>48</sup>: Այլ կերպ ասած, Գերմանիան ձգտում էր հայկական հարցն օգտագործել շահադիտական նպատակներով, ի շեք դարձնել ռուս-ֆրանսիական դաշինքը, գալիք պատերազմի ժամանակ չկովել երկու ռազմաճակատում և Ֆրանսիային դրկել ունենալի դիմելու հրահարավորությունից: Թուրքիայի մասնատման անդլիական ու գերմանական պլաններն ապացուցում են, որ իմպերիալիստական այդ պետություններից յուրաքանչյուրը աշխատում էր հալ ժողովրդի սոցալիստադարական շարժումն օգտագործել իր նեղ շահերի համար՝ ի վնաս մյուսի: «...Ազգային ազատության համար իմպերիալիստական տերություններից մեկի դեմ մղվող պայքարը, — դրել է Վ. Ի. Լենինը, — որոշ պայմաններում կարող է օգտագործվել մի ուրիշ «մեծ» տերության կողմից իր նույնատեսակ իմպերիալիստական նպատակների համար»<sup>49</sup>:

Անգլիայի ու Գերմանիայի քաղաքականությունը հայկական հարցում կրում էր խիստ սուբյեկտիվ բնույթ: Թե՛ մեկը և թե՛ մյուսը բարձրացնում էին այն հաշվենկատությամբ: Դրա լավագույն ապացույցներից մեկը կանցլեր Հոհենլոհեյի նեղ, մտերմական շրջանում կատարած հայտարարությունն է: Նա, բացահայտելով կառավարության արևելյան քաղաքականության դադանիքը, ցինիկորեն ասում է, որ իրեն բոլորովին չի հետաքրքրում, թե քանի հազար հայ կկոտորվի Թուրքիայում, իրեն ամենից առաջ հետաքրքրում է այն, որ Անգլիան

47 Տե՛ս J. A. S. Grenville. *Կշված աշխատ.*, էջ 39—41:

48 H. Schweinitz. *Briefwechsel*, Berlin, 1928, s. 325.

49 Վ. Ի. Լենին, *Ե՛ժ*, հատ. 27, էջ 313:

ու Ռուսաստանը համաձայնություն չկերին: մերձավորարե-  
վելյան հարցի վերաբերյալ, որը կխաչընդուսեր Գերմանիայի  
արևելյան քաղաքականության իրադրությունը<sup>50</sup>:

Անգլիական դիվանագետները հայկական հարցի շարաշահ-  
մամբ ձգտում էին մասնատել Քուրբիան, իսկ Քուրբիայի  
մասնատման օգնությամբ կազմալուծել նույակ միությունը:  
Այդ նպատակով նրանք խրախուսում էին իմպերիալիստական  
Խալիպայի ազրեսիվ սլանները, մանավանդ Բալկանների նը-  
կատմամբ, որպեսզի սրեին ավստրո-խալիպական տարածաշ-  
նությունները: Գերմանական կառավարությունը, որպեսզի  
ձախողեր Նույակ միության պատակտման անգլիական սլանը,  
խալիպական կառավարության առաջ բացահայտում է խարդախ  
Ալբրոնի նպատակները: 1895 թ. կանցլեր Հոհենլոհեն Հոռմի  
գերմանական դեսպան Բյուլովին գրում է, որ Անգլիայի կող-  
մից «հայ-թուրքական հարցը կդառնի նրա համար ցանկալի  
լուծում համակիրուպական պատերազմում առանց անգլիական  
դրամի ու արյան դոհաբերության»<sup>51</sup>, և հանձնարարում՝ այդ  
մասին տեղյակ պահել իտալական կառավարությանը:

Գերմանիայի գաշնակից Ավստրո-Հունգարիան նույնպես  
-թշնամարար էր դիտում հայ ժողովրդի ազգային-ազատա-  
պրական շարժումները: նաև 1890-ական թվականներին, վա-  
խենալով, որ ազատագրական շարժման ալիքը կտարածվի  
Բալկաններում և կընդգրկի «կարկատանային» կայսրության  
հպատակ սլավոնական ժողովուրդներին: Այդ իսկ պատճառով  
ավստրո-հունգարական կառավարությունն անցկացնում էր  
Քուրբիայի ամբողջականությունը պահպանելու և թուրքա-  
հպատակ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ թշնամա-  
կան դիրք բռնելու քաղաքականություն: Դեռևս 1875 թ. հուն-  
վարի 29-ին, արքունական խորհրդակցության ժամանակ, ար-  
տաքին գործերի մինիստր Անդրաշին ասաց, որ Քուրբիան  
Ավստրո-Հունգարիայի համար, կարծեք թե, նախախնամու-  
թյան օրենքով պատնեշ է, քանի որ Քուրբիան Բալկաններում  
պահպանում է ստատուս-քվոն: Եթե Քուրբիան կործանվի,

<sup>50</sup> *St. u. Ch. Hohenlohe — Schillingsfurst. Denkwürdigkeiten.*  
Hrsg. von F. Curtius. Stuttgart—Leipzig, 1907, Bd. I, էջ 113.

<sup>51</sup> „Die Grosse Politik.“ Bd X, № 2564. Հոհենլոհեն-Բյուլովին,  
17 դեկտեմբերի 1895.

աղգային-աղատադրական շարժումները վերեք կապրեն, ավստրո-հունգարական կառավարությունը ոչ մի կերպ չի կարողանա ճնշել դրանք, հետևաբար «Ավստրո-Հունգարիային կսպառնա կործանման վտանգը, և մենք պետք է մեզ վրա վերցնենք «հիվանդ մարդու» դերը»<sup>52</sup>: Այդ նույն իրադրություններ Ավստրո-Հունգարիայի համար գոյություն ուներ նաև 1890-ական թվականներին: Միաժամանակ ավստրո-հունգարական կառավարությունը տագնապով էր նայում Ռուսաստանի կողմից սևծովյան նեղուցների գրավմանը, որն աներկբայորեն կմեծացներ վերջինի ազդեցությունը Բալկաններում ի վնաս առաջինի: Այդ իսկ պատճառով նա շարունակում էր պաշտպանել Թուրքիայի ամբողջականությունը և սուլթանիլ-մի հակահայկական քաղաքականությունը: Պատմաբան Թեյլորը նշում է, որ ավստրո-հունգարական արտաքին դործերի մինիստր Կալնոկին «հայկական ջարդերի լուրը բառացիորեն հիացմունք պատճառեց, քանի որ դրա հետևանքով իբր թի փոթորկի օջախը Բալկաններից տեղախոխվել է այլ տեղ»<sup>53</sup>, իսկ ավստրո-հունգարական կայսր Ֆրանց Իոսիֆ II-ը Վիեննայի գերմանական դեսպանին ասում էր. «Հայերի ճակատագիրն իրեն բոլորովին չի հետաքրքրում, և որ նրան անհամեմատ շատ է անհանգստացնում Ռուսաստանի նկատմամբ բալկանյան սլավոնական ժողովուրդների համակրանքի մեծացումը»<sup>54</sup>:

Փաստերն ապացուցում են, որ Ավստրո-Հունգարիան որքան վախենում էր Օսմանյան կայսրության քայքայման ծանր հետևանքներից իր համար, այնքան նա թշնամաբար էր վերաբերվում հայ ժողովրդի աղգային-աղատադրական շարժումների նկատմամբ: Թուրքիային «պաշտպանելու» և իր կառավարության հակահայկական քաղաքականությունն անցկացնելու համար Կ. Պոլսի ավստրո-հունգարական դեսպան Բա-

<sup>52</sup> G. H. Rupp, A Wavering Friendship. Russia and Austria 1876—1878. L., 1941, p. 39.

<sup>53</sup> А. Дж. П. Тэйлор. Борьба за господство в Европе 1848—1918 гг., М., 1958, стр. 369.

<sup>54</sup> «Вопросы истории», 1947, № 9, стр. 88. Տե՛ս նաև «Историк-марксист», 1927, № 19, էջ 43.

րոն Կալիշին սուլթանը պարգևատրում է ադամանդյա շքանշանով<sup>55</sup>։

Թուրքիան մասնատելու անգլիական պլանը, որքան ուժեղ շրջադրություն էր հանդիպում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կողմից, այնքան անգլիական կառավարությունը ձգտում էր մերձենալ Ռուսաստանին և արևելյան հարցում համաձայնություն կնքել նրա հետ, որն իր արտահայտությունն է դառնում պառլամենտի անդամների ելույթներում և լայնորեն արտացոլվում անգլիական մամուլում։

1894 թ. Լոնդոնի ռուսական դեսպան Սաաալը հաղորդում է Պետերբուրգ, որ պառլամենտի անդամ Չաննինդը իր ելույթում ցանկություն հայտնեց հայկական հարցին տալ եվրոպական բնույթ։ Ընդ որում նա հույս է դնում Անգլիայի ու Ռուսաստանի մերձեցման վրա։ Նրա ելույթը բխում է անգլիական կառավարության քաղաքականությունից, «որը Ռուսաստանին նայում է որպես իր առաջին դաշնակցի Թուրքիան մասնատելու գործում»<sup>56</sup>։

Անգլիական պետական ու քաղաքական գործիչներ Գլուդստոնը, Ռոզբերին, Սոլսբերին, Քեմբերլեյը և մյուսները հաճախակի ճտուեր են արտասանում հայերի «օգտին»՝ սուլթանի հասցեին սպառնալիքներով լի։ Անգամ թադուհին 1895 թ. օգոստոսի 15-ի գահակալական ճառում անդրադառնում է հայկական հարցին։ Անգլիական պահպանողական ու լիբերալ ուղղության պատկանող թերթերում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, որոնցում սքողում են իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի միջև գոյություն ունեցող սուր նախասությունները և կառավարությունից պահանջում շրջադրել Ռուսաստանին ու թույլ տալ նրան Դեղին ծովի ափին նվաճելու շատ շող նավահանգիստը։ «Դրա շնորհիվ,— գրում է «Spectator» թերթը,— լրիվ հնարավոր կգանձա շահերի, ազդեցության ոլորտների վերաբերյալ փոխադարձ համաձայնությունը, ընդ որում ոչ միայն Արարատից մինչև Դե-

<sup>55</sup> Տե՛ս АВПР, ф. «Канцелярия», 1895, д. 26, л. 94. Нелидов-Шишкину, 23 февраля 1895.

<sup>56</sup> АВПР, ф. «Канцелярия», 1894, д. 56, л. 121—122. Е. Е. Стааль-Гирсу, 26 декабря 1894.

դին ծով, այլ նաև էգեյան ծովից մինչև Արարատ»<sup>57</sup>։ Ռուսաստանի հետ մերձենալու կամպանիան մեծ ծավալ է ընդունում 1895 թ.։ Հատկապես, հազարգում էր Հոնգոնից Յլգա նովիկովան, ուժեղ ազիտացիա էր մղում «Observer» թերթը<sup>58</sup>։ Մուլի իմպերիալիստ Արգալի հերցոգը «Times» թերթում գրում էր, որ, Թուրքիայի հետ կնքած մի շարք պայմանագրերի համաձայն, Անգլիան իրափունք ունի միջամտելու Բ. Դոան ներքին գործերին։ Անգլիական կառավարությանն անհրաժեշտ է մի կողմ թողնել իր թշնամանքը Ռուսաստանի նկատմամբ և խնդրել նրան նվաճել Արևմտյան Հայաստանը<sup>59</sup>։ Անգլիական մամուլը փորձում էր օգտագործել անգամ Ալեքսանդր III-ի մահը՝ Ռուսաստանի հետ մերձենալու և Թուրքիան մասնատելու համար։ Թերթերը դավաբանում էին մահացած ցարի գործունեությունը, իսկ կառավարությունը, հուզարկափորությունը մասնակցելու համար, Ռուսաստան ուղարկեց Ռելսի արքայազնին ու նրա կնոջը<sup>60</sup>։ Լիբերալների կուսակցության օրգան «Daily News»-ը, պաշտպանելով անգլո-ռուսական մերձեցման գաղափարը, նշում էր, որ Անգլիայում միայն պառավ կանայք են պահպանում Ռուսաստանի նկատմամբ հակակրանքի նախապաշարմունքը։ Անգլիացիները գիտակցում են, որ բոլոր երկրների բարեկամությունից ամենակարևորն ու անհրաժեշտը Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ բարեկամությունն է<sup>61</sup>։

1894 թ. նոյեմբերի 9-ին Հոնգոնի յուրյ-մերի ավանդական ճաշկերույթի ժամանակ պրեմիեր-մինիստր Ռոդրերին հայտարարեց, որ լիբերալների կուսակցության կառավարությունը գլուխն անցնելուց հետո բարելավվել են անգլո-ռուսական հարաբերությունները և դարձել անկեղծ։ Նա չէր զլանում հաճելի խոսքեր ասել Ռուսաստանի հասցեին և հույս էր հայտնում, որ Արևելքի հարցում Անգլիան ու Ռուսաստանը կընթանան միասին և կամրապնդեն խաղաղությունն աշխարհում<sup>62</sup>։ Անգլիական մամուլը դտնում էր, որ անգլո-ռուսական

<sup>57</sup> «Новое время», 10 ноября, 1895, № 7065.

<sup>58</sup> Տե՛ս «Московские ведомости», 18 февраля 1895, № 48.

<sup>59</sup> Տե՛ս «Times», 25 դեկտեմբերի, 1895.

<sup>60</sup> Տե՛ս «Times», 19 հոկտեմբերի և 2 նոյեմբերի 1894.

<sup>61</sup> Տե՛ս «Новое время», 7(19) декабря 1894.

<sup>62</sup> Տե՛ս «Times», 4 դեկտեմբերի 1894.

մերձեցման բանալին պետք է դառնա հայկական հարցը և, լավ իմանալով, որ Ռուսաստանի հետ մերձենալու ուղին անցնում է Փարիզով, թերթերն առաջարկում են բարեկամանալ նաև Ֆրանսիայի հետ, շնայած որ այդ կարող էր լարել հարաբերությունները Նոյակ միության հետ: Անգլիական թերթերը գտնում էին, որ անգլո-ռուսական հիպոթետիկ բարեկամությունը Ռուսաստանին իրավունք կտա սևծովյան նեղուցներում ազատ երթևեկելու, իսկ Անգլիային՝ ուժեղացնելու նավատորմի Միջերկրական ծովում, Ռուսաստանը չի մտնի Պարսից ծոց, Անգլիան էլ չի առարկի, որ Ռուսաստանը գրավի հայկական վիլայեթները: Հայերին օգնելու ռեալ միջոցն Արևմտյան Հայաստանում ռուսական պրոտեկտորատի հաստատումն է, կամ նրա միացումը Ռուսաստանին<sup>63</sup>:

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և Անգլիայի ագրեսիվ պլաններն իրագործելու մամուլի ծավալած կամպանիան, ինչպես վերը նշվեց, ավելի ուժեղացավ 1895 թվականին: «Daily Telegraph» լրագիրը հարձակվում է կառավարության վրա, դատապարտում նրա ոչ վճռական արևելյան քաղաքականությունը և իր դիրքն արդարացնում հայկական դատի «պաշտպանությունը»: Լրագիրը գրում էր. «Մեր կառավարությունը չէ կամենում կատարել իր պարտաւորությունը և կոչը է ձևանում թիրքական դադանութեան և կամայականութեան առաջ»<sup>64</sup>: Մարտի 27-ին թերթը հանդես էր գալիս ավելի սուր հոդվածով: Նա գրում էր. «Անգլիայի համբերությունը հատել է, այնպիսի ամոթալի կերպով կառավարվող և բռնաբարվող երկիր՝ ինչպես Հայաստանն է, պէտք է խլվի փաշաների ձեռքերից» և այնտեղ ապահովվի խաղաղությունը: «Բ. Թուրք պէտք է և պարտաւոր է ականջ դնել քաղաքակրթության վրդովված ձայնին... պէտք է Հայաստանում ռեֆորմներ մտցնվեն, այդ մասին այլ ևս ոչ մի կասկած չէ կարող լինել»<sup>65</sup>:

Հայկական հարցը բարձրացնում են ոչ միայն Անգլիայի կենտրոնական թերթերը, այլ նաև կոմսություններում հրատարակվող լրագրերը: Բրիտտոլում լույս տեսնող «Western

<sup>63</sup> Տե՛ս «Новое время», 14 (26) ноября и 10(22) декабря 1894.

<sup>64</sup> «Մշակ», 1895, № 34.

<sup>65</sup> Նույն տեղը, № 37.

Daily Press»-ը 1895 թ. մարտի 30-ին գրում էր. «Բարձր Դուան վրա կարելի է ազդել միայն խիստ միջոցներով, իսկ հասարակ ցույցերի վրա նա նայում է ոչ աւել, քան մի հաշոյի վրա»<sup>66</sup>; Լոնդոնի «Methodist Times»-ը նույնպես մեղադրում էր Սոլսբերիի կառավարութեանը անվճռական կուրս անցկացնելու մեջ: Լրագիրը նշում էր, որ Անգլիան հատուկ պատասխանատվություն էր կրում Թուրքիայի դոյութունը պահպանելու համար, «ուստի մենք էլ բարոյապէս պատասխանատու ենք կոտորածների և գազանոթիւնների համար: Օլիվեր Կրոմվելը (իմա Կրոմվելը—Լ. Բ.) խնդիրը կը լուծէր մի օրում»<sup>67</sup>: Միանգամայն իրավացիորեն «Մշակը» «Անգլիական մամուլի բռնած դիրքը» առաջնորդողում գրել էր, որ անգլիական նշանավոր թերթերը «զժգոհ են կառավարութեան դանդաղ քաղաքականութիւնից և պահանջում են, որ Անգլիան ներգործական դեր կատարի»: Այնուհետև առաջնորդողը, ընդհանրացնելով թերթերի պահանջը, նշում էր. «Ընդհանուր կարծիքը դատապարտում է թիւրքերին և պահանջում է, որ կառավարութիւնը շուտափոյթ միջոցներ ձեռք առնի...»<sup>68</sup>:

Ցարական կառավարութիւնը, կռահելով անգլիական դիվանագիտական խաղի հետին մտքերը, հաշվի առնելով երկրի ներքին վիճակը և միջազգային դրութիւնը, մերժեց անգլիական առաջարկը, հրաժարվեց դրավել Կ. Պոլիսը և սեծովյան նեղուցները, որովհետև Թուրքիայի մասնատումը կվատացներ Ռուսաստանի հարաբերութիւնները իր դաշնակից Ֆրանսիայի հետ, որի ֆինանսական օլիգարխիայի շահերը պահանջում էին պահպանել Օսմանյան կայսրութեան ամբողջականութիւնը: «Նեղուցների հարցը,— ասել է Հանոտոն Փարիզի գերմանական դեսպանին,— շափազանց մոտիկից է շոշափում մեր շահերը և ես հույս ունեմ, որ Ռուսաստանը ներանց ձեռք չի տա»<sup>69</sup>, իսկ 1897 թ., երբ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Մուրավևը Փարիզում էր, Հանոտոն նորան հայտնում է, որ Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի նվա-

<sup>66</sup> «Մշակ», 1895, № 40:

<sup>67</sup> Նույն տեղը, № 41:

<sup>68</sup> Նույն տեղը, № 46:

<sup>69</sup> „Die Grosse Politik...“. Bd XII, № 2916. Մյունստերի պեկուցագիրը, 25 ապրիլի 1896.



ճումը կհասցնի Թուրքիան մասնատելուն, հետևաբար և համակիրոպական պատերազմի, որը բոլորովին էլ ցանկալի չէ Ֆրանսիայի համար<sup>70</sup>: Հասկանալի է, որ նման պայմաններում Ռուսաստանը չէր կարող ընդունել Թուրքիան մասնատելու անդլիական պլանը Ֆրանսիայի հետ պառակտվելու, ինչպես և ֆրանսիական վարկերից զրկվելու գնով, որոնց կարիքը ռուսական կառավարությունը խիստ զգում էր նախատեսվող Կրամական ռեֆորմ կատարելու կապակցությամբ:

1890-ական թվականներին Ռուսաստանն ամենից շատ շահագրգռված էր Հեռավոր Արևելքով, որտեղ նա ցանկանում էր ստեղծել Դեղին Ռուսաստան և նվաճել շատ չող նավահանգիստ Դեղին ծովի ափին: Բացի այդ, Հեռավոր Արևելքի հետ ծովային ճանապարհներով հաղորդակցությունն ապահովելու համար Ռուսաստանի շահերը պահանջում էին ազատ նավարկություն Սուեզի ջրանցքում: 1896 թ. սեպտեմբերի 26-ին Սուլթերին Նիկոլայ II-ի հետ զրույցի ժամանակ նորից բարձրացրեց Օսմանյան կայսրության մասնատման հարցը, բայց այս անգամ ևս անդլիական կառավարության առաջարկը մերժվեց:

Իմպերիալիստական Անգլիան, հանդիպելով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Նոյակ միության ուժեղ դիմադրությանը, որոշեց նպատակին հասնել թուրքական տիրապետության դեմ ուղղված հայ, հույն և մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների չարաշահման միջոցով: Սուլթերի կառավարությունն սկսեց «պաշտպանել» ազատագրական շարժումները, նրանց մեջ տեսնելով այն ուժերին, որոնք կարող էին Օսմանյան կայսրությանը հասցնել քայքայման, հետևաբար և հեշտացնել անդլիական ազրեսիվ պլանների իրագործումը: Անգլիան, հանդես գալով կրոնական հալածանքների ու ազգային ճնշման ենթարկվող քրիստոնյա փոքր ժողովուրդների պաշտպանի դիմակի տակ, պահանջում էր Թուրքիայում անցկացնել ռեֆորմներ և Արևմտյան Հայաստանին տալ ինքնավարություն: Ռեֆորմների իրագործման պահանջով Սուլթերին ցանկանում էր սահմանափակել բացարձակ միապետ սուլթանի իրավունքները և, ինչպես սվերը նշվեց,

<sup>70</sup> Տե՛ս «Красный архив», 1931, № 4—5 (47—48), էջ 79.

վերականգնել անգլիական հեգեմոնիան Թուրքիայում ու վերջինի՝ ռուսական օրիենտացիան փոխել տալ անգլիական կողմնորոշմամբ:

Ռուսաստանը և Ֆրանսիան, վախենալով, որ հայկական հարցի սպեկուլյացիայի օգնությամբ Անգլիան կուժեղացնի իր ազդեցությունը Թուրքիայի վրա և վնաս իրենց, մասնակցեցին Արևմտյան Հայաստանի համար ռեֆորմների նախագծի մշակմանը և 1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի հետ այն ներկայացրին սուլթանական կառավարությանը: Բայց, քանի որ նրանցից և ոչ մեկը իրականում շահագրգռված չէր հայ ժողովրդի ծանր դրության բարելավմամբ, մշակված ռեֆորմների նախագիծը մակերեսային էր, որոշ հոդվածներ էլ՝ մեռած տառ: Այն արևմտահայերին լրիվ չէր երաշխավորում անձի անվտանգություն, սեփականության ապահովություն և չէր կանխում թուրք ու քուրդ բեգերի հետագա կամայականությունները: Անգամ անգլիական «Daily News» բուրժուական լրագիրը ռեֆորմների նախագիծը գտնում էր անբավարար և առաջարկում էր Հայաստանին Բուլղարիայի նման «անջատել Թուրքիայից և մի առանձին նահանգ դարձնել՝ սուլթանի անուանական գերագոյն իշխանութեան տակ: Կառավարչական բոլոր պաշտոնները տալ հայերին միայն»<sup>71</sup>: Չնայած դրան, սուլթանը մերժեց ռեֆորմների նախագիծը և հայտարարեց, որ ինքը նպատակ ունի ռեֆորմներ անցկացնել ոչ թե հայերի, այլ կայսրության բոլոր ժողովուրդների համար: Բայց վերջ ի վերջո Արդու-Համիդ II-ր հարկազրկված «ընդունեց» բարենորոգումների նախագիծը, սակայն դրանից հետո էլ՝ 1896—1897 թթ., շարունակեց հայկական կոտորածները: Այդ կապակցությամբ ռուսական «Վեստնիկ Եվրոպի» ամսագիրը սպանիչ հեղնանքով գրել է, որ սուլթանը հայկական հարցը լուծում է մաքուր թուրքական ճաշակով: «Մի կողմից՝ միջոցներ է ձեռնարկում Հայաստանից հայերին արմատախիլ անելու... , իսկ մյուս կողմից՝ հրապարակում սուլթանի բարի մտադրությունների թվարկմամբ, օտարերկրյա զիվանագետներին

<sup>71</sup> «Մշակ», 1895, № 52.

դինաթափելու կարողութեամբ մեծախոստում միջոցառումները հրամանագիր»<sup>72</sup>;

XIX դարի վերջին երկու տասնամյակներում ցարական Ռուսաստանի և Թուրքիայի շահերը Անգլիայի դեմ ժամանակավորապես համընկնում էին իրար: Ռուսաստանը, գրառված լինելով Միջին Ասիայում և Հեռավոր Արևելքում, շահագրգռված էր, որ սևծովյան նեղուցները լինեին փակ, որի համար կողմ էր Օսմանյան կայսրության ամբողջականութեան պահպանմանը: Այդ իսկ պատճառով նա պաշտպանում էր սուլթանի հակաանգլիական ու հակահայկական քաղաքականությունը: Ռուսաստանի նման քաղաքականությունը մերձեցրեց սուլթանի դմին ցարի դմի հետ, և Ռուսաստանը դարձավ Թուրքիայում ղերիշխող պետություն: Այդ մերձեցումն այն աստիճանի էր, որ Կ. Պոլսի ուսական ղեսպանատան ռազմական կցորդ Ն. Պեշկովը ռազմական մինիստրին հղած գաղտնի ղեկուցագրում առաջարկում էր Թուրքիայի հետ ղաշնագիր կնքել, օգտվելով նրանից, որ համարյա միաժամանակ Բեռլինի և Վիեննայի թուրքական ղեսպանները սուլթանական կառավարությունը ղեկուցել էին, որ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև կայացել է համաձայնություն Օսմանյան կայսրությունը մասնատելու վերաբերյալ, որը թուրքական կառավարող շրջաններում առաջացրել է ղարմանք, ղարմանքը փոխարինել հիասթափությունով, հիասթափությունը՝ վրդովմունքով: Այժմ, ասում է Պեշկովը, Թուրքիան ապրում է ձղնաժամ և ամենանպաստավոր պահն է ղաշինը կնքելու համար, որպեսզի վերականգնվի Ռուսաստանի նախկին աղղեսությունը Թուրքիայում<sup>73</sup>: Պեշկովի առաջարկը բխում էր նաև նրանից, որ վերջին տարիներին թուրքական կառավարող շրջաններում ուժեղացել էր համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, ցարի դմի հակահայկական քաղաքականության հողի վրա: Այդ մասին էր վկայում նաև Թուրքիայի ներքին գործերի մինիստր Մունիր փաշայի սուլթանին ներկայացրած ղեկուցագիրը, որում մինիստրն առա-

<sup>72</sup> «Вестник Европы», 1895, т. IV, стр. 373.

<sup>73</sup> ЗСМ ЦГВИА СССР, ф. 450, оп. I, д. 106, лл. 3—6. Н. Пешков—военному министру, 9 ноября 1887, № 98.

ջարկում ու հիմնավորում էր Ռուսաստանի հետ դաշինք կըն-  
քելու անհրաժեշտությունը:

Մունիր փաշայի ղեկուցագիրը քննարկվում էր Թուրքիայի  
մինիստրների խորհրդի արտահերթ նիստում, որը մերժում է  
Եռյակի միության հետ դաշինք կնքելու մասին նախօրոք կա-  
տարված առաջարկը, իսկ Ռուսաստանի հետ դաշինք կնքելու  
վերաբերյալ ասված էր, որ նկատի ունենալով Եռյակ միու-  
թյան, և առանձնապես Անգլիայի սպառնալիքը, այն Գովար  
իրագործելի է<sup>74</sup>:

Անգլիական կառավարությունը, չհասնելով Ռուսաստանի  
հետ Թուրքիայի մասնատման վերաբերյալ համաձայնության,  
շարունակում էր հայ ազգային-ազատագրական շարժումները  
համակրողի դեր խաղալ և հրահրում էր հայկական ջարդեր,  
սրպեսդի առիթ ստեղծել արդարացնելու իր ակտիվ մերձա-  
վոր-արևելյան քաղաքականությունը՝ Թուրքիան մասնատե-  
լու կուրսը: Այդ հրեշավոր պլանի մասին կառավարական օր-  
դան «Standard»-ը գրել է, որ Սուլթերին որոշել է մինչև վեր-  
ջը հասցնել իր առաջ դրված խնդիրը<sup>75</sup>: Անգլիական կառավա-  
րության խրախուսմամբ, հայասիրության քողի տակ, ուժե-  
ղացվեց հակաթուրքական կամպանիան: Լիբերալների կու-  
սակցության լիգերները պաշտպանում էին պահպանողական-  
ների կառավարության ագրեսիվ արտաքին քաղաքականու-  
թյունը: Այդ է վկայում Գլադստոնի 1895 թ. հուլիսի 26-ի  
Չեստերի հրապարակային ճառը: Նա ասում էր, որ Արևմտյան  
Հայաստանի ողբերգական իրադարձությունների պատասխա-  
նատուն առանձին հանցագործներ չեն, այլ կոստանդնուպոլսի  
կառավարությունը և նրա գործակալները: Չկա մի շարագոր-  
ծություն, որի համար սուլթանիզմը չկրի բարոյական պա-  
տասխանատվություն: Մարդկային լեզվի ուժը բավարար չէ  
լրիվ պատմելու հայկական սարսափները: Հաղորդված տեղե-  
կություններից մարդու արյունը սառչում է: Թուրքական խոս-  
տումները բարենորոգումների իրագործման մասին ոչ մի ար-  
ժեք չունեն: Սուլթանիզմը խնդիր է դրել բնաջնջել քրիստոնե-  
յաներին, հատկապես հայերին: Նա անցկացնում է խելացնոր

<sup>74</sup> Տե՛ս ЦБГИА СССР, ф. 450, оп. I, д. 106, л. 45—50.

<sup>75</sup> Տե՛ս «Armenia», 1 հոկտեմբերի 1895.

քաղաքականություն: Հայկական հարցը կուսակցական հարց չէ: Կառավարությունը պետք է գտնի ամբողջ ազգի պաշտպանությունը, որպեսզի ձեռնարկի համապատասխան միջոցառումներ Հայաստանում ռեֆորմներն իրագործելու համար<sup>76</sup>:

Մի ուրիշ անգամ Գլադստոնը վերամբարձ ոճով հայտարարում էր, որ լիբերալների կուսակցությունը կպաշտպանի Սուլթերիի կառավարությանը, որպեսզի նա սանձի սուլթանին և հասնի նպատակին: Գլադստոնն առաջարկում էր օգտագործել հայկական ջարդերը, Կ. Պոլսից ետ կանչել անգլիական դեսպանին, Լոնդոնից էլ հեռացնել թուրքականին, դիմել ուժի, որպես առաջին բայլ գրավել Զմյուռնիա նավահանգիստը: Անգլիան Բ. Գոան դեմ կարող է գործել նաև միայնակ, դրա համար «առիթը լուրջ է, բովանդակությունը՝ սարսափելի, բնույթը՝ ահավոր»<sup>77</sup>:

Սուլթանի հասցեին սպառնալի և Սուլթերիի կառավարությանը անշատ գործողության կոչող մեծ ճառով հանդես է գալիս լիբերալների կուսակցության լիդերներից նաև լորդ Ռոզբերին: Նա ասում էր, որ հայկական հարցը կուսակցականության շահերից դուրս հարց է: Սթե Սուլթերիի կառավարությունը գործի վճռական ու դիմի ուժի, նա կտեսնի, որ նրա թիկունքում կանգնած է ոչ թե մի կուսակցություն, այլ ամբողջ ազգը, որը պատրաստ է նրան օգնելու<sup>78</sup>: Ահա թե ինչու Մ. Մակ-Կոլլը գրում է, որ Գլադստոնի ներշնչմամբ «այդ հարցում ազգը լորդ Սուլթերիին տվել է դիկտատորի իրավունք»<sup>79</sup> և իր կողմից ավելացնում է, որ ազգի գլխավոր նշանաբանը պետք է լինի պաշտպանել լորդ Սուլթերիի կառավարության քաղաքականությունը և նրանից Գոանտոնի նման պահանջել. «համարձակություն, դարձյալ համարձակություն և միշտ համարձակություն»<sup>80</sup>: Մակ-Կոլլն իրավամբ գտնում էր, որ Ռուսաստանը չի սպառնում Հնդկաստանին, բավական է, որքան

<sup>76</sup> Տե՛ս «Положение армян в Турции...», էջ XI—XXIII.

<sup>77</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 193.

<sup>78</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 217, տե՛ս նաև «Մշակ», 1895, № 93:

<sup>79</sup> նույն տեղը, էջ 234:

<sup>80</sup> նույն տեղը, էջ 51:

Անգլիան «խաղաց Կ. Պոլսի պահապան շան գեր»<sup>81</sup>, Լթե անդամ Ռուսաստանը գրավի Ցարգրադը, այդ Անգլիայի համար կլինի ավելի ձեռնառու, քան թե այն գտնվի սուլթանի ձեռքին: Անգլիային անհրաժեշտ է համաձայնության գալ Ռուսաստանի հետ, շարգելել նրան դուրս գալ Միջերկրական ծով, այն ժամանակ Ռուսաստանը կդառնա Անգլիայի դաշնակիցը և ոչ թե հակառակորդը: Հիմնականում Անգլիայի և Ռուսաստանի շահերը համընկնում են իրար և ոչ թե հակադրվում:

Թուրքիայի դեմ սպառնալից ճառերով հանդես են գալիս նաև 1895 թ. մայիսի 7-ին Սենտ Ջեյմս հոլում կազմակերպված միտինգի հոստոթները, այդ թվում Արգայլի հերցոգը, Լիվերպուլի քաղաքագլուխը, Ստիվենսոնը և ուրիշներ, որոնք ասում են, որ եթե Անգլիայի հետ մյուս մեծ տերությունները համերաշխ չդորժեն, ապա Անգլիան պետք է դորժի միայնակ<sup>82</sup>: Արտահայտելով միտինգում իշխող ոգին և ընդհանրապես կառավարող շրջաններում տիրապետող տրամադրությունը, «Daily Telegraph»-ը գրում էր. «Տաճկաց երջանիկ օրերն անցան՝ այժմ ժամանակը եկեր է, որ Եւրոպայի հիւանդն պիտի մեռնի... տաճկաց տկար և շփոթ տէրութիւնն պիտի վերջանայ...»<sup>83</sup>, իսկ «Daily News»-ը, քննադատելով թուրքական հանձնաժողով ստեղծելու, ռեֆորմներ՝ անցկացնելու, Հայաստանի դրությունը բարելավելու վերաբերյալ սուլթանական կառավարության խոստումներ տալու քաղաքականությունը, նշում է. «Սուլթանի խոսքերը բոլորովին փուչ են և անհաւատալի»<sup>84</sup>: Թուրքական կառավարության քաղաքականությունը դատապարտում էր նաև ռուսական «Նովոստի» լեռթը: Նա գրում էր. «Թիւրքաց յանձնաժողովը դերեզման է ամեն տեսակի բարենորոգումների և նախագծերի համար»: Թուրքիան իր հույսը միշտ դնում է մեծ տերությունների ներքին հակառակությունների վրա և չի կատարում իր խոստումները: «Պետք է վերջ դնել այդ կոմեդիային», իսկ Լթե թուրքական կառավարությունը շարունակի պնդել, որ չի կարողանում բրզերի, շերքեղների «հախից գալ», ապա այդ նշանակում է,

<sup>81</sup> М. Мак-Колль. Султан и державы, էջ 312 313:

<sup>82</sup> Տե՛ս «Մշակ», 1895, № 55:

<sup>83</sup> Նույն տեղը:

<sup>84</sup> Նույն տեղը:

որ Թուրքական պետության գոյութիւնը «մի տեսակ ֆիկցիա է գառնում»<sup>85</sup>։ Թերթը ճիշտ է բնորոշել մեծ տերութիւնների հակասութիւնների վրա խաղալու սուլթանիզմի քաղաքականութիւնը։ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան դեմ էին Հայաստանում ռեֆորմներ անցկացնելուն, Իտալիան հետևում էր իր դաշնակիցներին, Ռուսաստանը և Ֆրանսիան ձգտում էին պահպանել Թուրքիայի ամբողջականութիւնը, Անգլիան, շուրջնալով դաշնակից, գործում էր անվճռական։ Սուլթանն օգտւում էր այդ բոլորից, խուսափում ռեֆորմներ անցկացնելուց և Հայաստանում իր ձեռքերին տալիս ազատութիւն։ Նա, պրկ է «Մշակը», ճիշտ հասկացավ, որ եվրոպական «դիպլոմատիայի հայկական գործում միջամտելը ամբողջովին մի կեղծիք է» և Հայաստանը ողողեց զորքերով։ Գյուղերում զորքը խմում ու տոբում է բացառապէս հայ ազգաբնակչության հաշվին։ Սուլթանիզմը «վճռել է հայ ժողովրդին իր արինով խեղդել իր բնիկ երկրի մէջ»<sup>86</sup>։

Արևմտյան Հայաստանում Անգլիայի քաղաքականութեան անցկացնուողները հյուպատոսներն էին ու անգլո-ամերիկյան միսիոներները։ Հյուպատոսները գործում էին ազատ, համարձակ, խառնափում իշխանութեան տեղական մարմինների գործերին, «խորհուրդներ» տալիս։ Նրանք կապեր էին հաստատել հայ ազգայնական կուսակցութիւնների ղեկավարների հետ և օգտւելով վերջինների քաղաքական կարճատեսութիւնից ու դուրահավատութիւնից, ձգտում էին հայ ժողովրդի ազատագրական շարժումը ծառայեցնել Անգլիայի շահերին։ Այդ ուղղութեամբ սև գործ էին կատարում նաև միսիոներները, որոնք փորձում էին քողարկել անգլիական գաղութարարների քաղաքականութեան բուն էութիւնն իրենց բացած հոգևոր ստամուկական հաստատութիւնների օգնութեամբ։ Միսիոներների քարոզների ազդեցութեան տակ շուրջ 60 հազ. հայեր փոխեցին իրենց կրօնը, որոնց անգլիական հոգևոր հայրերը հայրենասիրութեան փոխարեն դաստիարակում էին կոսմոպոլիտիզմի ոգով և նրանց վզին փաթաթում անգլիական օրինակաւորութեան, որպէսզի կույր գործիք դարձնեն անգլիական քա-

<sup>85</sup> «Մշակ», 1895, № 52։

<sup>86</sup> Նույն տեղը, № 91։

ղաքականութեան ձեռքին: Այդ նպատակով, բարեդործական ընկերությունների հավաքած գումարները կառավարությունը տրամադրում էր Կ. Պոլսի դեսպանությանը և միսիոներներին, որոնք «օգնում» էին հայերին, հատկապես բողոքական դավանանք ընդունածներին: Նրանք ձգտում էին նյութական ծանր վիճակի մեջ գտնվողներին գայթակղել դրամական օգնությամբ և կրոնափոխել: Անգլիան դավանանքն ընդունողներին անմիջապես տալիս էր 5-ական ֆ. ստեռլինդ<sup>87</sup>:

Արևմտյան Հայաստանում անցկացվող անգլիական քաղաքականության լավատեղյակ ներկիզույթը խիստ դադունի դեկուցագրերից մեկում հաղորդում էր, որ օտարերկրյա սրբույագանդիստները լայն գործունեություն են ծավալել, նրանք «հայերին, հույներին, ասորիներին, սիրիացիներին և մյուսներին» կտրելով տեղական կրոնից, դնում են օտարերկրյա հոգևորականների, իսկ հետո նաև՝ օտարերկրյա կառավարությունների հսկողության տակ: Հայկական հարցում անգլիական, ու ամերիկյան քարոզիչները ընդունում են հույժ ափսիվ մասնակցություն<sup>88</sup>: Միսիոներների կողմից «կրթված» հայ բուրժուազիայի այն մասը, որն ընդունել էր անգլիական օրիննտացիա, 1895 թ. առաջարկեց ստեղծել «անկախ» Հայաստան և հայոց գահի թեկնածու առաջադրեց անգլիական թագուհի Վիկտորիայի ազգական հերցոգ Թեկին<sup>89</sup>:

Անգլո-ամերիկյան միսիոներները, դավանափոխելով այլեմբտահայերի մի մասին, պառակտում էին սղղի միասնությունը և թուլացնում ազգային-ազատագրական պայքարը սուլթանի դմի դեմ: Նրանք գործում էին ոսկու ուժով և լարում սրգաշիններ, իսկ նրանց հետևող հայ հոգևորականները փաստորեն դառնում էին անգլիական գործակալներ, արկածախնդիր ու ինքնակոչ առարչալներ: Այդ իսկ պատճառով հայ առաջուղեմ գործիչները դատապարտեցին միսիոներների գործունեությունը և իրավացիորեն նշեցին, որ մաքառող աղգն իր փրկության հույսը պետք է կապի ոչ թե դրսից եկող ժամանակու-

<sup>87</sup> Տե՛ս «Новое время», 21 июля и 3 августа 1895. Տե՛ս նաև Հ. Երամյան, Հուշարձան, Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1920, հ. Ա., էջ 391:

<sup>88</sup> АВПР, ф. «Политархив», 1894—1895, д. 3435, л. 4. Нелидов-Лобанову-Ростовскому, 9 мая 1895, № 59.

<sup>89</sup> Տե՛ս „Blue Book“. Turkey, 1896, № 3, էջ 26.



վոր օգնութեան, այլ՝ իր սեփական ուժերի հետ: Մարդկանց՝  
 ոգին որսող միսիոներները ավետարանը դարձրել էին «խա-  
 բերայութեան դորձիք»<sup>90</sup>: նրանք հիմնականում զբաղվում էին  
 ոչ այնքան անգլիական դավանանքի քարոզմամբ, որքան ա-  
 գիտացիայով: Միսիոներները թուրքական կառավարութեան  
 ու նրա հպատակների մեջ սերմանում էին երկպառակութուն,  
 օղտադորձելով ավետարանը որպես վաճառ իրենց հետապնե-  
 ցած գաղտնի նպատակները քաղաքկելու համար: Անդլո-ամե-  
 րիկյան միսիոներները «Փոքր Ասիայում նախապատրաստում  
 են կրկնել Մադագասկարի և Սուրանդայի անդլիական միսիո-  
 ներների պատմությունը: Սուլթանը, այդ կրոնապաշտ ագի-  
 տատներին՝ ավետարանական հեղափոխականներին, համա-  
 բուժում էր իր սիրելի թշնամիները, և նա հազարապատիկ ճիշտ  
 էր»<sup>91</sup>: Կասկածից վեր է, որ միսիոներները զբաղվում էին քայ-  
 քայիչ գործունեությամբ: Նրանք, հյուպատոսների ղեկավա-  
 րությամբ, հող էին նախապատրաստում իմպերիալիստական  
 Անդլիայի գաղութային քաղաքականության համար:

Անդլիական բուրժուական պատմագրության մեջ քաղաքկե-  
 ված է հյուպատոսների ու միսիոներների գործունեության  
 բուն կոթիվները և նրանց վերադրված է քաղաքակրթիչ գեր-  
 «Այդ երկու տարրը, — զրեկ է կինչը, — անյսելի ու անտեսանե-  
 լի, միասնաբար աշխատում են քաղաքակրթության ու հումա-  
 նիզմի ավանդարդում... Նրանց միսիան պարտեզ-քաղաքի  
 (Վանի—Է. Բ.) արեւելյան ծայրում մարդկային բարության,  
 լույսի ու սիրո օաջիս է»<sup>92</sup>: Լինչի այս սեռական այնքան է  
 հետո ճշմարտությունից, որքան երկինքը՝ երկրից, բանի որ  
 նա գաղութարարներին պատկերել է որպես հայ ժողովրդի  
 փրկարարներ: Միսիոներների գործունեությանը իր ժամանա-  
 կին միջա բնութագրելու ավել «Մշակը»: Թերթը զրեկ է, որ  
 միսիոներ առկաով հասկացվում է «մի խորամանկ, փոս փո-  
 րող, խաբերայ արարած, որ աչքը անկած նայում է՝ թէ ու-

<sup>90</sup> Մ. Լալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, Երևան, 1949,  
 հատ. 4, էջ 304:

<sup>91</sup> «Московские ведомости», 18 января 1895, № 18.

<sup>92</sup> X. Ф. Б. Линч, *Եղված աշխատ.*, Ե. 11, էջ 117:

տեղ կայ մի խեղճ, աղքատ, անօգնական արարած, որ ձեռք  
զցի, խարի և հաւասար փոխել տայ»<sup>93</sup>։

Անգլիական կառավարութեան զաղութարարական քաղա-  
քականութիւնը, որը կրօնական բարոյգիշները փորձում էին  
քողարկել քաղաքակրթութիւն տարածելու միտիայով, ցինիկո-  
րեն խոստովանել է ժուռնալիստ Աննա Բադալը։ Նա հայտա-  
բարեց, որ ժողովուրդները կամ պետք է դառնան անգլոֆոնա-  
տակներ, կամ ոչնչանան։ Արդարացնելով Հնդկաստանի նվա-  
ճումը, նա գրել է. «Հնդկաստանը նվաճված երկիր է, սրով  
հնազանդեցված ու սրով կառավարվող ազգ, ընդ սրում այն  
դտնվում է նրանց ձեռքում, ում պատկանում է ապագա հա-  
մաշխարհային կայսրութիւնում տիրապետութիւնը»<sup>94</sup>։

Անգլիական քաղաքականութիւնն Արևմտյան Հայաստանի  
նկատմամբ ոչնչով չէր տարբերվում Հնդկաստանի նկատմամբ  
անցկացվող քաղաքականութիւնից, իսկ անգլիական միտիո-  
ներների գործունեութիւնը՝ Չինաստանում գործող օտարեր-  
կերյա միսիոներների գործունեութիւնից, «որոնք, — գրել է  
Վ. Ի. Լենինը, — կողոպուտի քաղաքականութիւնը կեղծու-  
թեամբ քողարկում էին քրիստոնեութեան տարածումով»<sup>95</sup>։ Մի  
ուրիշ անգամ Վ. Ի. Լենինը, հավանութիւն տալով միսիոներ-  
ների գործունեութեան մասին Ջ. Ա. Հոբսոնի հարցազրմանը,  
թէ չափազանց հետաքրքրական է նրանց գործունեութեան մեջ  
«որքան է կշռում քրիստոնեութիւնը և քաղաքակրթութիւնը  
և որքան՝ առջումարեութիւնն ու առևտուրը»։ — տալով է, —  
«լավ է ասված!!»<sup>96</sup>։

Անգլիական կառավարութիւնը Արևմտյան Հայաստանում  
տեղի բնեցող ամեն մի գեղջ օդտագործում էր թուրքական  
կառավարութեան վրա ճնշում գործադրելու համար։ Հայ ժո-  
ղովրդի արյուն գնով նա ցանկանում էր սուլթանին հարկու-  
ղքել զիջումներ կատարել Անգլիային Ասիայում և Աֆրիկա-  
յում։ «Մի՞թե գուք չեք տեսնում, — գրում էր «Մոսկովսկիե  
վեդոմոստի» թերթը, — որ Հայաստանը հանդիսանում է խորո-

<sup>93</sup> «Մշակ», 1896, № 16, տե՛ս նաև «Մշակ», 1894, № 60։

<sup>94</sup> Э. Галеви, նշված աշխատ., էջ 162։

<sup>95</sup> Վ. Ի. Լենին, ՆԺՃ., հատ. 4, էջ 476։

<sup>96</sup> Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 39, էջ 495։

միլիակ, որին Ռոզբերին շարժման մեջ է դնում, որպեսզի թուրքերը նրան հանդիստ թողնեն փարավանների աշխարհում»<sup>97</sup>։

Անգլիան օգտագործում է 1890—1896 թվականների սուլթանիզմի կողմից հայ ժողովրդի նկատմամբ անցկացված գենոցիդի քաղաքականությունը<sup>98</sup> և պահանջում մերկացնել թուրքական կառավարության արմենոցիդի քաղաքականությունը, բայց ոչ հանուն հայերի պաշտպանության, այլ Օսմանյան կայսրությունը մասնատելու իր քաղաքականության արդարացման։ Այդ նպատակով Լորդ Ռոզբերին և Քեմբելդեյր «թուրքական գեոպանի առաջ ծայրաստիճան սուր արտահայտություններով կշտամբում են սուլթանի կառավարության արարքները»<sup>99</sup>։ Արտաքին գործերի մինիստր Քեմբելդեյր դեմագոգ հառով ելույթ ունեցավ «The Eighty Club»-ում։ Նա հարտարարեց, «Չեմ կարող լսությամբ անցնել մեզ հասած Սասունի օկրուցում տեղի ունեցած սարսափելի ջարդերի լուրերի վրայով»։ Անգլիական կառավարությունը «լրիվ բաժանում է ահալոր իրադարձությունների հետևանքով առաջացած դժգոհությունների զգացմունքները»։ Իր ելույթը նա ավարտում է Ռուրբիաչի հասցեին սպառնալիքներով<sup>100</sup>։ Անգլիական մամուլը, հայերի պաշտպանության պատրվակի առկա, հարձակվում է սուլթանական կառավարության վրա, մեղադրում լիբերալ Ռոզբերին, սպա պահպանողական Սոլսբերիի կառավարություններին թուլության մեջ, քանի որ նրանք անմիջապես վճռական քայլերի չէին գիմում սուլթանի դեմ։ «Daily News»-ը պահանջում էր, որ անգլիական կառավարությունը չսպասի եվրոպական մյուս պետությունների համաձայնությանը Ռուրբիաչի դեմ համատեղ միջոցառումների

<sup>97</sup> «Московские ведомости», 28 марта 1895, № 86.

<sup>98</sup> Տե՛ս թուրքական կառավարության Սասունում, Տրապիզոնում, Էֆիթիսում, Խարբերզում, Ռոֆայում, Վանում և Կ. Պոլսում կազմակերպած հայկական բնակչության դանդաղաձային ջարդերի մասին տե՛ս „Hansard's Parliamentary Debates, L. 1896, vol. 40, էջ 863.

<sup>99</sup> АВПР, ф. «Канцелярия». 1894, д. 25, л. 558. Пелидов—Гирсу, 13 декабря 1894, № 162.

<sup>100</sup> Տե՛ս АВПР, ф. «Канцелярия», 1894, д. 56, лл. 212—215. Е. Стааль - Гирсу, 12 декабря 1894, № 57, տե՛ս նաև «Մշակ», 15 ապրիլի 1895.

գիմեղու համար: Անգլիայի համբերության բաժակը լցվել է: Անգլիական կառավարությունը պետք է գործի զենքի ուժով, մենակ, համարձակ և սուլթանին հարկադրի կիրառելու հայե-  
րի համար նախատեսված *ռեֆորմները*<sup>101</sup>, իսկ «Norfolk Standard»-ը, սպառնալով սուլթանին, գրում էր, որ կառավար-  
ությունը լի է վճռականությամբ «լուծելու» հայկական հարցը: «Սուլթանի գահը այնքան ապահով չէ, որ նա հեղնութեամբ  
վերաբերվի երոստական միացեալ պահանջներին: Եվ Քորբ  
Ասիան այնպիսի մի երկիր չէ, որի կորցնելը թիրաքի համար  
անգրավի լինի, իսկ նա կը կորչի, եթէ չի ստանալ կարևոր  
լայն բարեփոխություններ»<sup>102</sup>:

«Անգլո-հայկական ասոցիացիան», անգլիական կառավար-  
ության ձեռքի հըռ գործիրը, կազմակերպում էր միտինգներ,  
բարբոքում հետադարձական կարծիքը Քուրբիայի դեմ: Այդ  
միտինգներին մասնակցում էին նաև բազում երևույթների անդամնե-  
րը, և նրանք միտինգներին հաղորդում էին կառավարության  
մերձավոր-արևելյան քաղաքականությանը համապատասխան  
ուղղություն: Միտինգներում ընդունվում էին որոշումներ, կա-  
ռավարության դեկլարաների մոտ ուղարկվում պատգամաղե-  
րություններ և խնդրում Արևմտյան Հայաստանին տալ ինք-  
նավարություն: Այդ միտինգների կազմակերպմամբ ասոցիա-  
ցիան թուրքական կառավարությանն էլ ավելի էր դրդում հա-  
յերի դեմ, որն ավելի էր ուժեղացնում հայերի բնաջնջման բու-  
ղաքականությունը, որպեսզի վերացնի Անգլիայի կազմից  
Քուրբիայի ներքին գործերին միջամտելու առիթը:

Անգլիան, սուլթանից պահանջելով հայկական վերջնաբե-  
ններից ստեղծել ինքնավար Հայաստան, հետապնդում էր մի  
շարք նպատակներ. նրա նախաձեռնությամբ ստեղծված ինք-  
նավար Հայաստանը կլինեի Անգլիայի գաղութը և կզառնար  
նրա դաղութային քաղաքականության հետարանն Առաջավոր  
Ասիայում: Ինքնավար Հայաստանի ստեղծմամբ նա կթուլաց-  
նել Քուրբիան և կհարկադրեր սուլթանին զիջումներ կատա-  
րել Եգիպտոսում, Արաբիայում և Միջագետքում: Բացի այդ,  
ինքնավար Հայաստանի հիմնման հողի վրա նա ցանկանում  
էր Ռուսաստանին ընդհարել Քուրբիայի հեռ: և վերացնել ու-

<sup>101</sup> Տե՛ս «Մշակ», 1895, № 41, 78:

<sup>102</sup> Նույն տեղը, № 42:

սական ազդեցությունը Անատոլիայում: Վերջապես, բարձրացնելով հայկական հարցը, Անգլիան ձգտում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել Հեռավոր Արևելքից դեպի Մերձավոր Արևելք, այդ հողի վրա սրել հարաբերությունները եվրոպական պետությունների միջև ու հրահրել ռազմական կոնֆլիկտ:

Անգլիական դիվանագիտության լարած որոգայթներն մասին Նելիդովը հաղորդում էր Պետերբուրգ, որ Անգլիան ձրգտում է հայկական հարցի սզնությունամբ Ռուսաստանին ընդհարել Քուրքիայի հետ, անհաջողության դեպքում շարունակել բաշտյերել հայկական շարժումները, սրպեսդի ամբաղընդի իր դիրքերը Ռուսաստանի կովկասյան սահմանագլխին, «Զի կարելի չընդունել, որ ...զործելու համար առարկան ընտրվան է խիստ հաչող»<sup>103</sup>, Գեռես 1890 թ. հայկական հարցըն անգլիական կառավարության կողմից Ռուսաստանի դեմ օգտագործելու փորձի մասին Փաղովսկին հաղորդել է, որ նա հայկական վիլայեթներից «ձգտում է ստեղծել Աֆղանստանի նման մի լան»<sup>104</sup>, այսինքն Արևմտյան Հայաստանը դարձնել Ռուսաստանի դեմ ռազմական պլանդդարմ, իսկ «Մոսկովսկիե վեչումասի» թերթը, նշելով Արևմտյան Հայաստանում անգլիական բաղտարականության հակառուտական սղղվածությունը, 1895 թ. օգոտոտի 1-ին գրել է, որ Անգլիան մտաչիր է կովկասյան սահմանագլխին ստեղծել երկրորդ Ստամբուլովյան Բուլղարիա<sup>105</sup>:

Անգլիական կառավարության ճնշումը Քուրքիայի վրա հատկապես ուժեղացավ 1895 թ. ամռանը: Բրիտանական ռազմական նավերը Նգիպատոսից մեկնում են թուրքական ջրերը և սղտանում Կ. Պոլսին: Անգլիական մամուլը կառավարությունից սղահանչում է ուժի գիմել Քուրքիայի նկատ-

<sup>103</sup> АВПР, ф. «Политархив», 1895, д. 3447, л. 228. Нелидов—Николаю II, 6 июня 1895, № 71. Об этом же, АВПР, ф. «Канцелярия», 1895, д. 26, л. 238. Нелидов—Лобанову-Ростовскому, 6 июня 1895, № 71.

<sup>104</sup> АВПР, ф. «Канцелярия», 1890, д. 24, л. 485. Жадовский—Гиреу, 15 сентября 1890, № 125.

<sup>105</sup> Թերթը Էկատի ունի Բուլղարիան 1886 թ. պետական հեղաշրջումից հետո, երբ իշխանությունն անցավ Ստամբուլովի գլխավորած սեզենտությունը, որը Ռուսաստանի նկատմամբ վարում էր թշնամական բաղտարականություն:

մամբ: Լիբերալների կուսակցության օրգան «Daily Chronicle»-ը գրում էր. «Անգլիային ոչինչ չի մնում անել, բան ուզում կան նավախումբ ուղարկել Դարդանել: Անգլիան դործել է բավական ներողամտորեն ու անվճռականորեն... Եթե սուլթանը չի ուզում լսել ողջամտության ձայնը, ապա նրան կրհարկադրեն ենթարկվել ուժին: Վիճակը նետված է»<sup>106</sup>, իսկ պահպանողական կուսակցության օրգան «Standard»-ը քսպանալով Թուրքիային, նշում էր. «Հասել է խոսքից դործի անցնելու պահը»<sup>107</sup>: Այդ օրերին անգլիական բուրժուազիայի ձայնափող բոլոր թերթերը Սուլթերի կառավարությունից պահանջում էին արևելյան հարցում շահանջել և Թուրքիային պատերազմ հայտարարել<sup>108</sup>: Մամուլը ողջունում է 1895 թ. նոյեմբերի 9-ի Գիլդհոլում Սուլթերի ճառը և իր հերթին Աբդուլ-Համիդ II-ին հասկացնում, որ եթե նա չլսի անգլիական «խորհուրդները», ապա նրան սպասում է գահազրկություն<sup>109</sup>: Թուրքիայի ամբողջականության պահպանումը բոլորովին էլ կապված չէ նրան գահին բազմած թողնելու հետ<sup>110</sup>: «Ոչ մի երկրում, — գրում էր «Մշակը», — մամուլը այնքան չէ խօսել և չէ խօսում հայոց հարցի մասին, որքան անգլիական մամուլը: Լօնդոնի ամենահայտնի լրագրերից սկսած մինչև ամենաաննշան պառակական թերթերը, բոլորն էլ լի են յողաժներով և լուրերով թշուառ Հայաստանի մասին»<sup>111</sup>:

1895 թ. թագուհու գահակալական ճառից հետո Լոնդոնի թուրքական դեսպանը այցելում է սրեմիեր-մինիստրին և իր կառավարության անունից հայտարարում, որ սուլթանը մտադրություն չունի արգելել հայկական վիլայեթներում ռեֆորմներ անցկացնելը, բայց նա թույլ չի տա, որ այդ առիթով Թուրքիայի վրա սահմանվի միջապալային հսկողություն: Սուլթերին գեսպանի հայտարարությանը պատասխանեց, որ եթե սուլթանը հրաժարվի ռեֆորմների իրագործման վրա միջապալային հսկողություն սահմանելուց, ապա Անգլիան կոչով

<sup>106</sup> «Новое время», 10 сентября 1895, № 7004.

<sup>107</sup> Նույն տեղը, 22 ноября 1895, № 7077.

<sup>108</sup> Տե՛ս «Մշակ», 29 օգոստոսի 1895:

<sup>109</sup> Տե՛ս «Times», 10 սեպտեմբերի 1895:

<sup>110</sup> Տե՛ս «Observer», 10 սեպտեմբերի 1895:

<sup>111</sup> «Մշակ», 1895, № 11:

կգիմի եվրոպական պետութիւններին, կհրաժիրի կոնգրես, կը-  
գործադրի Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը, «և, իմա-  
ցեք, եթե դուք շարունակեք համառել, այդ սկիզբ կդառնա  
Թուրքիան մասնատելու»<sup>112</sup>: Այդ կապակցութեամբ «Մշակը»  
գրել է, որ Սուլթերին, պատճառաբանելով, որ հոգնած է, թուր-  
քական դեսպանի հետ խոսել է կարճ և ասել. «Թէ Թուրքիա  
կտոր-կտոր ըլլալու վտանգի մէջն է, եթէ երեք պետութեանց  
առաջարկները չընդունուին»<sup>113</sup>: Ավելի խիստ ու սպառնալից  
տոն ուներ Սուլթերիի ելույթը Լոնդոնի նորընտիր քաղաքա-  
դլխի պատվին կադմակերպված ճաշկերույթում: Եթե սուլթա-  
նը հրաժարվի սեփորմների կենսազործումից, ասում էր պրե-  
միեր-մինիստրը, «ապա թուրքական կայսրութիւնը դրա հա-  
մար կ'առատցի իր գոյութեամբ»<sup>114</sup>: Պրեմիեր-մինիստրի ազ-  
մաշունչ այդ հայտարարութեանը ճաշկերույթի մասնակիցնե-  
րը հավանութիւն տվեցին բուն ու երկարատև ծափահարու-  
թիւններով: Մի այլ անգամ Սուլթերին հայտարարում է. «Հայ-  
կական հարցում ազգը բացարձակապես միասնական է»<sup>115</sup>:

Սպառնական տոն ուներ նաև օգոստոսի 15-ին սլաւաձմեն-  
տում Սուլթերիի արտասանած ճառը: Նա ասաց, որ Թուր-  
քիայի անկախութիւնը պահպանվում է եվրոպական իտալի-  
պետութիւնների 1856 թ. Փարիզի և 1878 թ. Բեռլինի պայմա-  
նագրերով: Այդ անկախութիւնը յուրահատուկ ձևի է: Թուր-  
քիան պետք է անցկացնի հայկական բարենորոգումներ: Հա-  
յերի ջարդերը շարունակվելու պէպքում «պետութիւնների համ-  
բերութիւնը կսպառվի և նրանք կհրաժարվեն օգնութիւն  
ցուց տալ թուրքական պետութեան արհեստական գոյութեան  
պահպանմանը»: Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան սերտ  
համագործակցում են հայկական հարցում: Եթե սուլթանը «չլսի  
եվրոպական պետութիւնների խորհուրդը, ապա ո՛չ պայմա-  
նագրերը, ո՛չ համակրանքը վերջ ի վերջո չեն կարող պահ-  
պանել կայսրութիւնը... Ճակատադրական վախճանից: Ան-  
գլիան էլ կհրաժարվի Թուրքիայի ամբողջականութեան ու ան-

<sup>112</sup> «Кавказ», 3 сентября 1895.

<sup>113</sup> «Մշակ», 1895, № № 98 և 101:

<sup>114</sup> АВПР, ф. «Канцелярия», 1895, д. 69, л. 241—242. Е. Стааль—  
Лобанову-Ростовскому, 13 ноября 1895, № 58.

<sup>115</sup> „Times“, 16 օգոստոսի 1895:

կախութեան պահպանման իր վաղեմի քաղաքականութիւնից»<sup>116</sup>։

Սուլսբերիի այդ հայտարարութիւնը ողջունեց արդյունաբերական-ֆինանսական ազրեսիվ շրջանների ձայնափող մամուլը։ «Spectator» լրագիրը գրում էր, որ սրեմիեր-մինիստրներին ոչ մեկն այդքան սուր ու սպառնացող տոնով չի արտահայտվել Թուրքիայի հասցեին, «Մենք շենք կարող նույնիսկ արտահայտել, թէ որքան մենք բաւական ենք յօրդ Սուլսբերիի խօսքերից։ Իրանք արժանի են անգլիական կառավարութեանը, և եթէ սուլթանը բացարձակապէս չէ վճռել իր անկումը սլատրաստել, այդ խօսքերը պէտք է ունենան ցանկացած հետևանքը»<sup>117</sup>։ Կառավարութեան արեւելյան ազրեսիվ քաղաքականութիւնը սղաշապանում է նաև «Pall Mall gazette» թերթը, որը սուլթանի հասցեին հեղձանքով գրում է, «Իլլիզի պալատում քնած են և ծանր են լսում, բայց եթէ այս խօսքերն էլ (Սուլսբերիի ասածները) չեն արինաչնի նրանց քնից, այն ժամանակ դա պէտք է համարել այն տեսակ անզգայութիւն (come), որ միշտ տեղի է ունենում քայքայվելուց առաջ»<sup>118</sup>, իսկ «Daily News» լրագիրն «Հայաստանը և մեծ պետութիւնները» առաջնորդող հոդվածում գրում էր, որ եթե «Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան չը կարողացան Թուրքիայի դուրսը խելք դնել, գոնէ նրա գլուխը իրենց սաքի տակ դրին»<sup>119</sup>։

Թուրքական կառավարութեան հասցեին սուր ելույթներով հանդես են գալիս նաև անգլիական պետական ու քաղաքական մշուս. գործիչները։ Կորդերի պալատում Քեմբըլէյը դեմադոդ ձևով հայտարարում է, որ «Կապույտ գրքում» հայկական շարդերի մասին կարգալուց հետո դարմացել է Ռոզբերիի կառավարութեան սառնարչուն վերաբերմունքից։ Բարենորոգումների ծրագիրը, ասում է նա, սուլթանը բոլորովին չի իրա-

<sup>116</sup> „Times“, 16 օգոստոսի 1895. Տե՛ս նաև „Die Grosse Politik...“, B-I. X, № 2391 հրատարակչի ծանոթագրութիւնը և «Մշակ» 1895, № 93։

<sup>117</sup> «Մշակ», 1895, № 93։

<sup>118</sup> նույն տեղը։

<sup>119</sup> նույն տեղը, № 100։



գործել և մեղադրում է նախկին կառավարությանը, որը ու մի քայլի շի դիմել Ռուսաստանի և մյուս պետությունների հետ համաձայնության գալու, ռեֆորմներ անցկացնելու և Արևելքի այդ դժբախտությանը վերջ դնելու նպատակով: Եթե Անգլիան գործ ունենար ազնիվ կառավարության հետ, նշում է Քեմբեռլեյը, խորհուրդ կտար նրան և պատկերը կլիներ այլ, բայց իրենք գիտեն, թե ինչպիսին է սուլթանական կառավարությունը, որը «ներկա բոլոր դժբախտությունների պատճառն է»: Թուրքական կառավարության հետ պետք է խոսել «սուբի լիզվով»<sup>120</sup>:

1895 թ. աշնանը, երբ անգլիական քաղաքական գործիչները, անգամ պրեմիեր-մինիստրն ու թագուհին սպառնալից ճառեր էին ասում Թուրքիայի հասցեին, իսկ մամուլը մեծ կամպանիա էր մղում, այն ժամանակ անգլիական ռազմա-նավերը թուրքական ջրերում կազմակերպեցին ցույց (որին մասնակցեցին նաև ֆրանսիական և ռուսական մի քանի ռազմանավեր), հայ ժողովրդին պաշտպանելու պատրվակի տակ: Անգլիական ռազմանավերի այդ ցույցը նման էր «մի ծովային իւադի», քանի որ այն մտադաշտի անգամ շնորհակալ հայկական ջարդերը պապարեցնելու գործին: «Դա ծովային ցույց չէ, — գրում էր «Մշակը», — այլ «ծովային կատակերգութիւն», որը շարունակվում է երկու ամիս և երկար կշարունակվի, մինչև որ «Թուրքաց շայաստանը կը դատարկվի իր բնիկ, խաղաղ, բնդունակ քրիստոնեայ ժողովրդից»<sup>121</sup>: Իրավացի էր «Մշակը», երբ անգլիական ռազմանավերի ցույցը անվանում էր «ծովային խաղ», «ծովային կատակերգութիւն», քանի որ, եթե Անգլիան իրոք ցանկանար օգնություն ցույց տալ արևմտահայերին, նա կարող էր դիմել կոնկրետ միջոցառումների և ոչ թե ձևական ցույց կազմակերպել: Եթե Անգլիայի շահերն էին պահանջում, նա գործում էր շատ վճռական, առանց հարցնելու մյուս մեծ տերությունների կամքը: Այդ է ապացուցում Կիպրոսի օկուպացիան, Եգիպտոսի գրավումը և պատերազմները Սուդանի ու Ռոդեզիայի նվաճման համար:

<sup>120</sup> „Hansard's Parliamentary Debates“ 1896, vol. 37, էջ 115.

<sup>121</sup> «Մշակ», 1895, № 128:

Օսմանյան կայսրության մասնատման համար Սուլթերիի կառավարությունը փորձեց օգտագործել նաև հայ ազգայնականների կողմից 1896 թ. օգոստոսին օտոմանյան բանկի գրքավման դեպքը: Նա նշատրաստ էր անդլիական ռազմանավերր մտցնել Մարմարա ծով, սակայն ծովակալության առաջին լսրդ Գոշենը առարկեց Սուլթերիին, ասելով, որ անդլական նավերը կընկնեն թակարդի մեջ ռուսական ու ֆրանսիական նավերի կողմից, նկատի ունենալով, որ ցարական կառավարությունը, ելնելով սեծովյան նեղուցներով կատարվող ռուսական առևտրի շահերից, հայտնել էր Լոնդոն, որ եթե անգլիական նավերը մտնեն Գարդանել, ապա ռուսական սեծովյան նավատորմիդն էլ կգրավի Բոսֆորը: Սուլթերին, դժգոհելով Գոշենի պատասխանից, նրան ասաց, որ եթե Գոշենի ռազմանավերն ապակյա են, ապա հասկանալի է, որ Անգլիան որոշ շափով պետք է փոխի իր քաղաքականությունը<sup>122</sup>: Այսպիսով, պահպանողականների կառավարությունը պատրաստ էր Անգլիայի ազգեցությունը Թուրքիայում վերականգնելու և Եգիպտոսում դիրքերն ամրապնդելու նպատակով դիմել պատերազմի:

Պահպանողականների կառավարության արկածախնդրական արտաքին քաղաքականությունը պաշտպանում էր նաև լիբերալների կուսակցությունը Գլադստոնի ղեկավարությամբ: Այդ մասին է վկայում 1895 թ. հուլիսի 26-ին Չեստերում, «Անգլո-հայկական ասոցիացիայի» կողմից կազմակերպված միտինգում, Գլադստոնի արտասանած ճառը: Նա, սպասնելով Թուրքիային, հայտարարեց, որ Օսմանյան կայսրության բնակչության համեմատ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի բնակչությունը շատ է 8—10 անգամ, նրանք նյութական միջոցներով հարուստ են 20, իսկ հզորությամբ՝ 50 անգամ: Եվրոպական այդ պետությունները ամբողջ աշխարհի առաջ կիսաշտառակվեն, եթե չօգտագործեն իրենց առավելությունները Թուրքիայի վրա ճնշում դործադրելու և սուլթանից պահանջելու՝ իրագործել Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով խոստացված սեֆորմները: Ներկայումս Թուրքական կա-

<sup>122</sup> Տե՛ս В. М. Хвостов. Ближневосточный кризис 1895—1897 гг., «Историк-марксист», 1929, № 13, էջ 27—28.

ուավարությունը զբաղված է ինքնագովաբանութեամբ, խոսում է իրավունքների ու արժանապատվության մասին, բայց իրականում թուրքիային պատել է մշուշը, և նրա խոստումների վրա հույս դնել չի կարելի: Գլադստոնն իր ելույթն ավարտում է նրանով, որ ասում է. «Եթե մեզ մոտ կա թեկուզ մի փոքր մարդասիրություն, եթե մենք թանգ ենք դնահատում մեր արժանապատվությունը... մենք պետք է միջամանք» թուրքական գործերին և պահանջներ անպայման իրագործել հայերին խոստացված ռեֆորմները<sup>123</sup>: Գլադստոնի ճառից հետո միտինգն ընդունեց լրանաձև, որում պահանջվում էր, որ կառավարությունը միջոցառումներ ձեռնարկի ռեֆորմներն իրագործելու համար, որոնք դառնան բնակչության կյանքի, պատվի, հավատի և նրանց գույքի ապահովության լուրջ երաշխիքներ: Ռեֆորմներն իրագործվելու էին և՛ քրոնիկական պետութայնների մշտական հսկողության ներքո<sup>124</sup>:

Գլադստոնը զանազան առիթներով դեմագոգ ելույթներ էր ունենում և հանդես էր գալիս թուրքահայատակ քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի «պաշտպանի» դերում: Նա հատկապես սուր ելույթներ էր ունենում, երկնքից հուր ու կրակ թափում սուլթանական կառավարության գլխին, երբ պետական մեքենայի ղեկը անցնում էր պահպանողականների ձեռք, իսկ երբ այն գանձում էր իր ղեկավարութեամբ լիբերալների ձեռքում, փոխում էր իր տոնը և դառնում «համեստության ասպետ»<sup>125</sup>: «Լիբերալ բուրժուանների և բթամիտ մեղչանների հերոս»<sup>126</sup> Գլադստոնը այդ ելույթներով միայն Անգլիայի հասարակական կարծիքը նախապատրաստում էր կառավարության նվաճողական քաղաքականության համար, մինչդեռ հայ բուրժուական պատմաբան Կ. Թումայանը ֆեախիշացնում է նրան և համարում հայ ժողովրդի փրկիչ: Նա գրել է, որ Գլադստոնը «այնչափ համակիր էր Հայոց, որ իր կենաց վերջին ատենարանոթիները Հայոց համար ըրաւ»<sup>127</sup>:

<sup>123</sup> Տե՛ս «Положение армян в Турции...», էջ XXI—XXII.

<sup>124</sup> Տե՛ս նույն տեղը, էջ XXIII:

<sup>126</sup> Ե. Կ. Տարկեսյան, նշված աշխատ., էջ 163:

<sup>125</sup> Վ. Ի. Լեհին, ԵՎՏ. հատ. 24, էջ 449:

<sup>127</sup> Կ. Թումայան, Պատմութիւն արեւելեան խնդրի և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905, հատ. Բ., էջ 596:

Գլադատոնին գովերդել է նաև պրոֆ. Լ. Ա. Կամարովսկին՝ յա-  
տուել է, որ XIX դարի պետական ականավոր գործիչ «խակսկես  
մեծ ծերունին», հիվանդ Գլադատոնը իր առողջության հաշվին  
ելույթ էր ունենում և իր խոսքն ասում ճնշվող ու տանապող  
«հայերի օգտին», որոնք անգամ շոխտեին «իրենց ազնիվ  
պաշտպանի անունը»<sup>128</sup>:

Իրականում Գլադատոնը մուլի իմպերիալիստ էր, գաղութա-  
յին քաղաքականություն անցկացնող և մանր ժողովուրդների  
ազատագրական պայքարի կատաղի թշնամի: Եթե կենն իր  
վաղ շրջանում դրած «Գլադատոն» աշխատությունում<sup>129</sup> չի  
կարողացել ներթափանցել լիբերալների կուսակցության լի-  
դերի փարիսեցիական քաղաքականության մեջ և նրան հա-  
մարել է հայկական դատի պաշտպան, ապա հետագայում  
փարատվել է այդ սիալից և իրավացիորեն գրել, որ նա  
հայերի «լեշերի վրայով կը բայլում գեղի նեղստի ավերը»<sup>130</sup>,  
նույնիսկ ծիծաղելի է խոսել «բուրժուական կեղծ մարդուի-  
րության առաքյալ»<sup>131</sup> Գլադատոնի ազդիկալիզմի մասին: Նա  
ծնվել էր լիվերպուլի հարուստ վաճառականի ընտանիքում, իսկ  
կրթությունը ստացել Օքսֆորդի ազնվականական համալսարա-  
նում: Պետական գործունեությունն սկսեց որպես պահպանո-  
ղական, բայց կարիերիստական նկատառումներով անցավ լի-  
բերալների կողմը: Շուրջ 60 տարի եղել է պառլամենտի ան-  
դամ և շորս անգամ պրեմիեր-մինիստր: Գլադատոնի ելույթ-  
ները միշտ եղել են մութ ֆրակներով ու դեմպոզ  
հայտարարություններով լի: Կ. Մարքսն անխնա մերկացրել է  
«քնքուշ, կեղծ բարեպաշտ մեծաձողի Գլադատոնի»<sup>132</sup> մար-  
դասիրության իմաստն ու դասակարգային նույնությունը:

1890-ական թվականների կեսերին Գլադատոնը մի քանի  
անգամ ելույթ ունեցավ հայկական հարցի կապակցությամբ:  
Նրա ճառերը կառուցված էին այնպես, որ իբր թե արևելյան  
հարցում անդլիական կառավարությունը ղեկավարվում է բու-

<sup>128</sup> «Положенне армян в Турции», стр. XI.

<sup>129</sup> Տե՛ս կն, Գլադատոն, Թիֆլիս, 1899:

<sup>130</sup> Կն, Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հատ.  
Ս, էջ 125:

<sup>131</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 424.

<sup>132</sup> Նույն, տեղը:

ցառապես հումանիզմի և հայ ժողովրդին կարեկցելու սկզբունքով: Անգլիային հետաքրքրում է միայն հայկական հարցի շուծումը և ուրիշ ոչինչ, մինչդեռ նա հատուկ նպատակներ էր հետապնդում Արևմտյան Հայաստանում: Դեռ իր ժամանակին կիսը պրել է. «Մեծ Բրիտանիայի շահերը, որի կարգում պետք է հաշվել նաև անգլիական Հնդկաստանի շահերը, սերտորեն կապված են Օսմանյան կայսրության ասիական նահանգների հետ»<sup>133</sup>: Հետևաբար Գլադստոնի կույցները հայ ժողովրդի «օգտին» ձևական էին, իրականում նա իր ճառերով ճանապարհ էր հարթում անգլիական իմպերիալիզմի քաղաքականության յամար, բողոքելով նրա շահագրգռական նկատառումներն ու ազրեսիվ բնույթը: Միանգամայն ճիշտ է պատմաբան Լեոն, երբ պրել է, որ Գլադստոնի քաղաքականությունը «բացարձակ թշնամական և ազետաբեր էր հայ ժողովրդին»<sup>134</sup> և սխալ է Ա. Ամֆիտեատրովը, որը, չկարողանալով ներթափանցել անգլիական դիվանագիտության մոլոր ծալքերը, ասել է, որ 90-ական թվականներին Անգլիայի քաղաքականությունը «հայկական հարցում կարելի է հաշվել միանգամայն անշահախնդիր... անգլիական հումակրանքը հայերի նկատմամբ շուներ հետին նպատակներ»<sup>135</sup>: Այս դիֆերամբ է անգլիական գիշատիչ իմպերիալիստների և նրանց լիզեր Գլադստոնի հասցեին:

Իմպերիալիստական Անգլիայի քաղաքականությունը հայկական հարցում միշտ եղել է շահագրգռական, արտաքուստ՝ բարեգործական ու հումանիստական, իսկ բովանդակությամբ՝ նենգ ու ազրեսիվ: Այդ իր արտահայտությունն է դասել անգլիական կառավարության արտաքին քաղաքականությունն արտաշուղթ, փաստորեն Մյիթիի օրդան «Times»-ի կշերում: Թերթը դեմագոգ ձևով զրուս էր, որ պետք է պաշտպանել հայերի իրավունքները, նրանց տալ ազատություն, բայց դեմ էր ինքնավար Հայաստանի ստեղծմանը: Նա կառավարությունից պահանջում էր ամենից առաջ մտահոգվել Անգլիայի ազգային շահերով, նրա անվտանգության ու առևտրի ծաղկման ապահովմամբ, և ոչ թե հայկական հարցով<sup>136</sup>: «Times»-ի հոդվածը

<sup>133</sup> X. Ф. Б. Лич, *նշված աշխատ.*, հ. II, էջ 566:

<sup>134</sup> Լեո, *Անցյալից*, Թիֆլիս, 1925, էջ 39:

<sup>135</sup> А. В. Амфитеатров, *Армянский вопрос*, СПб., 1906, стр. 14.

<sup>136</sup> *Տե՛ս „Times“*, 10 հունվարի 1895:

պերճախոս վկայում է, որ իմպերիալիստները դանազան ձեխ-  
րով ու մեթոդներով, իսկ դիվանագետները՝ եզոպոսյան լեզ-  
վով, քողարկում էին իրենց կառավարությունների ուղղիսիվ  
քաղաքականությունը: Նրանք, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը,  
անեքսիայի հարցի վերաբերմամբ «անամոթաբար ստում»<sup>137</sup>  
էին: Լենինյան այս բնութագրերը լրիվ տարածվում է նաև Գլադ-  
ստոնի վրա, որը 1896 թ. աշնանից դադարեց ճառեր արտա-  
սանել հայ ժողովրդի «օգտին»: Նրա լուսվածքները բացատրվում  
էր նրանով, որ Անգլիան ավարտեց իր դիվանագիտական խա-  
ղը հայկական հարցի օգնությամբ: Գլադստոնը «հայասեր» էր,  
երբ Անգլիան ձգտում էր ամրապնդել իր դիրքերն Առաջին  
Ասիայում ու Եգիպտոսում և դարձավ խուլ, համբ ու անտար-  
բեր հայ ժողովրդի արդարացի ու օրինական պահանջների  
նկատմամբ, երբ անգլիական իմպերիալիստները հասան ի-  
րենց նպատակին: Նա երկերեսանիություն էր անում քաղա-  
քական կոնյուկտուրային համապատասխան: Գլադստոնին  
ժեննի Մարքսը բնութագրել է Բուարոյի «Սատիրա»-ից բերած  
քաղվածքով, որում ասված է. «Ահա այդ մարդը, մերթ նա սև  
է, մերթ սպիտակ, ինչ դգում էր երեկ, գիշերը հասցրեց մոռա-  
նալ, ինքն իրեն անտանելի և ոչ հաճելի, նա իր կարծիքները  
փոխում է ջրի պես»<sup>138</sup>, իսկ Աննա Պարնելը՝ Իսլանդիայի  
ազատագրական շարժման առաջնորդ Չարլզ Պարնելի ալջիկը,  
նրան անվանում է «արհամարհելի, արինարբու և երեսպաշտ  
Գլադստոն»<sup>139</sup>: Այդ բնութագրերը բացահայտում են Գլադստո-  
նի քաղաքական գործունեության էությունը՝ որպես բուրժուա-  
կան պոլիտիկանի, երկերեսանու և դեմագոգի:

Հնչակյան կուսակցության անհեռատես ղեկավարները չէին  
հասկանում անգլիական քաղաքականության իսկական իմաս-  
տը և ողնորվելով անգլիական գործիչների դեմագոգ ելույթի-  
ներով, 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում կազմակեր-  
պեցին խաղաղ ցույց, սուլթանական կառավարության վրա  
հնչում գործադրելու, հայկական սեֆորմների նախագիծը ար-  
ագ ընդունելու և այն կենսագործելու նպատակով: Սուլթա-

<sup>137</sup> Վ. Ի. Լենին, *ՆԺԺ*, հատ. 27, էջ 366:

<sup>138</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 620.

<sup>139</sup> «Մշակ», 1881, № 168:

նիզմն օգտագործեց ցույցը և այդ առիթով սեպտեմբերի 30-  
 օրը մինչև հոկտեմբերի 6-ը կազմակերպեց հայկական ջար-  
 դեր Կ. Պոլսում, որոնք դադարեցվեցին նեղիզուկի նախաձեռ-  
 նությամբ՝ սուլթանին ուղղված վեց պետութայնների կոլեկ-  
 տիվ նոտայից հետո, սակայն կոտորածները շարունակվեցին  
 Արևմտյան Հայաստանում: «Հայաստանը, — գրել է Իզմիրլի-  
 յանը, — վերածվել է սպանդանոցի, շեն խնայում ո՛չ քաղա-  
 քացիներին, ո՛չ գյուղացիներին, ո՛չ կանանց և ո՛չ երեխանե-  
 րին»<sup>140</sup>: Սուլթանիզմի մասսայական կոտորածների քաղաքա-  
 կանությունը տեղիք տվեց 1895 թ. հոկտեմբերի 12-ի Զեյթ-  
 օունի ժողովրդական ապստամբությանը, որը տևեց 45 օր<sup>141</sup>:

Սուլթանը բուրբուխ մասպարություն շուներ իրագործել  
 մայիսյան ռեֆորմները, իսկ իմպերիալիստական պետու-  
 թյունները շահագրգռված չէին բարենորոգումները կենսագոր-  
 ծելու մեջ: 1895 թ. օգոստոսին պառլամենտում Սուլթանի  
 հայտարարությունը, թե չի կարելի հավատալ ռեֆորմների  
 իրագործման մասին սուլթանի խոստմանը, պետք է կոչով պի-  
 մել եվրոպական պետություններին և միադյալ ուժերով հսկել  
 դրանց կենսագործման վրա, կամ սրևմիկ-մինիստրի հետա-  
 գա ելույթը. «Մի քանի ամիս է «Հայաստան» բառը հույում  
 է մեր մտքերը» և սպառնալիքը թուրքիային, որ սուլթանի  
 դործած շարիքները կարող են դառնալ Օսմանյան կայսրու-  
 թյան կործանման պատճառ<sup>142</sup>, լսկ դիվանագիտական բնույթի  
 էին: Ո՛չ Սուլթանի սպառնալիքները, ո՛չ անդլիական սաղ-  
 մանավերի թուրքական ջրերում գտնվելը չթեթևացրին հայ  
 ժողովրդի ծայրահեղ ծանր վիճակը, քանի որ Անդլիայի քա-  
 ղաքականությունը ելնում էր Առաջավոր Ասիայում, Հեռավոր  
 Արևելքում և Աֆրիկայում անդլիական իմպերիալիզմի գիր-  
 բերն ամրապնդելու և ոչ թե արևմտահայերին օգնելու ձգտու-  
 մից: Անդլիական քաղաքականության ուսումնասիրությունը

<sup>140</sup> ՉՍՄԶ Մատենադարան, Մ. Իզմիրլյանը — Մ. Խոխյանին, 14 նո-  
 յեմբերի 1895 թ., Կաթողիկոսի դիվան, թղթապանակ 236, փաստաթուղթ  
 171, թ. 101:

<sup>141</sup> Տե՛ս Գ. Դալստյան, Մարաշ, Նյու-Յորք, 1934, էջ 168—169, տե՛ս  
 նաև Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի ապստամբությունը, «Հայաստան» հրատ.,  
 1969, էջ 321—366:

<sup>142</sup> Տե՛ս «Новое время», 2 (14) նոյեմբերի 1895:

ցուցց է տալիս, որ խնչդես լիբերալների, այնպես էլ պաշտոնողականների կուսակցությունների պարադոլուսները և կառավարության դեկավարները ձգտում էին հայկական հարցի շարաշահմամբ իրագործել Անգլիայի նվաճողական սլանները: Սակայն նրանց մեջ կար տարաձայնություն արևելյան հարցի լուծման եղանակի մեջ: Մտիվենսոնի խումբը պահում էր, որ Թուրքիայի դեմ պետք է գործել վճռական, նույնիսկ սեպարատ ձևով, իսկ Սուլթերիի ու Ռուզբերիի հետևորդները սեպարատ կարգով միջոցառումների գիմելը համարում էին ծայրահեղություն, որը կարող էր հասցնել Անգլիայի դեմ եվրոպական պետությունների պատերազմին ու բրիտանական կայսրության կործանմանը: Դրա համար էլ վերջիններս Օսմանյան կայսրության մասնատման պլանը փորձում էին իրագործել եվրոպական պետությունների ձևորով: Ռուզբերիի հայտարարում էր. «Ես պատրաստ եմ ամբողջ ուժով պայքարել արևելյան հարցում միաշնակ միջամտության դեմ»<sup>143</sup>:

Հայկական ջարդերի հրահրմամբ անգլիական կառավարությունը սրեց դրությունը Մերձավոր Արևելքում և ճանապարհ հարթեց անգլիական ռազմանավերը կեմսում կենտրոնացնելուն, որպեսպի Թուրքական ջրերում կազմակերպի ռազմածովային ցույց և ճնշում գործադրի սուլթանի վրա: Կ. Պոլսում սահղծվեց տաղնատալի վիճակ: Արգուլ-Համլիզ II-ը կարգադրեց ամրասնդել Դարդանեղի նեղուցը, փակել անգլիական ռազմանավերի ճանապարհը դեպի Մարմարա ծով<sup>144</sup>: Միաժամանակ նա անգլիական կառավարությանը սխրում կատարեց՝ մեծ վեպիր նշանակելով անգլիական օրինատացիայի պաշտպան Քյամիլ-փաշային: Անգլիան հավանություն տվեց սուլթանի այդ քայլին, հուսալով, որ Քյամիլ-փաշան ավելի շուտ կկատարի դեսպան Քերիի պահանջները, քան սուլթանի հրամանները և այդպիսով կվերականգնվի անգլիական ազդեցությունը Թուրքիայում<sup>145</sup>:

Երբ անգլիական կառավարությունը համոզվեց, որ իրեն չի հաջողվում համաձայնության դալ ո՛չ Եռյակ միություն

<sup>143</sup> М. Мак-Колль. Султан и державы, стр. 47 и 204. Տե՛ս նաև «Մշակ», 1896, №№ 95, 108:

<sup>144</sup> Տե՛ս «Times», 17 հոկտեմբերի 1895:

<sup>145</sup> Տե՛ս նույն տեղը, 4 հոկտեմբերի 1895:



և ո՛չ էլ Ռուսաստանի ու Յրանսիայի հետ Թուրքիան մասնա-  
 տելու շուրջը, 1895 թ. վերջերից աստիճանաբար թուլացրեց  
 ճնշումը սուլթանական կառավարության վրա: Փոխվեց մա-  
 մուլի ոճը, թուլացավ բաղաբազան դործիչների ու գիվանա-  
 գետների էլուլթներում հակաթուրքական պաթոսը: Դեկտեմ-  
 բերին անգլիական նավերը ետ կանչվեցին թուրքական ջրն-  
 րից: Գիլդհոլում արտասանած ճառում Սուլթերին հայտարա-  
 րում էր. «Ամեն մի սպանալիք, թե Անգլիան միայնակ կոխի  
 միջոցառումների հայկական հարցում, պատրանք է»<sup>146</sup>, իսկ  
 1896 թ. հունվարի 21-ի էլուլթում ասում էր. «Թեֆորմների  
 իրագործումը ժամանակ է պահանջում: Սուլթանի կառավա-  
 րութիւնը թոյլ է, սպորմելի և անընդունակ... ցնորք կլինի են-  
 թագրելու, որ սուլթանն է հրամանագրել այդ գաղանութիւն-  
 ները (հայկական ջարդերը — է. Բ.), որոնք կատարվում են  
 ֆանատիկոս-մահմեդականների ձեռքով... Սուլթանին հարկա-  
 ւար է ժամանակ տալ: Ուրիշ էլք չը կայ»<sup>147</sup>:

Նույն ժամանակ համայնքների պալատում կառավարու-  
 թյունը, արդարացնելով իր քաղաքականությունը հայկական  
 հարցում, հայտարարում է, որ Բեռլինի պայմանագիրը Թուր-  
 քիայի վրա դնում է սրտշակի պարտականություններ, բայց  
 նա այդ պարտականությունները մինչև օրս չի կատարել:  
 Պայմանագրում էլ չկա կետ, որով Անգլիան մեկնակ, կամ պե-  
 տությունները համատեղ իրավունք ունենան պատերազմի ու-  
 սպանալիքով Թուրքիային հարկադրել իրագործել ռեֆորմները  
 Հայաստանում: Երբ խոսում են պայմանագրով Անգլիայի  
 պարտավորությունների ու պատասխանատվության մասին և  
 նշում, որ պարտավորություններից հրաժարվելն ալգաչին  
 անպատվություն է, իսկ նրանց կատարումը պահանջում է  
 մեծ զոհեր, ապա պառլամենտը պետք է նկատի ունենա, որ  
 այն ժամանակ լորդ Կարնարվոնը պատողություններ է կա-  
 տարել ոչ թե Թուրքիայի դեմ պատերազմի գիմելու Անգլիա-  
 չի իրավունքների մասին, որպեսզի սուլթանին հարկադրի  
 իրագործել ռեֆորմները, այլ Թուրքիային պաշտպանելու Ան-  
 գլիայի պարտավորությունների մասին, եթե նա իրագործե-  
 ր

<sup>146</sup> «Times», 11 նոյեմբերի 1895:

<sup>147</sup> «Մշակ», 1896, № 9, № 12:

ունեցողները: Անգլիական կառավարությունը չի ժխտում Հա-  
 յաստանում կատարված սարսափելի ջարդերի փաստը, որը  
 հետևանք է դիվանագիտության թուլության: Բայց ով կարող է  
 պատճանջել, որ եթե Անգլիան չի կարողացել իր իշխանությունն  
 օգտագործել թուրքիայի վրա ճնշում գործադրելու՝ ունեցող-  
 ներն իրագործելու համար, ապա ունեցողների համար Ան-  
 գլիան պետք է պատակազրկի Եվրոպական մեծ տերությունների  
 հետ և նրանց կամքին հակառակ վճռի անլուծելի հարցը՝ ա-  
 ռանց սուլթանական կառավարության համաձայնության կա-  
 ռավարի նրա արևելյան նահանգները: Միայն Անգլիան չի  
 կարող լուծել ունեցողների հարցը Հայաստանում: Մեծ տերու-  
 թյունները մտածում են միայն Եվրոպական հարցերի շուրջը,  
 իսկ երբ բարձրանում է արևելյան հարցը, նրանք, հլնելով  
 իրենց նեղ շահերից, շեն ցանկանում մատը մատին խփել,  
 ազդել սուլթանի վրա, որպեսզի նա իրագործի խոստացած  
 ունեցողները և ապահովի հայերի կյանքի անխտանդությունը:  
 Մրցակցությունն ու հակասությունները նրանց միջև Արևել-  
 քում կարող է հասցնել պատերազմի<sup>148</sup>: Անգլիական քաղաքա-  
 կանության փոփոխությունն ավելի բացահայտ երևում է  
 1896 թ. հունվարին պրեմիեր-մինիստրի պաշտոնական հայ-  
 տարարությունից: Նա ասում է, որ Անգլիան Եվրոպական  
 մյուս պետությունների հետ պարտավորվել է հսկել հայկա-  
 կան բարենորոգումների իրագործման վրա, բայց ներկայու-  
 մըս կարիք չկա միջամտել այդ հարցում: Անհրաժեշտ է սուլ-  
 թանին ժամանակ տալ ունեցողները կենսագործելու համար:  
 Այնուհետև, հայկական հարցում անգլիական քաղաքականու-  
 թյան փոփոխությունը հիմնավորելու նպատակով արդարաց-  
 նում է արյունարբու սուլթան Զուլումի արմենոցիդի քաղա-  
 քականությունը: Նա ասում է. «Ջարդերի սլատճառը մահմե-  
 դական բնակչության կրոնական ֆանատիզմն է և ոչ թե  
 սուլթանի կառավարության քաղաքականությունը»<sup>149</sup>: Սուլթե-  
 րին դնում է ավելի հեռուն, բացահայտ հանդես է գալիս ու-  
 ֆորմների իրագործման դեմ, ասելով, որ մահմեդական բը-

<sup>148</sup> Տե՛ս „Hansard's Parliamentary Debates“, 1895, vol. 37, 42  
 115.

<sup>149</sup> „Standard“, 1 փետրվարի 1896:

նակչութիւնը չպետք է տուժի դրանից, նրանց չի կարելի դա-  
ճարելի հօգուտ քրիստոնյաների: Պատուելում է նաև Գլադստ-  
ունի հայաստանի վերակր: 1896 թ. Էփերպուլի ճառում  
նա ասում է. «Վերջին երկու տարվայ... Թիւրքական գաղանու-  
թիւնների զոհերը քրիստոնեաներն են», շնայած դրան, «մենք  
պէտք չէ խաշակրաց արշաւանք քարոզենք մահմետականների  
դէմ»<sup>150</sup>:

1894—1895 թթ. հայկական շարքերը մանրամասն նկարու-  
պրող, համիդիականների բարբարոսութիւնները մերկացնող,  
թուրքական կառավարութեանը մեղադրող արտաքին գործերի  
մինիստրութեան հրատարակած «Blue Book»-ը սկսում է մեղա-  
դրել չաչերին և պաշտպանել սուլթանին: Սամանյան կաշարու-  
թիւնը քրիստոնյաների համար դրախտ է, գրում է «Blue  
Book»-ը, թուրքական իշխանութիւնները երբեկից չեն անտե-  
սել չաչերի իրավունքները, սրբանով նրանք չեն շարաշահել  
թուրքական կառավարութեան մեծահոգութիւնը, սրի ղեկավա-  
րութեան ներքս նրանք բարեկեցիկ ապրել են դարերի ընթաց-  
քում: Արևմտյան Հայաստանում և ամբողջ Փոքր Ասիայում  
տեղի ունեցած հայկական կոտորածների «սարսափելի զեպ-  
քերի համար պատասխանատու են իրենք՝ չաչերը: Թուրքա-  
կան կառավարութիւնը... րացառապես գիմել է պատժի, երբ  
նրա համբերութիւնը սպառվել է»<sup>151</sup>:

«Blue Book»-ը մի անգամ ևս հստակ ցույց է  
տալիս, թե ինչպես անպլիակաճ եննդ դիվանագիտութիւնը  
հայկական հարցն օգտագործում էր միայն սպեկուլյատիվ  
նպատակներով: Երբ Անգլիային անհրաժեշտ էր, նա խրախու-  
սում էր հայ ազգային ազատագրական շարժումները, երբ ոչ՝  
դատաւարտում: Մինստ Չերապը հիասթափված գրում է, որ  
ինքը չի կարող մոռանալ Ճորին Օֆիսի պաշտոնյաներից մե-  
կի խոսքերը. «Երաւունք չունիք մենե՛ գանդատելու: Չեր յե-  
ղափոխականներն են ձեր դատին ամէնէն աւելի վնասողները:  
Անոնք պաշոյն ու ումբ կ'զործածեն, ճիշտ անիշխանակուն-  
ներուն պէս: Մենք, որ մեր երկրին մէջ կ'պատժենք անիշխա-  
նականներին, միթէ կրնանք պաշտպանել զանոնք Տաճկաս-

<sup>150</sup> «Մշակ», 1896, № 112:

<sup>151</sup> «Blue Book», 1896, № 8, p. 108:

սանի մէջ»<sup>152</sup>։ Չերազր, ճիշտ հասկանալով անդլիտական կառավարութեան «հայասիրական» դիվանագիտական խաղը, Արփիարյանին գրած նամակում ասում է. «Յուսալի չէր որ դործնական միջամտութիւն յաշորդեր մարդասիրական պղնձե ցուցերուն, թէ «Եզմիրլեան լաւ կընէր, որ ջուր խառնէր իր պինճին մէջ՝ երբ դործ ունենար սուլթանին հետ»<sup>153</sup>։

Էսեցին լիբերալները կուսակցութեան «հայասեր» սուսշնորհները։ Ելազատանը մերժում է «Անդլո-տուրքական սուսշնորհացիք» խնդրանքը՝ ելույթ ունենալ միտինգում և պատանդականների կառավարութեանից այլևս չի պահանջում անշում գործադրել սուլթանի վրա հայերի դրութեանը բարելավելու համար, իսկ հայութեան «օդաին» մեծ ճառեր արտասանող Ռուբերին պահանջականների կառավարութեանը կոչ արեց սեպարատ կարգով շմիջամտել հայկական հարցում, կեղծ պատճառաբանութեամբ, որ այդ կառաջացի համակրողական պատերազմ։ Անդլիտան, ասում էր նա, կենտականորեն շահագրգռված չէ Քուրբիայի դեմ պատերազմում։ Անդլիտական շահերը բաղկացած են հազար մասից։ Չի կարելի հօգուտ մի մասի, թեկուզև կարևոր մասի, գոհարերել ինը-հարյուրիննսունինը<sup>154</sup>։ Արձագանքելով կառավարութեան արտաքին քաղաքականութեան փոփոխութեանը, «Times»-ը գրում էր, որ ինչպիսին էլ ուզում են լինել Անդլիայի պարտավորութեանները հայերի նկատմամբ, դրանք չպետք է ստվեր ձգեն անդլիտական լայն շահերի վրա, որոնք հիմնված են մեր հարաբերութեանների ղգույշ անցկացման վրա<sup>155</sup>, իսկ «Standard»-ը նշում է, որ ռեֆորմների հարցում չի կարելի շտապեցնել թուրքական կառավարութեանը, անհրաժեշտ է համբերութեան, «ոսկեղջյուրի պետական դործիչները հետադրով չեն կարող վերափոխել մի ամբողջ նահանգ»<sup>156</sup>։

Հայկական հարցում Անդլիայի քաղաքականութեան փոփոխութեանը շահամանափակվեց լոռութեամբ, այն շուտով դար-

<sup>152</sup> Մինաս Անուգ, Ազգային ինդիքներ, Փարիզ, 1927, էջ 31։

<sup>153</sup> Նույն տեղը, էջ 27։

<sup>154</sup> ՏԿ՝ Մ. Մակ-Կոլլը. Султан и держава, էջ 211։

<sup>155</sup> ՏԿ՝ «Times», 4 փետրվարի 1895։

<sup>156</sup> «Новое время», 20 июня и 1 августа, 1895. ՏԿ՝ նաև «Մշակ», 1895, № 84։

ձառնաբերական թշնամական, սուլթանին սիրաշահելու և այդ ճանապարհով անդլիական ազդեցությունը թուրքիայում վերականգնելու նպատակով: 1896 թ. հունիսին, երբ Վանում սուլթանական կառավարությունը կազմակերպել էր հայկական կոտորածներ, Վանի անդլիական վիցե-հյուպատոս Վիլյամսը, հանդես գալով միջնորդի դերում, լինում է հայերի մոտ, ուսումնասիրում նրանց պաշտպանության նպատակով կառուցած դիրքերը և վերադառնալով թուրքերի մոտ, պահանջում՝ ջարդել հայերին, ինքն էլ ղեկավարում է թուրքական ինքս-նսթների կրակը հայերի դիրքերի վրա: Սույն Վիլյամսի հրամանով ամերիկյան միսիոներ Ռեյնոլդսը դենջի ուժով դուրս է հանում անդլիական հյուպատոսառնությունում ապաստանած մի քանի հարյուր հայ կանանց ու երեխաների, պահելով նրանց գազազած թուրքական ջարդարարների ձեռքը<sup>157</sup>:

Վանի ողբերգական իրադարձությունների ականատեսներից մեկը դրել է, որ քաղաքի պաշտպանությունը տեղեց հունիսի 3—8-ը: Այդ օրերին Անդլիայի հյուպատոս Ռեյնոլդսի կարգադրությամբ անդլո-ամերիկյան միսիոներները մի կազմից՝ հայերին հարցրում էին գինաթափվել, իսկ մյուս կազմից՝ ըզբազվում լրտեսությամբ, ձգտելով իմանալ յայտն ուժերի քանակը և նրանց կառուցած ամրությունների տեղերը: Թուրքասեր անդուլ հյուպատոսը ազնիվ խոսքով երդվեց, որ եթե Վանի պաշտպանները գինաթափվեն, կամ թողնեն քաղաքը և հեռանան Պարսկաստան, ապա ինքը երաշխավորում է նրանց կյանքի անվտանգությունը, բնտանիքների ապահովությունը և խոստանում դադարեցնել հայերի հետագա ջարդերն ու նրանց ունեցվածքի կողոպտումը: Վանի պաշտպանները, դանվելով արտակարգ ծանր պայմաններում, հարկադրված համաձայնվեցին Ռեյնոլդսի առաջարկած պայմանների հետ: Այդ մասին հյուպատոսը հայանեց Վանի կուսակալին, որն անմիջապես զորքեր ուղարկեց շրջապատելու ու ջախջախելու Պարսկաստան ուղևորված պաշտպաններին՝ և հարձակվեց Վանի անպաշտպան մնացած հայ բնակչության վրա: Անդ-

<sup>157</sup> Տե՛ս Հ. Նրամյան, Հուշարձան, հ. Ա, էջ 395—398. Տե՛ս նաև В. Т. Маевский. Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов. Тифлис, 1901, էջ 115.

լիակաճ հյուպատոսի թշնամական քաղաքականութեան նետե-  
վանքով Վանում երկու օրում կողոպտեցին 6500 տուն և կո-  
տորեցին 20 հազ. հայ, իսկ Թեյլորը մնաց անտարբեր՝ կոտո-  
րածները սառնասրտորեն դիտողի գերում: Անգլիայի արևա-  
քին գործերի մինիստրի տեղակալ Քերզոնը, պատգամենա՞ր  
անդամ Չ. Տլինի հարցապնդմանը՝ թե ինչպիսին է Վանի հու-  
յության գրութեանը, պատասխանեց, որ Վանի վիցե-հյուպա-  
տոսից ստացել է հաղորդում, որում ասված է, որ թուրքա-  
կան իշխանութիւնների տեղական օրգանները և կանոնավոր  
բանակի զինվորները վերականգնել են կարգը: Նրանք «լավ  
կատարեցին իրենց պարտականութիւնները»<sup>158</sup>: Թե ինչպես  
են «լավ» կատարել իրենց պարտականութիւնները, այդ մա-  
սին ականատեսը պատմում է, որ Վասպուրականում թուրք  
ջարդարարները ո՛չ գյուղ թողեցին, ո՛չ քաղաք, բոլորը դարձ-  
րին ավերակ, ո՛չ ժամ մնաց, ո՛չ վանք, ո՛չ հայ, ո՛չ էլ սրբ-  
ութիւն: Անգլիան աչքերը փակեց, իսկ թուրքական կառա-  
վարութիւնը՝ նրա «հովանավորած» հայերին կոտորեց: Նա  
հայերին միայն խոսքով պաշտպանեց, իսկ գործնականում՝  
թուրքերին օգնեց: Անգլիացիները հայ ժողովրդին մեծ խոս-  
տումներ ավեցին, որոնք ինչպես լող ու գոլորշի՝ երկինք  
ցնդեցին: Ծիծաղելի են անգլիական խոստումները<sup>159</sup>:

1894—1896 թթ. սուլթանիզմը Արևմտյան Հայաստանը  
դարձրեց դաժան հալածանքների, բանտերի, արսորների և  
համատարած կոտորածների երկիր: Այն ամայացավ ու դար-  
ձավ անմեղ նահատակների գերեզմանոց: Ավերվեցին հա-  
յաշատ այգևատան Վանը, Աղբակն ու ողջ Վասպուրականը:  
Այդ մասին «Արմենիայի» թղթակիցը գրել է. «Վան եւս կո-  
տորուեցավ. Վան՝ հայութեան յույսոյ, Վան՝ Հայաստանի  
յույսոյ ճառագայթ. դրախտի աշխարհն ավերակ դարձավ»<sup>160</sup>  
և Անգլիայի նենգ քաղաքականութեան դեմ զայրուցթով ու բո-  
ղոքով լի ասում է. «Ահա՛ դաշնագիր, ահա՛ պայման, ահա՛  
61-րդ հոլոված, ահա՛ անողիական հիւպատոս, ահա՛ քաղա-  
քակրթութիւն»<sup>161</sup>: «Արմենիա» թերթը նշում է, որ Վասպու-

<sup>158</sup> Hansard's Parliamentary Debates, 1896, vol. 42, p. 69.

<sup>159</sup> ՏԼՆ 24ՊԱ, ֆոնդ 42, ց. 1, գործ 67, թ. 24—25:

<sup>160</sup> «Արմենիա», օգոստոսի 12 (հուլիսի 31), 1896:

<sup>161</sup> Նույն տեղը:

րականում ջարդերի ու ավերածութիւնների կազմակերպիչը սուլթանի կողմից Վան ուղարկված Մաատեատին փաշան էր, իսկ հայերի կրած մեծ կորուստների պատճառը՝ Վանի անդլիական հյուպատոս Վիլյամսի դավաճանութիւնը: Թերթը հարցնում է, թե արդյո՞ք սրանից հետո էլ սուլթանին հոգնաւարտող լորդ Սոլսբերին երես է ունենալու «բաղմութեան առջև ներկայանալու և յայտարարելու... թէ այդ կոտորածների սուլթանի գիտակցութեամբ եղած չեն»<sup>162</sup>:

Ժամանակ առ ժամանակ լիբերալների օլոգիցիայի լիդերները արդարացիորեն քննադատում էին Սոլսբերիի պահպանողական կառավարութեան հակահայկական քաղաքականութիւնը, մանաւանդ պառլամենտական ընտրութիւնների նախօրյակին, ժողովրդի համակրանքը շահելու ու ընտրութիւններում հաղթանակի հասնելու նպատակով: Այդպիսին էր նաև 1896 թ. փետրվարի 11-ի Ռոզբերիի ելույթը պառլամենտում: Նա ասում էր, որ մինչև հիմա մենք հույս էինք դրնում Բեալինի արակատախ 61-րդ հոդվածի և Կիպրոսի կոնվենցիայի վրա, որոնց իրագործմամբ Արևելքի բրիտանացիները կազմատարվեին: Բայց այդ բոլոր վերջի վերջոյ դուրս եկան «խաբերայութիւն և թակարդ»: Մարկիդ Սոլսբերին հիմա ասում է, որ «ռեֆորմների իրագործումը բոլորովին էլ պարտադէր պայման չէր, այլ կամավոր խոստում»: Սոլսբերին ռեպլիկով Ռոզբերիին պատասխանում է. «Ծա ասել եմ, որ այնտեղ խոստում չկա»<sup>163</sup>: Ռոզբերին շարունակում է իր խոսքը, որ եթե բարենորոգումները չեն երաշխավորվել ու խոստացվել, ապա ինչու արձանագրութիւններում դրված է, որ Բեալինի կոնգրեսում Սոլսբերիի գլխավոր միսիան սուլթանի բրիտանացի հպատակների, մասնավորապես հայերի պաշտպանութիւնն էր միտումնավոր ձեռվ կատարվող կողոպուտներից ու կոտորածներից: Անգլիան այդ պարտավորութիւնները վերցրեց Ռուսաստանի ձեռքից և հանձնեց մեծ տերութիւնների ձեռքը, որպես ավելի լավ երաշխիք, քան ռուսականն էր: Անգլիան սուլթանի հետ կնքեց Կիպրոսի կոնվենցիան, որով նա պետք է պաշտպաներ Թուրքիայի արևելյան վիլայեթ-

<sup>162</sup> «Արմենիա», օգոստոսի 12 (հուլիսի 31) 1896:

<sup>163</sup> „Hansard's. Parliamentary Debates“, 1896, vol. 37, p. 45.

ներր և սուլթանահալատակ Հայաստանի քրիստոնեյաներին այն պայմանով, որ սուլթանն այնտեղ ստեղծեր կառավարման լավ սխառեմ: Բեռլինի կոնգրեսից վերադառնալուց մի քանի շաբաթ հետո կաղմաղկերոված ձաշկերույթում Բիքոնսֆիլդը նորից կրկնեց կոնգրեսում քրիստոնեյաներին տրված խաղաղություն հաստատելու ու կառավարման լավ սխառեմ ստեղծելու հավաստիացումները: Ներկա մոմենտին ոչինչ չի մնալից այդ խոստումներից ու հայերին տրված հավաստիացումների քաղաքականությունից: «Մենք գիտենք ինչպիսին են արդյունքները, այդ «խաղաղություն է առանց պատվի»: Սուլթերին ասում է, որ եթե սուլթանը չի կատարում իր քատանձնած պարտավորությունները, ինչ կարող են անել իրենք: «Մենք ծովային երկիր ենք և ոչ թե ցամաքային: Մենք չենք կարող ուղղաժողովային նավատորմիդր կանգնեցնել Հայաստանի կենտրոնում»<sup>164</sup>, Հասկանալի է, որ այդ անհնար է: Եթե այդ այդպես է և ձեր միջոցները չեն համապատասխանում, ինչո՞ւ դուք Կիպրոսի կոնվենցիայով խոստացաք պաշտպանել Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանները և ինչ նպատակով Արևմուտքին հավաստիացրիք պաշտպանել սուլթանի քրիստոնեահալատակներին՝ հայկական վիլայեթներում ստեղծելով կառավարման լավ սխառեմ: Միթե 1878 թ. տնդիսական ուղղակական ուժերն ավելի մեծ էին, քան հիմա: Դուք շատ լավ գիտեք, որ այժմ մեր ուժերը կրկնակի մեծ են, քան այն ժամանակ: «Ինչո՞ւ 1878 թվին մեզ չբացատրեցիք, որ այդ պայմանը, որին մենք հիմարարար հավատացել ենք, եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ խաբեբայություն ու թակարդ»: Այդ եղել է պղպջակ: Պղպջակը պայթեց, այն պղպջակը, որի փչելու մեջ այն ժամանակ բավական աշխատանք է կատարել նաև Սուլթերին, որպեսզի այսօր պայթեցներ: Անպտուղ ու սնապարծ հայտարարություններ: «Ահա խաղաղությունն առանց պատվի»: Ես չգիտեմ ինչ խոչընդոտներ են Անգլիային հասցրել այդպիսի ստորացման: Մենք չենք արում խաչակիրների դարում, նրանց նման ոգեշնչված չենք գնում քրիստոնեյաներին փրկելու մահմեդականների տիրապատությունից, բայց մենք գանվում ենք անտարբերության

<sup>164</sup> „Hansard's Parliamentary Debates“, 1896, vol. 37, p. 45.



մեջ, ապրում դեգրադացիա: «Մենք պետք է ղառներ միջին մի գիծ հայերին օգնելու համար, որպեսզի չլզանք խղճի խայթ. ամոթ» նրանց առաջ, ում կոտորեցին, քայքայեցին, և այդ բոլորը Բեռլինի պայմանագիրը ստորագրած Եվրոպայի հեղինակավոր պետությունների աչքի առջև<sup>165</sup>:

Ռուսերի խոսքերը, որ խաչակիրները ոգևորված վերած էին «փրկելու» քրիստոնյաներին, կամ հայերի կոտորածների համար ինքն զգում է «խղճի խայթ», կամ «ամոթ» և պետք է ելք գտնել «հայերին օգնելու» համար, ավելի շուտ դիվանագիտական բնույթի հայտարարություններ են, քան անկեղծ իռասովանություն, սակայն չի կարելի չընդունել, որ Ռուսերին միանգամայն թե՛ շատ ու սուր ձևով է քննադատել պահպանողականների կառավարության 1878—1896 թթ. հակահայկական քաղաքականությունը՝ սկսած Բիբոնսֆիլդիչ մինչև Սույբերգի վերջին կառավարությունը: Բայց Ռուսերին ոչինչ չի ասում այն մասին, որ վերջին 18 տարիների ընթացքում հայերին օգնելու նպատակով ոչինչ չարեղին նաև լիբերալների կուսակցության լիդերներ Գլադստոնը և անձամբ ինքը, և որ կառավարության դեկը մի քանի անգամ անցավ իրենց ձեռքը:

Ենդերիալիստական Անդլիայի հակահայկական քաղաքականությունը ուներ հետևադասված բնույթ, այն անցկացվում էր գլխավոր մեթոդներով և տյնքան ակնառու ձևով որ անգամ հայոց դատի «ամենաջերմ պաշտպան» ու «բարեգութ» Գլադստոնը արևելյան հարցում անդլո-ռուսական համաձայնության կողմնակից, ռուս ժուռնալիստ Օլգա Նովիկովային 1889 թ. սեպտեմբերի 16-ին դրած նամակում չի կարողանում թաքցնել այն և խոստովանում է. «Հայաստանում կատարվող այդ դաժանությունները մեր խայտառակությունն են»: Եթե Անդլիան ուժ չուներ այն կանխելու, ապա նա չպետք է իր վրա վերցներ Հայաստանում ռեֆորմների անցկացնելու պարտավորությունները և «դրա դիմաց հափշտակեր Կիպրոսը: Գողությունը մեծ հոգս պատճառող է»<sup>166</sup>: Մեկ

<sup>165</sup> See Hansard's Parliamentary Debates, 1893, vol. 37, էջ 43

<sup>166</sup> «Русская старина», 1914, т. 160, стр. 337.

այլ անգամ, 1896 թ. սեպտեմբերի 1-ին, Գլադստոնը նրան գրում է, որ անգլիական քաղաքականությունը հայկական հարցում հասավ ամենամոռայլ աստիճանի և այն ընդմիջտ «շմոռացվող խայտառակություն է»<sup>167</sup>:

Պատասխան նամակներում Օ. Նովիկովան հատուտում է անգլիական կառավարության թշնամական քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ և նշում. «Վաղուց են հայտնի շարիքներ գործելու նրա մեծ ընդունակությունները»<sup>168</sup>:

Անմեղ ու անդեն արևմտահայության 1890-ական թվականներին և հետագա տարիների շարքերի թուրքական կառավարության քաղաքականությունը և սուլթանին հովանավորող եվրոպական պետությունների կուրսը դատապարտեց ողջ առաջադեմ մարդկությունը հանձինս պրոֆ. Լ. Կամարովսկու, Վ. Բրյուսովի, ահադեմիկոս Գորդլեսկու, Մ. Գորկու, Վյետեչևսկու, Խալաթի գրող հրապարակախոս Ամիլկար Ջիպրիանիի, դանիացի ահանավոր քաղաքական գործիչ Գեորգ Բրանդեսի, նշանավոր հրապարակախոսներ Գ. Կոլենի, Պրնսանսեի, գրող Յուռբեն Դոհենի, ֆրանսիական ահանավոր սոցիալիստ ժան ժորեսի, աշխարհահռչակ գրող Անատոլի Ֆրանսի, անգլիական պատմաբան Թոմսթի և ուրիշների: Անատոլ Ֆրանսը, դատապարտելով մեծ տերությունների շահագիտական նկատառումներով թուրքիային հովանավորելու քաղաքականությունը և արտահայտելով իր անկեղծ համակրանքը հայ ժողովրդի հանդեպ, հայտարարեց. «Հայերի դատը մարդկության դատն է, հետևաբար՝ նրանք պետք է ամբողջ մարդկությանը հետաքրքրեն այդ դատով... բոլոր հայերի ձայնը մեկ ձայն պետք է կադմի: Նրանց միակ փրկությունը՝ համերաշխ գործունեության մեջ է»<sup>169</sup>:

Աշխարհի առաջադեմ մարդկությունը մեղադրում էր անգլիական կառավարությանը, որ նա խափանեց Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, փակեց ֆիզիկական բնաջնջումից հայերի փրկության ուղին և պաշտպանեց քայ-

<sup>167</sup> Марк Твен. Собр. соч., М., 1961, т. 12, стр. 514.

<sup>168</sup> Նույն տեղը, էջ 348:

<sup>169</sup> «Գրական թերթ», 1965, № 13:

քայլող թուրքական պետությունը, իսկ «սուլթանը,— գրել է մեծ երգիծաբան ու հումանիստ Մարկ Տվենը,— հայերին մորթում է, ինչպես խոզերին սպանդանոցում»<sup>170</sup>։ Հայ ժողովրդի առաջ Անգլիայի մեղավորության ու պատասխանատվության փաստը ընդունեց նաև Օքսֆորդի եպիսկոպոսը։ Նա ասում էր, որ անգլիական կառավարությունը այժմ սկսում է իր քաղաքականության ծանր հետևանքները. «Մենք հատուցում ենք անցյալի մեղքերի համար»<sup>171</sup>։

Այսպիսով, բոլոր փաստերն անհերքելիորեն ցույց են տալիս, որ անգլիական կառավարությունը սղդակի և անուղղակի ձևով մեղսակից է հայկական կոտորածներին։ Նա շարաշահել է հայկական հարցը։ Խարդախ Ալբիոնը մերթ երկար ժամանակ «մոռացել» է հայկական հարցը, մերթ էլ նորից բարձրացրել այն։ Մերթ ձևացել է հայ ժողովրդի պաշտպան, նրան հրահրել սուլթանիզմի դեմ պայքարի, որպեսզի առիթ ստեղծի միջամտելու թուրքիայի ներքին գործերին ու արդարացի Օսմանյան կայսրությունը մասնատելու իր կուրսը, մերթ էլ օգնել սուլթանին կոտորելու հայերին, բողարկել սուլթանիզմի արմենոցիզի քաղաքականությունը, արգարացրել սուլթան Զուլումի բարբարոսությունները, սրպեսզի սուլթանին սիրաշահելու միջոցով վերականգնի անգլիական ազդեցությունը թուրքիայում և ամրանա Եզրիտոսում։ Պահպանողականների և լիբերալների կառավարությունները թե՛ մեկ, թե՛ մյուս դեպքում ձգտել են հայերի արջան գնով իրագործել անգլիական բուրժուազիայի յագրեսիվ պլանները։ Այդ իսկ պատճառով հայ ժողովուրդը շէր հավատում Անգլիային, շէր ընդունում անգլիական դափանանքն ու օրինատացիան<sup>172</sup>։ Նա հուսկացել էր, որ Անգլիայի նպատակը Արևմրտյան Հայաստանն իր ազդեցության ոլորտում պահելն է և ոչ թե նրան ինքնավարություն տալը, ինչպես և հայկական հարցի շարաշահմամբ իր տիրապետության ամրապնդումը Եզրիտոսում։ Շատ քչերն էին հույս դնում անգլիական օգնության վրա, նրանք էլ տեսնելով, որ անգլիական կառավարությունը մեկ փոթորկալից արշավանք է սկսում հայերի

<sup>170</sup> Марк Твен. Собр. соч., М., 1961, т. 12, стр. 514.

<sup>171</sup> «Армянский вестник», 1916, № 1, стр. 17.

<sup>172</sup> Տե՛ր АВПР. ֆ. Политархив, 1895, д. 3439, л. 4—6.

«փրկության» համար, մեկ էլ նրանց նետում բախտի բմահանուլքին, թողնում թուրքական ջարդարար-դահիճների ձեռքում, կարճ ժամանակամիջոցում համոզվում էին անգլիական քաղաքականության շահագիտական էության մեջ և երևա էին դարձնում նրանից:

Այդ փաստը խոստովանում է նաև Գլադստոնը: Դեռևս 1893 թ. փետրվարի 3-ին Օ. Նովիկովային գրած նամակում նա ասում էր, որ Անգլիան կորցրել է իր ազդեցությունը Հայաստանում և դարձել լրիվ «հեղինակազուրկ»<sup>173</sup>:

Եթե նախկինում Սուլթերին հայկական հարցի կապակցությամբ օգտագործում էր Գլադստոնի ելույթները սուլթանի դրա ճնշում գործադրելու նպատակով, ապա 1895 թ. հոկտեմբերից սկսում է մեղադրել լիբերալների կուսակցության առաջնորդին հայերին «պաշտպանելու» համար: 1895 թ. նոյեմբերին Ռոզերին պիղատոսյան ցինիկությամբ ուղղակի հայտարարում է, որ հայերի պաշտպանության համար անհրաժեշտ է Թուրքիան օկուպացնել, որը «պահանջում է վիթխարի ռազմական ուժեր: Աշխարհում ոչ մի նավատորմի չի կարող անցնել Տավրոսյան լեռները, որպեսզի պաշտպանի հայերին»<sup>174</sup>: Արձագանքելով Ռոզերիի հայտարարությունը, լորդ Դեֆֆերինն ասում էր, որ հայերին «Անգլիան կարող է օգնել միայն ծովային նավատորմի ղով, իսկ նրա նավատորմի չը նոյան տապան չէ, որ կարողանա կանգնել Արարատի դագաթին»<sup>175</sup>, մինչդեռ, երբ անգլիական շահերը պահանջում էին՝ նրա ռազմանավերը բարձրանում էին էվերեստի երկնահաս գագաթը, լողում Կամերունի ջունգլիներում և ճեղքում Թաֆֆինի ծովածոցի սառցադաշտերը՝ անգլիական իմպերիալիզմի գիրքերը Հնդկաստանում, Աֆրիկայում և Կանադայում ամրապնդելու համար: Սուլթերիի ու Դեֆֆերինի հայտարարությունները ցույց են տալիս, որ Անգլիան ավարտել էր իր դիվանագիտական իսողը հայկական հարցում: Այդ հասակ երևում է նաև 1897 թ. փետրվարի 25-ին

<sup>173</sup> «Русская старина», 1914, т. 160, стр. 340. Տե՛ս նաև «Московские ведомости», 1895, № 291.

<sup>174</sup> Мак-Колль. Султан и державы, стр. 347. Տե՛ս նաև «Մշակ», 1896, № 127 և 131:

<sup>175</sup> Е. К. Саркисян, նշված աշխատ., էջ 166:

պառլամենտում Քերդոնի կատարած հայտարարութիւնից: Վերջինս, պատասխանելով Ջ. Բրայսի հարցին, ասում է, որ հայկական հարցը պետք է «լուծել խաղաղ ճանապարհով: Անգլիան տրամադիր չէ փոխելու իր որոշումը»<sup>176</sup>:

Այսպիսով, խարդախ Ալբիոնը, ավանդական մաքիավելական քաղաքականութեամբ, մի կողմից ձեռնում էր Թուրքիայի բարեկամ, դաշնակից և սուլթանի աստվածային իրավունքների պաշտպան, իսկ մյուս կողմից՝ թուրքահայատակ քրիստոնյաների հովանավոր ու փրկիչ: Նա մեկ անարդում էր սուլթանին և խաշակրաց արշավանք սկսում քրիստոնյաների «պաշտպանութեան» օգտին, մեկ էլ ողջագործում նրա հետ և քրիստոնյաներին հանձնում թուրքական դաժան դահճների ձեռքը:

Հայկական հարցում անգլիական կառավարութեան քաղաքականութեան փոփոխութեան հետ «Անգլո-հայկական ասոցիացիան» սկսեց ուշ-ուշ կազմակերպել միտինգներ, որոնց այլևս պատրաստնաթի անդամները չէին մասնակցում: Հայերի «երկրպագու» վեսամինիստների հերցոգն էլ «հիվանդութեան» պատճառով հրաժարվեց նախադասել միտինգներում: Այնտեղ արտասանվող ճառերն էլ դարձան խիստ շափաւոր: Անգլիական քաղաքականութեան ուսումնասիրութիւնը համոզեցուցիչ կերպով ցույց է տալիս, որ կառավարութեան ղեկավարների, քաղաքական գործիչների բարձրաձայն հայտարարութիւնները, թե անհրաժեշտ է ռեֆորմների իրագործման միջոցով բարելավել հայ ժողովրդի դրութիւնն Արևմտյան Հայաստանում, եղել է լոկ դիվանագիտական շանտաժ: Նրանք երբևիցե այդ մասին լուրջ չեն մտահոգվել: Թե ինչ աստիճանի անգլիական կառավարութեան անտարբեր է եղել հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, հստակ երևում է կոնդոնի գերմանական դեսպան Հատցֆելդի դեկուցագրից: Հայկական բարենորոգումների մշակման համար Կ. Պոլսում հրավիրված եվրոպական դեսպանների կոնֆերանսի աշխատանքի մասին Հատցֆելդի հետ գրույցի ժամանակ պրեմիեր-մինիստրը հեզմանքով ասում է, որ մինչև կոն-

<sup>176</sup> „Hansard's Parliamentary Debates“, 1897, vol. 43, էջ 1142.

Ֆերանտը հասնի գործնական արդյունքի, այդ ժամանակամիջոցում «կարելի է պտույտ կատարել աշխարհի շուրջը»<sup>177</sup>։ Սուլբերիի այս հայտարարությունը նույնպես բացահայտում է անգլիական կառավարության քաղաքական դիմակը հայկական հարցում, մինչդեռ Անգլիայի բուրժուական պատմաբանները, իմպերիալիզմի «գրչի կուլինները», ձրգտում են քողարկել իրենց կառավարության ռեակցիոն, ագրեսիվ քաղաքականությունը։ Պատմական փաստերը կեղծելու օգնությամբ Գ. Գուլը փորձում է արդարացնել անգլիական իմպերիալիզմի քաղաքականությունը հայկական հարցում, համարելով այն անշահախնդիր ու հումանիստական։ Հայ ժողովրդի թշվառ դրության մեղքը նա հիմնականում պցում է Ռուսաստանի վրա, ասելով. «Պետություններից ոչ մեկը, բացառությամբ Անգլիայի, չէր ձգտում հասնել խոստացած ռեֆորմների իրագործմանը. Ռուսաստանը հնարավորություն ուներ օգնելու, բայց չցանկացավ անել այդ»<sup>178</sup>։

Անգլիայի հայասիրական քաղաքականության Գ. Գուլի տեսակետը հիմնավորված չէ։ Այն հերքվում է փաստերի ուսումնասիրությամբ։ Անգլիան միշտ վարել է շահամուլ քաղաքականություն և երբեկցե հաշվի չի առել հայ ժողովրդի կենսական շահերը։ Այդ ևն ասպացուցում Սուլբերիի ելույթները։ 1896 թ. հոկտեմբերի 28-ին Լոնդոնի քաղաքագրխի ճաշկերույթում պրեմիեր-մինիստրն ասում է, որ հայկական հարցի լուծման համար Անգլիան չի դործի միայնակ, չի դիմի պատերազմի վտանգի, որովհետև պատերազմը «կորստաբեր ազդեցութիւն կունենայ մեր առևտրական և քաղաքական շահերի վրա»։ Լուծման կարոտ արևելյան հարցերը «չեն կարող մեղ ստիպել հեռանալ այն քաղաքականութիւնից, որին մինչև այժմ հետևում էինք, կամ ձեռքից բաց թողնել մի թիղ այն հողերից, որ մենք տիրում ենք այժմ»։ Այնուհետև Սուլբերին ասում է. «Մեր առաջին պարտաւորութիւնն է պաշտպանել Մեծ Բրիտանիայի շահերը և նրա իրաւունքները»<sup>179</sup>։ Ինչպես տեսնում ենք, Սուլբերիի ելույթը

<sup>177</sup> „Dise Grosse Politik.“. Bd. XII, № 3086. Հատցֆելդի զեկուցագիրը, 22 դեկտեմբերի 1896.

<sup>178</sup> Г. П. Гуч. История современной Европы. М., 1925, стр. 140.

<sup>179</sup> «Մշակ», 1896, № 131:

ցույց է տալիս, որ անգլիական կառավարության քաղաքականությունը խիստ շահագիտական էր, իսկ Գ. Գուչի տեսակետը լրիվ հակասում է իրականությանը:

Իմպերիալիստական Անգլիան ղեկավարվում էր մոնոպոլիստական կապիտալի շահերով և ոչ թե հումանիզմի ու խնամակալի ղգացմունքներով: Այդ կապակցությամբ անգլիացի արևելագետ Ջոզեֆ Փրայդը գրել է. «Անգլիան հայերուն հոգատարութիւնը շրնդունեցաւ, քանի որ անիկա քարիւղ չկա»<sup>180</sup>, իսկ ամերիկացի միսիոնիր, անգլիական քաղաքականության լավատեղյակ Ստենլի Ջոնսոնը նշում է. «Հոգատարութեան գրութիւնը խնամակալական ազնիւ յղացում մըն է տկարներու հաշտոյն: Բայց այդպէս չէ իրողութիւնը, այլ տուեալներու բերումով, անիկա կաթ կթելու նպատակներ կը չետապնդէ, եթէ այդպէս չըլար, որեւէ ազդ պիտի ստանձնէր Հայաստանի հոգատարութիւնը, եւ անիկա պիտի շմատնուէր բռնաբարումի, սպանութեան ու կործանման: Եւստի այդ հոգատարութիւնը շտանձուեցան: Որովհետեւ հոն կաթ չկար: Այդ շարչարեալ ազգին կործքերը շատոնց շորցեր էին, այնպէս որ ազգերը անգիի կողմէն անցան»<sup>181</sup>: Իրավացի են Փրայդը և Ջոնսոնը: Անգլիական պետական ու քաղաքական գործիչների հայասիրությունը միայն ցուցադրական էր, կեղծ ու շինծու: Նրանք անգամ մինչև վերջը չպահանջեցին Թուրքիայից կենսագործելու մայիսյան ռեֆորմները, իսկ սուլթանը բոլորովին մտադրություն չունեւ իրականացնելու այն: Մսիս քաղաքի մուֆթին, լավ հասկանալով Աբդուլ-Համիդ II-ի խարդախ քաղաքականությունը, հայերին ցինիկաբար ասում էր. «Պէտք չկայ այս անտեղի եւ աւելորդ ցույցերուն եւ ուրախութիւններուն: Մենք ձեռնէ լաւ կը ճանչնանք մեր սուլթանին, ան ֆերմաններ կը հրատարակէ ձեզ ուրախացնելու համար, եւ յետոյ ֆերմանը չի դործադրեր մեզ ուրախացնելու համար: Եւ դուք գիտէք, թէ որու ուրախութիւնը տեսական է, մե՞քը, թէ՛ ձերը»<sup>182</sup>: Հայ ժողովրդի պահանջը ռեֆորմների հարցում շատ շուփավոր էր ու համեստ, սակայն

<sup>180</sup> Հակոբ Կուրլեյան, նշված աշխատ., էջ 83:

<sup>181</sup> Նույն տեղը, էջ 119:

<sup>182</sup> Նույն տեղը, էջ 19:

այն հանդիպում էր թուրքական կառավարության դիմադրությունները: Նա շէր պահանջում «ոչ օծված թագաւոր վանի մէջ, և ոչ էլ անկախ իշխան էրգերումում... այլ միմիայն մի բան՝ կեանքի, պատի, գոյքի ապահովութիւն»<sup>183</sup>:

Հայ ժողովրդի նկատմամբ անցկացվող անգլիական կառավարության իմպերիալիստական քաղաքականութիւնը տիրապետող դասակարգերի և ոչ թե ուշխատավորական մասսաների քաղաքականութիւնն էր: Հայաստանում կատարված ողբերգական իրադարձութիւնների և սեֆորմների շիրադործման համար պատասխանատու են անգլիական ֆինանսային մագնատները և նրանց շահերը պաշտպանող կառավարող երկու կուսակցութիւնները, բանի որ նրանք ոչինչ չարեւ ոչ բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումները, և ոչ էլ եվրոպական պետութիւնների ներկայացուցիչների կողմից մշակած մայիսյան սեֆորմներն իրագործելու ուղղութիւնը: «Ոչ մի կուսակցութիւն.— իրավացիորեն գրել է Մակ-Կոլլը,— իրավունք չունի բար նետելու մյուսի վրա: Մենք բոլորս մեղավոր ենք»<sup>184</sup>: Նա ճիշտ է նաև, երբ նշում է, որ Անգլիան, եթե ցանկանար, կարող էր «առանց մի ղինվորի տեղաշարժի... առանց մի թնդանոթի կրակոցի»<sup>185</sup> հարկադրել սուլթանին կենսագործելու հայկական բարենորոգումները:

Աշխատավորական Անգլիայի քաղաքականութիւնը իմպերիալիստական շրջանների քաղաքական կուրսի լրիվ հակադասակերն էր: Իմպերիալիզմի շատուղովների փորձը՝ կառավարող շրջանների ազրեսիվ քաղաքականութիւնը ներկայացնել որպես համադրային քաղաքականութիւն, միանգամայն անհիմն է: Վ. Ի. Լենինը հավանութիւն է տվել Զ. Ս. Հորսոնի այն տեսակետին, որ «Իմպերիալիզմը ազգային քաղաքականութիւն անվանելը անամոթ սուտ է. ազգի շահերը լուրջադիր են և քաղաքականութիւնը քաղաքականութիւն չէ: Սակայն այդ քաղաքականութիւնը յուրաքանչյուր քայլին»<sup>186</sup>: Եթե անգլիական կառավարող շրջան-

<sup>183</sup> «Մշակ», 1895, № 89:

<sup>184</sup> М. Мак-Колль. Ответственность Англии перед Арменией, в сб. «Положение армян в Турции...», стр. 196.

<sup>185</sup> Նույն տեղը, էջ 203:

<sup>186</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հտտ. 39, էջ 513:



ները ձգտում էին հայկական հարցն օգտագործել իրենց նեղ շահերի համար, ապա աշխատավորական մասսաները անկեղծորեն համակրում էին բազմաշարժար հայ ժողովրդին, սրտանց ցանկանում նրա ազատագրությունը թուրքական կիսաբարբարոսական լծից: Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի աշխատավորները, անկախ իրենց ազգային ու կրոնական պատկանելություն, կազմակերպում էին բողոքի միտինգներ, ցույցեր, դատապարտում սուլթանի վրա՝ արյունարբու բաղաբաղանությունն Արևմտյան Հայաստանում: 1896 թ. սեպտեմբերի 29-ին Լոնդոնի Հայդ-Պարկում կազմակերպված բանավորական միտինգը, որին մասնակցում էր 20—30 հազ. մարդ, դատապարտեց սուլթանի հայկական ջարդերի բաղաբաղանությունը և ընդունեց որոշում՝ կառավարությունից պահանջել «Նուանդուն ազգեցութիւն գործելու սուլթանի վրա՝ արիւնահեղ կառնաւալին վերջ տալու համար: Կառավարութիւնը կարող է հաւատացած լինել, որ ազգաբնակչութիւնը կը պաշտպանի նրան»<sup>187</sup>: Բացի այդ, Անգլիայի և Իռլանդիայի կվակերները, նոնկոնֆորմիստները համարական խնդրագրով դիմում են Սուբերիին, պահանջելով անհաղաղ օդնություն ցույց տալ «Հայաստանի թշուառ ազգաբնակչութեանը»<sup>188</sup>: «Մեծ մարդասպան» Զուլումի հակահայկական բաղաբաղանությունը դատապարտեց նաև 1896 թ. հոկտեմբերի 7-ի Սենթ-Ջեյմս Հոլում կայացած Անգլիայի համազգային ժողովը<sup>189</sup>:

Այսպիսով, անգլիական աշխատավորները կառավարությունից պահանջում էին ճնշում գործադրել սուլթանի վրա՝ հայկական կոտորածները դադարեցնելու նպատակով, իսկ պառլամենտական ընտրությունների ժամանակ խոստանում՝ քվեարկել այն կուսակցության օգտին, որը գործնական օգնություն ցույց կտար սուլթանական լծի տակ տառապող հայ ժողովրդին: Երբեմն Անգլիայում հայ աշխատավորների պաշտպանության ժողովրդական շարժումն այնքան ուժեղ բնույթ էր ստանում, որ սպառնում էր ստեղծել կառավարա-

<sup>187</sup> «Մշակ», 1896, № 117:

<sup>188</sup> Նույն տեղը, № 118:

<sup>189</sup> Տե՛ս նույն տեղը, № 121:

կան ճգնաժամ, կամ վերածվել հակահառափարական ցույցերի<sup>190</sup>։

Իմպերիալիստական Անգլիան, կատաղի պայքար մղելով Գերմանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ՝ Օսմանյան կայսրությունում ու աշխարհի տարբեր մասերում գերիշխանություն հաստատելու համար, բոլորովին չէր հետաքրքրվում հայ ժողովրդի վիճակով։ Անգլիան ձգտում էր Արևմտյան Հայաստանը սլատնեշ դարձնել Ռուսաստանի դեմ։ Այդ փաստը հաստատվում է արտաքին գործերի մինիստր է. Գրեյի մեմուարների ուսումնասիրությամբ։ Նա գրել է. «Անգլիական քաղաքականությունը միշտ էլ նպատակ է հետապնդել Ռուսաստանին թույլ շտալ մոտենալու Կոստանդնուպոլսին և նեղուցներին. մենք դրա համար պայքարել ենք Ղրիմի պատերազմում... և դա էր մեր քաղաքականության հիմնական ուղղությունը Բիրսնսֆիլդի ղեկավարությամբ...»<sup>191</sup>։ Քաղաքական այդ կուրսն Անգլիան անցկացրեց նաև հետագայում։ Նրա քաղաքականության փարիսեցիական բնույթը հասկացան հայ առաջավոր գործիչները։ Ժամանակին Բաֆֆին նշել է. «Հայերի վիճակը շատ չի հետաքրքրում անգլիացիներին... Նրանց հարկավոր է մի զորավոր պատնեշ, որ կանդնեշներն ուսաների առաջը»<sup>192</sup>։

\* \* \*

Իմպերիալիստական Անգլիան Արևմտյան Հայաստանը դիտում էր նաև որպես փոխանակության մանրագրամ մեծ տեղությունների հետ Ասիայում ու Աֆրիկայում գաղութների բաժանման ժամանակ ձեռնառն գործարքներ կնքելու համար։ Հատցֆելդի հետ զրույցի ժամանակ Սոլսբերին առաջ է քաշում «հիվանդ մարդու» ժառանգությունը բաժանելու զանազան տարբերակներ։ Նա առաջարկում է Ռուսաստանին հանձնել Արևմտյան Հայաստանը, Կ. Պոլիսը, Ֆրանսիային

<sup>190</sup> *SE* «*ABPP*. ф. «Канцелярия», 1894, д. 25, л. 561. Невидов—Гирсу, 13 декабря 1894, № 162.

<sup>191</sup> E. Grey of Fallodon, *Twenty-five years 1892—1916*. New-York, 1925, vol. 1, p. 180.

<sup>192</sup> Բաֆֆի, *Տաճկանայք*, 1895, էջ 41։

տալ Մարոկոն, Բուալիային՝ Տրիպոլիտանիան ու Ալբանիան, Ավստրո-Հունգարիային՝ Սալոնիկը, որպեսզի նա դուրս դա էգեյան ծով, իսկ Անգլիային՝ Միջագետքը, որպես Հնդկաստանի ճանապարհը ցամաքից փակող ռազմաստրատեգիական երկիր<sup>193</sup>։ 1899 թ. հայ ժողովրդի «փրկարար» անգլիական կառավարությունը Բեռլին ուղարկեց «աֆրիկյան նապոլեոն» Սեսիլ Ռոզսին՝ գերմանական կառավարության հետ բանակցություններ վարելու, գերմանական Արևելյան Աֆրիկայի տերիտորիայով հեռագրադիժ անցկացնելու և մադիստրալ երկաթուղի կառուցելու համար։ Այդ բանակցությունների պատրվակի տակ Սեսիլ Ռոզսը փորձում է գերմանական կառավարության հետ համաձայնության դալ Աֆրիկան և Մեծավոր Արևելքը անդլո-գերմանական ազդեցության ոլորտների բաժանելու շուրջը, որի մասին Գերմանիայի դիվանադիտական վարչության ղեկավար ֆոն Բյուլովը գրել է, որ 1899 թ. մարտի 10-ին, «Ընչդես մրրկուհայր փոթորկից առաջ», Սեսիլ Ռոզսը երևաց Բեռլինում, որին կայսրն ընդունեց գրկաբաց։ Ռոզսը վիլհելմ II-ին առաջարկում է չխոչընդոտել Անգլիայի նվաճողական պլաններին Հարավային Աֆրիկայում, դրա դիմաց Անգլիան չի դիմադրի Գերմանիային ազատ դործելու Թուրքիայում և Միջագետքում։ Այնուհետև Բյուլովը նշում է. «Կայսրի աչքերն սկսեցին փայլատակել, երբ Սեսիլ Ռոզսն արտահայտեց կարծիք, որ Հարավային Աֆրիկայում Գերմանիան շունի էական շահեր, բայց դրա փոխարեն կարող է Փոքր Ասիայում ազատ դործել։ Միջագետքը, Նիբրատը և Տիգրիսը, Բաղդադը, իսլամիկների քաղաքը, ահա որտեղ է գտնվում նրա ապագան»<sup>194</sup>։

Այդ բանակցությունների ժամանակ Անգլիան ղեկավարվում էր *do ut des* (տալիս եմ, որ տաս) սկզբունքով։ Անգլիական մոնոպոլիստները Հարավային Աֆրիկան գերադասում էին վերահիշյալ տերիտորիաներից, քանի որ Հարավային Աֆրիկան տալիս էր ավաստի համաշխարհային արտադրանքի 90 տոկոսը։ Բացի այդ, նրանց հրապուրում էին

<sup>193</sup> Տե՛ս «Die Grosse Politik...», Bd. X, №№ 2375, 2387, 2392.

<sup>194</sup> Бернгард Бюлов. Воспоминания. М.-Л., 1935, стр. 140.

Բուրական հանրապետութիւնում հայտնաբերված ոսկու հարուստ պաշարները: Այն ժամանակ ամբողջ աշխարհում ամսական հանում էին 300 հազ. կգ ոսկի, որից 80 հազարը՝ անգլիական գաղութներում, մոտավորապես նույնքան էլ հանվում էր Տրանսվաալում: Եթե Անգլիան իրագործեր իր սլյանը՝ գրավեր Տրանսվաալը, ապա նա կունենար ոսկու համաշխարհային հանույթի կեսը: Իրա համար էլ անգլիական մոնոպոլիստներին ու նրանց դրածո պետական գործիչներին այլևս չէր հրապուրում Արևմտյան Հայաստանը, այլ պայթակղում էր Հարավային Աֆրիկան և նրանք պատրաստ էին կնքել գործարքներ, անգամ ուժով դավթել այն: Բեռլինի անգլիական դեսպան Մելետը Գերմանիայի արտաքին գործերի վարչութիւնն պետական քարտուղար Մարշալին դեռևս 1895 թ. գղտւշացրել էր, որ Անգլիան Տրանսվաալի հարցում «չափազանց պայտն է», բանի որ այն Անգլիայի համար «իր նշանակութիւնը չի դիչում Եգիպտոսին»<sup>195</sup>:

Ասիան ու Աֆրիկան սուղեցութիւն ուղորտների բաժանելու անգլիական կառավարութիւնն պլանը առաջ քաշեց նաև գաղութների միմիտար Չեմբեռլենը Բյուլովի հետ 1899 թ. նոյեմբերի 20—27-ին կայացած լոնդոնյան բանակցութիւնների ժամանակ<sup>196</sup>: Դարավերջին Անգլիան ցանկանում էր Արևմտյան Հայաստանը և Փոքր Ասիան Գերմանիային հանձնելու գնով իրագործել իր նվաճողական պլաններն Աֆրիկայում: Նա պլանավորել էր Աֆրիկայում ստեղծել գաղութային կայսրութիւն, որը, համաձայն Անգլիայի արտաքին գործերի միմիտարի տեղակալ Ջ. Ֆերգյուսսոնի հայտարարութիւնն, ավելի մեծ էր լինելու, քան րրիտանական շնդկաստանը<sup>197</sup>: Անգլիան ձգտում էր տիրանալ արմատտի ու ոսկու հարուստ հանքերին, կառուցել կեդրոտուն-կահիրե հեռագրադիծն ու երկաթուղին<sup>198</sup> մինչև Կալկաթա շարունակելու հեռանկարով,

<sup>195</sup> „Die Grosse Politik...“. Bd XI, № 2577. Մարշալի գեկուցադիրը, 1 փետրվարի 1895.

<sup>196</sup> Տե՛ս „Die Grosse Politik...“ BJ. XV, № 4393.

<sup>197</sup> Տե՛ս „Times“, 23 մայիսի 1890:

<sup>198</sup> Տե՛ս J. A. Wud. Die Rolle der Burenrepubliken in der auswärtigen und kolonialen Politik des Deutschen Reiches in den Jahren 1889—1900. Nürnberg, 1927, էջ 7.

որոնք նրա աչքում ավելի մեծ արժեք ունեին, քան Փոքր Ասիան, Արևմտյան Հայաստանը և Միջագետքը միասին վերցրած<sup>199</sup>։ Ասիայում Անգլիան ձգտում էր ամրանալ Հրնդկաստան տանող ճանապարհներին գտնվող արաբական երկրներում և Պարսից ծոցում։

Անգլո-դերմանական սլայքարը զաղութների բաժանման համար ավարտվեց 1899 թ. նոյեմբերի 14-ի համաձայնագրի ստորագրմամբ, ըստ որի Անգլիան չպետք է դիմադրեր Գերմանիային կառուցելու Բաղդադի երկաթուղին, իսկ Գերմանիան Անգլիային՝ իրադործելու իր ագրեսիվ պլանները Տրանսվալում և Բուրական հանրապետությունում։ Գերմանիան ստացավ Աամոս կղզիների մի մասը, իսկ մյուս մասը արվեց ԱՄՆ-ին։ Դրա դիմաց Անգլիան ստացավ Տոգոն և գերմանական Սուլոմոնյան կղզիներից բաժին, այնուհետև Անգլիան ու Գերմանիան իրար մեջ բաժանեցին Ոսկի ափի և Տոգոյի միջև գտնվող վիճելի տերիտորիաները։ Վերջապես, Անգլիային իրավունք վերապահվեց գերմանական հարավ-արևելյան Աֆրիկայի վրայով կառուցել երկաթուղի և անցկացնել հեռախոսագիծ, որոնք պետք է լինեին ծրագրված միջմայրցամաքային երկաթուղու և հեռախոսագծի մի մասը։

Այսպիսով, իսարդախ Անգլիան, ընտրություն կատարելով «հայասիրական» քաղաքականության և ոսկով ու արմաստով հարուստ Տրանսվալի միջև, ոչ մի պահ չտատանվեց։ Զոն Բուլին շլացրեց արմաստի փայլփլոցը և դյուլթեց դեղին ոսկին։ Նա փարվեց թանկարժեք գանձերին և Արևմտյան Հայաստանը դատապարտեց կործանման, որի հետևանքով ույն դարձավ արյան ու արտասուքի ծով։

Իմպերիալիստական Անգլիան, բարձրացնելով հայկական հարցը, ցանկանում էր Ռուսաստանի ուշադրությունը շեղել

---

<sup>199</sup> Կևպտաուն-Կահիրե մագիստրալ երկաթուղին պետք է ունենար 10 հազ. կմ երկարություն, որից 1500 կմ կառուցվելու էր գերմանական արևելյան Աֆրիկայի տերիտորիայում և անցնելու էր արմաստի հանրերի դիրավոր կենտրոն Կիմբերլեով։ Տրանսվալում ոսկու հանքերը մշակող մոնոպոլիստները 1896 թվին ստացան 1.770 հազ., 1897 թվին՝ 2890 հազ., իսկ 1898 թվին՝ 4270 հազ. ֆ. ստ. դիվիդենտ։ Մոնոպոլիստների շահույթներն աճում էին հերիաթային արագությամբ։

Հեռավոր Արևելքից, դադութների բաժանման ժամանակ ձեռնառու գործարքներ կնքել նաև նրա հետ և, վերջապես, սրել հարաբերությունները Ռուսաստանի և եվրոպական մյուս մեծ տերությունների միջև: Սակայն 1880—1890-ական թվականներին ցարիզմի ուշադրության կենտրոնում էին գտնվում լայնածավալ Մանջուրիան ու Չինաստանը, որոնք, ըստ նրա, ավելի հրապուրիչ էին ու հեշտ յուրացնելի: Դրա համար էլ, եթե մինչև 1880-ական թվականները Ռուսաստանը Թուրքիայի նկատմամբ, Գորչակովի արտահայտությամբ, անցկացնում էր «anatomie ou autonomie» («անդամահատություն կամ ինքնավարություն»), քաղաքականությունը, ապա 30-ական թվականներից փոխում է իր այդ կուրսը: Ցարիզմը, նկատի ունենալով, որ Անգլիան առաջ է քաշում «ինքնավար» Հայաստան ստեղծելու հարցը, որպեսզի այն դարձնի ազգելապատ Ռուսաստանի դեմ, ոչնչացնի ռուսական ազդեցությունը Թուրքիայում, միաժամանակ վախենալով, որ ինքնավար Հայաստանը կդառնա ռուսահպատակ հայերի համար ազգային-ազատագրական շարժումների օջախ, հանդես է գալիս անգլիական պլանի դեմ, դատապարտում հայերի՝ սուլթանիզմի դեմ ուղղված ազատագրական շարժումը և պաշտպանում Թուրքիայի ամբողջականության պոնապանման քաղաքականությունը: Քաղաքական այս կուրսը մեծացնում է Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի վրա: «Մենք ուղղակի շահագրգռված ենք հայկական հարցում»<sup>200</sup>, — գեկուցում էր արտաքին գործերի մինիստր Ն. Ա. Գլուշը նիկոլայ II-ին, իսկ Կ. Պոլսի ռուսական դեսպանին ցույցմունք տալիս. «Զենք ցանկանում սրել հայկական հարցը, որը մեզ համար ունի կարևորություն, նկատի ունենալով մեր սեփական հայերին և նրանց ու արևմտահայերի միջև որոշ ժամանակից սկսած անհանգիստ ազգային ձգտումները»<sup>201</sup>:

Ցարական կառավարությունն արդիվեց արևմտահայությունն օգնելու համար արևելահայերի կազմակերպած կամավորական շարժումը: Հայ ազատագրական շարժումների

<sup>200</sup> АВПР, ф. «Политархив», 1894—1895, д. 3435, л. 163—164. Доклад Гирса, 1 декабря 1894.

<sup>201</sup> Նույն տեղը. Секретная телеграмма Гирса, 21 ноября 1891.

ծավալումը ձևովում չէր ո՛չ սուլթանիզմին և ո՛չ էլ ցարիզմին: Ռուսաստանը հույնական մասը ազգությունների բանտ էր և դաժանորեն ճնշում էր ազատագրական շարժումների ամեն մի առկայծում: Անդրկովկասում ցարիզմի այդ քաղաքականությունը իրագործողը փոխարքա Գուլիցինն էր: «Գուլիցինը,— գրել է Ս. Յու Վիտտեն,— առաջին ցանկացողներից էր Կովկասը ռուսականացնել ոչ թե բարոյական հեղինակությամբ, այլ բռնությունով, սատիկանական մեթոդով»<sup>202</sup>:

Ցարիզմին բնավ չէր հետաքրքրում հայ ժողովրդի փրկության հարցը: Նա միայն ձգտում էր Արևմտյան Հայաստանը «տալ ռուս կառիտալիստներին»<sup>203</sup>, շուայած որ միշտ առերես հանդես էր գալիս հայերին պաշտպանելու դրոշով՝ Արևմտյան Հայաստանին անկախություն, ազատություն տալու պահանջով: 1890 թ. ն. Կ. Գիրսն ասում էր, որ հայերն ապաստում են բարենորոգումների համաձայն Բեռլինի տրակտատի, բայց «Ռուսաստանը դրանցում շահագրգռված չէ և ոչինչ չի անի կյանքում նրանց կենսագործումն արագացնելու համար»<sup>204</sup>: Ցարիզմը «հայասեր» էր դառնում միայն ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, որպեսզի սիրաշահեր հայ ժողովրդին և նրան օգտագործեր սուլթանի վրա ճնշում գործադրելու ու իր ազդեցիկ պլաններն իրագործելու համար: Ցարական կառավարությունը ղեկավարվում էր ռուսական խոշոր բուրժուազիայի ու կալվածատերերի նեղ շահերով և ոչ թե հայ ժողովրդին փրկելու հումանիտական սկզբունքներով: Նա, ելնելով այդ շահերից, գտնում էր, որ հայկական հարցում նախաձեռնությունը քաղաքական մեծ օգուտ կտա Ռուսաստանին և կնպաստի Սև ծովում, Բոսֆորին մտտիկ մի տեղ, ստեղծել ուղղամտության նախատորմիդի համար բազա, որպեսզի «հնարավոր լիներ ամեն անգամ օգտվել նրանից, նրբ անգլիական միջերկրածովյան էսկադրան խարխախ կզցեր Գարդանելի հարևան ջրերում»<sup>205</sup>: Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով ցարիզմը հետապնդում էր հենց

<sup>202</sup> С. Ю. Витте. Воспоминания, М., 1960, т. 1, стр. 42.

<sup>203</sup> Վ. Ի. Անիև, *Նվժ*, հատ. 31, էջ 458:

<sup>204</sup> Ф. А. Ротштейн. Международные отношения в конце XIX века. М.-Л., 1960, стр. 272.

<sup>205</sup> АВПР, ф. «Политархив», д. 3439, л. 49.

այդ և ոչ թե հայ ժողովրդին սուլթանիզմի արմենոցիզի քաղաքականությունից փրկելու նպատակը:

Ռուսական կառավարության հակահայկական քաղաքականության համար Աբդուլ-Համիդ II-ը իր երախտադրությունն էր հայտնում ցարին: «Հայաստանը,— գրել է Ֆ. էնգելսը,— զժբախտություն ունեւր գտնվելու թուրքական Սցիլլայի և ռուսական բռնապետության Խարիրդայի միջև...»<sup>206</sup>: Ցարիզմը գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որպես թուրքական տերիտորիա, ավելի հեշտ կլինի, քան սրպես ինքնավար երկիր: Ինքնավար Հայաստանը կարող էր խոչընդոտ հանդիսանալ Բաղդադի ու Թեհրանի ճանապարհին այնպես, ինչպես անկախ Բուլղարիան՝ Կ. Պոլսի ճանապարհին:

Հայոց դատի «պաշտպան» Անգլիան, երբ սրվեցին անդլո-գերմանական հակասությունները, Ռուսաստանին առաջարկեց դաշինք կնքել Գերմանիայի դեմ և 1898 թ. հունվարի 25-ին Պետերբուրգի անգլիական դեսպան Օ'Կոնորին հրահանգավորեց Ռուսաստանի հետ համաձայնության դալ Թուրքիան ու Չինաստանն ազդեցության ոլորտների բաժանելու վերաբերյալ: Նա դեսպանին խորհուրդ էր տալիս բանակցությունների ժամանակ նկատի ունենալ, որ ինչպես Թուրքիայում, այնպես էլ Չինաստանում կան որոշակի շրջաններ, որոնք Ռուսաստանին հետաքրքրում են ավելի շատ, քան Անգլիային, և ընդհակառակը: Սուլթանին նկատի ունեւր Թուրքիայի սեծովափնյա շրջանները, Արևմտյան Հայաստանը, Եփրատի հովիտը մինչև Բաղդադ Ռուսաստանի, իսկ Թուրքիայի աֆրիկական ու արաբական նահանգները, ինչպես և Նիքոստի հովիտը, ներառյալ նաև Բաղդադը՝ Անգլիայի համար: Այնուհետև Սոսլբերին Չինաստանում ռուսական հետաքրքրության շրջան էր համարում Խուանիսի գետի, իսկ անգլիական հետաքրքրության շրջան՝ Յանցզի գետի հովիտները<sup>207</sup>: Ըստ Օ'Կոնորի հաղորդման, Ռուսաստանի ֆինանսների մինիստր Ս. Վյատեն Չինաստանի ազդեցության ոլորտ-

<sup>206</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 39, стр. 271.

<sup>207</sup> Տե՛ս «British Documents on the Origins of the War, 1898—1914». London, 1927, vol. I, № 9.



մերի բաժանման անգլիական պլանը դիտում է բարյացակամորեն և համաձայնում է Անգլիայի հետ Չինաստանում «Գերմանիային պահել շախի տակ»<sup>208</sup>;

Անգլիական կառավարության փորձը՝ Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին հանձնելու օգնությամբ սիրաշահել ցարական կառավարությանը ու նրա հետ կնքել դաշինք Գերմանիայի դեմ և համաձայնության գալ Մերձավոր Արևելքի երկրները իրար մեջ բաժանելու վերաբերյալ, ճախողվեց: Ցարական կառավարությունը մերժեց անգլիական առաջարկը, որովհետև Օսմանյան կայսրության մասնատման անգլիական պլանը հակասում էր ռուսական առևտրաարդյունաբերական բուրժուազիայի շահերին, քանի որ Անգլիան կամրանար Եգիպտոսում և ցանկացած ժամանակ կարող էր փակել Սուեզի ջրանցքը ռուսական նավատորմի դի առաջ: Այդ դեպքում սևծովյան նեղուցները կկորցնեին իրենց նշանակությունը Ռուսաստանի համար: Նկատի ունենալով այդ, ռուսական կառավարությունը չհամաձայնվեց, որ Բոսֆորի, Գարգանելի, Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի դիմաց Անգլիան գրավեր Եգիպտոսը: Արևմտյան Հայաստանը և նեղուցները ձեռք բերել Եգիպտոսի ու Սուեզի ջրանցքի գնով, գրել է սովետական ականավոր գիտնական Վ. Մ. Խոյստովը, անհետարբբիր էր, այդ նշանակում էր Եգիպտոսը Սուեզի ջրանցքի հետ վաճառել կես գնով<sup>209</sup>: Միանգամայն ճիշտ է սովետական պատմաբանը: Իրոք, 90-ական թվականներին Եգիպտոսն ու Սուեզի ջրանցքը Անգլիայի համար ունեին ավելի մեծ նշանակություն, քան Արևմտյան Հայաստանն ու սևծովյան նեղուցները միասին վերցրած: Այդ չէին թաքցնում անգամ անգլիական թերթերը: Անգլիացիները, գրել է «Times»-ը, ավելի բարձր են գնահատում իրենց զիրքերը Եգիպտոսում, քան իրենց ազդեցությունը Բոսֆորում<sup>210</sup>:

Այսպիսով, 1890-ական թվականներին անգլիական կառավարության փորձը՝ Արևմտյան Հայաստանը, սևծովյան

<sup>208</sup> „British Documents on the Origins of the War, 1898–1914“, London, 1927, vol. 1, № 9 Օ'Կոնոր-Սայրերիին, 23 հունվարի 1898, հ. 1, № 8:

<sup>209</sup> Տե՛ս «Историк-марксист», 1929, № 13, էջ 37.

<sup>210</sup> Տե՛ս, «Times», 4 ապրիլի 1895:

նեղուցները և Կ. Պոլիսը Ռուսաստանին տալու ճանապարհով համաձայնության գալ ցարական կառավարության հետ, կնքել անգլո-ռուսական դաշինք Գերմանիայի դեմ և բաժանել Մերձավոր Արևելքի երկրներն ու Եգիպտոսն իրար միջև, հանդիպեց Ռուսաստանի ուժեղ դիմադրությանը: Գիշառիչ իմպերիալիստական պետությունները համաձայնության չեկան ներքին սուր հակասությունների պատճառով:

Իմպերիալիստական Անգլիան հայկական հարցը բարձրացրեց նաև Ֆրանսիայի առաջ, հետապնդելով մի շարք նպատակներ: Նա ցանկանում էր ֆրանսիական կառավարության ուշագրությունը շեղել Եգիպտոսից դեպի Փոքր Ասիա և հարկադրել նրան հաշտվել Եգիպտոսի անգլիական նվաճման հետ: Բացի այդ, Թուրքիայի մասնատման հողի վրա Անգլիան նպատակ ուներ Ֆրանսիային լծղհարել Եռյակ միության հետ, քայքայել ռուս-ֆրանսիական դաշինքը և ճանապարհ հարթել Աֆրիկայի մայրցամաքում գրավելու նորանոց երկրներ և նրանցից ստեղծելու բրիտանական դադութային կայսրություն:

Ֆրանսիան, որպես «ֆինանսական միապետություն»<sup>211</sup>, ելինելով թուրքական կառավարությանը վարկավորած խոշոր բանկերի ու մոնոպոլիստական միությունների շահերից<sup>212</sup>, մերժեց Թուրքիան մասնատելու անգլիական պլանը: Նա վարում էր Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման քաղաքականություն և թշնամական դիրք էր բռնել հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, «բունդի որ թուրքական արժեթղթեր ունեցողների համար «*status quo*»-ի պահպանումը նշանակում էր իրենց գումարները կուպոններով ևս ստանալու երաշխիք»<sup>213</sup>: Դրա համար էլ նա իր դաշնակից Ռուսաստանից պահանջում էր հրաժարվել Օս-

<sup>211</sup> Վ. Ի. Անին, Ե՛՛՛՛, հատ. 32, էջ 106:

<sup>212</sup> Ֆրանսիային էր պատկանում օսոմանյան պետական բանկի պարտքերի 60,3 %-ը (2,5 մլրդ ֆրանկ), 4500 կմ երկաթուղի և «Թեփե» ընկերության ղեկավարությունը, որի ձեռքին էր թուրքական ծխախոտի գնման ու վաճառման մենաշնորհը: Տե՛ս Раздел Азиатской Турции по секретным документам б. министерства иностранных дел, под ред. Е. А. Адамова. М., 1924, стр. 33.

<sup>213</sup> Людовик де Коитансои. Реформы в Азиатской Турции. Армянский вопрос. Пер. с франц., М., 1914, стр. 3—4.

մանյան կարսրության մասնատման անգլիական պլանից, քանի որ այն խիստ շոշափում էր Ֆրանսիայի շահերը, վատնելի առկ դնում ֆրանսիական կապիտալները Թուրքիայում և սպառնում նրան՝ վերջնականապես կորցնել Եգիպտոսն ու Սուեզի ջրանցքը: Եթե հայկական հարցը, ըստ էության, արևմտահայաստանյան ֆիզիկական գոյության պահպանման հարցն էր, ապա այն ֆրանսիական կառավարության ձեռքին միջոց էր Մերձավոր Արևելքում ամրապնդելու մասնապոլիսապական կապիտալի դիրքերը՝ հաշվի չառնելով հայ ժողովրդի ո՛չ տնտեսական, ո՛չ էլ քաղաքական շահերը: Գրանուվ է բացատրվում այն, որ դեռևս Բեռլինի կոնգրեսում Ֆրանսիայի ներկայացուցիչը դեմ արտահայտվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածին, իսկ 90-ական թվականներին դատապարտում էր հայ ազգային-ազատագրական շարժումները, դեմ էր Սասունի կոտորածների հետաքննումանը, անգամ 1895 թ. մայիսյան ռեֆորմների իրագործմանը, չնայած որ Ֆրանսիայի ներկայացուցիչը մասնակցեց Սասունի կոտորածների հետաքննության հանձնաժողովի աշխատանքներին, հայկական ռեֆորմների նախագծի մշակմանը և ստորագրեց սրվթանական կառավարութայանն ուղղված կուլիտիվ նոտաները: Ֆրանսիական կառավարության վերջին քաջերը նպատակ ունեին խոչընդոտել Թուրքիայի ներքին դործերին անգլիական կառավարութայան միակողմանի միջամբատութայանը, որպեսզի վերջինս ի վնաս Ֆրանսիայի շամրապնդեր իր դիրքերը Թուրքիայում հայկական հարցի օգնութայամբ, ավելի շարեր արեւելյան հարցը ու այդ հողի վրա շկատարվեր Օսմանյան կայսրութայան մասնատումը, լրիվ չկորցնել Եգիպտոսը և չքայքայվեր ռուս-ֆրանսիական դաշինքը, որը Ֆրանսիայի համար գերմանական միլիտարիզմից պաշտպանվելու լավագույն երաշխիքն էր: Այդ իսկ պատճառով ֆրանսիական կառավարութայունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներն առաջադեմ հասարակութայանը ներկայացնում էր իբրև անկարգութայուններ, իսկ սուլթանիզմի կողմից կազմակերպված գանդվածային հայկական կոտորածները, որպես տեղական բնույթի աննշան միջադեպեր, կենտրոնական իշխանութայան ժամանակավոր թուլութայան հետևանք և ոչ թե սուլթանիզմի կողմից անցկաց-

վող գենոցիդի քաղաքականության արդյունք, և կամ օտար-  
երկրյա պետությունների կողմից հրահրված հայկական ան-  
կարգություններին վերջ դնելու և հասարակական կարգը  
երկրում վերականգնելու նպատակով կառավարության կող-  
մից ձևակերպված արդարացի միջոցառումներ<sup>214</sup>;

1890-ական թվականներին Ֆրանսիայի ու Ռուսաստանի  
շահերը ժամանակավորապես համընկնում էին արևելյան  
հարցում Անգլիայի շահերի դեմ: Այդ իր արտահայտությունը  
գտավ 1891 թ. Փարիզում Ռուսաստանի արտաքին գործերի  
մինիստր Գիրսի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր  
Ռիբոյի համատեղ մշակած քաղաքական կուրսում, որից հե-  
տո Գիրսը Կ. Պոլսի ուսական դեսպան Նելիգովին հրահան-  
գավորեց՝ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի հետ անցկացնել  
Քուրբիայի status quo-ն պահպանելու գիծ և ղիմադրել  
անգլիական քաղաքականությանը<sup>215</sup>, Հարանման կարգադր-  
ություն Նելիգովը ստացել էր նաև Ալեքսանդր III-ից<sup>216</sup>:  
Սակայն չի կարելի ասել, որ ուս-ֆրանսիական շահերը լրիվ  
համընկնում էին Քուրբիայում: Ընդհակառակը, նրանց մեջ  
նույնպես կային սուր հակասություններ, սրոնց կարգավոր-  
ման նպատակով 1896 թ. նոյեմբերին «Նիկոլայ Արյունար-  
բուն»<sup>217</sup> մեկնեց Փարիզ: Ցարի բանակցությունները նպաս-  
տեցին անգլիական ու գերմանական աճող սպառնալիքի առ-  
կայության պայմաններում ուս-ֆրանսիական հակասու-  
թյունների ժամանակավորապես մեղմացմանն ու կարգավոր-  
մանը: Ռուսական ու ֆրանսիական կառավարությունները  
գտնում էին, որ գերմանական միլիտարիզմի սպառնալիքի  
դեմ միակ երաշխիքը ուս-ֆրանսիական զաշխիքի ամրա-  
պնդումն է, արևելյան հարցում երկու երկրների Կ. Պոլսի  
դեսպանների համերաշխ գործունեությունը և Քուրբիայի ֆի-  
նանսական գործերում իրենց ակտիվության ուժեղացումը:

Ֆրանսիան հակադրվում էր Անգլիայի արևելյան քաղա-  
քականությանը: Նա չէր ցանկանում, որ Անգլիան բարձրաց-

<sup>214</sup> Տե՛ս А. В. Амфитеатров. նշված աշխատ., էջ 15:

<sup>215</sup> Տե՛ս „Documents diplomatiques français“, 1-ere série, vol  
IX, № 91, էջ 139, 258—262.

<sup>216</sup> Տե՛ս նույն տեղը, № 189, էջ 281:

<sup>217</sup> Վ. Բ. Լենին, ԵԺ, հատ. 27, էջ 299:

նի հայկական հարցը, նրա մեջ տեսնելով այն գործիքը, որի րգնությամբ Անգլիան ճնշում էր գործադրում սուլթանի վրա և ձգտում ամրանալ Եգիպտոսում: Ֆրանսիան ինքն աչք ուներ փարավոնների երկրի վրա, շնայած որ 1882 թ. Անգլիան օկուպացրել էր Նեղոսի հովիտը: Եթե Անգլիան, բարձրացնելով հայկական հարցը, ձգտում էր Թուրքիային հարկադրել հրաժարվել Եգիպտոսից, ապա Ֆրանսիան էլ թուրքական կառավարության միջոցով բարձրացնելով եգիպտական հարցը, փորձում էր Անգլիայի հետ բաժննել փարավոնների աշխարհը: Զբաղաբարվելով եգիպտական հարցի բարձրացմամբ, 1896 թ. Ֆրանսիան Մարշանի գլխավորությամբ Էրսպեդիցիոն գործառնեք ուղարկեց Ֆաշոպա: Միևչդեռ անգլիական կառավարությունը ձգտում էր ամրանալ ոչ միայն Եգիպտոսում, այլ նաև Նեղոսի վերին հոսանքում, դրանում տեսնելով փարավոնների երկրում և Սուեզի ջրանցքում ընդմիջում ամրանալու լավագույն երաշխիքը: Այդ ազրեսիվ պլանի իրագործմամբ Անգլիան իր ձեռքում կպահեր Հնդկաստանի, Արևելյան Աֆրիկայի, Ավստրալիայի և Հեռավոր Արևելքի ճանապարհների բանային և երազում էր ապահովել նաև Հարավային ու Հյուսիսային Աֆրիկայի միջև տերիտորիայի կապը: «Սուեզը,— գրել է Վ. Մ. Խվոստովը,— կարծես թե դարձել էր ողջ բրիտանական դադութային սխառնի առանցքը»<sup>218</sup>,

Եգիպտական հարցում Ֆրանսիային Անգլիայի դեմ պաշտպանում էր Ռուսաստանը<sup>219</sup>: Ուստի Ֆրանսիան հույս ուներ ճնշում գործադրելով Անգլիայի վրա, հարկադրել նրան իր գորքերը հանել փարավոնների երկրից և Սուեզի ջրանցքն ու Եգիպտոսը հռչակել չեզոք: Սակայն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասսեն ոչ մի պահ չէր մոռանում, որ չի կարելի ռազմական կոնֆլիկտի մեջ մտնել Անգլիայի հետ, թիկունքում ունենալով պոտենցիալ թշնամի՝ միլիտարիստական Գերմանիային: Դրա համար էլ նրա վարած բանակցությունների տոնը Անգլիայի հետ չափավոր

<sup>218</sup> М. Хвостов. История дипломатии. М., 1963, т. II, стр. 424.

<sup>219</sup> *«Documents diplomatiques français...»*, vol. XIV, №743, էջ 542.

էր: Անգլիական կառավարութիւնն այդ լալ էր հասկանում, և նա նվաճողի իրաւունքով նեղոսի վերին հոտանքը հաշտարարեց անգլիական ազդեցութեան ոլորտ ու հրաժարուեց Ֆաշտոզայի հարցում փոխդիւման գնալ<sup>220</sup>: 1898 թ. նոյեմբերի 20-ին Անգլիայի ֆինանսների մինիստր Հիքս-Քիչը հրատարակայնորեն հաշտարարեց, որ անգլիական կառավարութիւնը որոշել է ֆրանսիական կառավարութեանը զիջում՝ չկատարել, տիրալի կլինի, եթե երկու մեծ տերութիւնների միջև Ֆաշտոզայի առիթով սկսվի պատերազմ, «բայց լինում է պատերազմից էլ վատթարագույն շարիք: Մենք մեր պարտքը կկատարենք»<sup>221</sup>, վ. Ի. Լենինը, նկատի ունենալով Ֆաշտոզայի պատճառով անգլո-ֆրանսիական հարաբերութիւնների ծայրաստիճանի սրվելը, գրել է. «Մազ է մնացել, որ Անգլիան պատերազմ սկսի Ֆրանսիայի դեմ (Ֆաշտոզա)»<sup>222</sup>:

Ֆաշտոզայի առիթով, երբ խիստ սրվել էին անգլո-ֆրանսիական հարաբերութիւնները, անգլիական կառավարութիւնը բանակցութիւններ սկսեց գերմանական կառավարութեան հետ անգլո-գերմանական դաշինք կնքելու վերաբերյալ: Անգլիան նպատակ ուներ դրանով մի կողմից՝ ճնշում գործադրել Ֆրանսիայի վրա, որպեսզի նա Աֆրիկայում զիջումներ կատարեր Անգլիային, իսկ մյուս կողմից՝ սրել առաջնական հարաբերութիւնները: Գերմանական կառավարութիւնը կռահեց անգլիական յռաջարկի հետին մտքերը: Այդ պարզ ցույց է առաջին վիլհելմ II-ի մակագրութիւնը Հասցֆելդի Հոհենլոֆերն ուղարկած գեկուցագրի վրա: Կայսրը նշում է, որ անգլո-գերմանական դաշինքը խիստ կարի ոտու-բորուտական հարաբերութիւնները, և Գերմանիան նարկազրված կլինի Արևելյան Պրուսիայի ռուսական սահմանագլխում պահել բանակային մեկ կորպուս՝ ռուսական երեք բանակի և ինը հեծելազորային զիվիզիայի դեմ, որոնցից Գերմանիային չի բաժանում չինական ոչ մի պարիսպ և ոչ էլ Գերմանիային կարող է պաշտպանել անգլիական որևէ

<sup>220</sup> Տե՛ս „British Documents...“, vol. I, № 191, էջ 165—166.

<sup>221</sup> „Documents diplomatiques français...“, vol. XIV, № 443.

Մանթագրութիւն 3.

<sup>222</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 844.

գրահանամ<sup>223</sup>: Չնայած դրան, գերմանական կառավարու-  
թյունը շարունակում էր բանակցությունները մուսաստանի  
նկատմամբ թշնամու, Անգլիայի նկատմամբ բարեկամի դի-  
մակով, որպեսզի գաղութների բաժանման գործարքների յու-  
մանակ յուզոտ կտոր ստանա:

Անգլո-գերմանական բանակցությունները անկեղծ չէին:  
Անգլիան ցանկանում էր հրահրել ուս-գերմանական  
կոնֆլիկտ՝ Գերմանիային հրապուրելով Շանդունի նահանգ  
գերմանական կապիտալի ներթափանցմանը շղիմագրելու,  
Տոգոյի շեղոր դատու և Գեկագաոյի հարցերը կարգավորելու  
խոստումներով: Բյուլովն ամբողջական առաջարկը դիտում էր  
որպես մուսաստանի դեմ պատերազմ վարելու փոխհատու-  
ցում և այն գնահատում «էժան»<sup>224</sup> գործարք: Իր հերթին  
Գերմանիան էլ ձգտում էր հայկական հարցի շարաշահմամբ  
հրահրել անգլո-ուսական կոնֆլիկտ: Գերմանիան անգլիա-  
կան դիվանագիտության ձեռքին կույր գործիք շղարձավ,  
ունենալով իր սեփական քաղաքական կուրսը: Բյուլովը գրա-  
նում էր, որ որքան ուս-գերմանական հարաբերությունները  
լավ լինեն, այնքան Անգլիան Գերմանիային շատ է սիրա-  
շահելու և լրացուցիչ խոստումներ տալու<sup>225</sup>: Անգլո-գերմա-  
նական բանակցություններն ավարտվեցին անհաջող: Գիշա-  
տիչ իմպերիալիստական պետությունները «Համաձայնու-  
թյան չեկան!»<sup>226</sup>:

Ֆրանսիան չկարողացավ եզրափակել հարցը հակադրե-  
լով հայկականին հասնել իր նպատակին, ոչ էլ ապահովեց  
իր թիկունքը գերմանական վտանգից, ուստի նա, գերադասե-  
լով էլլզան ու Լոթարինգիան Նեղոսի հովտից, 1899 թ. մար-  
տի 21-ին Անգլիայի հետ կնքեց համաձայնություն, որով ա-  
վարտվեց Կենտրոնական Աֆրիկայի մասնատումը: Այդ առ-

<sup>223</sup> Տե՛ս «Die Grosse Politik...» Bd. XIV, № 3789. Հատցֆելդը-Հո-  
հենլոհեին, 7 ապրիլի 1898.

<sup>224</sup> «Die Grosse Politik...», Bd XIV № 3793 Բյուլովի նշումը Հատց-  
ֆելդի Հոհենլոհեին ուղարկած 1898 թվի ապրիլի 26-ի գեկուցադրի վրա:

<sup>225</sup> Տե՛ս «Die Grosse Politik...», Bd XIV № 3790. Բյուլովի նշումը  
Վիլհելմ II-ի — արտաքին գործերի վարչությանն ուղղած 1898 թվի ապրիլի  
10-ի ցուցմունքի վրա:

<sup>226</sup> Վ. Ի. ԱՆԻՆ, Երկեր, հատ. 39, էջ 630:

Թիվ Վ. Ի. Լենինը գրել է. «Կոդուպաում (օբաժանում են) Ա. Ֆրիկան»<sup>227</sup> :

Այսպիսով, արևմտաճայության «պաշտպան» անգլիական և Եգիպտոսի «անկախության» դորաՎու ֆրանսիական իմպերիալիստների միջև կնքվեց գործարք և Ա. Ֆրիկան բաժանվեց ադրեցության սյորտների: Անգլիան հասավ իր նպատակին՝ ամրացավ ողջ Նեղոսի հովտում: Նրա և Ֆրանսիայի գաղութային սահմանները հիմնականում դարձան Չադ լճի և Կոնգո գետի ջրբաժանը, իսկ մյուս կողմից՝ Նեղոս գետի ջրավազանը: Անգլիայի աղմուկը՝ «հօգուտ» Արևմտյան Հայաստանի ինքնավարության, Ֆրանսիայինը՝ Եգիպտոսի «անկախության», լոկ ֆարս էր, իսկ նորանոր երկրների դավթումն ու գաղութացումը՝ փաստ: Անգլիան գաղութներ նվաճող, խարդախ ու վիրտուոզ գործարքներ կնքող պետություն էր, իսկ անգլիական հսկա բանկային խմբերը՝ գաղութային միլիոնավոր ժողովուրդներին սարկացնող; նրանց երկրների կենսական հյութը քամող մակարույժ՝ հիմնարկներ: «Առանց սրևէ շափազանցության, — գրել է Վ. Ի. Լենինը, — կարելի է ասել՝ ամբողջ երկրադնդի վրա չկա հողի մի կտոր, որի վրա իր ծանր թաթր դրած շիինի այդ կապիտալը... որը կապկըպված շիինի անգլիական կապիտալի հազարավոր թեկերով»<sup>228</sup> :

Անգլիական կառավարության քաղաքականության ուսումնասիրությունը համոզեցուցիչ ցույց է տալիս, որ նա, պայքարելով Թուրքիայում իր ադրեցությունը վերահամոզելու կամ մյուս մեծ տերությունների հետ գաղութները բաժանելու ժամանակ ձեռնտու գործարքներ կնքելու համար, շարունակ է հայկական հարցը, Արևմտյան Հայաստանը դիտել որպես փոխանակության մանրագրամ և գոհաբերել արևմրտաճայ ժողովրդին հանուն Անգլիայի մոնոպոլիստական կապիտալի շահերի: Անգլիայի քաղաքականությունը ոչ միայն ամրապնդել է Թուրքիան լուծն արևմտաճայության նկատմամբ, այլ նաև նպաստել է սուլթանիզմի կողմից անցկացվող արմենոցիդի քաղաքականության ուժեղացմանը: Անգլիական կառավարության պատասխանատվությունը արևմտաճայու-

227 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 844:

228 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հատ. 32, էջ 105—106:



Քյան մասսայական կոտորածների, բռնի ասիմիլյացիայի, հայկական գյուղերի ու քաղաքների ավերման, հայրենիքից հարկադրական գաղթի մեջ՝ քիչ չէ։ Անգլիական իմպերիալիզմը հայ ժողովրդի բնաջնջման ու նրան իր հայրենիքից արմատախիլ անելու սուլթանիզմի հանցագործ քաղաքականության ակտիվ մասնակիցն է։ Անգլիայի թշնամական քաղաքականությունն այնքան ակնհայտ էր, որ այն խոստովանել է անգամ անգլիական ականավոր պետական գործիչ Էյսզը Զորջը։ Նա իր մեմուարներում գրել է, «Բրիտանական կառավարության քաղաքականությունը հակատագրական անխուսափելիությունը հանդեպից 1895—1897 թթ. և 1909 թ. սարսափելի սպանդներին և 1915 թվականի ամենասոսկայի կոտորածներին»<sup>229</sup>։ Հետևաբար միանգամայն ճիշտ էր «Մշակը», երբ գրում էր. «Դիվանագիտությունը խիղճ չունի»<sup>230</sup> և բազմիցս արդարացի «Բանվորի խոսք» բոլշևիկյան լրագիրը, որը մերկացնելով իմպերիալիստական պետությունների շահամուլ քաղաքականությունը, նշել է, որ նրանցից և ոչ մեկը հաշվի չէր առնում փոքր ազգերի կենսական շահերը և դատապարտելով հայոց դատի «մեծ պաշտպան» Անգլիային, գրում էր. «Անգլիական իմպերիալիզմն իր ուրույն գործելակերպով հանդիսանում է հայ ժողովրդի ամենամեծ թշնամին»<sup>231</sup>։

Անգլիական իմպերիալիզմի հակահայկական, թշնամական քաղաքականությունը 1890-ական թվականներին ավելի ուժեղ էր և ձևով ավելի նուրբ, քան 1870-ական թվականներին։ Կառավարության այդ նենգ քաղաքականությունն իր արտահայտությունն է գտել անգլիական թերթերում։ «Westminster gazette» լրագիրը գրում էր, որ լորդ Շերբուռկը, երբ 1878 թ. ասաց, թե հայերի համար «Անգլիան փակեց դռները դուրս գալու ելքը», շատերը չէին հավատում, իսկ այժմյան իրադարձությունները ցույց են տալիս, որ Շերբուռկը ճիշտ էր, քանի որ «Հայաստանի մէջ գաւառներ կան, որ քրիստոնէից համար բոլորովին դժոխք են տիկերբի վրա և

<sup>229</sup> Д. Ллойд Джордж, *նշված աշխատ.*, Կ. 2, էջ 390։

<sup>230</sup> «Մշակ», 24 սեպտեմբերի 1916, № 212։

<sup>231</sup> «Բանվորի խոսք», 24 փետրվարի 1918, № 3։

դժբախտաբար Վենք ենք այդ դժոխքի դռնապահն»<sup>232</sup>։ Արդարացի է նաև «Daily Telegraph»-ի խմբագրությունը, որը համամիտ լինելով իր թղթակից, արևելագետ է. Դիլոնի հետ, տպագրել է նրա «Հայաստանի վերջը» հոդվածը։ Է. Դիլոնը գրել է, որ Օսմանյան կայսրությունում ապրող ազգերի մեջ հայերը նույնքան կարող են հուսալ Եվրոպայի օգնության վրա, որքան խեղդվող մարդը «կարող է յույս դնել ծովը չք մտած նախ վրա, երբ արդեն ալիքները սպառնում են նրան կլանել»։ Իհարկե, «մխիթարական է իմանալ, որ շուտ թե ուշ օգնություն կը գայ, բայց ցուալի է, որ նա կարող է գալ միայն աշնան տաք քամու նման՝ շորացած և անհիսթ տերևների համար։ Եւ այդ է այժմ հայերի սպասածը»։ Այնուհետև արդարացիաբար ու պատկերավոր ձևով Դիլոնն ասում է, որ այն պնդումը, թե հայկական հարցում մեծ տերությունները կմիջամտեն, հնարավոր է, բայց այն «կը լինի նոյնպէս անօգուտ, որպէս ուշացած լուսնի լոյսը»։ Սասունի կոտորածները, շարունակում է հեղինակը, միայն մի կաթիլ են հայկական արյան օվկիանոսում, որը թափվել է աստիճանաբար ու լուռ՝ վեոջին ուս-թուրքական պատերազմից հետո։ «Թիւրքաց Հայաստանը դարձել է իսկական դժոխք... որտեղից Դանաւն իր «Inferno»-ն («Դժոխքը») շարադրելու ժամանակ կարող էր ընդօրինակել, փոխանակ ստեղծելու»։ Դիլոնը իրավացիորեն գտնում էր, որ Անգլիայում տեղի ունեցող պայքույթի միտինգները, կամ համակրության ու քրիստոնեական սիրո գեղեցիկ ճամարտակությունները չեն կարող հայերին տանջող վերքերին «սպեղանի դնել»<sup>233</sup>։ Մենք համամիտ ենք Դիլոնի հետ, քանի որ ամպագորգոռ ճառեր արտասանող, հայ ժողովրդին ոսկե սարեր խոստացող անգլիական իմպերիալիստական վառավարությունը արեւմտահայերի դանդաժային ջարդերի ժամանակ ոչ մի անգամ օգնության չհասավ։

Այն փաստը, որ Արևմտյան Հայաստանն անգլիական քաղաքականության հետևանքով դարձավ արյան ծով, որբերի ու ողբի երկիր, անուղղակի ձևով խոստովանել է նաև Սուլթե-

<sup>232</sup> «Մշակ», 1895, № 55.

<sup>233</sup> «Մշակ», 1895, № 101.

րին, կրթ 1896 թ. փորձեց արդարացնել պահպանողականներին կառավարութեան քաղաքականութիւնը և Հայաստանում կատարված համատարած ավերածութիւնների ու մասսայական կոտորածների մեղքը բարդել միայն Ռոզբերիի լիբերալ կառավարութեան վրա: Սուբերին ասում էր, որ Հայաստանում կատարված կոտորածների պատասխանատուութիւնը շպետք է գցել անձամբ սուլթանի վրա: Կոտորածները հետեանք են ցեղերի ու դավանանքների մեջ եղած մրցակցութեան, որը սովորաբար տեղի է ունենում թույլ կառավարութիւնների օրոք, իսկ թուրքական կառավարութիւնը թույլ է: Թույլ կառավարութիւնների վրա ապրում են չորհրդորներով, կամ ճնշմամբ: Ռոզբերիի կառավարութիւնը ցորձեց պլատոնական ձևով՝ հորդորանքի մեթոդով: Հորդորանքների հետեանքը եղավ մահմեդականների վայրենի կորքերի գրգռումը: «Այսպիսով, անգլիական կառավարութիւնը իր վարմունքով ակամայ կերպով առաջ բերեց շատ սարսափելի դեպքեր: Այդպէս է Րոզբերիի կարինէտի ժառանգութիւնը»<sup>234</sup>: Այստեղ ստորամիտ Սուբերին լուծում է:

Կեղծելով իրական փաստերը և մեղանշելով պատմական ճշմարտութեան առջև, Սուբերին նախ՝ արյունարբու սուլթան Զուլուսին հանդես է բերում սուրբ հրեշտակի տեղ, ապա՝ փաստերի ճնշման տակ, հարկադրված ընդունելով անգլիական քաղաքականութեան սարսափելի հետեանքներն արևմտահայութեան համար, դրանք վերադրում է միայն լիբերալների կառավարութեանը և, վերջապես, փորձում է ճանապարհ հարթել արդարացնելու իր՝ պահպանողական կառավարութեան թուրքոփիլ ու հայատյաց քաղաքականութիւնը և նրանից հեռացնել պատասխանատուութիւնը հայկական կոտորածների համար: Սուբերին, լռելով, չէր ցանկանում խոստովանել այն դառն ճշմարտութիւնը, որ 1895 թ. հունիսին նրա գլխավորութեամբ կազմված պահպանողականների կարինետը հայտարարեց, որ շարունակելու է Ռոզբերիի կառավարութեան արևելյան քաղաքականութիւնը և, իրոք, շարունակեց սուլթանին «հորդորելու» և սպառնալու կուրսը, որպէսզի արևմտահայութեանը պաշտպանելու, Արևմտյան Հայաստան-

<sup>234</sup> «Մշակ», 1896, № 40:

նին ինքնավարութիւն տալու պատրվակի տակ ահաբեկեր սուլթանին և իրագործեր անգլիական իմպերիալիզմի ագրեսիվ պլաններն Ասիայում ու Աֆրիկայում, հատկապէս Եգիպտոսում: Գրանով իսկ Սուլթերիի կառավարութիւնը սուլթանիզմին ավելի էր գրգռում հայ ժողովրդի դեմ և նպաստում արմենոցիդի քաղաքականութեան ուժեղացմանը, չձեռնարկելով որևէ ցեղանկրեւ միջոցառում հայերին պաշտպանելու համար: Ահա թէ ինչու Սուլթերիի կարիները ոչ պակաս պատասխանատուութիւն է կրում հայկական կոտորածների հարցում, քան Ռուսերիի կարիները: Այդ իր ժամանակին ընդունել են նաև անգլիական առանձին քաղաքական գործիչներ և գրանում մեղադրել Սուլթերիին:

1896 թ. մայիսի 5-ին լիբերալների ակումբում կուսակցութեան լիդերներից Հարկուրտը, մեղադրելով Սուլթերիին, ասում էր, որ նա մի քանի ամիս առաջ խիստ լեզվով էր խոսում սուլթանի հետ և գտնում էր, որ այն, ինչ թույլ է տալիս սուլթանը Հայաստանում, դեմ է բանականութեանն ու աստվածային օրենքներին, իսկ այժմ ասում է, որ սուլթանը պատասխանատու չէ հայկական կոտորածների համար: Սուլթերիին փորձում է արդարանալ, ասելով, որ ինքը գործել է հորդորների մեթոդով սուլթանի վրա ազդելու համար, թեև շատ լավ գիտեր, որ «ոչ մի յորդոր և խրատ չեն կարող սրել էական նշանակութիւն ունենալ»: Սուլթերիին մեղադրում է Ռուսերիի կարիներին, որն իր համար թողել է «միայն այդ պէնքը, այսինքն յորդորը և խրատը» և որ ինքը չի իմացել, թե մյուս պետութիւնները համաձայն են, թե՞ ոչ Անգլիայի հետ համատեղ գործել թուրքիայի դեմ: Եթե այդ ճշմարտութիւն է, ինչո՞ւ Սուլթերիին «ինքն ամեն անգամ հրապարակով յայտնում էր, որ եւրոպական պետութիւնները համերաշխ և միաձայն են գործում թուրքիայի վերաբերմամբ, որ եւրոպական կօնցէրտը ամուր է և հաստատ»<sup>235</sup>: Մի այլ անգամ Հարկուրտը նշում է, որ Սուլթերիին ինքն է Կիպրոսի դաշնագրի կնքողը: Նա, ստանալով Կիպրոսը, պարտավորվեց թուրքիայի հետ անցկացնել ռեֆորմներ և պաշտպանել հայերին, իսկ այժմ չի ընդունում Անգլիայի պատասխանա-

<sup>235</sup> «Մշակ», 1896, № 53:

տրվութիւնը Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձութիւնների համար: Սուրբերին չի պաշտպանում հայերին և հայտարարում է, որ հայկական հարցում միակողմանի միջամտութիւնը կարող է վերածվել Անգլիայի դեմ համակերպական պատերազմի, բայց նա միակողմանի պատերազմ է վարում Նդիպտոսում, չվախենալով համակերպական պատերազմից Անգլիայի դեմ<sup>236</sup>:

Սուրբերիի կառավարութեանը հակահայկական քաղաքականութեան համար մեղադրում է նաև «Daily News»-ը: Առաջնորդող շողվածում թերթը գրում է, որ Սուրբերին ամբողջ աշխարհի մարդկութեան առաջ հայտարարեց. «Ինքը՝ անգլիական ազգի այժմյան ներկայացուցիչը, ամենևին չէ կարծում, որ Անգլիան պարտուտը է պաշտպանել հայերին... Լորդ Սուրբերին գլուկի յանդգնութեամբ սուտ է խօսում: Անգլիան պատասխանատու է Փոքր Ասիայում կատարված գործերի (չարդերի—Լ. Բ.) համար, նախ՝ իբրև մէկը այն պատութիւններից, որ ստորագրել է Բեռլինի դաշնագիրը, և երկրորդ՝ իբրև Կիպրոսի դաշնագրութեան հեղինակ, որով նա ինքը պարտաւորվել է ապահովել քրիստոնեաների կեանքը և պաշտպանել նրանց աւազակների և բիրդերի յարձակումներից»: Լորդ Սուրբերին իր հայտարարութեամբ «Թիրքիային վստահութեան քուէ տվեց»<sup>237</sup>: Անգլիական կառավարութեան հակահայկական քաղաքականութիւնը դատապարտել է նաև Օ. Նովիկովան: Նա ծաղրանքով գրել է, որ կար ժամանակ, երբ Անգլիան այնքան էր ուժեղ, որ խոչընդոտեց քրիստոնեյաների ազատագրութեանը թուրքական լծից, իսկ այժմ «անպայման անդոր է հովանաւորութիւն և պաշտպանութիւն ցույց տալու համար նրանց»<sup>238</sup>: 1878 թ. Բիքոնսֆիլդը Մակեդոնիան վերադարձրեց Թուրքիային ու Հայաստանում ռեֆորմների իրագործման պարտավորութիւնն էլ վերցրեց իր վրա և իբրև քրիստոնեյաների դատի պաշտպանութեան վարձ, ստացաւ Կիպրոսը, որպէս «դին արէան, որ այժմ առատորէն թափվում է Հայաստանում»: Եթէ որեւէ մե-

<sup>236</sup> Տե՛ս «Ոչակ», 1896, № 56:

<sup>237</sup> Նույն տեղը, № 14:

<sup>238</sup> Նույն տեղը, № 128:

կո, շարունակում է նույնիպիսի, խաբեքայութեամբ կորզում է 6 փենս, ուղղակի բանտ կուղարկեն, «բայց ի՞նչ ընելու է կրք մէկը, ճիշտ նոյնչափ խաբէքայութեամբ ամբողջ կղզի մը կորզած է»<sup>239</sup>: Մի այլ անգամ «Մշակը» դատապարտելով անգլիական գաղութարարների քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ, գրել է. «Նրանց հոգը չէ քրիստոնյաների ջարդիւելը և մինչև անգամ մի ազգի անհետանալը»: Անգլիան «հեռու է մարդասիրական նպատակներից, վնասում է Ռուսաստանին և կորստի է մատնում հայերին»<sup>240</sup>:

Արդարացի էր «Մշակը», հայերը մատնվում էին կորստի, և այդ կորուստը հասավ հարյուր հազարների, իսկ հայոց դատի «պաշտպան» անգլիական կառավարութիւնը բռնել էր սառնարյուն դիտորդի դիրք: Լիբերալների ու պահպանողական կառավարութեան անտարբերութիւնն այնքան վրդովեցուցիչ էր, որ 1895 թ. Բիրմինգհամի միտինգում քահանա Օսլերը, դիմելով կառավարութեանն, ասում էր. «Սպանված մարդկանց արիւնը, անպատուած կանանց պատիւը, խեղդած երեխաների անմեղ մարմինները բարձրաձայն աղաղակում են: Ի՞նչ պետք է պատասխանենք այդ բոլորին»<sup>241</sup>: Երբ հայերը տասնյակ հազարներով դռնվում էին թուրք ջարդարարների ձեռքով, այն ժամանակ Գլադստոնը, Սուբերին, Ռոզբերին և մյուս զործիչները միայն ճառեր էին արտասանում, որ, իբր թե, նրանց համար «պատի և ազգային ինքնասիրութեան խնդիր է հայոց հարցը»<sup>242</sup> և որ չի կարելի հավատալ թուրքական պետութեան ղեկավարներին, որոնք իրենց համար «արհեստ են շինել խաբել, խաբել և խաբել»: Թուրքիայի վրա չի ազդում խոսքը, մնում է դիմել վերջին միջոցին՝ ազդել «ոյժով, զէնքի միջոցով»<sup>243</sup>: Լիբերալ Հարկուրտը, կուրծք ծեծելով, հայտարարում էր, որ Անգլիան հայերին պաշտպանելու համար ունի «հատուկ պարտավորութիւն»<sup>244</sup> և այն կկատարի, իսկ պահպանողա-

<sup>239</sup> «Մշակ», 1895, № 43:

<sup>240</sup> Նույն տեղը, № 19:

<sup>241</sup> Նույն տեղը, № 47:

<sup>242</sup> Նույն տեղը, № 92:

<sup>243</sup> Նույն տեղը, № 88:

<sup>244</sup> Նույն տեղը, № 93:

կանների օրգան «Standard»-ը գրում էր, որ Սուլբերիի հետևողական քաղաքականությունը «օրհասական հետեանքնեղ կսուննայ Թիւրքիայի համար»<sup>245</sup>: Նույն ժամանակ անգլիական գանձարանի առաջին լորդ Բալֆուրը պատշամենտի անդամներին հավաստիացնում էր, որ կառավարությունը «չի քնացնի»<sup>246</sup> հայկական հարցը, կլուծի այն, իսկ «Անգլո-հայկական ասոցիացիայի» անդամ Շվանը շնորհակալություն էր հայտնում Սուլբերիին, որ պրիմիեր-մինիստրն ասել էր, թե հրամարվում է Թուրքիան պաշտպանելու վերջին 18 տարվա քաղաքականությունից, քանի որ այնտեղ իշխում են մարդասպանները, ավազակները, առևանգողները, որոնք գործում են սուլթանական արքունիքի հրամաններով և որ «սուլթանի կառավարութիւնը Հայաստանում պէտք է կամ ուղղել, կամ ոչնչացնել»<sup>247</sup>: Իրոք, Սուլբերին, իշխանության գլուխ անցնելուց հետո, բաղձաթիվ անգամ պաշտոնական կարգով հայտարարել էր, որ վերջ կտա թուրքական գաղտնություններին, կպաշտպանի հայերին, Անգլիան Թուրքիայի դեմ կգործի անդամ մենակ, առանց եվրոպական մեծ պետությունների, և եթե անհրաժեշտ լինի, վերջ կդնի թուրքական պետության գոյությանը: Այս բոլոր խոստումներից հետո լճոսական սլահին, հայ ժողովրդի դանգվածային ջարդերի ժամանակ, ինչպես Ռոզբերիի, այնպես էլ Սուլբերիի կառավարությունները հրաժարվեցին իրենց վրա վերցրած պարտավորությունները կատարելուց, «մոռացան» իրենց ազդու և սուր հայտարարությունները, հայ ժողովրդին թողեցին անպաշտպան, բախտի քմահաճույքին, որի հետևանքների մասին Գեսրդ Բրանդենբը գրել է. «Հայ զոհերի արիւնք ջրի պէս կը վազէր» և «Հարիւր հազարաւոր զոհերու արիւնն է, որ օգնութիւն կ'աղաղակէ»<sup>248</sup>:

Այս բոլորը անհերքելի իրական փաստեր են, իսկ բուրժուական Անգլիայի օգնության հավաստիացումները՝ ունայնախոսություն: Իմպերիալիստական Անգլիան ոչ թե օգնեց հայ ժողովրդին, այլ նրան դարձրեց քավության նոխաղ և

<sup>245</sup> «Մշակ», 1895, № 93:

<sup>246</sup> Նույն տեղը:

<sup>247</sup> Նույն տեղը, № 94:

<sup>248</sup> Գ. Բրանդեն, Հայաստանը և եվրոպան, ժնն, 1907, էջ 3 և 4:

ամրապնդեց իր դիրքերը Կիպրոսում, Եգիպտոսում և Հարավային Աֆրիկայում:

\* \* \*

Արևմտյան Հայաստանը, որն իր բնակչիմայական պայմաններով նման էր դրախտավայրի, դարձել էր իմպերիալիստական պետությունների դիվանագետների ձեռքին առուծախի առարկա և սուլթանական կառավարության կողմից մասսայական արյունալի ջարդերի օջախ, որոնց հետևանքով արևմտահայությունը բնաջնջվում էր, և երկիրն ամայանում: Հայ ժողովրդի դրությունը շփոխվեց նույնիսկ Արևելյան Հայաստանում 1918—1920 թվականներին՝ դաշնակցականների տիրապետության տարիներին: Հայաստանը, գտնվելով Եվրոպայի ու Ասիայի սահմանագլխին և լինելով կամուրջ Աև ու Կասպից ծովերի միջև, հին ժամանակներից սկսած եղել է անվերջ արշավանքների ու ճակատամարտերի ուղմարեմ, իսկ ժողովրդի պատմությունը՝ մաքառումների և հերոսության, սարկության ու ողբերգության տարեգրություն: «Հին Արևելքի երբեմնի հզորագույն երկրներից մեկը՝ Հայաստանը, եղել է անվերջ ճակատամարտերի ու ասպատակությունների թատերաբեմ: Մի նվաճողին փոխարինում էին մյուսները: Սրով ու մրրկով սլանում էին երկրի վրայով հոները, պարսիկները, հռոմեացիները, արաբները, բյուզանդացիները, սելջուկները, մոնղոլները և օսմանցիները: Հազիվ էր ժողովուրդը ուշքի գալիս մի ավերիչ փոթորկից, եբբ վրա էր հասնում նորը: Եվ նորից կործանվում էին գյուղերը, քաղաքները, կործանվում էր կուլտուրան, ոչնչանում էին աշխատավոր հայերը»<sup>249</sup>:

Հայ ժողովուրդը գտնվում էր կործանման եզրին, երբ Ռուսաստանում հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը տապալեց բուրժուա-կալչածատիրական կարգերը, հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա և բացեց նոր դարագլուխ մարդկային պատմության մեջ: Ադատարար Հոկտեմբերը մեծ ազդեցություն դործեց ամբողջ աշխարհի վրա և նպաստեց կախյալ ու գաղութային

<sup>249</sup> «Правда», от 28 ноября 1935.



երկրների ժողովուրդների հեղափոխական զարթոնքին: Նրա ազատարար դադափարները տարածվեցին նաև Հայաստանում: Հայ ժողովրդի փրկությունը կապվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հետ:

1920 թ. նոյեմբերին Արևելյան Հայաստանի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Անդրկովկասի աշխատավորության աջակցությամբ, տապալեցին դաշնակների անփառունակ իշխանությունը և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա: Սովետական կարգերի հաստատումը դարձավ շրջադարձային կետ արևելահայության պատմական ճակատագրում: Նա փրկվեց ազգային աղետից և կանգնեց վերածնության, տնտեսական, բաղաբաղիկ ծաղկման և գիտության ու կուլտուրայի աննախընթաց վերելքի ուղու վրա: Իրականացավ Ֆ. էնգելսի մարգարեական կանխատեսումը. «Հայ ժողովրդի ազատագրումը կախված է ռուսական հեղափոխության հաջողությունից և ցարիզմի տապալումից»<sup>250</sup>: Մեծ Անինը հեռագրեց. «Ողջունում եմ իմ սերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»<sup>251</sup>:

Եթե Արևելյան Հայաստանն ազատագրվեց ռուս և Անդրկովկասի ժողովուրդների Եղբայրական օգնությամբ, ապա Արևմտյան Հայաստանը անարխիայից, արևմտահայությանը ֆիզիկական բնաջնջումից շփրկեցին ու չէին կարող փրկել ոչ հայ ժողովրդի «պաշտպան» իմպերիալիստական Անգլիան և ոչ էլ Սովետական Միության կատաղի թշնամի, ներկայումս միջազգային իմպերիալիզմի գործակալ ախրահոշակ դաշնակցական կուսակցությունը:

Արևմտահայության հարցի լուծման ճանապարհ հարթեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: 1917 թ. դեկտեմբերի 31-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը ընդունեց «Թուրքահայաստանի» մասին դեկրետ, որով նա պաշտպանում էր Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև լիակատար անկախություն:

<sup>250</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 39, стр. 270—271.

<sup>251</sup> Վ. Ի. Անին, հատ. 31, էջ 550:

նրո՛ւ Սակայն ներքին ու արտաքին անբարենպաստ հանգամանքների պատճառով այն շիրագործվեց: Միայն ազատագրված Սովետական Հայաստանը դարձավ ողջ հայության օրրանը, նրա հույսն ու ապավենը: Արդեն հայրենիք են վերադարձել սփյուռքահայությունից ավելի քան 200 հազ. մարդ: Շնորհիվ ՍՄԿԿ և սովետական կառավարության ամենօրյա հոգատարության, կիսաֆեդերալական Հայաստանը պատմական շատ կարճ ժամանակամիջոցում դարձավ ծաղկուն սոցիալիստական հանրապետություն՝ ժամանակակից հզոր ինդուստրիայով, վարգացած գյուղատնտեսությամբ, առաջավոր գիտությամբ ու կուլտուրայով: Հայաստանը, որը ժողովրդի արցունքների, արյան և անվերջ տառապանքների աշխարհ էր, դարձել է խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու աշխատավորների երջանկության երկիր: Սովետական Հայաստանի բնակչությունը վերջին 60 տարում ավելացել է չորս, իսկ մայրաքաղաք Երևանինը՝ ավելի քան 30 անգամ: Այժմյան Երևանը Սովետական Միության խոշորագույն արդյունաբերական ու կուլտուրական օջախներից մեկն է: Հայ ժողովուրդն իր մեծ ավանդն է ներդնում կոմունիստական հասարակարգի կառուցման գործում, որի համար Հայկական ՍՍՀ-ն արժանացել է Վ. Ի. Լենինի եռակի, Հոկտեմբերյան հեղափոխության և ժողովուրդների բարեկամության շքանշանների: Սովետական Հայաստանը ՍՍՀՄ միութենական հանրապետությունների համաստեղության մեջ վարգացած հանրապետություններից մեկն է և ունի իր ուրույն ու պատվավոր տեղը:

Հայ ժողովուրդն իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական վիթխարի նվաճումների համար երախտապարտ է հանճարնդ Վ. Ի. Լենինին, մեծ Հոկտեմբերին, սովետական իշխանությանը և փառապանծ կոմունիստական կուսակցությանը: Դրա համար էլ հայ ժողովուրդն աչքի լույսի պես պահում է ու կպահի ոռւս մեծ ժողովրդի և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների հետ անխախտ միասնությունն ու բարեկամությունը:

Սակայն դաշնակցական կուսակցության սլարագույնները, որոնք հայ բուրժուազիայի դասակարգային շահերը դերադասում են ժողովրդի ազգային շահերից, մեծ թշնամանք

են տաժում Սովետական Հայաստանի նկատմամբ: Նրանց համար հայոց դատը դարձել է առուծախի առարկա<sup>252</sup>: Նըրանք պահանջում են, որ հայությունը կողմնորոշվի դեպի կապիտալիստական աշխարհը:

Թունոտ է դաշնակցական պրոպագանդան և պրովոկացիան: Սակայն սփյուռքահայության հիմնական մասը ճիշտ է կողմնորոշվում դեպի Սովետական Հայաստան: Նա հասկանում է, որ Հայկական ՍՍՀ-ն ողջ հայության հարազատ օջախն է և հայկական հողերի չուծման ճանապարհը չի անցնում Վաշինգտոնով, Լոնդոնով, Փարիզով և Կալիֆոռնիայով: Սփյուռքահայությունը գիտակցում է, որ իր հոգևոր ու մշակութային սնունդը պետք է ստանա Սովետական Հայաստանից, որ նա է ազգի բաղձանքների իրագործողը, և որ Արևելյան Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ հայ ժողովրդի համար արշալույս բացվեց: Սովետական Հայաստանը շենանում է, բարգավաճում և եթե, ինչպես գրել է Հակոբ Կուրլեբյանը, «անկյո-սաքսոնները մեզ մեր հայրենիքէն վտարուելուն, արտագաղթի պատճառ դարձան, ապա Սովետական Միությունը մեր ներգաղթին, Մայր Հայրենիք երթալի պատճառ եղաւ»<sup>253</sup>, նա իրավացիորեն դաժնում է, որ սովետահայ ժողովուրդն իր բարգավաճ դրության համար պարտական է Սովետական Ռուսաստանին, մինչդեռ սփյուռքահայությունը դո՛՛ւ է գնում սպիտակ ջարդին: «Սփյուռքահայութեան ապագան մութ է: Մայր Հայրենիքի ապագան փայլուն է եւ աւելի փայլուն ըլլալու պայմանաւ»<sup>254</sup>: 1968 թ. Սովետական Հայաստանում շրջադայելուց հետո, իր անձնական ապավորությունների հիման վրա, Կուրլեբյանը գրեց. «Լուսւյ Երկիր եղած է երէկուան խաւար, այսօր վերածնւթած Հայաստանը»<sup>255</sup>, մինչդեռ օտար հորիզոնների տակ ապրող հայության ապագան մռայլ է ու մշուշապատ: Նա իր ինքնուրույնությունը կորցնելու վաանգի տակ է: Հայերին կառավարել ու հովանավորել չեն կարող իմպերիալիստական պե-

<sup>252</sup> ՏԵ՛ս Ա. Անդրեասյան, Հայկական դատի նոր հանդրվանդ, Բեյրութ, 1967, էջ 47:

<sup>253</sup> Զ. Կուրլեբյան, նշված աշխատ., էջ 103:

<sup>254</sup> Նույն տեղը, էջ 129:

<sup>255</sup> Նույն տեղը, էջ 175:

տությունները, որոնք հայտնի են «իրենց խոստումնադրուծ, եսամոլ, շահապաշտ և պարտապանց արարքներով»<sup>256</sup>։ Միայն Սովետական Ռուսաստանը սեպ կերպով օղնեց հայ ժողովրդին, միայն սովետական կարգերի հաստատմամբ Հայկական ՍՍՀ-ն դարձավ հայ ժողովրդի ազգային տունը, ֆիզիկական բնաջնջումից նրա փրկության միակ երաշխիքը։

Այսպիսով, իմպերիալիստական Անգլիայի քաղաքականության ուսումնասիրությունը համուլիշ կերպով ցույց է տալիս, որ նա, Մերձավոր Արևելքում իր հեգեմոնիան վերականգնելու համար, միջամտել է Թուրքիայի ներքին գործերին և իր ազդեցիկ քաղաքականությունն արդարացնելու նպատակով որպես պատրվակ օգտագործել հայկական հարցը։ Անգլիան մեկ հրահրել է ազգային-ազատագրական շարժումները, ձևանալով հայոց դատի ջեբմ ու անշահահինդիր պաշտպան, մեկ էլ թշնամական դիրք բռնել հայ ժողովրդի նկատմամբ, օգնել սուլթանին ձնշելու ազատագրական պայքարը։ Թե մեկ և թե մյուս դեպքում Անգլիան մշտապես հետապնդել է շահադիտական նպատակներ։ Իմպերիալիստական Անգլիան Արևմտյան Հայաստանն օգտագործել է նաև որպես փոփոանակության մանրադրամ իմպերիալիստական մյուս պետությունների հետ գաղութները բաժանելու ժամանակ ձեռնառու գործարքներ կնքելու համար։ Անգլիական քաղաքականությունը հակասել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շահերին։ Այդ շահերը նա զոհաբերել է հօգուտ անգլիական մոնոպոլիստական կապիտալի ազդեցիկ պլանների իրագործման Ասիայում ու Աֆրիկայում։ Անգլիական իմպերիալիզմի քաղաքականությունը ուղղակի և անուղղակի նպաստել է սուլթանիզմի կողմից անցկացվող արմենոցիդի ուժեղացմանը, և նա պատասխանատու է հայ ժողովրդի մասսայական կոտորածների համար։ Անգլիան արևմտահայություն փրկարարը չէ, ինչպես ձգտում են տյո պատկերել անգլիական քաղաքական գործիչներ և բուրժուական պատմաբաններ Գ. Գուչը, Մակ-Կոանը, Զ. Բրայսը, Լինչը, Սեթոն-Վաթսոնը, Ֆ. Բուկլեն և մյուսները, այլ

<sup>256</sup> Զ. Կուրլեյան, նշված աշխատ., էջ 178։

նա խաղացել է դաճիճի դեր: Խարդախ Ալբրիտեր չի դեկավարովել հումանիզմի ու քաղաքակրթություն տարածելու սկզբունքներով, ինչպես պնդում են իմպերիալիզմի գաղափարախոսները: Բունության օգնությամբ հարստանալու նպատակով անցկացվող նրա քաղաքականությունը, որն իր ճանապարհին ոչնչացրել ու ավերել է ամեն ինչ, պատմությունը «կհամարի իմպերիալիզմի անարդարացիության և հիմարության գլուխգործոցը»<sup>257</sup>: Անգլիական իմպերիալիզմը հայ ժողովրդին զոհաբերել է իր հաղթանակի զոհասեղանին ինչպես 1870—1880-ական, այնպես էլ 1890-ական թվականներին: Նրա և իմպերիալիստական մյուս պետությունների քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հասցրեց 1915 թվականի հայկական ամենասոսկալի կոտորածներին, որոնց ժամանակ զոհ դնաց 1,5 մլն մարդ: Ինչպես Անգլիան, այնպես էլ մյուս խոշոր պետությունները ռեալ ոչ մի քայլ չկատարեցին հայ ժողովրդին սուլթանիզմի գեոպոլիտիկ քաղաքականությունից փրկելու ուղղությամբ, որն անցկացվում էր ֆանատիկորեն, անխնա դաժանությամբ: Իմպերիալիստները հաշվենկատ էին ու շահամոլ, իսկ հայ ժողովուրդը՝ նետված բախտի քմահաճույքին:

Հայ ազգայնական կուսակցությունների պարագլուխները իրենց անձեռատես քաղաքականությամբ կույր գործիքի դեր են խաղացել անգլիական դիվանագետների ձեռքին և վնասել ժողովրդի ազգային-ուղասագրական պայքարին: Պամփոթությունն ապացուցեց, որ հայ ժողովրդի ազգային ու գոցիալական ճնշումից ապատազրություն միակ ճիշտ ուղին սոցիալիստական հեղափոխությունն է, ինչպես ուսուցանում էին մարքսիզմ-լենինիզմի կլասիկները և նրանց հայ մտորսիստ աշակերտները: Շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի, ՍՄԿԿ լենինյան իմաստուն ազգային քաղաքականության, հայ ժողովուրդը փրկվեց կործանումից, մնաց կանգուն, ապրեց իսկական սո-

<sup>257</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 39, էջ 508:

ցիւլակահան ու ազգային վերածնութիւն, բուժեց իր դարավոր վերբերը և լրիւ բացահայտեց իր ստեղծագործական տաղանդը: Հայ ժողովրդի այսօրվա մեծագործութիւններն ու հաջողութիւնները ուսումնառման մեծ ժողովրդի, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ ունեցած եղբայրական բարեկամութեան, նրանց հետ սերտ համագործակցութեան և փոխօգնութեան արգասիքն են: Դրա համար էլ սովետական հայրենասիրութեան և սրբութեան հին տերնացիոնալիզմի սկզբունքներին հավատարիմ հայ ժողովուրդը, ՀԿԿ ղեկավարութեամբ, աչքի լույսի պէս պահպանում, ամրապնդում ու զարգացնում է ժողովուրդների բարեկամութիւնը: Հայկական ՍՍՀ-ն իրազողութեան, միջազգային հեղափոխական պայքարի, ժողովուրդների բարեկամութեան միջնաբերդ ՍՍՀՄ-ի կազմում վստահ քայլերով ընթանում է լուսապայծառ կոմունիզմի ուղիով:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան . . . . .	3
Գլուխ I ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1870—1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . .	8
Գլուխ II ԱՆԳԻՔԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԽԱԶՄԱՍՏՐԱՏԵԿԻԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ. ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ . . . . .	30
1. Անգլլիական իմպերիալիզմի առևտրական, ֆինանսական և կոնցեսիոն շահերը Թուրքիայում . . . . .	50
2. Անգլիական իմպերիալիզմի ռազմաստրատեգիական և սնտեսական շահերը Արևմտյան Հայաստանում . . . . .	56
Գլուխ III ԱՆԳԻՔԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . .	77
Գլուխ IV ԱՆԳԻՔԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀՆՏՈ . . . . .	130
Գլուխ V ԻՄՊԵՐԻԱԼԻՄՏԱԿԱՆ ԱՆԳԻՔԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . .	191

ԲԱՅՐԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐՏԵՄՅԵՎԻ

Արևմտյան Հայաստանը անգլիական խնայեցիալիզմի պլան-ներում XIX դարի վերջին ֆառուղում

БАЙРАМЯН ЛЕВОН АРТЕМЬЕВИЧ

Армения в планах английского империализма  
в последней четверти XIX века

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван — 1981

Մասն. խմբագիր՝ Վ. Ա. Գիլոյան  
Հրատ. խմբագիր՝ Է. Ս. Բեկոյան  
Նկարիչ՝ Հ. Տ. Սարգսյան  
Գեղ. խմբագիր՝ Ս. Վ. Պողոսյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան  
Վերստուղող սրբագրիչ՝ Գ. Հ. Բարաշանյան

III 1178

Հանձնված է շտրվածքի 25.06.1981 թ.:

Ստորագրված է տպագրության 7.01.1982 թ.:

Ֆորմատ՝ 84×108<sup>1/32</sup>: Թուղթ տպ. № 1:

Տառատեսակ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ «Բարձր», 15,32 պտյմ.  
տպագր. մամ., 18, հրատ.՝ 13,52 մամ.:

Պատվեր: 676: ՎՊ 03724: Տպարանակ 5000, դինր՝ 1 ս. 60 կող.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна. 91.

Հայկական ՄՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի  
գործերի սիսական կոմիտեի № 2 տպարան, Երևան, Տերյան 44:

Типография № 2 Госкомитета по делам издательства, полиграфии  
и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Теряка, 44.



10/60

L. U. F. U. S. P. U. S. U. U.